ԲԱԺԱՆՄՈՒՆՔ IV

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ԵՎՐՈԱՍՈՑԱՑՈ՞ՒՄ, ԹԵ՞ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԻ ՓՈԽԼՐԱՑՆՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *եվրոասոցացում, Մաքսային միություն, փոխլրացնող քաղաքականություն, տնտեսական և սոցիալական իրավիճակ*

Վերջին ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության հանրային և գործարար շրջանակների հետաքրքրության ծիրում են պետության արտաքին քաղաքական և տնտեսական ինտեգրման գործընթացները: Ավելի ճշգրիտ՝ մեկ կողմնորոշման հարցը. Մաքսային միությո՞ւն, թե՞ եվրոասոցացում և իր հերթին՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի՞ Եվրամիության հետ: 2013 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ-ն ընտրություն կատարեց՝ Մաքսային միություն, սակայն չբացառելով եվրաինտեգրումը: Ուստի խնդիրների խնդիրն այն է, թե հնարավո՞ր է, արդյոք, ստեղծված իրավիճակում շարունակել արդյունավետ իրականացնել փոխլրացնող (կոմպլեմենտար) քաղաքականություն: Սա ցանկալի է, սակայն քննարկման հարց է:

Մեր խորին համոզմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը և ներկա իրավիճակը, այն է՝ Լեռնային Ղարաբաղի փաստացի ինքնորոշման իրավական կարգավորման ձգձգումը, երկրի պաշտպանական և անվտանգության համապատասխան երաշխիքների հեռանկարը, ինչու չէ՝ ՀՀ-ում արտադրվող ապրանքների դեռևս եվրոպական ստանդարտներից հեռու լինելու գործոնը և այլն, ընտրությունը՝ դեպի Ռուսաստան այս փուլում արդյունավետ և առավել սակավ ռիսկերով քայլ է: Այլ հարց է, որ անցած չորս տարիների բանակցային գործընթացները Եվրամիության հետ՝ եվրոասոցացման պայմանագրի շուրջ, և Մաքսային միությանը անդամակցության հայտը ինչպես կազդեն մեր երկրի հանդեպ գործընկերային վստահության մակարդակի վրա:

Սակայն, կարծում ենք, դա հաղթահարելի է:

Մասնավորապես քաղաքական մասով (մարդու իրավունքների պաշտպանություն, խոսքի և մամուլի ազատություն, հակակոռուպցիոն քաղաքականություն և այլն) այդ վստահությունը որևէ կերպ կասկածի տակ չէ:

Առավել բարդ է տնտեսական ջերմացման՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտուն ինտեգրման և Մաքսային միությանը անդամության զուգակցումը:

Արդյո՞ք աշխարհում կան այդպիսի փորձեր:

Այո՛, կան, սակայն դրանք տարբեր տարածաշրջաններում և ժամանակային տարբեր փուլերում են նախաձեռնվել, ապա ընդհատվել: Խոսքը աֆրիկյան և մերձավորարևելյան մի շարք երկրների փորձերի մասին է:

Այժմ առարկայորեն դիտարկենք, թե ՀՀ-ն ուր և ինչ է արտահանում (վաճառում):

Միանգամից ասենք, որ Եվրամիության երկրների հետ առևտրաշրջանառության ծավալային կշիռն ավելի մեծ է. արտահանման շուրջ 40, ներկրման շուրջ 25%: Ռուսաստանի Դաշնության հետ այն կազմում է ներկրման 17, արտահանման 24%-ը:

Արծարծվող հարցի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում է տալիս աղյուսակ 1-ը:

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ Մաքսային միության երկրներ ՀՀ-ից արտահանվում են հիմնականում սննդամթերք, խմիչքներ և գյուղատնտեսական ապրանքներ, իսկ Եվրամիության երկրներ՝ հանքաքար, պղնձի խտանյութ, ֆերոմոլիբդեն և նմանատիպ այլ արտադրանք:

Կարևորը, մեր կարծիքով, ոչ թե ապրանքների ծավալներն են, այլ երկու էական գործոն. առաջին՝ տեխնոլոգիապես վերամշակման ո՞ր փուլի արտադրանք ենք արտահանում (որքան մեծ է վերջնական արտադրանքի արտահանման տեսակարար կշիռը, այնքան տնտեսության համար՝ լավ), և՝ երկրորդ՝ արտահանման ծավալների ընդլայնման ինչպիսի՞ հնարավորություններ են առկա միջնաժամկետ փուլում:

Որևէ մեկը դեմ չէ եվրոպական արժեքների և ընդհանրապես արժեհամակարգի ներդրմանը մեր երկրում, սակայն առաջիկա տարիներին Եվրոպայի շուկաները պատրաստ չեն ընդունելու հայաստանյան արտահանելի բազմաթիվ ապրանքատեսակներ՝ գյուղատնտեսական մթերքներ, խմիչքներ, արդյունաբերական մեքենաշինական արտադրանք և այլն, իսկ ՀՀ տնտեսական աճը տեսանելի հեռանկարում ապահովելու են հենց արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը:

Սակայն Հայաստանը հակված չէ ամեն գնով միանալու Մաքսային միությանը, եթե դա չի բխում իր ազգային պետական, նաև՝ տնտեսական շահերից:

Ներկայացնենք հետևյալ պարզ հաշվարկը: Ներկայում Մաքսային միության երեք երկրները միասին հավաքագրում են տարեկան շուրջ 26 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք մաքսատուրք, իսկ ՀՀ-ն 2012 թ. տվյալներով՝ 38 մլրդ դրամ կամ շուրջ 100 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար: Ընդ որում այդ 26 մլրդ դոլարի 87%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, 4.7%-ը՝ Բելառուսին և 8.3%-ը՝ Ղազախստանին: Այժմ խնդիր է՝ որքա՞ն կստանա Հայաստանը: Սրա պատասխանը կտա բանակցային գործընթացը: Եթե ՀՀ-ին մնա նույնիսկ 1%-ը, դա 2.5 անգամ ավելի է, քան մեր մաքսատուրքերի ներկա ծավալը: Երկրորդ՝ Մաքսային միության երկրներում գործում են 5, 10, 15, 20 և 25% մաքսատուրքեր, ՀՀ-ում՝ հիմնականում 0 և 10%:

Ինչպե՞ս են լուծվելու այս խնդիրները, որպեսզի Հայաստանը չտուժի: Սա նույնպես բանակցելու հարց է: Ուստի պետք է լրջորեն նախապատրաստվել ապագա բանակցություններին:

Աղյուսակ 1

Արտաքին առևտրով ՀՀ-ից արտահանված առավել բարձր մաքսային արժեք ունեցող ապրանքներ (2012 թ.)

Ապրանքի անվանումը	Ընդհ.	Մաքսային միություն		Եվրամիություն		Մնացած երկրներ	
		Հազ. դրամ	%	Հազ. դրամ	%	Հազ. դրամ	%
Ոչխարներ, այծեր, կենդանի	8,550.4	0.0	0.0	0.0	0.0	8,550.4	100.0
Ձուկ թարմ կամ սառեցրած, բացի 0304 դիրքից	13,047.5	13, 019.0	99.8	0.0	0.0	28.5	0.2
խեցգետնակերպեր, այլուր և հատիկներ	6,818.4	3,912.0	57.4	2,735.0	40.1	171.4	2.5
Խաղող թարմ կամ չորացրած	9,556.1	9,086.0	95.1	140.0	1.5	330.1	3.5
Ծիրան, բալ, կեռաս, դեղձ, նեկտարին, սալոր	13,785.9	12,611.0	91.5	598.0	4.3	576.9	4.2
Սուրճ	5,522.0	2,346.0	42.5	0.0	0.0	3.176.0	57.5
Այլ բանջարեղեն. պահածոյացված	4,256.0	3,155.0	74.1	150.0	3.5	951.0	22.3
Պահածոյացված միրգ, ընկուզեղեն, հատապտուղ	6,552.0	5,068.0	77.4	417.8	6.4	1.066.2	16.3
Ջրեր՝ բնական կամ արհեստական	6,604.1	6,134.0	92.9	138.0	2.1	332.1	5.0
Գինի խաղողի. բնական	4,138.6	3,149.0	76.1	698.0	16.9	291.6	7.0
Սպիրտային թուրմ, լիկյոր և այլ սպիրտային ըմպելիք	165,050.5	143,775.0	86.6	11,770.0	7.1	10,405.5	6.3
Սիգար, սիգարետ	41,840.7	2,941.0	7.0	0.0	0.0	38,899.7	93.0
Ցեմենտ	9,408.0	0.0	0.0	0.0	0.0	9,408.0	100.0
Հանքաքար և խտանյութ պղնձի	227, 79.7	0.0	0.0	211,884.0	93.1	15,695.7	6.9
հանքաքար և խտանյութ ցինկի	17,715.8	0.0	0.0	17,715.0	100.0	0.8	0.0
հանքաքար և խտանյութ մոլիբդենի	8,298.7	0.0	0.0	8,298.0	100.0	0.7	0.0
հանքաքար և խտանյութ թանկարժեք մետաղի	24,936.3	0.0	0.0	10,484.0	42.0	14,452.3	58.0
էլեկտրաէներգիա	90,411.9	0.0	0.0	0.0	0.0	90,411.9	100.0
Դեղամիջոցներ	5,921.9	1.155.0	19.5	240.0	4.1	4,526.9	76.4
Իրեր՝ ապրանքների փաթեթավորման	5,461.9	27.0	0.5	0.0	0.0	5,434.9	99.5
Վերարկու, թիկնոց	5,183.2	0.0	0.0	3,777.0	72.9	1.406.2	27.1
Կոստյում, պիջակ և այլն	6,543.7	145.0	2.2	4,052.0	61.9	2,346.7	35.9
Շինարարության համար մշակած քար	6,693.9	4.292.0	64.1	758.0	11.3	1,643.9	24.6
Շիշ, բանկա, ամպուլա և ապակե այլ տարողութ.	10,011.5	138.0	1.4	22.0	0.2	9,851.5	98.4
Ադամանդ	79,140.8	24,165.0	30.5	40,745.0	51.5	14,230.8	18.0
Ոսկի	77,533.6	0.0	0.0	0.0	0.0	77,533.6	100.0
Ոսկերչական իրեր	13,557.3	2,107.0	15.5	2,001.0	14.8	9,449.3	69.7
Երկաթահամահալվածք	106,792.5	0.0	0.0	106,402.0	99.6	390.5	0.4
Թափոն և ջարդոն սև մետաղի	11,943.8	0.0	0.0	397.0	3.3	11,546.8	96.7
Պղինձ չզտած	104,753.1	0.0	0.0	104,751.0	100.0	2.1	0.0
Թափոն և ջարդոն պղնձի	5,914.3	0.0	0.0	0.0	0.0	5,914.3	100.0
Թափոն և ջարդոն ալյումինի	5,505.9	0.0	0.0	0.0	0.0	5,505.9	100.0
Նրբաթիթեղ ալյումինե	81,060.7	0.0	0.0	1,711.0	2.1	79,349.7	97.9
Մոլիբդեն	18,871.1	0.0	0.0	18,871.0	100.0	0.1	0.0
Համակարգիչներ և դրանց բլոկներ	9.359.2	0.0	0.0	353.0	3.8	9.006.2	96.2
Մասեր և պարագաներ սարքավորման համար	3,964.6	0.0	0.0	1.063.0	26.8	2.901.6	73.2
Կորպուսներ ժամացույցի	9,176.9	0.0	0.0	9,176.9	100.0	0.9	0.0

Միաժամանակ չմոռանանք, որ ՌԴ-ում ներկայում ապրում և աշխատում են շուրջ 2.2 մլն հայեր: Կա տրանսֆերտների խնդիր և այլն:

Ինչպես էլ զարգանան գործընթացները՝ մենք պետք է արձանագրենք, որ ՀՀ դաշնակցային և բարեկամ գործընկերը Ռուսաստանի Դաշնությունն է, սակայն, մեր ռազմավարական գործընկերությունը և բարեկամությունը Եվրամիության հաշվին չէ:

Նշենք նաև, որ, անկախ հետագա քաղաքական և տնտեսական գործընթացների միտումներից, Հայաստանն ունի մի շարք անհետաձգելի խնդիրներ, որոնք, ըստ մեզ, պետք է լուծում ստանան:

1. Հարկային և մաքսային քաղաքականություն.

- ✓ 2014 թ. հունվարի 1-ից տնտեսավարող սուբյեկտներից ավելացված արժեքի հարկի գանձումը սահմանի վրայից պետք է տեղափոխել ընթացիկ գործարքների հարթություն՝ հաշվի առնելով նաև այն, որ դրանով իսկ տնտեսավարողները վարկավորում են պետությանը և դրա դիմաց չեն ստանում տոկոսներ: ԱԱՀ-ի գանձումը սահմանից տեղափոխելու շնորհիվ տնտեսավարող սուբյեկտները ամսական կխնայեն շուրջ 75 մլն ԱՄՆ դոլարին համարժեք շրջանառու միջոցներ: Սա լուրջ խթան կլինի ձեռնարկատիրության հետագա զարգացմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը: Ի դեպ, վերոնշյալի մասին համապատասխան օրենքի նախագիծը մեր կողմից դրվել է շրջանառության մեջ: Այն համահունչ է Կառավարության ծրագրին և քաղաքականապես՝ ճիշտ:
- ✓ Անհապաղ անհրաժեշտ է ԱԱՀ-ի երեք տարով հետաձգման շեմը 300 մլն դրամից իջեցնել, գոնե այս փուլում, 200 մլն դրամի: ՀՀ նման փոքր տնտեսություն ունեցող երկրներում 200 մլն դրամի ներդրումային ծրագիրը նույնպես ծանրակշիռ կարելի է համարել: Դրա վերաբերյալ համապատասխան օրենքի նախագիծը նույնպես շրջանառության մեջ է:
- ✓ Առևտրական գործունեության ոլորտում 2013 թ. հունվարի 1-ից կիրառվող շրջանառության հարկը անհրաժեշտ է 3.5%-ից իջեցնել 2.5-ի՝ հաշվի առնելով այս ոլորտի շահութաբերության 10-12% մակարդակը:
- ✓ ՀՀ տնտեսության հետճգնաժամային ներկա իրավիճակում առավել նպատակահարմար է 58.35 մլն դրամի տարեկան շրջանառության ԱԱՀ-ի հարկային արտոնության շեմի իջեցումը 40 մլն դրամի, պայմանով, որ մինչև այդքան տարեկան շրջանառությամբ տնտեսավարողներն ունենան հարկային արտոնություններ բոլոր հարկատեսակների գծով՝ բացառությամբ եկամտային հարկի:
- ✓ Մաքսային օրենսդրությունը և հատկապես վարչարարությունը պետք է խթանեն տնտեսավարողների գործունեությունը: Այս փուլում անհրաժեշտ է վերացնել, այսպես կոչված՝ «հսկիչ» գների ինստիտուտը ներկրողների համար և մշակել ու կիրառել նրանց կողմից ապրանքների գների իրական հայտարարագրման գործուն համակարգ:

2. Մրցակցային հարաբերությունների բարելավում.

ՀՀ ապրանքային շուկաների օլիգոպոլիական բնույթը և դրանցում տնտեսավարողների կողմից գերիշխող դիրքի չարաշահման հնարավորությունները, նաև կենտրոնացման խորացումը հարկ է կանխարգելել և ազատ ու արդար մրցակցային դաշտ ապահովել

մրցակցության պաշտպանության նոր ինստիտուտների և գործիքների միջոցով: Մասնավորապես գերիշխող դիրքի չարաշահման համար օրենքով կիրառվող 5-200 մլն դրամի տուգանքները, ըստ էության, արդյունավետ չեն և չեն պատասխանում այն հարցին, թե ո՞ր դեպքում պետք է կիրառել 5 մլն դրամի և ո՞ր դեպքում՝ 199 մլն դրամի տուգանք: Շուկայում կենտրոնացման մասին չհայտարարելու դեպքում նախորդ տարվա շրջանառության 4 %-ի չափով տուգանքը նույնպես մեթոդաբանորեն հիմնավորված չէ: ՏՄՊՊՀ կողմից ապրանքային շուկաների մշտադիտարկումները պետք է պատասխանեն այն հարցին, թե որ տնտեսավարողները շուկաներում ինչպիսի ներդրումային և գնային վարքագիծ են դրսևորում և ինչպես են ձևավորվել այդպիսի ոչ պատեհ պայմաններ՝ հակամրցակցային վարքագիծ դրսևորելու համար:

Անհրաժեշտ է արմատապես բարելավել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունը և մշակել հակամենաշնորհային օրենսդրություն:

3. Ձեռնարկության վարկային հարաբերությունների կազմակերպում.

Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում վարկ ստանալը լուրջ քաշքշուկների տեղիք է տալիս, և նույնիսկ բարի համբավ ունեցող տնտեսավարող սուբյեկտներին հաճախ չի հաջողվում ժամանակին և անհրաժեշտ ծավալի վարկային միջոցներ ձեռք բերել:

Ավելին, ունենալով տարածաշրջանում վարկերի ամենաբարձր տոկոսադրույքները (14-22%)՝ մեր բանկային հաստատությունները չեն հաջողում մատուցել բարձրորակ ծառայություններ: Ո՞րն է պատճառը: Բանկերի մեծ մասը տնտեսավարողների առջև դնում է այնպիսի կոշտ և հաճախ դժվար լուծելի պահանջներ (գրավի դիմաց ավելի քիչ վարկային միջոցներ, բարձրորակ բիզնես-ծրագիր և այլն), որոնց հետևանքով ուղղակի ուշանում է վարկի ձեռքբերումը և խաթարվում գործարքների բնականոն ընթացքը:

Բարձր տոկոսադրույքների շնորհիվ բանկերի իրական շահութաբերությունը բավականին բարձր է: ՀՀ Կենտրոնական բանկը պետք է իջեցնի վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8%-ից առնվազն 6-ի, որի հետևանքով կձևավորվեն զսպողականից չափավոր ընդլայնողական քաղաքականության անցման հիմքեր: Ավելին, անհասկանալի պատճառներով վերաֆինանսավորման տոկոսադրույքը բաձրացել է մինչև 8,5%՝ իբր գնաճային ճնշումները զսպելու:

Անհրաժեշտ է, որ բանկերի վարկային քաղաքականությունը միտված լինի արտահանող ընկերությունների ինչպես զուտ արդյունաբերական, այնպես էլ գյուղատնտեսական, ենթակառուցվածքային ոլորտների ֆինանսավորմանը:

4. Արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների բարելավում.

Խոսքն առավելապես ավիացիայի, երկաթուղու, ճանապարհների և այլ ենթակառուցվածքների մասին է: Այս ոլորտների արդյունավետ ազատականացումը էական ազդեցություն կունենա երկրի ներդրումային գրավչության բարելավման վրա: Այս փուլում հատկապես պետք է կարևորել ավիացիայի ոլորտը: Հարկ է լուծումներ գտնել, որպեսզի, մի կողմից՝ օդանավակայանի սպասարկումների և մյուս կողմից՝ ավիավառելիքի հարաբերականորեն բարձր գների պայմաններում ավիափոխադրող ընկերությունները մատու-

ցեն մատչելի և որակյալ ծառայություններ: Դա հնարավոր է միմիայն այդ ոլորտում իրական մրցակցային հարաբերությունների կայացմամբ:

5. Թերևս ամենակարևորը պետական կառույցների ազատական և գործընկերային վերաբերմունքն է տնտեսավարողների հանդեպ: Ներկայում ՀՀ 477 խոշոր ձեռնարկությունների կողմից վճարվում է հարկային մուտքերի մոտ 60%-ը: Այսպիսով, խորանում է շուկաների համակենտրոնացման գործընթացը, մյուս կողմից, քանի որ մենք ներկրող երկիր ենք, ապա տարեցտարի արձանագրվում է փողի պակասորդ, որը պայմանավորված է ներկրման ծավալների շուրջ եռակի գերազանցմամբ արտահանման ծավալներին: Այսպես. 2012 թ. ՀՀ ներկրման ծավալը կազմել է 4.25 մլրդ դոլար, արտահանմանը՝ 1.4 մլրդ, իսկ տրանսֆերտները՝ շուրջ 1.5 մլրդ, այլ մասնավոր ներդրումները՝ մոտ 0.5 մլրդ: Արդյունքում ձևավորվում է շուրջ 850 մլն ԱՄՆ դոլարի պակասուրդ, որն էլ հանգեցնում է ֆինանսական ռեսուրսների պակասուրդի: Խնդիրը կարող է լուծվել մի կողմից արդյունավետ և արտահանմանը միտված արտադրությունների ընդլայնմամբ, մյուս կողմից՝ ներքին սպառողական պահանջարկի աճով:

6. Եվ, վերջապես, ժամանակն է անցում կատարելու բնակչության վճարունակ պահանջարկի խթանման քաղաքականությանը, այն է՝ կտրուկ բարձրացնելու նվազագույն աշխատավարձի մակարդակը ՀՀ-ում (համապատասխան օրենքի նախագիծը շրջանառության մեջ է):

Այդ նպատակով անհրաժեշտ է ոչ թե փոքր քայլերի, այլ փաթեթային և մեծ քայլերի քաղաքականության իրականացում:

Հոդվածում դիտարկվում են Հայաստանի Հանրապետության Եվրոասոցացման և Մաքսային միությանը անդամակցության հարցերը, ինչպես նաև մեր երկրի տնտեսական ու սոցիալական իրավիճակը, այդ իրավիճակից դուրս գալու ուղիները, մասնավորապես քաղաքական որոշումների կայացմամբ, հարկային և մաքսային քաղաքականությունների, մրցակցային հարաբերությունների բարելավումը, բնակչության ամբողջական պահանջարկի խթանումը և այլն:

МИКАЕЛ МЕЛКУМЯН

ЕВРОАССОЦИАЦИЯ ИЛИ ТАМОЖЕННЫЙ СОЮЗ: РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ДОЛЖНА ПРОВОДИТЬ КОМПЛЕМЕНТАРНУЮ ПОЛИТИКУ

В статье рассматриваются вопросы интеграции Республики Армения в евроассоциацию и Таможенный союз, а также социально-экономическое положение страны, основные пути выхода из этого положения, в частности, принятие соответствующих решений по улучшению налоговой и таможенной политики, конкурентных отношений.

MIQAYEL MELQUMYAN

EUROPEAN INTEGRATION OR THE CUSTOMS UNION: THE REPUBLIC OF ARMENIA SHOULD CARRY OUT COMPLEMENTARY POLICY

The article discusses the issues of European integration and Customs Union from point of view of Republic of Armenia. The article also discusses the economic and social situation in the Republic of Armenia, the situation of getting out from that situation, particularly in the political decision-making, improvement of taxation and customs policies, competitive relations, population's solvent demand stimulation policies, etc.

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ
ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵԼԱԹՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԱՊՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՀ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԵԹՈԴՈՎ

Հիմնաբառեր. *տեխնոլոգիական զարգացում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեխնոլոգիական ինդեքսներ, ԱՊՀ տարածք*

Գիտելիքը և տեղեկատվությունը բնութագրվում են որպես որոշիչ տնտեսական գործոն և կարևորագույն ռեսուրս, որը կարելի է դասել տնտեսական զարգացման մյուս ռեսուրսների շարքին, և որը էական ազդեցություն ունի տնտեսական աճի ու բարեկեցության վրա: 20-րդ դարի 90-ական թթ. համաշխարհային տնտեսությունը ենթարկվեց արմատական վերափոխման: Ժամանակակից տնտեսական և կառավարման համակարգերի ձևավորման վրա հսկայական ազդեցություն ունեցավ տեխնոլոգիաների բուռն զարգացումը: Մյուս կողմից՝ տեխնոլոգիաների զարգացումը և գլոբալ բիզնեսի հնարավորությունները կառավարչական նորագույն մեթոդներ և կազմակերպչական նոր ձևեր ստեղծելու անհրաժեշտություն են առաջացնում: ՀՀ-ում թվային տնտեսության և տեղեկատվական ու հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումն ապահովող միջավայրի բարելավման առումով կարևոր է պարզել տեխնոլոգիական, մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մեր պետության միջազգային դիրքը. առաջին հերթին՝ ԱՊՀ տարածքում՝ հաշվի առնելով նաև այն, որ Հայաստանը ԱՊՀ երկրների հետ միասին եղել է մեկնարկային նույն դիրքում: Իհարկե, ոլորտի ռազմավարական զարգացման վեկտորը զուգահեռներ պետք է ունենա զարգացած տնտեսությամբ երկրների տեխնոլոգիական զարգացումների հետ:

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման մակարդակը բնորոշվում է մի շարք ցուցանիշներով: Ընդունված են բաղադրյալ ցուցանիշները, որոնք կիրառվում են հատկապես միջազգային մակարդակի ուսումնասիրությունների դաշտում: Նման ցուցանիշներ և համապատասխան վիճակագրական վերլուծություններ ու պարբերական հաշվետվություններ հրապարակվում են այնպիսի հեղինակավոր կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են ՄԱԿ-ը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ/OECD) և այլն: Տարբեր երկրներում առավել կիրառվող ամփոփ, արդյունքային ցուցանիշներից է **տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման բաղադրյալ ինդեքսը (ICT Development Index):** Բացի տեխնոլոգիական պարամետրերից, այդ ինդեքսի վրա ազդում են մի շարք ընդհանրացված ցուցանիշներ, որոնք բնութագրում են կրթության և կրթության վրա ծախսերի մակարդակը, ընդհանուր նորմատիվ իրավական միջավայրի վիճակը, գիտահետազոտական և փորձարարական կոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ) վիճակը, նորարարական մշակումների քանակը և մակարդակը, մարդկային զարգացման մակարդակը, էլեկտրոնային կառավարության զարգացման և ցանցային պատրաստվածության մակարդակը, գիտելիքների և գիտելիքների տնտեսության զարգացման մակարդակը, բնակչության տեխնոլոգիական գրագիտության աստիճանը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով կրթության ոլորտի հագեցվածության աստիճանը և այլն[1]: Դիտարկել ենք թվարկված ցուցանիշները: Առաջարկվում է նաև դրանց համատեղման յուրովի մոտեցմամբ ինտեգրված ցուցանիշ: Այս ցուցանիշը, մեր կարծիքով, թույլ կտա բնութագրելու տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման կտրվածքով Հայաստանի զբաղեցրած դիրքը ԱՊՀ երկրների մեջ և կարող է կիրառվել այլ նմանատիպ հետազոտություններում: Ներկայացնենք ԱՊՀ երկրների՝ միջազգային վարկանիշերով զբաղեցրած դիրքերի ուսումնասիրությունն ըստ նշանակալի գործոնների (ինդեքսների) առանձին-առանձին, փոխադարձ համեմատություններով, ինչպես նաև նրանց ռանգավորումը՝ ինտեգրելով ուսումնասիրված գործոնները:

Հայաստանը կրթության մակարդակով ԱՊՀ երկրների մեջ զբաղեցնում է բավականին բարձր դիրք՝ սլավոնական պետություններից և Ղազախստանից հետո: Կարելի է ենթադրել, որ դա, թերևս, խորհրդային կրթական համակարգի իներցիայի արդյունք է, որը կարող է ժամանակի ընթացքում չեզոքացվել, քանի որ կրթության համար կատարված ծախսերն ուսումնասիրելիս նկատում ենք ոչ դրական միտում: Նույն ԱՊՀ երկրների շարքում կրթական բավականին ցածր ծախսերով մենք Ադրբեջանի հետ զբաղեցնում ենք նախավերջին դիրքը: Իսկ միջազգային դասակարգումով Հայաստանը 153 երկրների մեջ 121-րդ տեղում է[2], ինչը չափազանց մտահոգիչ է: Շատ հակասական, անհասկանալի և դժվար բացատրելի է Ղազախստանի դիրքը. կրթության մակարդակով նա ԱՊՀ երկրնե-

[1] http://www.json.ru/poleznye_materialy/free_market_watches/analytics/razvitie_otrasli_infokommunikacionnyh tehnologij_ikt_v_rossii/

[2] http://gtmarket.ru/ratings/expenditure-on-education/info

րի մեջ զբաղեցնում է երկրորդ, իսկ կրթության համար կատարվող ծախսերով՝ վերջին տեղը:

ԱՊՀ երկրները գիտահետազոտական և փորձարարական կոնստրուկտորական աշխատանքներին ուղղված ծախսերի մակարդակով կրկին էապես զիջում են տնտեսապես զարգացած երկրներին: Ռուսաստանի ցուցանիշը, որն ամենաբարձրն է ԱՊՀ երկրների ցուցանիշներից, առաջին տեղը զբաղեցնող Իսրայելի ցուցանիշից փոքր է գրեթե 4, իսկ ԱՊՀ երկրների միջին դիրքերում գտնվողներինը՝ համարյա 8 անգամ: Հայաստանի ցուցանիշը շուրջ քառակի փոքր է Ռուսաստանի և մոտ 16 անգամ՝ Իսրայելի ցուցանիշից:

ԱՊՀ երկրների մեկ շնչին ընկնող ՀՆԱ մակարդակի և մարդկային զարգացման ինդեքսի համատեղ դիտարկմամբ առաջատար դիրքեր են զբաղեցնում Ռուսաստանը և Ղազախստանը: Հայաստանը երկու դեպքում էլ միջին դիրքերում է:

Այստեղ էլեկտրոնային կառավարության համակարգերը զարգացնողների շարքում ընդգծված առաջատար են Ռուսաստանը և Ղազախստանը: Հայաստանն այս առումով հետին դիրքերում է:

Ցանցային պատրաստվածության տեսանկյունից էլ բարվոք չէ Հայաստանի զբաղեցրած դիրքը ինչպես միջազգային վարկանիշով (82-րդը՝ 144 երկրների թվում), այնպես էլ ԱՊՀ սանդղակով (6-րդը՝ 11 երկրների մեջ):

Գիտելիքների և գիտելիքների տնտեսության մակարդակի ցուցանիշներն այն բացառիկ ցուցանիշներն են, որոնցով Հայաստանը գտնվում է առաջատար դիրքերում՝ համապատասխանաբար երրորդ և չորրորդ: Մեր կարծիքով՝ սա բացատրվում է նախկինում մեր երկրում այդ ուղղությունների զարգացման մակարդակով և իներցիայով: Հետևաբար, եթե պետության կողմից չիրականացվի որոշակի քաղաքականություն, ապա տարիների ընթացում այս բնագավառում ևս հետընթացը կլինի անխուսափելի:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ինդեքսի դինամիկայի հիման վրա կառուցվել են գծային և ոչ գծային տրենդներ՝ զարգացման միտումներն ուսումնասիրելու նպատակով: Ոչ գծային վերլուծության արդյունքով ընտրվել են առավել սերտ կապ արտահայտող ֆունկցիաները /գծապատկեր 1/:

Ընդհանուր առմամբ Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում այս ինդեքսով զբաղեցնում է միջին դիրք, սակայն արձանագրում է աճի ընգծված տեմպ:

Ուսումնասիրություններն ըստ առանձին ցուցանիշների, իհարկե, ներկայացնում են որոշակի պատկեր, բայց առավել ծանրակշիռ արդյունք կարելի է ստանալ, եթե այդ ցուցանիշները դիտարկվեն մեկ համակարգում: Այս առումով ինտեգրալ ցուցանիշի հաշվարկի համար առաջարկվում է երկու մեթոդ՝ պարզ գումարի և կշռված գումարի մեթոդները:

Հիմնվելով պարզ գումարի մեթոդի վրա՝ առաջարկվող ինտեգրալ ցուցանիշի ձևավորման տրամաբանությունը հետևյալն է. յուրաքանչյուր ուսումնասիրված ցուցանիշի համար, ԱՊՀ երկրի՝ իրար հանդեպ դիրքերի արժեքները գումարում ենք և ստանում ինտեգրված ցուցանիշ, որը և համեմատում ենք մյուս երկրների զբաղեցրած դիրքի հետ: Այսպիսով, ավելի բարձր տեղեր կզբաղեցնեն ավելի քիչ միավորներ հավաքած երկրները:



Գծապատկեր 1. ***ԱՊՀ երկրների տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ինդեքսի դինամիկան***

Ինտեգրալ ցուցանիշի հաշվարկման բանաձևը հետևյալը կլինի.

$$I_s=X_1+X_2+.....+X_n,$$

որտեղ $X_1,.....X_n$-ն 1-ից n ցուցանիշների վարկանիշն է ԱՊՀ երկրների շարքում:

Կշռված մեթոդի էությունն այն է, որ յուրաքանչյուր դիտարկված ցուցանիշի համար առաջարկվում են կշիռներ, որոնց ընդհանուր գումարը պետք է հավասար լինի 100-ի: Ինտեգրալ ցուցանիշի հաշվարկման բանաձևը կձևակերպվի այսպես.

$$I_k=A_1X_1+A_2X_2+.....+A_nX_n,$$

որտեղ $A_1,.....A_n$-ն համապատասխան ցուցանիշների կշիռներն են:

Կշիռների բացահայտման նպատակով դիտարկում ենք առանձին ցուցանիշների ազդեցությունները այլ ցուցանիշների վրա: Եթե տվյալ ցուցանիշի ձևավորման վրա ազդող ցուցանիշների շարքում առկա են մեր դիտարկած մեկ և ավելի այլ ցուցանիշներ, ապա նրա կշիռը կլինի համապատասխանորեն բարձր, քան ձևավորող ցուցանիշներինը առանձին-առանձին վերցրած:

Որոշենք միավոր կշռի նորմատիվը (NA): Դիտարկվել են հետևյալ ինդեքսները՝ X_1 - կրթության մակարդակի, X_2 - կրթության վրա ծախսերի, X_3 - ԳՀՓԿԱ վրա ծախսերի, X_4 – նորամուծության, X_5 - մեկ շնչին ընկնող ՀՆԱ, X_6 - մարդկային զարգացման, X_7 – էլեկտրոնային կառավարության, X_8 - ցանցային պատրաստվածության, X_9 – գիտելիք-ների, X_{10} - գիտելիքների տնտեսության, X_{11} - ՏՀՏ:

$I_k=NAX_1+NAX_2+NAX_3+NAX_4+NAX_5+3NAX_6+2NAX_7+NAX_8+4NAX_9+3NAX_{10}+2NAX_{11}$

NA+NA+NA+NA+NA+3NA+2NA+NA+4NA+3NA+2NA=100Na,

որտեղից՝ 20Na=100 և NA=5

Հիմնվելով NA արժեքների վրա՝ վերոնշյալ բանաձևի համաձայն կորոշվի յուրաքանչյուր ինդեքսի կշիռը:

Ըստ առաջադրված մեթոդի՝ Հայաստանը զբաղեցնում է 5-րդ տեղը՝ Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելառուսից և Ղազախստանից հետո:

Աղյուսակ 1

ԱՊՀ երկրների՝ ուսումնասիրված միջազգային վարկանիշների ինտեգրալ ցուցանիշը /կշռված գումարի մեթոդով/

Երկիր	Կիրառական գիտության մակարդակի վարկանիշ	Գիտության ֆինանսավորման վարկանիշ	Գիտության ոլորտում կադրերի պատրաստման վարկանիշ	Գիտության ոլորտում միջազգային համագործակցության վարկանիշ	ՀՆԱ նկատմամբ ՀԶՊ ծախսերի վարկանիշ	Գիտության զարգացման վարկանիշ	Գիտության ոլորտում նորարարական գործունեության վարկանիշ	Գիտության ոլորտում ենթակառուցվածքների վարկանիշ	Գիտության ոլորտում տեղեկատվական ենթակառուցվածքների վարկանիշ	Գիտության ոլորտում ռեսուրսների վարկանիշ	Գիտության ոլորտում ռեսուրսների և արդյունքների ինտեգրալ վարկանիշ	Ընդհանուր վարկանիշ	Տեղը
Ռուսաստան	15	25	5	15	5	30	10	15	20	15	20	175	1
Ուկրաինա	5	15	10	20	35	60	40	20	40	45	40	330	2
Բելառուս	20	20	15	25	15	15	30	30*	80	30	60*	340	3
Ղազախստան	10	45	25	30	10	45	20	5	120	75	10	395	4
Ուզբեկստան	45	55	30*	50	45	135	60	30*	160	105	110	825	10
Մոլդովա	35	5	20	5	40	120	50	25	100	90	50	540	6
Ադրբեջան	55	35	35	40	20	75	80	10	120*	90*	30	590	7
Հայաստան	25	40	30	10	30	90	70	30	60	60	60	505	5
Ղրղզստան	40	10	40	45	50	165	90	40	140	120	80	820	9
Տաջիկստան	50	30	45	35	55	150	100	35	180	135	70	885	11
Թուրքմենստան	30	55	30*	55	25	105	110	30*	120*	90*	60*	710	8

ԱՊՀ երկրները վերջին տարիներին ակտիվորեն համագործակցում են տեղեկատվական տեխնոլոգիաները զարգացնելու ուղղությամբ: Այդ մասին են վկայում դեռևս 2006 թ. նոյեմբերի 26-ին ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ հաստատված՝ Ինֆորմատիզացման բնագավառում համագործակ-

ցության ռազմավարությունը[1] և մինչև 2010 թ. դրա իրականացման գործողությունների պլանը[2]: Հետագայում, ի լրումն վերոնշյալի, հաստատվեց հասարակության կառուցման և զարգացման ռազմավարություն՝ մինչև 2015 թ. իրականացման գործողությունների պլանով[3]:

ԱՊՀ բոլոր պետությունները աշխարհի զարգացած երկրներից դեռևս էականորեն հետ են մնում տեղեկատվական ենթակառուցվածքների զարգացման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման և էլեկտրոնային ծառայությունների տրամադրման ոլորտներում:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ ԱՊՀ երկրներից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմամբ առաջատար դիրքեր են զբաղեցնում Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը և Ղազախստանը: Ուստի մյուս երկրների, այդ թվում՝ Հայաստանի համար կարևոր է նրանց փորձի ուսումնասիրությունը և դրա դրական կողմերի փոխառումը:

Հոդվածը նվիրված է ԱՊՀ երկրներում, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման մակարդակի համեմատական վերլուծության խնդիրներին: Մասնավորապես ուսումնասիրվել են տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ դիրքը և տեղը ըստ միջազգային վարկանիշային ցուցանիշներիկ, այդ թվում ԱՊՀ անդամ երկրների կազմում, հաշվի առնելով նրանց հետ զարգացման մեկնարկային նույն պայմանները: Օգտագործվել են դիտարկվող ոլորտին վերաբերող, միջազգային կազմակերպությունների կողմից մշակված վարկանիշային ցուցանիշները և ինդեքսները: Մշակվել է ցուցանիշների ինտեգրման մեթոդ, որը թույլ է տալիս որոշելու երկրի դիրքը այդ ոլորտի ուսումնասիրված բոլոր ցուցանիշների համատեղմամբ:

ВАРДАН САРКИСЯН
ГРИГОР АРКЕЛАТЯН

ОПРЕДЕЛЕНИЕ УРОВНЯ ТЕХНОЛОГИЧЕСКОГО РАЗВИТИЯ РА НА ТЕРРИТОРИИ СНГ С ИСПОЛЬЗОВАНИЕМ МЕТОДА ИНТЕГРАЦИИ ИНДЕКСОВ

Статья посвящена задачам сравнительного анализа уровня развития информационных и телекоммуникационных технологий в странах СНГ и в их числе – в Армении. В частности, выявлены позиции Армении в мировых рейтингах по сфере информационных и телекоммуникационных технологий, в том числе в составе стран СНГ, учитывая их похожие стартовые условия. Использованы разработанные международными организациями рейтинги и показатели, относящиеся к исследуемой сфере. Разработан метод интеграции показателей, позволяющий определить позицию страны в данной сфере, при условии совмещения всех исследованных показателей.

---

[1] www.rcc.org.ru/userdocs/inform/docs/Strategy/Strat.doc
[2] http://cis.minsk.by/reestr/ru/printPreview/text?id=2065&serverUrl=http://cis.minsk.by/reestr/ru
[3] http://e-cis.info/page.php?id=22902

VARDAN SARGSYAN
GRIGOR ARKELATYAN

DETERMINING THE LEVEL OF TECHNOLOGICAL DEVELOPMENT OF RA AMONG NIS USING THE INDICES INTEGRATION METHOD

The article deals with the problem of comparative analysis of the levels of development of information and communication technologies in NIS and in Armenia. In particular, is determined the position of Armenia in the world rankings in the field of information and telecommunications technologies, including NIS, taking into account similar starting conditions. Indicators related to the investigated area are used. Method of integration indicators, subject to the combination of all the indices studied, is developed, allowing to determine the country's position in this area.

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ
ՀՌԻՓՍԻՄԵ ՕՍԻՊՅԱՆ
Ծրագրավորող, ՀՊՏՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հիմնաբառեր. *տեխնոլոգիական զարգացում, թվային տնտեսություն, ինդեքսներ, Վրաստան, Հնդկաստան*

Բարձր տեխնոլոգիաների միջազգային վարկանիշային դասակարգումները թույլ են տալիս գնահատելու տվյալ երկրի ՏՀՏ ենթակառուցվածքի որակը և սպառողների, գործարարների ու կառավարության՝ ՏՀՏ-ն արդյունավետ կիրառելու ունակությունը: Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և տնտեսական համակարգի վրա դրանց ազդեցությունների ուսումնասիրության առումով նախ և առաջ կարևորվում է համապատասխան երկրների հետ համեմատական վերլուծությունների միջոցով ՀՀ դիրքի բացահայտումը: Նման ուսումնասիրությունները էական են ոչ միայն Հայաստանի համար՝ ներքին խնդիրներին լուծում տալու նպատակով, այլև դրսից մեր երկրում ՏՀՏ զարգացման ներուժի և հեռանկարների մասին որոշակի կարծիք ձևավորելու տեսանկյունից:

Միջազգային վարկանիշային դասակարգումների ինդեքսների և ինդիկատորների հաշվարկման հիմքում ընկած են երկրների կողմից ներկայացվող վիճակագրական ցու-

ցանիշները: Միջազգային չափանիշների, դասակարգումների ու գնահատականների համատեքստում ՀՀ ՏՀՏ ոլորտը հետազոտելու համար արդիական հնչողություն է ստանում հասանելի վիճակագրական տվյալների, հետևաբար՝ ոլորտի վիճակագրական պլատֆորմի ուսումնասիրության խնդիրը: Հետազոտությունների համար կայուն տեղեկատվական հիմք ունենալու նպատակով չափազանց կարևոր է այս կամ այլ ոլորտի վիճակագրությունը կատարել միջազգային ստանդարտներին համապատասխան: Միջազգայնորեն համատեղելի վիճակագրական ձևաչափերը դեռևս զարգացող աշխարհում լայնորեն տարածված չեն, և դա է պատճառը, որ ներքին ուսումնասիրությունները հիմնված են միջազգային կազմակերպությունների մշակած ինդեքսների /համաթվերի/ վրա:

Այդ առումով են անհրաժեշտ ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաներին վերաբերող վիճակագրական ցուցանիշների համակարգի հետազոտությունը և առկա խնդիրների բացահայտումը, ինչպես նաև տվյալների պաշտոնական միջազգային բազաներում Հայաստանի ՏՀՏ ոլորտի նկարագրողական ցուցանիշների գնահատումը և այդ ամենի հիման վրա տեխնոլոգիական զարգացման մակարդակի համեմատությունն այլ երկրների հետ:

ՀՀ վիճակագրական ծառայության և այլ կազմակերպությունների հաշվարկած ցուցանիշները բավական սահմանափակ են և վերլուծության շատ նեղ հնարավորություններ են տալիս: Առկա են ոլորտի վիճակագրությանը վերաբերող՝ մեր կողմից նկատված մի շարք խնդիրներ. ապակենտրոնացվածությունը, անկանոնությունը, պարբերական հրատարակումների բացակայությունը, միջազգային ստանդարտներին անհամապատասխանությունը, Հայաստանի բարձր տեխնոլոգիաներին միջազգային կազմակերպությունների իրազեկության պակասը և բացի ՏՀՏ-ից, տեխնոլոգիական այլ ոլորտների մասին որևէ տեղեկության չգոյությունը: Տվյալների պաշտոնական միջազգային բազաներում ՀՀ ՏՀՏ ոլորտի նկարագրողական ցուցանիշների հետազոտությունը իրականացվել է Հնդկաստանի և Վրաստանի նմանօրինակ ցուցանիշներին զուգահեռ: Վրաստանն ու Հայաստանը պատկանում են եկամտաբերության /ցածր-միջին եկամտաբերություն/ և տարածաշրջանային դասակարգման /ԱՊՀ անդամ-պետություններ/ նույն խմբերին: Բացի դրանից, նրանք գտնվում են գլոբալ մրցունակության զարգացման գրեթե նույն մակարդակին, ինչպես նաև համարվում են միջազգային վարկանիշային դասակարգումներում աճի ամենաբարձր տեմպ ունեցող երկու պետությունները: Ինչ վերաբերում է Հայաստանին ու Հնդկաստանին՝ նրանք նույնպես պատկանում են ցածր-միջին եկամտաբերության խմբին, բայց Հնդկաստանը տարածաշրջանային այլ խմբի մեջ է /DEVASIA/: Այնուհետև. Հնդկաստանը գլոբալ մրցունակության զարգացման շատ ավելի բարձր մակարդակի վրա է, միջազգային վարկանիշային դասակարգումներում հիմնականում գերազանցում է Հայաստանի Հանրապետությանը և կարող է ՀՀ համար ծառայել բարձր տեխնոլոգիաների, մասնավորապես ՏՀՏ ոլորտի ռազմավարական մոդելի օրինակ:

Միջազգային վարկանիշային դասակարգումներում բարձր տեխնոլոգիական ոլորտը նկարագրվում է բաղադրյալ ինդեքսների, ենթաինդեքսների և ինդիկատորների համակարգով: Դրանց հաշվարկման հիմքում ընկած են ցուցանիշների որոշ հիմնական խմբեր, որոնք կարելի է հաշվարկների օպտիմալության նպատակով դասակարգել ըստ SS զար-

գացման վրա ազդող էական գործոններին պատկանելիության: Աղյուսակ 1-ը ՏՏ ոլորտի տարբեր միջազգային գնահատականների հաշվարկման թվային բազայի ամփոփ պատկերն է՝ ցուցանիշների տրամաբանորեն դասակարգված խմբերով:

Աղյուսակ 1

Միջազգային մրցունակության՝ ՀՀ բարձր տեխնոլոգիաների հիմնական ցուցանիշների խմբերը

Ցուցանիշ	Հայաստան		Վրաստան		Հնդկաստան	
	Արժեք	Դիրք[1]	Արժեք	Դիրք	Արժեք	Դիրք
1. ՏՀՏ քաղաքական և կանոնադրական միջավայր	3.3	104	3.3	100	3.7	75
2. Գործարարական և նորաստեղծական միջավայր	4.1	72	4.4	54	3.8	99
3. Տեղեկատվական և թվային բովանդակություն	**72**	**3.9**	**4.0**	**68**	**2.8**	**111**
4. Մատչելիություն	**5.0**	**77**	**6.4**	**11**	**7.0**	**1**
5. Հմտություններ	**4.9**	**59**	**4.6**	**83**	**4.3**	**95**
6. ՏՀՏ անհատական կիրառության մակարդակ	**3.1**	**77**	**3.2**	**75**	**2.0**	**121**
7. Բիզնեսում ՏՀՏ կիրառության մակարդակ	**3.3**	**89**	**3.1**	**112**	**3.7**	**45**
8. Կառավարական կիրառության մակարդակ	**3.9**	**78**	**4.1**	**63**	**4.5**	**40**
9. Տնտեսության վրա ազդեցության մակարդակ	**3.3**	**69**	**2.9**	**97**	**3.6**	**43**
10. Սոցիալական ազդեցության մակարդակ	**3.4**	**90**	**3.9**	**60**	**3.7**	**73**

Ուսումնասիրելով նաև ՀՀ միջազգային դիրքն ըստ մի շարք ցուցանիշների /ցանցային պատրաստվածություն, մրցունակություն, էլեկտրոնային կառավարություն/ և դիտարկելով երեք ցածր-միջին եկամտաբերությամբ երկրներում ՏՀՏ ոլորտի զարգացման դինամիկան՝ հանգել ենք մի շարք եզրահանգումների.

- ՀՀ-ն տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմամբ զիջում է համեմատվող երկրներին: Այնուամենայնիվ, Հայաստանի ՏՀՏ ոլորտը համարվում է ԱՊՀ և արևելաեվրոպական երկրների շարքում ամենաարագ զարգացողներից մեկը: Զարգացման կայուն տեմպերի մասին է վկայում ՀՆԱ-ում ՏՏ մասնաբաժնի աճը 2008 թ. 1%-ից մինչև 3.3% 2012 թ., ոլորտի ձեռնարկությունների քանակի ավելացումը 2008 թ. 175-ից մինչև 350 2012 թ.: Իբրև առաջնթաց, կա-

[1] *Եկամտաբերության տարբեր խմբերում ընդգրկված, ՀՏՖ կողմից ընտրված 144 երկրների դասակարգման մեջ զբաղեցրած տեղը:*

րելի է նշել նաև զբաղվածների թվի աճը 2008-2012 թ.՝ 4890 մարդուց մինչև 9364, ինչպես նաև ոլորտում շրջանառության և արտահանման ծավալների ավելացումը[1]:

- 2008 թ.-ից ի վեր, չնայած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներին, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական և հեռահաղորդակցական ոլորտում արձանագրվում է աճի դրական դինամիկա, որը կտրուկ ընդգծվում է հատկապես վերջին երկու տարիներին:
- 2008-2012 թթ. ՏՀՏ ոլորտում գրանցվել է 22.8% միջին տարեկան աճ, ոլորտի մասնաբաժինը արտահանումների ընդհանուր ծավալում 2008-ին գրանցված 7%-ից աճել մինչև 8%՝ 2012 թ[2]: Այդ աճը պայմանավորված է արտահանող ձեռնարկությունների զարգացմամբ ու ընդլայնմամբ: Ինչ վերաբերում է 2010 թ. արտահանման ծավալների կրճատմանը, ապա դա ֆինանսական ճգնաժամի հետևանք էր:
- 2012 թ. ներքին շուկան գնահատվել է մոտ 201.3 մլն ԱՄՆ դոլար կամ կազմել է ոլորտի համախառն հասույթի 63%-ը: Ընդ որում հարկ է նշել, որ ծրագրային ապահովման հատվածի մասնաբաժինը ներքին շուկայում 62% էր, իսկ համացանցային ծառայությունների հատվածի մասնաբաժինը՝ 38%՝ ապահովելով 76.6 մլն ԱՄՆ դոլար շուկայի ընդհանուր հասույթում:
- Համապատասխան վերլուծության ընթացքում պարզվել է, որ ՀՀ ՏՀՏ կանոնադրական միջավայրը[3] դիտարկված պետությունների համատեքստում ունի առավելություններ: ՏՀՏ-ին առնչվող օրենքների մշակմամբ ամենաբարձր արժեքը երեք պետություններից Հայաստանինն է: Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմամբ ՀՀ-ն սկսել է զբաղվել ավելի ուշ, քան Վրաստանն ու Հնդկաստանը: Նշանակում է՝ Հայաստանի Կառավարությունը տվյալ ոլորտի օրենքների և կանոնակարգերի մշակման հարցում ավելի բարձր տեմպ է արձանագրում: Սա մրցակցային զգալի առավելություն է, քանի որ ՏՀՏ ոլորտի օրենսդրական դաշտի անկատարությունն ու անհամատեղելիությունը աշխարհի մասշտաբով խիստ արդիական խնդիրներ են:
- ՀՀ-ն դիտարկվող երեք պետությունների շրջանակում առաջատար է համացանցային ծառայությունների անվտանգության ցուցանիշով, ինչը նույնպես կարևոր մրցակցային գործոն է:
- ՏՀՏ անհատական կիրառության մակարդակով Հայաստանը գերազանցում է Հնդկաստանի ցուցանիշը ավելի քան երկու անգամ, սակայն բիզնեսի կողմից կիրառության ինդեքսի դեպքում հակառակն է: Նշանակում է՝ Հնդկաստանի ռազ-

---

[1] Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Հայաստանի ՏՀՏ ոլորտի հետազոտության հաշվետվություն, 2012 թ., Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Հայաստանի ՏՀՏ ոլորտի հետազոտության հաշվետվություն, 2011 թ., mineconomy.am

[2] ՀՀ ԿԲ տվյալներ:

[3] ՀՀ ՏՀՏ կանոնադրական միջավայրը «Թվային տնտեսություն և տեխնոլոգիական զարգացում» հետազոտության առանձին ուղղություն է:

մավարական քաղաքականությունը, որ նպաստել է դիտարկված արդյունքներին հասնելու համար, կարող է հիմք ծառայել ՀՀ բիզնեսում ՏՀՏ ինտեգրման մոդելի նախագծման:

- Էլեկտրոնային կառավարության ցուցանիշի վերլուծության ընթացքում բացահայտվել է, որ ՀՀ-ն խնդիր ունի առցանց հասարակական ծառայությունների մեջ հասարակության ներգրավվածության առումով, ինչը, ըստ ՄԱԿ-ի՝ լուրջ խոչընդոտ է այլ կարևոր խնդիրների լուծմանը:
- Նկատվել է Հայաստանի Հանրապետությունում գիտատեխնիկական զարգացման դրական դինամիկա. սա վկայում է այն մասին, որ մեզանում SS ոլորտի զարգացման համար նույնպես որոշակի հենք է ստեղծվում:

Թվային տնտեսության զարգացումը կարող է մեզանում կուտակված բազմաթիվ խնդիրների լուծմանը նպաստել: Սակայն նրա ստեղծման դեպքում Հայաստանը կրկին կկանգնի վիճակագրական պլատֆորմի արդի խնդիրների առջև. տրամաբանական է, որ թվային տնտեսության ստեղծումը կառաջացնի համապատասխան վերլուծությունների անհրաժեշտություն, որոնց հիմքում էլ պետք է լինեն այդ տնտեսության գնահատականները:

Թվային տնտեսության գնահատման արևմտյան մոդելը բաղկացած է շուրջ հարյուր առանձին քանակական և որակական ցուցանիշներից: Թեև այդ ցուցանիշները գնահատվում են «Economist intelligence unit» կազմակերպության տարածաշրջանային վերլուծաբանների և խմբագիրների կողմից, այնուամենայնիվ գնահատականների համար հիմք են ծառայում պետությունների ներկայացրած վիճակագրական տվյալները, իսկ ՏՀՏ ոլորտի ՀՀ վիճակագրական համակարգը այսօր տալիս է վերլուծության սահմանափակ հնարավորություններ:

Խնդիրը կարող է լուծվել թվային տնտեսության, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ու հարակից այլ ոլորտների վերաբերյալ վերլուծական-վիճակագրական պարբերական հաշվետվությունների հրապարակմամբ:

Հոդվածում ներկայացվում են տեխնոլոգիական ոլորտի վիճակագրական համակարգի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Հիմնվելով միջազգային մակարդակով մշակված ինդեքսալ ցուցանիշների վրա՝ վեր է լուծվում ՀՀ միջազգային դիրքը տեխնոլոգիական զարգացման առումով: Կատարվում է Հայաստանի, Վրաստանի և Հնդկաստանի ցուցանիշների համեմատական վերլուծություն: Արվում են որոշակի եզրահանգումներ:

ВАРДАН САРКИСЯН
РИПСИМЕ ОСИПЯН

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ В СИСТЕМЕ МЕЖДУНАРОДНЫХ ВЫСОКОТЕХНОЛОГИЧНЫХ РЕЙТИНГОВЫХ КЛАССИФИКАЦИЙ

В статье представлены задачи технологического сектора статистической системы Республики Армения. На основе разработанных международных интегральных показателей проанализирована международная позиция Армении в сфере информационных технологий. Проведен сравнительный анализ показателей Армении, Грузии и Индии. Представлены некоторые выводы.

VARDAN SARGSYAN
HRIPSIME OSIPYAN

THE REPUBLIC OF ARMENIA IN THE INTERNATIONAL SYSTEM OF HIGH-TECH RATING INDICES

The paper presents the problems statistics of technology sector of the Republic of Armenia. On the basis of the developed international integrated indicators international position of Armenia in the sphere of information technologies is investigated. There was a comparative analysis with Georgia and India. Several conclusions are presented.

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ
ԱԼՎԱՐԴ ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ
ԼԵՎՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ

ԽՈՇՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ[1]

Հիմնաբառեր. *տեղեկատվական համակարգեր, ֆինանսական կառավարում, առևտրային ցանցեր, հաշվապահական հաշվառում, հաշվառման մոնիթորինգ*

Հաշվապահական տեղեկատվության շրջանառության ծավալների մեծացումը և ժամանակակից ձևաչափերը հրամայական են դարձնում հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգերի նոր որակի՝ տրամաբանական և գիտական որոշակի

[1] Հոդվածը ներկայացված է ՀՊՏՀ 2013 թ. ներքին դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

բաղկացուցիչ պարունակող տեղեկատվական-վերլուծական համակարգերի ստեղծումը: Խնդիրն ավելի է խորանում ներկայիս ցանցային տնտեսության պայմաններում, երբ կառավարչական արդյունավետ լուծումների համար անհրաժեշտ է կիրառել **բաց** համակարգեր, որոնց գործողությունը հիմնված է ֆինանսական և հաշվապահական տեղեկատվության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հոսքերի վրա:

Տեղեկատվական-վերլուծական համակարգերի ստեղծման համար հիմք կարող են լինել մի շարք նախադրյալներ.

- Հաշվապահական հաշվառման ոլորտը տեղեկատվական համակարգերի կիրառման առումով ամենափորձարկվածն է:
- Ներկայում դասական հաշվառումն իրականացվում է միայն տեղեկատվական համակարգերի միջոցով, սակայն տարբեր ոլորտներում առաջադրվում են դրանց կիրառման նոր խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում են ներքին աուդիտի և հաշվառման նոր մեթոդների իրականացման մոնիթորինգին, և դրանց լուծումը արդյունավետ կարող է լինել հաշվառման կառավարման գործառույթների համար:
- Ֆինանսական կառավարման արդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում տեղեկատվական համակարգերում ներառել նաև տրամաբանական բաղկացուցիչ:
- Տնտեսավարող սուբյեկտների և հարկային մարմինների հարաբերություններն աստիճանաբար անցում են կատարում էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի դաշտ՝ հաշվի առնելով վերջին օրենսդրական փոփոխությունների միտումները: Ակնհայտ է, որ հարկային վերադաս մարմնի հետ հարաբերությունները և ներկայացվող տեղեկատվությունը լինելու են բացառապես էլեկտրոնային եղանակով, իսկ այս գործընթացների կիզակետում են հաշվապահական ավտոմատ համակարգերի էլեկտրոնային տեղեկատվական հոսքերը:

Ներկայիս տնտեսական զարգացումներն այնպիսի ուղիով են, որ որոշակի հարցերում էականորեն փոխվում են դրանց հանդեպ պահանջները: Դեռևս 10-15 տարի առաջ հայաստանյան շուկայում չկային ձևավորված այնպիսի առևտրային ընկերություններ, որոնցում ի հայտ գար հաշվապահական հաշվառման համակարգման, ներքին վերահսկողության, ֆինանսական մոնիթորինգի իրականացման պահանջ, իսկ այսօր պատկերն ամբողջովին այլ է: Առևտրային խոշոր ցանց ձևավորող կազմակերպություններում հաշվապահական հաշվառմանը ներկայացվում են առավել բովանդակային խնդիրներ, որոնց լուծումը կապվում է գիտելիքի բաղկացուցիչ պարունակող համակարգչային ծրագրերի հետ: Այսպիսով, խոշոր առևտրային ցանցերում ներկայում առաջադրվում են նոր որակի խնդիրներ.

- Առևտրային ցանցերի հարկային և կորպորատիվ տեղեկատվական համակարգերում /ՀԾ կամ 1C/ գեներացվող տեղեկատվության համադրում, խնդիրների օպերատիվ բացահայտում և հաշվառման կառավարման մեթոդաբանության մշակում:
- Կառավարչական հաշվառման որոշումների արդյունավետության նպատակով առևտրային ընկերության հաշվապահական տեղեկատվության բազմակողմանի

վերլուծություն նորագույն մաթեմատիկական ապարատի միջոցով:

- Տեղեկատվական տեխնոլոգիաների և էկոնոմետրիկ մոդելավորման օգնությամբ դասական կորպորատիվ տեղեկատվական համակարգերում չներառված մի շարք ընթացիկ խնդիրների լուծում. օրինակ՝ ապրանքային պաշարների գնահատում, կանխատեսումներ և այլն:

Վերոնշյալ խնդիրների իրականացման նպատակով անհրաժեշտ է համապատասխան կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում, քանի որ առկա տեղեկատվական հոսքերը հսկայական ծավալների են հասնում, և հրամայական պահանջ է դրանց օպերատիվ մշակումը:



Գծապատկեր 1. ***Հաշվառման մոնիթորինգային համակարգի աշխատանքի տրամաբանությունը***

Այստեղ ուրվագծված է առաջարկվող համակարգի աշխատանքի տրամաբանությունը: Համակարգը տեղեկատվական կապ է ստեղծում առևտրային ցանցի ներքին համակարգի (օրինակ՝ ՀԾ) և արտաքին համակարգի (Հարկատու) միջև, ինչպես նաև պարունակում է տրամաբանական-հաշվարկային բաղկացուցիչ: Ըստ էության, ներկայացվում է համակարգի մեթոդաբանություն, սակայն տեղեկատվական կապերի տեխնիկական խնդիրները գործնականորեն հնարավոր է կարգավորել համապատասխան համաձայնագրերի կամ լիցենզիաների միջոցով:

Կառավարման տեղեկատվական ներկայացվող համակարգը առևտրային ձեռնարկության կառավարման համակարգի բաղկացուցիչ է և, այսպիսով, իր տեղը պետք է ունենա կառավարման ամբողջական համակարգում (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ***Տեղեկատվական համակարգի տեղը հաշվառման ամբողջական կառավարման համակարգում***

Ինչպես երևում է գծապատկերից՝ համակարգը կենտրոնական դեր ունի: Այն ենթադրում է ցանցային սերվեր, որը կարող է սպասարկել տարբեր իրավունքներով օգտագործողների և աշխատել **կլիենտ-սերվեր** տրամաբանությամբ: Այս կամ այն օգտագործողի իրավունքները ֆիքսվում են ըստ տեղեկատվական բազաներից, ինչպես նաև համակարգի հնարավորությունների շրջանակից օգտվելու մակարդակների: Տեղեկատվական համակարգը կարող է տեղադրվել ցանկացած լոկալ կամ WEB սերվերի վրա, որը կառավարիչներին հեռահար կամ մոբիլ օպերատիվ աշխատանքի հնարավորություն կընձեռնի:

Ինչպես ցանկացած կառավարման համակարգ՝ այս համակարգը բազմադիսցիպլինար է և ենթադրում է հաշվապահական, կառավարչական հաշվառման, տեղեկատվական տեխնոլոգիաների, վիճակագրության և տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման բաղկացուցիչներ: Այսպիսով, խնդիր է դրվում առևտրային ցանցերում հար-

կային, ֆինանսական և կառավարչական տեղեկատվական հոսքերի վերլուծության և համադրման նպատակով նախագծել տեղեկատվական համակարգ որը՝

- կպարունակի հաշվապահական մեթոդաբանական նոր մոտեցումներ, որոնք թույլ կտան նկատի առնելու խոշոր առևտրային ցանցերի հաշվապահական գործառույթների և ներքին աուդիտի առանձնահատկությունները,
- հնարավորություն կընձեռի գնահատելու հաշվապահական տեղեկատվական հոսքերի և ֆինանսական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության արդյունավետությունը՝ նպաստելով օպերատիվ լուծումներին,
- կներառի մաթեմատիկական ապարատի վրա հիմնված տրամաբանական հավելվածներ, որոնք բացակայում են դասական հաշվապահական համակարգերում, և որոնք հիմք կլինեն արդյունավետ կառավարչական հաշվառման համար,
- կունենա պարզ կիրառություն, կարող է օգտագործվել համացանցային միջավայրում,
- շահագործելիս չի ենթադրի լրացուցիչ աշխատանքային ռեսուրսների ներառում,
- կարիք չի լինի որոշ խնդիրների լուծման նպատակով դիմելու ներքին աուդիտի կամ աուտսորսինգի և այլ մեթոդների, որոնք այսպես թե այնպես կենթադրեն որոշակի լրացուցիչ ծախսեր,
- կիրառում է արդեն առկա տեղեկատվական ռեսուրսները:

Համակարգի մշակումը ենթադրում է մի շարք խնդիրների լուծումներ, որոնք կարելի է բաժանել երեք խմբի՝ 1. հաշվապահական մոնիթորինգի խնդիրներ, 2. ընթացիկ վերլուծություններ, 3. հաշվարկային հավելվածներ:

Հաշվապահական մոնիթորինգի համակարգում ներառվում են մի շարք խնդիրներ, որոնցից հատկապես կարևորվում են.

1. հարկային հաշվետվությունների հուսալիության ստուգումը,
2. էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության վերահսկողությունը /ֆինանսական անվտանգության և էլեկտրոնային տեղեկատվության հուսալիության աստիճանի բարձրացման խնդիր/,
3. ապրանքային մնացորդի վերահսկողության այլընտրանքային մոտեցումը:

Ընթացիկ վերլուծությունների ենթահամակարգի նպատակը ընթացիկ կառավարչական արդյունավետ լուծումներին նպաստելն է: Տվյալ պարագայում կարելի է առանձնացնել են երկու տիպի վերլուծություն.

1. իրացման վիճակագրական բազմաշերտ վերլուծություն,
2. շահութաբերության վերլուծություն:

Հավելվածները համակարգի տրամաբանական բաղկացուցիչ են: Որպես հավելվածներ՝ հանդես են գալիս, օրինակ, հաշվապահական ցուցանիշների հաշվարկման ալգորիթմերը, որոնք կարող են ընթացիկ փոփոխությունների ենթարկվել: Շնորհիվ ծրագրավորման ժամանակակից տեխնոլոգիաների՝ հավելվածների համակարգն անընդհատ ընդլայնման հնարավորություն ունի:

Վերոնշյալ խնդիրներն իրենց լուծումը կարող են ստանալ միայն ժամանակակից

տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ՝ հաշվի առնելով տեղեկատվության հսկայածավալ հոսքերի մշակման օպերատիվությունը. չէ՞ որ տնտեսական տեղեկատվության արժեքը էապես կախված է ժամանակի գործոնից: Դիտարկվող տեղեկատվական համակարգի կիրառման նպատակը առևտրային ցանցերում հարկային, ֆինանսական և կառավարչական տեղեկատվական հոսքերը համադրելն է, համադրվող տեղեկատվության գնահատումը, դրանով որոշումների կայացման տրամաբանություն և մեթոդներ առաջադրելը և այն օբյեկտիվ գործոնների ու սուբյեկտիվ դրսևորումների հայտնաբերումը, որոնք անհրաժեշտ են արդյունավետ ֆինանսական կառավարման համար:

Հոդվածում դիտարկվում են մի շարք խնդիրներ, որոնք կարևորվում են խոշոր առևտրային ցանցերում հաշվապահական հաշվառման մոնիթորինգի և ֆինանսական կառավարման արդյունավետության առումով: Այդ խնդիրները լուծում կարող են ստանալ կիրառվող առկա համակարգերը լրացնող տեղեկատվական համակարգերի ստեղծմամբ: Ներկայացվում են առևտրային ցանցերում հաշվապահական հաշվառման մոնիթորինգի տեղեկատվական համակարգի կառուցման գիտամեթոդական լուծումները:

ВАРДАН САРКИСЯН
АЛВАРД САРКИСЯН
ЛЕВОН СААКЯН

МЕТОДОЛОГИЯ И ЗАДАЧИ ИНФОРМАЦИОННОЙ СИСТЕМЫ МОНИТОРИНГА БУХГАЛТЕРСКОГО УЧЕТА В КРУПНЫХ ТОРГОВЫХ СЕТЯХ

В статье рассмотрен ряд задач, имеющих важное значение для повышения эффективности контроля за ведением бухгалтерского учета и осуществлением финансового менеджмента в крупных торговых сетях. Эти задачи могут решаться с помощью информационных систем, которые дополнят существующие бухгалтерские системы. Представлены научно-методологические решения по построению системы мониторинга бухгалтерского учета торговых сетей.

VARDAN SARGSYAN
ALVARD SARGSYAN
LEVON SAHAKYAN

PROBLEMS AND METHODOLOGY OF ACCOUNTING MONITORING INFORMATION SYSTEM IN LARGE COMMERCIAL NETWORKS

Article presents number of problems of importance for better control of accounting and financial management in large retail chains. These problems may be solved with the help of information systems, which complement the existing accounting systems. The article presents scientific and methodological solutions of develoment accounting monitoring systems for large commercial networks.

СИЛЬВА САГРАДЯН
Доктор технических наук, профессор, АГЭУ
ВОСКЕАТ ВОСКАНЯН
Кандидат химических наук, доцент, НИЗ МЗ РА
ТАНЯ МАТЕВОСЯН
Ассистент, АГЭУ

ОЦЕНКА НЕКОТОРЫХ ВИНОГРАДНЫХ КРАСНЫХ СТОЛОВЫХ ВИН

Ключевые слова: *натуральное виноградное красное сухое вино, органолептическая оценка, балльная оценка, минеральный состав, помутнение, гарантийный срок хранения, токсичные элементы*

ВВЕДЕНИЕ

Вино сопровождало человека с возникновения цивилизации до нашего времени. Армения считается одной из стран, стоящих у истоков виноделия и виноградарства. Сегодня виноделие занимает одно из ведущих мест в пищевой промышленности республики. Производство вина условно относят к одному из способов консервации виноградного сока[1].

Вино содержит большое количество химических соединений. На сегодняшний день определены и измерены около 600 его соединений. Эти сложные химические соединения присутствуют в вине в очень маленьких количествах. В состав вина входят 80% биологически чистой воды, 8,5-15% спирта, ряд органических кислот, сахара- глюкоза и фруктоза.

Считается, что ягоды винограда содержат почти все элементы таблицы Менделеева, которые переходят в винопродукт. Вино содержит 24 микроэлемента, в том числе – марганец, цинк, рубидий, фтор, ванадий, йод, титан, кобальт. Микроэлементный состав вина сильно зависит от почвы виноградника. По набору микроэлементов даже можно определить местность, откуда произошло вино.

По содержанию биологически активных веществ (БАВ) особое место занимают красные вина, которых относят к вершине виноделия. Как известно, в красном вине сочетаются множество полезных биологически активных веществ, необходимых организму и снижающих вредное действие спирта[2]. Специалисты считают, что красное вино обладает

---

[1] Սահրադյան Ս.Ի., Ֆիզիկական մեթոդների կիրառմամբ սննդամթերքի որակի, պահունակության և անվտանգության ապահովման տեսական և կիրառական հիմնախնդիրները, դոկտ. ատենապ., Երևան, 2006: http:// wwwparafarm.ru/mphp.mod=pagSSym=redvine

[2] Саградян С.И., Восканян В.С., Применение гамма облучения для обработки некоторых пищевых продуктов с целью удлинения их стойкости к хранению, Tbilisi, “Anals of agrarian sciens”, 2007, vol.5, N 4, p.81-84.

тонизирующим, диуретическим, антистрессовым, бактерицидным и антиаллергическим воздействием на организм человека. Все это обуславливает мнение медиков о полезности умеренного потребления красного вина.

В последние годы заметно повысилось потребление вина среди населения республики, что в свою очередь привело к росту производства и появлению вин новых марок. Рынок вина в республике в последнее время пополнился новыми марками качественных красных вин как местного производства, так и производимых в НКР, однако их высокие цены и низкая покупательская способность населения несколько ограничивают их потребление. Согласно статистике, в Европе в среднем в год на душу населения приходится 40-50 л вина, в России – 8, а в Армении - 1,0.

Целью нашей работы была оценка качества и безопасности наиболее потребляемых среди населения красных вин марки “Арени”, “Неркени”, “Хиндогны”, ”Ахтанак”, ”Такари”.

Материалы и методы

Объектом исследования были:

Образец № 1 – натуральное виноградное красное сухое вино “Арени”, производитель ООО “Прошянский коньячный завод” (дата выработки 19/10/09): изготовлено из винограда сорта Арени.

Образец № 2 – натуральное виноградное красное сухое вино “Арени”, производитель ООО “Прошянский коньячный завод” (дата выработки 21/02/10): изготовлено из винограда сорта Арени.

Образец № 3 – натуральное виноградное красное, сухое вино “Неркени”, производитель ЗАО “МАП” (дата выработки 10/12/09): изготовлено из винограда сорта Неркени, выращенного в Араратской долине.

Образец № 4 – натуральное виноградное красное, сухое вино “Арени”, производитель ЗАО “МАП” (дата выработки 21/08/09): изготовлено из винограда сорта Арени, выращенного в Араратской долине.

Образец № 5 – натуральное виноградное красное, сухое вино “Хиндогны”, производитель ЗАО “Степанакертский коньячный завод” (дата выработки 25/11/2011): изготовлено из винограда уникального сорта Хиндогны.

Образец № 6 – натуральное виноградное красное сухое вино “Areni country red vine”, производитель ООО “Арпа Алко” (дата выработки 14/12/10): изготовлено из технического сорта винограда “Арени” с. Арени из долины реки Арпа.

Образец № 7 - натуральное виноградное красное, сухое вино “Ахтанак”, производитель ЗАО “Арцах Бренди Компани” (дата выработки 17/2/2012): изготовлено из винограда сорта Ахтанак.

---

http:// wwwparafarm.ru/mphp.mod=pagSSym=redvine

Образец номер 8 - натуральное виноградное красное, сухое вино “Такари”, производитель Ч/П “Мельсон Саркисян” (дата выработки 10/12/2011): изготовлено из винограда сорта Хиндогны.

Макро - и микроэлемты в образцах определяли после соответствующей минерализации методом вольтамперометрии. Вольтамперометрические измерения проводили в санитарногигиенической испытательной лаборатории НИЗ МЗРА на вольтамперометрическом анализаторе “Экотест ВАА”.

Результаты исследования

Все изученные образцы вин находились в гарантированных сроках хранения (согласно датам розлива на маркировке). Однако только на образце номер 7 указан гарантийный срок хранения (6 месяцев), а маркировка образца номер 8 содержит “гарантийный срок хранения не ограничен”, в то время как ГОСТ 7208 –93 устанавливает гарантийный срок хранения 4-6 месяцев со дня розлива в зависимости от марки вина.

Для изучения органолептических показателей: прозрачность, цвет, вкус, букет, типичность, была создана дегустационная комиссия. Оценка общего сложения (гармонии) вина заключается в определении взаимного соответствия, соразмерности основных элементов качества.

Сенсорный анализ проводили по 10 балльной системе, учитывая только органолептические показатели[1]. Характеристика этих показателей дана согласно ГОСТ 7208-93[2].

При анализе были отмечены такие признаки вкуса как “свойственные вишневой косточке”, “бархатная терпкость”, (для образцов № 1 и № 2), “со вкусом граната и вишни” для образца № 3 (“Арени” ЗАО “МАП”), “с фруктовым ароматом вишни” для образца № 4 (“Неркени” ЗАО “МАП”), “бесподобный рубиновый цвет с неповторимым полным букетом и приятной терпкостью вкуса” для образца № 7 (“Ахтанак”, ЗАО “Арцах Бренди Компани”).

Исходя из полученных данных наиболее низко оценено такое качество вин, как типичность (образцы № 2, № 3 и № 4), вино “Арени” Прошянского коньячного завода от 21.02.10 и “Арени” “МАП” от 21.08.09, вино “Неркени” – производства “МАП”), что по всей вероятности говорит о несоблюдении технологических инструкций: технологии купажа вин данной марки и гарантийного срока хранения вин .

Выяснилось, что по органолептическим показателям исследуемые вина в основном получили оценку “вино хорошего качества” и “ удовлетварительного качества”, только два их бразца были признаны худшего качества.

---

[1] Алмаши К.К., Дрголав Е.С., Дегустация вин, М., Пищевая промышленность, 1979, с. 41, 152 с.
Սահրադյան Ս.Ի., Պարենային ապրանքների որակի փորձաքննություն, Երևան, Տնտեսագետ, 172 էջ, 2003:

[2] ГОСТ 7208-93. Вина виноградные и виноматериалы виноградные обработанные. Общие технические условия.

Нормируемые физикохимические показатели исследуемых образцов вин определяли известными в виноделии методами.

Таблица 1

Физикохимические показатели исследуемых образцов вин

Наименование показателя, единица измерения	*Норма по [4]*	*Результаты исследования*							
		N 1	*N 2*	*N 3*	*N 4*	*N 5*	*N 6*	*N 7*	*N 8*
Объемная доля этилового спирта, об%	9-13	11,0	10,7	11,0	11,2	10,5	12,2	10,3	10,7
Массовая конц. сахаров, не более г/дм^3	3,0	2,0	1,5	2,7	2,7	2,5	2,0	3,0	3,0
Массовая конц. титруемых кислот, г/дм^3	3-8	5,7	6,2	5,8	6,8	11.2	6,18	6,7	6.0
Массовая конц. летучих кислот, в пересчете на уксусную кислоту не более г/дм^3	1,2	0,8	0,8	0,7	0,9	1.0	0,62	0,9	0,7
Массовая конц. сернистой кислоты не более мг/дм^3									
а. общей	200	110	110	120	120	43,5	103,6	69,2	89,6
б. свободной	20	10,5	11,0	10,5	19,2	6,4	19,1	6,4	12,8

Как видно из таблицы 1 исследуемые образцы вин по основным нормируемым физикохимическим показателям соответствуют требованиям ГОСТ 72008-93, предъявляемым к сухим красным виноградным винам .

Следует отметить, что ни в одной из бутылок не было выявлено наличие осадка или помутнения. Однако, только образцы номер 1 и номер 6 по показателю **прозрачность** набрали наивысший балл. Другие вина по этому показателю были оценены в 0,4 балла (образцы № 2 и № 3), в 0,3 балла (№, № 4, 5 и 8) соответственно. Как известно, этот показатель, который оценивается в максимально 0,5 баллов, характеризует устойчивость вина к различным помутнениям. Производитель, устанавливая сроки хранения, гарантирует его качество по всем нормируемым показателям на этот период времени. Наиболее уязвимым параметром в этом отношении является устойчивость вина, проявляющаяся различными родами помутнения. Помутнения вина (пороки) могут быть обусловлены биологическимии, химическими факторами, такими как повышенное содержание солей некоторых металлов (меди, железа, олова, алюминия и т.д.[1].

Возникновение пороков вина зависит также от общего минерального состава вин и от условий их хранения: температуры, освещения, аэрации, кратковременной или дли-

[1] Энциклопедия виноградарства, т.2, Кишинев, “Молд. Сов. Энциклопедия”, -1986, с. 181, с. 215, с. 434, Кишковский З.Н., Мержианиан А.А.,Технология вина, М., Легк. и пищ. пром-сть,1984, 504 с., с. 234, Методы технохимического и микробиологического контроля в виноделии. ВНИВ и В ”Магарач”, 1980, с. 109, 142 с., Мержианиан А.А. и др., М., Легк. и пищ. пром-сть, 1984, 216 с.

тельной продолжительности пребывания без доступа воздуха, общего времени выдержки.

Известно, что вино содержит в среднем 1,5-2,5 г/дм^3 минеральных веществ, в составе которых преобладают калий, кальций[1]. Именно богатый минеральный состав обуславливает реминерализующие свойства вин.

Минеральный состав исследуемых вин изучали полярографическим методом после соответствующей минерализации и обработки полученного минерализата. Данные анализа приведены в таблице 2 .

Таблица 2

Результаты анализа исследуемых вин "Арени" (образцы № 1; № 2; № 3); "Неркени" (образец № 4); "Areni country red vine" (образец № 6), " Хиндогны" (образец № 5); "Ахтанак" (образец № 7); "Такари" (образец № 8)

Элемент	Содержание , мг/дм^3							
	№ 1	№ 2	№ 3	№ 4	№ 5	№ 6	№ 7	№ 8
Ca	82,0±1,1	86,5±1,0	22,0±0,9	102,0±13	115±1,2	63.0±0,9	98,5±1,1	110±1,3
Mg	49,0±0,1	47.2±0,2	48,0±0,7	85,0±0,8	87.4±1,0	93.5±1,1	92,3±1,2	60,3±0,9
Fe	8,3±0,1	8.6±0,2	8,7±0,1	6,7±0,08	7,2±0,1	6,25±0,1	11,7±0,2	9,5±0,2
K	485.0±10	465.0±12	479,0±20	630,0±30	400±20	680.5±30	460±15	418±25
Na	56,3±1,1	56.0±1,1	58,1±1,1	70,0±1,1	80.5±1,1	62.0±1,1	103±1,1	74,4±1,1
Cu	0,25±0,001	0,15±0,002	0,18±0,1	следы	003±0,001	1.2±0,01	0,35±0,02	0,1±0,01
Ni	н/об	н/об	н/об	н/об	н/об	н/об	н/об	н/об
Co	н/об	н/об	н/об	н/об	н/об	н/об	н/об	н/об

н/об – не обнаружено: содержание элемента ниже чувствительности метода (0,001 мг/дм^3)

Из данных таблицы 2 следует, что микроэлементы в исследуемых образцах представлены широким спектром. Как известно, содержащиеся в вине микроэлементы являютстя катализаторами и регуляторами обмена веществ в оргнизме человека. Некоторые входят в состав ферментов (Fe, Cu) и гормонов (йод). С вином в организм человека кроме витаминов (C, PP, B) и других биокатализаторов вводятся важнейшие макро- и микроэлементы – кальций, фосфор, магний, рубидий и т. д.[2], чем и объясняются его реминерализующие свойства.

Как и следовало ожидать, в исследуемых винах в наибольших количествах содержатся макроэлементы: калий, кальций, магний, натрий и железо. Несмотря на некоторое различие в полученных данных, резкого отличия в минеральном составе вин не выявлено.

Исходя из данных минерального состава вин, по всей вероятности низкую оценку показателя **прозрачность** образцов вин под номерами 4, 5 и 8 можно объяснить боль-

[1] Кишковский З.Н., Скурихин И.М., Химия вина, М., Пищ. пром-сть, 1976, 312 с.

[2] Венчиков А., Микроэлементы: Спектор и баланс // Наука и жизнь, 7, 1978, с.133.

шим содержанием ионов Ca^{2+}, которые при длительной выдержке могут вызвать помутнения обусловленные выпадением тартрата кальция. Согласно литературным данным, содержание кальция в красных винах более 80 мг/дм^3 может быть причиной кристаллического помутнения[1].

Как видно из таблицы 2 содержание железа и меди, которые чаще всего являются причинами возникновения пороков вина, называемых железным и медным кассами соответственно, находится в пределах допустимого (для железа - 5-20 мг/дм^3, для меди – 5 мг/дм^3). Норм сравнительно высокое содержание железа наблюдается в арцахских винах “Ахтанак (11,7 мг/дм^3) и “Такари” (9,5 мг/дм^3). Правда, найденные величины содержания железа и меди в норме, однако такое содержание железа должно несколько настораживать производителя.

В исследуемых винах определяли также содержание нормируемых токсичных элементов[2]. Определение этих элементов после минерализации образцов[3], проводили известными методами: определяли содержание свинца, кадмия, ртути и мышьяка методом инверсионной вольтамперометрии, применяя в качестве измерительного (рабочего) электрода графитовый электрод (свинец и кадмий), и золотой - в случае мышьяка и ртути[4]. Измерение проводились на вольтамперометрическом анализаторе “Экотест ВА”.

Таблица 3

Содержание токсичных элементов в исследуемых винах “Арени” (образец № 1; № 2; № 3), “Неркени” (образец № 4), “Areni country red vine” (образец № 6), “Хиндогны” (образец № 5), “Ахтанак” (образец № 7), “Такари” (образец № 8)

№ образца	Содержание , мг/дм^3							
	Pb		Cd		As		Hg	
	Норма	Найдено	Норма	Найдено	Норма	Найдено	Норма	Найдено
1	0,3	0,055	0,03	н/об	0,2	0,01	0,005	н/об
2	0,3	0,20	0,03	н/об	0,2	< 0,01	0,005	н/об
3	0,3	0,06	0,03	н/об	0,2	0.015	0,005	н/об
4	0,3	0,10	0,03	0.002	0,2	0.01	0,005	н/об
5	0,3	0,20	0,03	н/об	0,2	н/об	0,005	н/об
6	0,3	0,03	0,03	0,001	0,2	0,02	0,005	н/об
7	0,3	0,03	0,03	н/об	0,2	н/об	0,005	н/об
8	0,3	н/об	0,03	н/об	0,2	< 0,01	0,005	н/об

[1] Там же.

[2] Պարենային հումքի և սննդամթերքի անվտանգությանը և սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2, III - 4.9-01-2010, Հիգիենիկ պահանջներ:

[3] ГОСТ 262929-94, Сырье и продукты пищевые. Подготовка проб. Минерализация для определения токсичных элементов.

[4] ГОСТ 3162-2004 (ГОСТ РФ 5101-99) Инверсионно-вольтамперометрические методы определения содержания токсичных элементов (кадмия, свинца, меди и цинка).

В таблице 3 приведены данные по содержанию токсичных элементов в исследуемых образцах вин.

Из таблицы 3 видно, что содержание токсичных элементов (свинец, ртуть, арсен, кадмий) находится не только в норме, но и намного ниже предельно допустимых значений.

*Исследованные автором статьи 8 образцов виноградных натуральных красных сухих вин, произведенных в РА и НКР, по органолептическим и физикохимическим показателям в основном получили оценки **хорошего качества** и **удовлетварительного качества**.*

Выяснено, что по содержанию микроэлементов эти образцы мало отличаются за исключением содержания железа. Содержание же нормируемых токсичных элементов находится намного ниже предельно допустимых значений.

ՍԻԼՎԱ ՍԱՀՐԱԴՅԱՆ
ՈՍԿԵՀԱՏ ՈՍԿԱՆՅԱՆ
ՏԱՆՅԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԱՊԱԿ ԿԱՐՄԻՐ ՈՐՈՇ ՍԵՂԱՆԻ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Հոդվածի հեղինակների կողմից հետազոտվել է ՀՀ-ում և Արցախում արտադրվող «Արենի», «Ներկենի», «Հաղթանակ», «Տակառի» և «Խինդողնի» մակնիշի խաղողի սեղանի անապակ կարմիր գինիների 8 նմուշների որակը, հանքային կազմը և անվտանգության ցուցանիշները:

Դրանք, ըստ զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշների, ճանաչվել են հիմնականում որպես **լավ որակի** և **բավարար որակի** գինիներ:

Պարզվել է, որ հետազոտած գինիների հանքային կազմում էական տարբերություններ չկան (բացառությամբ երկաթի պարունակության): Թունավոր տարրերի պարունակությունը բոլոր նմուշներում շատ ցածր է թույլատրելի սահմանային նորմից:

SILVA SAHRADYAN
VOSKEAT VOSKANYAN
TANYA MATEVOSYAN

APPRAISAL OF SOME DRY RED WINES

Quality, mineral composition and safety indicators of the most used wines in Armenia and Artsakh of Areni, Nerkeni - wines produced by different producers in Armenia and Haghtanak, Takari, Khndoghni wines - produced by different producers in Artsakx have been studied by 8 specimens.

Only 3 of 8 specimens got “good quality wine” by the base appraisal. It was identifies that there is no essential difference of mineral composition except of iron content. Content of toxic components in all specimens was very law comparing with critic levels. The studied wines are safe on hygienic matter.

ԶՈՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, ՀՊՏՀ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Հիմնաբառեր. *քաղաքական և սոցիալական կայունություն, ֆիզիկական առողջություն, սոցիալական գիտելիքներ, կրթություն, հմտություններ, անհատի բազմակողմանի զարգացում, մարդկային կապիտալ, մարդկային զարգացման համաթիվ*

Տնտեսական կապերի միջազգայնացմանը զուգահեռ սոցիալ-տնտեսական գործընթացներից Հայաստանի Հանրապետությունում առանձնանում են այնպիսիք, որոնք ոչ միայն պահպանում են իրենց հրատապությունը, այլև մշտապես մնում են առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների շարքում: Դրանք են՝

- բնակչության առաջնային սոցիալական կարիքների բավարարումը և սոցիալական պաշտպանվածության ապահովումը, նրա զբաղվածության, հետևաբար՝ կենսամակարդակի բարձրացումը, աղքատության և գործազրկության նվազեցումը,
- երկրի աշխատանքային ռեսուրսների պարբերաբար վերլուծությունը, դրանց ներուժի գնահատումը, ինչը հնարավորություն կտա գտնելու աշխատուժի արդյունավետ օգտագործման ուղիներ, մշակելու միջոցառումներ՝ առանձին տարածաշրջանների տնտեսական հետամնացությունը կանխելու, միգրացիոն գործընթացներով պայմանավորված ժողովրդագրական և տնտեսական անհամամասնությունները վերացնելու համար:

Ներկայում հաստատված փաստ է, որ մեր երկրում առկա է համակարգային ճգնաժամ, որի բաղադրիչներից մեկն էլ հասարակության սոցիալ-տնտեսական շերտավորումն է, մարդկանց շահերի և պահանջմունքների բևեռացումը: Նման իրավիճակում օրակարգային խնդիր է դառնում մարդկային կապիտալի զարգացումը: Բոլոր ժամանակներում և բոլոր սոցիալական պայմաններում մարդու համար էական նշանակություն են ունեցել առողջ կենսակերպի ապահովումը, անհրաժեշտ նյութական և հոգևոր ռեսուրսների տնօրինումը: Դրանք նրա ստեղծագործական ակտիվությունը երաշխավորող պայմաններն են:

Մարդկային զարգացումը երկկողմանի գործընթաց է: Մի կողմից ենթադրում է այնպիսի որակների զարգացումը, ինչպիսիք են՝ ֆիզիկական առողջությունը, սոցիալական գիտելիքները, իմացությունն ու հմտությունները, իսկ մյուս կողմից՝ օգուտը, որ մարդն իր համար քաղում է վերոնշյալ իր հատկանիշներից: Եթե այս երկու կողմերի միջև հավասարակշռությունը խախտվում է, ապա դա կարող է դառնալ ինքնամեկուսացման, անձնական կոնֆլիկտների և սոցիալական լարվածության պատճառ: Հենց այստեղ է, որ գործնական կարևորություն է ստանում հասարակության բոլոր անդամների ընտրության

ազատության իրացումը, որն ամենից առաջ լիարժեք կենսապայմաններն են, կրթության հասանելիությունը, երաշխավորված զբաղվածությունը, առանձին խմբերի կամ ինչ-որ փոքրամասնության կողմից խտրական վարքագծի դրսևորման բացառումը: Սոցիալական ընտրության ազատությունն անհնար է առանց բաց հասարակության, ժողովրդավարության, շուկայական տնտեսության և ընդգծված սոցիալական քաղաքականության: Այդ ազատությունն է ապահովում մարդկային կապիտալի զարգացումը, և պատահական չէ, որ տվյալ հիմնախնդրին վերաբերող գիտական վերլուծություններում նրա տնտեսական բաղադրիչը կարծես թե մղվում է հետին պլան, առաջնային նշանակություն է տրվում կուտակված առողջությանը, կրթությանը, գիտելիքներին և այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են ազնվությունն ու կարգապահությունը:

Այսպես՝ Ս.Դյատլովը մարդկային կապիտալը ներկայացնում է մարդու կողմից ներդրումների միջոցով ձեռք բերված և կուտակված առողջության, գիտելիքների, հմտության, ընդունակությունների, մոտիվացիայի պաշարների ամբողջություն, որն օգտագործվում է հասարակական վերարտադրության այս կամ այն ոլորտում՝ դրանով իսկ ազդելով սեփական եկամուտների աճի վրա[1]: Դ.Սալվադորը և Բ.Պրիկինը մարդկային կապիտալի բնութագրիչ համարում են մտավոր ունակությունների և գործնական հմտությունների ձև ունեցող կապիտալը, որը ձեռք է բերվում կրթության, ուսման, պրակտիկ գործունեության ընթացքում[2]: Այս բնորոշումներից էապես չեն տարբերվում Գ.Բեքերի[3], Լ.Թուրուոյի մոտեցումները, թեև վերջինս կարևորում է նաև հարգանքը քաղաքական ու սոցիալական կայունության հանդեպ և պնդում, որ դա հնարավորություն է տալիս անհատի բազմակողմանի զարգացման համար ձևավորելու առավել ընդունելի և բարենպաստ միջավայր[4]: Մարդկային կապիտալի զարգացման համար ակտիվությունը, աշխատանքային կարգապահությունը, ազնվությունը, ընդհանուր կրթական և մշակութային մակարդակը կարևորում են Վ.Մարցինկեվիչը և Ի. Սավելևան[5]:

Երկրների պատմական փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մարդկային ներուժի զարգացման դժվարություններն առավել մեծ չափերով կապված են նոր սոցիալ-տնտեսական համակարգին անցման առանձնահատկությունների հետ: Ըստ էության, խոսքը մարդկային տիպի վերափոխման մասին է: Շուկայական տնտեսության արմատավորումն ու քաղաքական համակարգի վերափոխումը մեր երկրում էապես վատացրին մարդկային կապիտալի զարգացման նյութական պայմանները: Բավականին վատթարացավ առողջապահության և կրթության ֆինանսական ապահովությունը, աշխատատե-

---

[1] Дятлов С.А., Основы теории человеческого капитала, СПб, 1994, с. 83.

[2] D. Salvatore. International Economics. Macmillan Publishing Company. N.Y. 1987, p. 128., Прикын Б.В., Новейшая теоретическая экономика, Гиперэкономика, Москва, “Банки и биржи”, 1988, с. 438.

[3] Becker G.S. Human Capital: a Theoretical and Empirical Analysis, N.Y. 1964, p. 16.

[4] Thurow L. Investment in Human Capital. Belmont, 1970. p. 104.

[5] Марцинкевич В.И., Соболева И.В., Экономика человека, М., 1995, с. 14.

ղերի բացակայությունը հանգեցրեց բնակչության նշանակալից մասի իրական եկամուտների կրճատմանը, խորացան տարածաշրջանային հակասությունները, առաջացան աղքատության բարձր մակարդակով հետամնաց շրջաններ: Սոցիալ-տնտեսական ցուցանիշների վերլուծությունը փաստում է բնակչության կենսապայմանների էական վատթարացման մասին, իսկ ավելի հստակ դա արտացոլվում է մարդկային ներուժի զարգացման համաթվի (HDI) անկման մեջ[1]:

Ըստ առանձին տարիների մարդկային զարգացման համաթվի մեր համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ, իրոք, նոր սոցիալ-տնտեսական համակարգին անցման ժամանակաշրջանում մարդկային կապիտալի զարգացման պայմանները վատթարացել են ԱՊՀ գրեթե բոլոր երկրներում, ինչպես նաև՝ Վրաստանում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ԱՊՀ երկրների և Վրաստանիմ մարդկային զարգացման համաթիվը ըստ առանձին տարիների[2]

Երկրները	2000		2005		2012	
	Տեղը	ՄԶՀ	Տեղը	ՄԶՀ	Տեղը	ՄԶՀ
Հայաստան	76	*0,754*	83	*0,775*	87	*0,729*
Ռուսաստան	60	*0,781*	67	*0,802*	55	*0,788*
Ուկրաինա	80	*0,748*	76	*0,788*	78	*0,740*
Մոլդովա	105	*0,701*	111	*0,708*	113	*0,660*
Ղազախստան	79	*0,750*	73	*0,794*	69	*0,754*
Թուրքմենստան	87	*0,741*	109	*0,712*	102	*0,698*
Ուզբեկստան	95	*0,727*	113	*0,702*	114	*0,654*
Ղրղզստան	102	*0,712*	116	*0,696*	125	*0,622*
Բելառուս	56	*0,788*	67	*0,802*	50	*0,793*
Տաջիկստան	112	*0,667*	122	*0,673*	125	*0,622*
Ադրբեջան	88	*0,711*	98	*0,746*	82	*0,734*
Վրաստան	81	*0,748*	96	*0,754*	72	*0,745*

[1] Մարդկային ներուժի զարգացման համաթիվը ՄԱԿ-ի զարգացման ծրագրերով աշխարհի 185 երկրներում հաշվարկվող՝ կյանքի սպասվելիք տևողության, գրագիտության, կրթության, կենսամակարդակի և կյանքի որակի համեմատական ցուցանիշ է: Մինչև 2009 թ. այն ներկայացվում էր 3 մակարդակով՝ բարձր, միջին և ցածր, 2009 թ. սկսած մարդկային զարգացման զեկույցներում, ըստ համաթվի, երկրները դասակարգվում են 4 մակարդակի. շատ բարձր, բարձր, միջին և ցածր: Ցուցանիշը հաշվարկվում է երկրի զարգացման մակարդակը որոշելու նկատմամբ:

[2] Աղյուսակը կազմվել է Human Development Report 2002, pp. 149-152, Human Development Report 2007/2008, pp. 229-232, Human Development Report 2013, pp. 22-26 տվյալների հիման վրա:

Բերված վիճակագրությունը ուսումնասիրվող տարիներին որոշակիորեն փոփոխվել է այն առումով, որ եթե ըստ ՄԶՀ բարձր մակարդակ ունեցող երկրներում համաթվի արժեքը 2000 թ. տատանվում էր 0,942-0,800, միջինը՝ 0,796-0,511, իսկ ցածրը՝ 0,499-0,275 միջակայքում, ապա 2005 թ. համապատասխան ցուցանիշները կազմել են՝ 0,985-0,740, 0,694-0,493, 0,482-0,348: 2012 թ. դասակարգման փոփոխությամբ՝ շատ բարձր մակարդակում ՄԶՀ-ն կազմել է 0,955-0,805, բարձրում՝ 0,796-0,712, միջինում՝ 0,710-0,536, իսկ ցածրում՝ 0,534-0,304: 2000 և 2005 թթ. ուսումնասիրվող բոլոր երկրները նշված ցուցանիշներով միջին մակարդակի վրա էին, հինգ տարվա ընթացքում բարելավվել են միայն Ուկրաինայի և Ղազախստանի ցուցանիշները, մնացած երկրներում Մարդկային զարգացման համաթիվը նվազել է: 2012 թ. 2000 թ. համեմատությամբ Հայաստանը 76-րդ տեղից իջել է 87-րդ տեղը: Թեև 2005 թ. մեր երկիրը զբաղեցնում էր 83-րդ տեղը, այդուհանդերձ այդ նույն տարում նրա դիմաց գրանցված համաթիվը ուսումնասիրվող տարիների համեմատությամբ եղել է ամենաբարձրը: Բոլոր երեք տարիների կտրվածքով Ռուսաստանը, Ղազախստանը և Բելառուսը համարվում են առաջատարներ, ինչը չափազանց կարևոր է այդ երկրների միջև Մաքսային միության ձևավորման տեսանկյունից: 2005 թ. հարևան երկու երկրների համեմատությամբ Հայաստանը առաջատար էր, սակայն 2012 թ. և՛ Ադրբեջանը, և՛ Վրաստանը իրենց դիրքերն ամրապնդել են և առաջ անցել ոչ միայն Հայաստանից, այլև Ուկրաինայից: Մարդկային զարգացման համաթվի նոր դասակարգումից հետո Մոլդովան, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը շարունակում են մնալ միջին մակարդակում, քանի որ նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ այստեղ ՄԶՀ-ն զգալիորեն նվազել է, իսկ ԱՊՀ մնացած երկրները համարվում են համաթվով բարձր մակարդակ ունեցող երկրներ:

Այդ ցուցանիշով համաշխարհային առաջատարները 2000 թ. եղել են Նորվեգիան, Շվեդիան և Կանադան: Ամերիկայի Միացյալ Նահանգները զբաղեցրել է 6-րդ տեղը: 2005 թ. առաջատարների եռյակում էին Իսլանդիան, Նորվեգիան և Ավստրալիան, իսկ ԱՄՆ-ը 12-րդ տեղում էր: 2012 թ. Միացյալ Նահանգները զբաղեցրել է 3-րդ հորիզոնականը՝ իրենից առաջ թողնելով Նորվեգիային և Ավստրալիային:

Տնտեսագիտությունը դարեր շարունակ տնտեսական զարգացման գործոնները ներկայացրել է հող-կապիտալ-աշխատուժ շղթայով: Այստեղից էլ սկիզբ են առել և մինչև օրս պահպանվում են այն կեղծ պնդումները, թե փոքր երկրները պետք է ապավինեն աշխարհի «տերերին»: Տեղեկատվական հասարակությունը վերոնշյալ շղթայի վերջին օղակը տեղաշարժել է առաջ: Աշխատուժ-հող-կապիտալ: Ցանկացած երկրի, մեծ թե փոքր, զարգացման գլխավոր, անփոխարինելի, առաջնային, թանկարժեք և հուսալի գործոնը մարդն է, աշխատուժը, մարդկային կապիտալը: Զարգանում են և արևի տակ տեղ ունեն միայն ու միայն մարդկային գործոնն արժևորող երկրները: Մնացածները դատապարտված են և կշարունակեն գահավիժել՝ վկայակոչելով հողի սահմանափակության ու կապիտալի սղության կեղծ պատրվակները:

Հոդվածում դիտարկվում են բնակչության առաջնային սոցիալական կարիքների բավարարման, նրա զբաղվածության, կենսամակարդակի բարձրացման, աղքատության և գործազրկության նվազեցման, երկրի աշխատանքային ռեսուրսների պարբերաբար վերլուծության, դրանց ներուժի գնահատման, վերջին հաշվով՝ մարդկային կապիտալի զարգացման առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրները, որոնք առնչվում են տնտեսական կապերի միջազգայնացմանը զուգահեռ սոցիալ-տնտեսական գործընթացներին:

ЗОЯ ТАДЕВОСЯН

ИМПЕРАТИВ РАЗВИТИЯ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА

В статье рассматриваются проблемы удовлетворения первоочередных социальных нужд населения, обеспечения его занятости, повышения качества жизни, снижения уровня бедности и безработицы, а также периодического анализа трудовых ресурсов страны, оценки их потенциала и, наконец, развития человеческого капитала: они вызваны социально-экономическими процессами, идущими параллельно с глобализацией экономических связей.

ZOYA TADEVOSYAN

HUMAN CAPITAL DEVELOPMENT IMPERATIVE

In parallel, with the internationalization of economic relations in the socio-economic processes are allocated such relations, which always remain among the main issues to be addressed. We are talking about the satisfaction of urgent social needs of the population, their employment, improvement of living standards, reduction of poverty and unemployment, periodic analysis of the country's labor force; assess of their potential and, finally, the development of human capital.

ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. փոխառու կապիտալ, համաշխարհային վարկային շուկա, միջկառավարական վարկեր, վերազգային բանկ, ֆինանսական շուկա

Երեք տասնամյակների ընթացքում միջազգային ֆինանսական համակարգը, մասնավորապես՝ փոխատվական կապիտալի շուկաները, ենթարկվել է էական փոփոխությունների՝ վերջիններիս տարողունակության կտրուկ մեծացման, բազմազանեցման, ինչպես նաև գլոբալացման գործընթացների հետևանքով:

20-րդ դարի մայրամուտից սկսած՝ փոխատվական կապիտալի համաշխարհային

շուկայում դիտվել է կայուն և դինամիկ աճ, որը պայմանավորված է եղել փոխառու կապիտալի շարժի երկարաժամկետ միտումներով: Բացի դրանից, այդ շուկայի գործառությունների զարգացման վրա զգալի ազդեցություն են ունեցել ֆինանսական ազատականացմանն ուղղված բարեփոխումները[1], փոխառու կապիտալի աճող պահանջարկը:

Վարկային ռեսուրսների միջազգային շարժի հիմնական ազդակները միջկառավարական վարկերն են: **Միջկառավարական վարկեր** հասկացությունն ունի ավելի լայն իմաստ, քանի որ **կառավարություն** ասելով ընկալվում են նաև միջազգային և միջտարածաշրջանային կազմակերպությունները՝ Համաշխարհային բանկը (ՀԲ), Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ), Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկը (ԶՎԵԲ), Զարգացման ասիական բանկը (ԶԱԲ) և այլն: Երկրների միջև վարկային հարաբերություններում կարևոր նշանակություն ունեն նաև առևտրային բանկերի կողմից տրվող վարկերը:

Միջազգային արժութաֆինանսական կազմակերպությունների գործունեության շրջանակների ընդլայնումը, որ պայմանավորված էր հետսոցիալիստական երկրներում ժողովրդավարության և շուկայական հարաբերությունների արմատավորման լայնամասշտաբ գործընթացներով, ուղեկցվեց համաշխարհային վարկային շուկայի աշխարհագրության ընդլայնմամբ: Համասեռ տնտեսական օրգանիզմ ձևավորելու գաղափարը հանգեցրեց նրան, որ ԱՄՀ-ն, որն ի սկզբանե կողմնորոշված էր դեպի շուկայի «ձախողմամբ» երկրներին աջակցությունը, վաշինգտոնյան նոր կոնսենսուսի շրջանակներում փոխեց զարգացող երկրների հանդեպ իր քաղաքականությունը՝ ջանքերը կենտրոնացնելով նրանցում իրականացվող մասնավորեցման, ազատականացման և կայունացման գործընթացների վրա: Սկսած 1980-ական թթ. ՀԲ-ն ևս, առանձին ենթակառուցվածքային ծրագրերի վարկավորմանը զուգահեռ, զարգացող երկրներին տրամադրում է, այսպես կոչված, կառուցվածքային-հարմարողական փոխառություններ՝ ԱՄՀ հետ համաձայնեցնելով: Միևնույն ժամանակ, որքան էլ որ ԱՄՀ և ՀԲ կողմից առաջարկվող կառուցվածքային բարեփոխումները զարգացող երկրներում անհրաժեշտ են, այդուհանդերձ, առանց հստակ արդյունաբերական քաղաքականության դրանք չեն կարող արագացնել ինդուստրացման գործընթացները և կանխել անընդհատ խորացող հետամնացությունը: Այս երկու կազմակերպությունների գործունեությունից ոչնչով չի տարբերվում Առևտրի համաշխարհային կազմակերպության գործունեությունը, որը նույնպես սահմանափակում է պետությունների իրավունքները՝ միջամտելու տնտեսական զարգացման գործընթացներին: Խոսքն արտահանման լրավճարների օգտագործման, նոր ձևավորվող արտադրությունների մաքսային պաշտպանության արգելման, ՕՈՒՆ-ի ներգրավման համար պարտադիր պայմանների ընդունման մասին է:

Զարգացող երկրների տնտեսական հետամնացության հաղթահարումը պահանջում է համակարգային գործողություններ, քանի որ նրանցում ազգային շուկան նեղ է և քիչ

---

[1] **Eatwell J.,** *International Financial Liberalization: The Impact on World Development;* Office of Development Studies, New York, 1997, 66 p.

մրցունակ, պատմականորեն ձևավորվել է նյութատար ապրանքների արտադրությամբ մասնագիտացման համակարգ, ցածր է նաև մարդկային կապիտալի որակը, իսկ զարգացմանն անհրաժեշտ ներդրումների մոտիվացիան՝ թույլ: Այլ է իրավիճակը անցման շրջանի երկրներում, որտեղ արդյունաբերական հասարակությանը բնորոշ արտադրության մասնագիտացման և կոոպերացման, աշխատուժի որակավորման բարձր մակարդակի համեմատական առավելությունների հետագա իրացումը կասեցվեց նախկին տնտեսական կապերի խզման պատճառով, և այդ երկրները հայտնվեցին տնտեսական արմատական բարեփոխումներ կատարելու դժվարին խնդրի առջև: Գանձարանային պակասուրդները հանգեցրին նրանց արտաքին պարտքի արագ աճին: Նման իրավիճակում հայտնվեց նաև Հայաստանի Հանրապետությունը:

Կապիտալի համաշխարհային շուկայի զարգացման որակական տեղաշարժ տեղի ունեցավ 1960-ական թթ.: Վերազգային բանկերի ընդարձակման հզոր քաղաքականությունը և միջազգային ապրանքաշրջանառության արագ աճը պահանջում էին վարկային ռեսուրսների համարժեք ընդլայնում և դրանց հեշտ հասանելիություն: Նշված հանգամանքները եվրոարժույթի ստեղծման պատճառ դարձան: Որոշ հեղինակների կարծիքով՝[1] այդ գործընթացում որոշիչ դեր ունեցավ եվրոդոլարի շուկայի առաջացումը, որն ազատ էր կառավարության վերահսկողությունից և կարգավորումից: Եվրոարժույթների համաշխարհային շուկայի մասշտաբներն աճեցին՝ 1964 թ. 20 մլրդ ԱՄՆ դոլարից 21-րդ դարի սկզբին հասնելով 8 տրլն ԱՄՆ դոլարի: Ամբողջ աշխարհում արժութային գործառությունների օրական ծավալը հասնում է 1,5 տրլն ԱՄՆ դոլարի, ինչը գերազանցում է բոլոր երկրների գումարային արժութային պահուստները և տասն անգամ ավելի է համաշխարհային ապրանքաշրջանառության սպասարկման համար անհրաժեշտ արժութային ռեսուրսների չափից[2]:

Վարկային վերելքի ժամանակաշրջանում զարգացող և ձևավորվող շուկաներով երկրները բոլոր տարածաշրջաններում մասնակցել են արտաքին շուկաներից կորպորատիվ փոխառությունների ձեռքբերմանը: Սակայն փոխառությունների աճի առավել մեծ մասնաբաժինը պատկանում էր Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ձևավորվող շուկաներին՝ 2002 թ. 19 մլրդ ԱՄՆ դոլարի դիմաց 2007 թ.՝ 197 մլրդ ԱՄՆ դոլար: Միջազգային վարկային շուկաների ակտիվ փոխառուներ էին Հնդկաստանի, Ղազախստանի, Ռուսաստանի և Թուրքիայի ֆինանսական ինստիտուտները, առավելապես առևտրային բանկերը, որոնք փոխառու կապիտալի միջազգային շուկաների ռեսուրսներն օգտագործում էին աճող սեփական վարկային պորտֆելները ֆինանսավորելու համար:

2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ընթացքում զգալի տեղաշարժ գրանցվեց տնտեսության մեջ: Այսպես. կապիտալի ձևավորվող շուկաներով երկրները (զարգացող երկրները) դարձան համաշխարհային ՀՆԱ աճի միակ աղբյուրը:

---

[1] **Rajan, R. G., and Zingales, L.** Financial Dependence and Growth. American Economic Review 88 (3), 1998.

[2] **De la Torre A., Schmukler, S. L.** Emerging Capital Markets and Globalization.The Latin American Experience, Stanford University Press and World Bank, 2007.

2010 թ. ընթացքում բազմաթիվ զարգացող երկրներ աճի տեմպերով արագ վերականգնեցին նախաճգնաժամային մակարդակը[1]: Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ ձևավորվող կապիտալով երկրների աճող դերով հանդերձ՝ համաշխարհային տնտեսության մեջ նրանց մրցունակությունն ու ներդրումային գրավչությունը խիստ տարբեր են: Սրանով հիմնավորվում է այն փաստը, որ հենց այս երկրների, նաև՝ տարածաշրջանների, միջև գոյություն ունեցող տարբերությունները պետք է համալիր կերպով ուսումնասիրվեն և համակարգվեն՝ միջազգային ներդրումային փոխանակության մեջ նրանց մասնակցության մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև ներդրումային պորտֆելների ձևավորման օպտիմալացմանն ուղղված առաջարկների մշակման համար:

Գլոբալացման ներկայիս պայմաններում միջազգային վարկային շուկաները փոխկապակցված են: Այսպես. զարգացած երկրներում իրականացվող դրամավարկային քաղաքականության փոփոխությունները հանգեցնում են զարգացող երկրներում ֆինանսական ռեսուրսների ներհոսքի պարբերականությանն ու անկայունությանը[2] :

Համաշխարհային ֆինանսական կայունության՝ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կատարված հետազոտությունների արդյունքները վկայում են, որ, անկախ ֆինանսական շուկաներում վերջին շրջանում իրականացված բարենպաստ փոփոխություններից, ֆինանսական կայունության համար ռիսկերն ավելացել են, քանի որ գլոբալ ֆինանսական համակարգի կայունության հանդեպ վստահությունը դեռևս չնչին է: Թեև Եվրոպայի գերատեսչական մարմինների գործադրած բավականաչափ ջանքերը չեզոքացրել են ներդրողների միջավայրում մտավախություն առաջացնող հիմնական գործոնները, այդուհանդերձ ճգնաժամը եվրոյի գոտում մնում է անհանգստության գլխավոր առիթը: Արդյունքում կապիտալի նկատվող «փախուստը» և շուկայի հատվածավորումը խաթարում են Եվրոպական Միության հիմքերը՝ շուկաների ինտեգրումը և արդյունավետ միասնական դրամավարկային քաղաքականության իրականացումը[3]:

Գլոբալացման պայմաններում ֆինանսական շուկաների զարգացումն ու վարկային ռեսուրսների հասանելիությունը կարևոր նախապայման են գործարար ակտիվության և տնտեսական գործունեության մրցունակության համար: Եվ պատահական չէ, որ ֆինանսական շուկաների զարգացածությունը ընդգրկված է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հաշվարկվող գլոբալ մրցունակության համաթվի 12 հենասյուներում: Ֆինանսական շուկաների զարգացման համաթիվը աշխարհի 144 երկրների համար հաշվարկվող գլոբալ մրցունակության համաթվի 8-րդ հենասյունն է, որն, իր հերթին, ձևավորվում է որպես ցուցանիշների համախումբ. դրանց թվում են՝ ֆինանսական ծա-

---

[1] World Economic Outlook: Tensions from the Two-Speed Recovery Unemployment, Commodities, and Capital Flows. IMF, April 2011. P. XV.

[2] **Mohan, R.** Monetary Policy in a Globalised World: A Practitioner's View. NewDelhi: Oxford University Press, 2009.

[3] Международный Валютный Фонд, Доклад глобальной финансовой стабильности 2012, Аналитическое резюме, Департамент денежно-кредитных систем и рынков капитала.
(տե'ս http://www.imf.org/external/russian/pubs/ft/gfsr/2012/02/pdf/sumr.pdf).

ռայությունների հասանելիությունը և մատչելիությունը, տեղական կապիտալի շուկայի միջոցով ֆինանսավորման ցուցանիշը, վարկերի հեշտ հասանելիությունը, վենչուրային կապիտալի առկայությունը, բանկերի կայունությունը, ֆոնդային բորսաների կարգավորումը և այլն:

Աղյուսակ 1

2012 թ. գլոբալ մրցունակության և ֆինանսական շուկաների զարգացման համաթվերը ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի[1]

№	Երկրներ	Գլոբալ մրցունակության համաթիվ (ԳՄՀ)	Վարկանիշն ըստ ԳՄՀ	Ֆինանսական շուկաների զարգացման համաթիվ (ՖՇԶՀ)	Վարկանիշն ըստ ՖՇԶՀ
Բարձր եկամուտներ ունեցող երկրներ					
1.	Շվեյցարիա	5.72	1	5.30	9
2.	Սինգապուր	5.67	2	5.85	2
3.	Ֆինլանդիա	5.55	3	5.50	4
4.	Շվեդիա	5.53	4	5.29	10
5.	Նիդերլանդներ	5.50	5	4.96	20
6.	Գերմանիա	5.48	6	4.66	32
7.	ԱՄՆ	5.47	7	5.07	16
Միջին եկամուտներ ունեցող երկրներ					
8.	Չինաստան	4.83	29	4.31	54
9.	Ինդոնեզիա	4.40	50	4. 07	70
10.	Հնդկաստան	4.32	59	4.90	21
11.	Ռուսաստան	4.20	67	3.19	130
12.	Վրաստան	4.07	77	3.79	93
13.	Հայաստան	4.02	82	3.97	78
Ցածր եկամուտներ ունեցող երկրներ					
14.	Տաջիկստան	3.80	100	3.35	124
15.	Բանգլադեշ	3.65	118	3.74	95
16.	Ղրղզստան	3.44	127	3.42	118
17.	Զիմբաբվե	3.34	132	3.60	109

Աղյուսակ 1-ում ներկայացված են 2012 թ. դրությամբ բարձր, միջին և ցածր եկամուտներ ունեցող առանձին երկրների գլոբալ մրցունակության ու ֆինանսական շուկաների զարգացման համաթվերը, ինչպես նաև նրանց վարկանիշերը ըստ այդ համաթվերի: Հատկանշական է, որ 144 երկրների շարքում գլոբալ մրցունակության համաթվի ամենաբարձր ցուցանիշը (5.72) ապահոված Շվեյցարիան ֆինանսական շուկաների զարգացման համաթվով ընդամենը 9-րդն է: Ըստ համաշխարհային տնտեսական ֆորումի 2012 թ. հրապարակած տվյալների՝ ֆինանսական շուկաների զարգացման մակարդակն ամենաբարձրն է Հոնկոնգում[2]:

---

[1] Աղբյուրը՝ **World Economic Forum,** *The Global Competitiveness Report 2012-2013* // Edited by professors Klaus Schwab and Xavier Sala-i-Martin, WEF, Geneva, 2012, p. 12-20.

[2] **World Economic Forum,** *The Global Competitiveness Report 2012-2013* // Edited by professors Klaus Schwab and Xavier Sala-i-Martin, WEF, Geneva, 2012, p. 18.

Աղյուսակ 2

Ֆինանսական զարգացման համաթիվը 2012 թ. [1]

№	Երկրներ	Ֆինանսական զարգացման համաթիվ (դիրքն ըստ կատարման)	Ֆինանսական զարգացման համաթվի 7 հենասյուները						
			Ինստիտուցիոնալ միջավայր (դիրքն ըստ 1-ին հենասյան)	Գործարար միջավայր (դիրքն ըստ 2-րդ հենասյան)	Ֆինանսական կայունություն (դիրքն ըստ 3-րդ հենասյան)	Բանկային ֆինանսական ծառայություններ (դիրքն ըստ 4-րդ հենասյան)	Ոչ բանկային ֆինանսական ծառայություններ (դիրքն ըստ 5-րդ հենասյան)	Ֆինանսական շուկաներ (դիրքն ըստ 6-րդ հենասյան)	Ֆինանսների հասանելիություն (դիրքն ըստ 7-րդ հենասյան)
1.	Հոնկոնգ	5.31 (1)	5.77 (9)	6.03 (2)	5.35 (8)	6.15 (1)	3.76 (10)	5.04 (4)	5.08 (4)
2.	ԱՄՆ	5.27 (2)	5.65 (13)	5.58 (13)	4.35 (38)	4.28 (21)	5.04 (1)	5.86 (1)	5.06 (5)
3.	Միացյալ Թագավորություն	5.27 (3)	6.00 (2)	5.75 (8)	4.12 (43)	5.80 (2)	4.85 (3)	5.44 (2)	4.51 (12)
4.	Սինգապուր	5.21 (4)	6.24 (1)	6.03 (1)	5.67 (3)	4.78 (10)	3.44 (12)	5.11 (3)	4.45 (14)
5.	Ավստրալիա	5.10 (5)	5.48 (18)	5.60 (12)	5.26 (9)	5.04 (7)	4.35 (5)	4.37 (8)	5.00 (6)
6.	Կանադա	5.00 (6)	5.90 (6)	5.72 (9)	5.06 (13)	4.60 (13)	4.24 (7)	4.27 (10)	5.21 (2)
7.	Ճապոնիա	4.90 (7)	5.58 (15)	5.27 (19)	4.93 (19)	5.69 (3)	4.32 (6)	4.71 (5)	3.81 (27)
8.	Շվեյցարիա	4.78 (8)	5.69 (12)	5.85 (6)	5.99 (2)	4.46 (16)	3.12 (15)	4.37 (7)	3.97 (24)
9.	Նիդերլանդներ	4.73 (9)	5.90 (7)	5.83 (7)	4.98 (16)	5.29 (4)	3.28 (13)	3.41 (17)	4.46 (13)
10.	Շվեդիա	4.71 (10)	5.94 (4)	5.64 (10)	4.79 (25)	5.03 (8)	2.07 (32)	3.77 (15)	5.73 (1)
11.	Գերմանիա	4.61 (11)	5.75 (10)	5.61 (11)	4.93 (18)	4.69 (12)	3.06 (16)	3.80 (13)	4.40 (16)
12.	Դանիա	4.53 (12)	5.85 (8)	5.89 (3)	4.84 (21)	4.19 (25)	2.19 (27)	3.97 (12)	4.75 (9)
13.	Նորվեգիա	4.52 (13)	5.98 (3)	5.88 (5)	5.44 (6)	5.21 (6)	2.23 (25)	2.61 (26)	4.31 (17)
14.	Ֆրանսիա	4.43 (14)	5.49 (17)	5.12 (22)	4.18 (42)	4.39 (19)	2.85 (17)	4.26 (11)	4.69 (11)
15.	Կորեայի Հանրապետություն	4.42 (15)	4.18 (34)	5.41 (15)	4.08 (44)	4.37 (20)	5.04 (2)	3.78 (14)	4.06 (22)
16.	Բելգիա	4.30 (16)	5.62 (14)	5.16 (21)	4.56 (27)	4.57 (15)	1.95 (35)	3.15 (19)	5.09 (3)
17.	Ֆինլանդիա	4.24 (17)	5.93 (5)	5.88 (4)	4.82(22)	4.27 (22)	1.60 (49)	2.39 (31)	4.80 (8)
18.	Մալայզիա	4.24 (18)	5.12 (21)	4.85 (25)	5.24 (10)	4.71 (11)	3.23 (14)	2.71 (24)	3.79 (28)
19.	Իսպանիա	4.22 (19)	4.93 (24)	4.67 (28)	3.37 (55)	5.27 (5)	2.82 (18)	4.71 (9)	4.15 (20)
20.	Իռլանդիա	4.14 (20)	5.74 (11)	5.46 (14)	3.54 (53)	4.58 (14)	2.70 (19)	2.79 (23)	4.18 (18)
21.	Քուվեյթ	4.03 (21)	3.85 (41)	4.68 (27)	5.13 (12)	3.43 (40)	1.78 (41)	4.63 (6)	4.73 (10)
22.	Ավստրիա	4.01 (22)	5.57 (16)	5.28 (18)	4.42 (31)	4.41 (18)	1.62 (47)	2.80 (22)	3.98 (23)
23.	Չինաստան	4.00 (23)	4.10 (35)	3.95 (47)	4.89 (20)	4.43 (17)	4.48 (4)	2.98 (21)	3.15 (41)
24.	Իսրայել	3.94 (24)	5.17 (19)	4.60 (31)	4.70 (26)	3.99 (30)	1.94 (36)	3.00 (20)	4.17 (19)

[1] Աղբյուր՝ **World Economic Forum,** *The Financial Development Report 2012*, Geneva, New York, p. 12-14.

25.	Բահրեյն	3.93 (25)	5.17 (20)	5.35 (16)	4.47 (30)	4.18 (27)	1.77 (43)	1.61 (48)	4.99 (7)
26	Արաբական Միացյալ Էմիրութ.	3.84 (26)	4.94 (23)	5.18 (20)	5.58 (4)	3.87 (31)	1.61 (48)	1.63 (47)	4.09 (21)
27.	Պորտուգալիա	3.76 (27)	5.01 (22)	4.93 (23)	2.65 (61)	5.02 (9)	1.74 (44)	2.57 (27)	4.41 (15)
28.	Հարավային Աֆրիկա	3.71 (28)	4.74(25)	4.31 (42)	4.94 (17)	3.51 (38)	2.45 (22)	2.67 (25)	3.39 (36)
29.	Չիլի	3.69 (29)	4.60 (26)	4.89 (24)	5.35 (7)	3.38 (41)	2.09(31)	1.92 (40)	3.59 (30)
30.	Իտալիա	3.69 (30)	4.27 (32)	4.64 (29)	3.62 (51)	4.06 (29)	2.38 (24)	3.38 (18)	3.46 (33)
31.	Սաուդյան Արաբիա	3.68 (31)	4.42 (28)	5.29 (17)	6.11 (1)	3.45 (39)	1.43 (53)	1.76 (42)	3.29 (40)
32.	Բրազիլիա	3.61 (32)	3.72 (46)	3.74 (49)	4.82 (24)	3.55 (36)	3.60 (11)	2.37 (32)	3.48 (32)
33.	Հորդանան	3.56 (33)	4.42 (29)	4.45 (37)	3.86 (48)	3.81 (33)	2.19 (26)	3.52 (16)	2.77 (52)
34.	Թաիլանդ	3.55 (34)	4.22 (33)	4.14 (45)	4.40 (34)	4.08 (28)	1.77 (42)	2.27 (33)	3.94 (25)
35.	Չեխիայի Հանրապետություն	3.49 (35)	4.04 (38)	4.42 (35)	5.19 (11)	4.24 (23)	1.56 (50)	1.41 (52)	3.55 (31)
36.	Պանամա	3.42 (36)	4.28 (31)	4.34 (38)	4.47 (29)	4.21 (24)	1.89 (38)	1.33 (58)	3.40 (35)
37.	Լեհաստան	3.41 (37)	4.10 (36)	4.40 (36)	4.31 (40)	3.17 (44)	2.68 (20)	1.75 (43)	3.43 (34)
38.	Սլովակիայի Հանրապետութ.	3.34 (38)	3.87 (40)	4.43 (34)	4.82 (23)	3.53 (37)	1.47 (52)	1.54 (49)	3.74 (29)
39.	Ռուսաստանի Դաշնություն	3.30 (39)	3.06 (59)	4.50 (32)	4.19 (41)	2.37 (58)	4.09 (8)	2.05 (35)	2.83 (50)
40.	Հնդկաստան	3.29 (40)	3.18 (56)	3.39 (55)	3.95 (46)	3.14 (45)	3.94 (9)	2.48 (28)	2.94 (45)
41.	Պերու	3.28 (41)	3.78 (45)	4.19 (43)	5.04 (15)	3.07 (46)	1.69 (46)	1.38 (55)	3.82 (26)
42.	Թուրքիա	3.27 (42)	40.9 (37)	4.49 (33)	3.22 (58)	3.66 (35)	1.70 (45)	2.39 (30)	3.33 (39)
43.	Մեքսիկա	3.25 (43)	3.78 (44)	4.05 (46)	5.05 (14)	3.25 (43)	2.03 (33)	1.64 (46)	2.96 (44)
44.	Հունգարիա	3.16 (44)	4.53 (27)	4.71 (26)	3.24 (57)	2.91 (51)	1.38 (54)	2.03 (36)	3.33 (38)
45.	Մարոկկո	3.15 (45)	3.54 (50)	4.15 (44)	4.33 (39)	3.66 (34)	1.84 (39)	1.64 (45)	2.92 (46)
46.	Կոլումբիա	3.15 (46)	3.46 (52)	4.32 (41)	4.52 (28)	3.02 (48)	1.93 (37)	1.45 (50)	3.36 (37)
47.	Ղազախստան	3.13 (47)	3.59 (49)	4.61 (30)	4.41 (32)	2.54 (55)	2.15 (28)	1.69 (44)	2.89 (47)
48.	Հունաստան	3.12 (48)	4.35 (30)	4.32 (40)	2.14 (62)	4.19 (26)	1.29 (57)	2.45 (29)	3.12 (42)
49.	Ֆիլիպիններ	3.12 (49)	3.94 (39)	3.44 (54)	3.87 (47)	3.02 (49)	2.68 (21)	2.18 (34)	2.74 (53)
50.	Ինդոնեզիա	2.95 (50)	3.46 (51)	3.49 (53)	4.40 (35)	2.82 (53)	2.38 (23)	1.39 (54)	2.69 (54)
51.	Ռումինիա	2.93 (51)	3.79 (43)	4.33 (39)	4.05 (45)	2.88 (52)	1.19 (59)	1.43 (51)	2.86 (48)
52.	Վիետնամ	2.92 (52)	3.44 (53)	3.32 (56)	3.26 (56)	3.87 (32)	1.53 (51)	1.99 (37)	3.06 (43)
53.	Եգիպտոս	2.78 (53)	3.31 (54)	3.64 (51)	3.80 (49)	3.31 (42)	1.31 (56)	1.94 (39)	2.11 (62)
54.	Քենիա	2.75 (54)	3.65 (47)	3.29 (57)	3.49 (54)	2.48 (57)	2.14 (30)	1.37 (56)	2.85 (49)
55.	Արգենտինա	2.68 (55)	3.22 (55)	3.68 (50)	3.18 (59)	3.04 (47)	2.14 (29)	1.27 (59)	2.21 (60)
56.	Գանա	2.67 (56)	3.80 (42)	3.78 (48)	4.40 (33)	1.89 (60)	1.13 (61)	1.01 (61)	2.67 (55)
57.	Բանգլադեշ	2.62 (57)	2.47 (61)	2.68 (62)	4.46 (37)	3.00 (50)	1.17 (60)	1.83 (41)	2.83 (51)
58.	Պակիստան	2.61 (58)	3.10 (58)	3.15 (58)	3.78 (50)	2.79 (54)	1.35 (55)	1.97 (38)	2.13 (61)
59.	Ուկրաինա	2.56 (59)	2.93 (60)	3.57 (52)	3.14 (60)	2.30 (59)	1.95 (34)	1.40 (53)	2.66 (56)
60.	Տանզանիա	2.55 (60)	3.14 (57)	3.05 (59)	5.51 (5)	1.89 (61)	1.01 (62)	1.00 (62)	2.24 (59)
61.	Նիգերիա	2.46 (61)	3.65 (48)	2.78 (60)	4.39 (36)	1.79 (62)	1.19 (58)	1.13 (60)	2.33 (57)
62.	Վենեսուելա	2.37 (62)	2.32 (62)	2.77 (61)	3.58 (52)	2.48 (56)	1.82 (40)	1.35(57)	2.28 (58)

Ֆինանսական շուկաների զարգացման համաթվի բաղադրիչ համարվող վարկերի հեշտ հասանելիության ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը 144 երկրների մեջ 69-րդն է: Մեր երկիրը թեև զիջում է հարևան Թուրքիային և Ադրբեջանին, այդուհանդերձ գերազանցում է մի շարք զարգացած երկրների, որոնց թվում Իտալիան և Իսպանիան են: Վարկերն առավել հեշտ հասանելի են Կատարում[1], որը գլխավորում է երկրների վարկանիշային աղյուսակը:

Գլոբալ մրցունակության համաթվից բացի, Համաշխարհային տնտեսական ֆորումը սկսած 2008 թ. հաշվարկում և հրապարակում է ևս մեկ ոչ պակաս կարևոր համաթիվ, այն է՝ ֆինանսական զարգացման համաթիվը, որը ներկայացնում է ֆինանսական ոլորտի ձեռքբերումներն աշխարհի 62 երկրներում: Համաթիվը հաշվարկվում է որպես 7 հենասյուներով արձանագրված արդյունքների համադրմամբ ստացվող ամփոփ ցուցանիշ: Ստորև ներկայացված է ֆինանսական զարգացման համաթվի և այն ձևավորող 7 հենասյուների ցուցանիշների հիման վրա կազմված՝ երկրների վարկանիշային աղյուսակը (տե՛ս աղյուսակ 2):

2012 թ. ֆինանսական զարգացման համաթվով աղյուսակը 5.31 միավորով գլխավորում է Հոնկոնգը, թեև վերջինիս վարկանիշը խիստ տարբերվում է ըստ առանձին հենասյուների: Ֆինանսական զարգացման համաթիվ Հայաստանի Հանրապետության համար դեռևս չի հաշվարկվում:

XX դարի վերջին քառորդից սկսած համաշխարհային վարկային շուկան ցուցաբերել է կայուն և դինամիկ աճ: Միևնույն ժամանակ, միջազգային ապրանքաշրջանառության պահանջներին համապատասխանելու անհրաժեշտությամբ պայմանավորված, անցյալ դարի 60-ական թվականներից տեղի ունեցան էական որակական փոփոխություններ վարկային շուկաների զարգացման մեջ, ինչը հանգեցրեց եվրոարժույթների առաջացմանը:

Համաշխարհային տնտեսության գլոբալացման ներկա պայմաններում զարգացած երկրների դրամավարկային քաղաքականությունների փոփոխությունները հանգեցնում են զարգացող երկրներին ուղղվող կապիտալի անկայունությանը: Ֆինանսական ճգնաժամը եվրոգոտում մեծ չափով նպաստել է կապիտալի արտահոսքին ԱՄՆ և Ճապոնիա: Հոդվածում հետճգնաժամային տարիների կարևոր դասը համարվում է այն, որ ֆինանսական ոլորտի անհաշվեկշռվածությունները պետք է վերացվեն մինչև վարկային շուկաներում խնդիրների առաջացումը:

---

[1] **World Economic Forum,** *The Global Competitiveness Report 2012-2013* // Edited by professors Klaus Schwab and Xavier Sala-i-Martin, WEF, Geneva, 2012, p. 481.

ЛУСИНЕ АГАДЖАНЯН

ДИНАМИКА РАЗВИТИЯ МЕЖДУНАРОДНЫХ ССУДНЫХ РЫНКОВ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ

Мировой рынок ссудного капитала переживает стабильный и динамичный рост с конца 20-ого века. В то же время существенные качественные перемены в развитии ссудного рынка имели место в 60-х годах прошлого века. Это было обусловлено необходимостью соответствия кредитного рынка потребностям международного товарооборота и привело к возникновению евровалют.

В современных условиях глобализации изменения в денежно-кредитных политиках развитых стран приводят к нестабильности притока финансовых ресурсов в развивающиеся страны. Расширяющийся кризис в еврозоне привел к оттоку капитала, в частности, в США и Японию. В статье главным уроком посткризисных лет считается то, что дисбалансы финансовой сферы должны быть ликвидированы до того, как рынки будут проявлять беспокойствие в кредитных процессах.

LUSINE AGAJANYAN

DYNAMICS OF INTERNATIONAL CREDIT MARKETS IN CONDITIONS OF GLOBALIZATION

The world credit market experiences stable and dynamic growth since the end of the 20th century. Meantime, substantial qualified changes in the development of credit market have taken place in 60th of last century, which were stipulated by the necessity of credit market correspondence to international turnover demands and brought to the origination of Eurocurrencies.

In present conditions of globalization the changes in monetary policy of developed countries bring to instability of capital inflows to developing countries. The broadening crisis in Eurozone has brought to the outflow of capital to, in particular, the USA and Japan. The main lesson of post crisis years is that disbalances of financial sphere should be eliminated before the markets will display troubles in credit processes.

ՄԵՐԻ ԲԱԴԱԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *կրթական ծառայությունների շուկա, աշխատանքի շուկա, բարձրագույն կրթություն, առաջարկ, պահանջարկ, զբաղվածություն, գործազրկություն*

Ժամանակակից պայմաններում շուկայական հարաբերությունները ներթափանցել են կրթական ոլորտ, որտեղ ևս տեղի է ունենում շուկայի ձևավորում, ինչը որոշակիորեն անդրադառնում է այստեղ ընթացող բոլոր գործընթացների վրա: Կրթական ծառայությունների շուկան պետք է ձևավորվի ինչպես համապատասխան առաջարկի, այնպես էլ պահանջարկի առկայությամբ: Սակայն պարտադիր է հաշվի առնել կրթական ոլորտի առանձնահատկությունները և սոցիալական կարևոր նշանակությունը, հատկապես բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը և դրա պաշտպանվածությունը :

Միաժամանակ պետք է նշել, որ ներկայում ամենուրեք պետությունը հանդես է գալիս ոչ որպես շուկայի սուբյեկտ, այլ առավելապես շուկան կարգավորող մարմին:

Հետազոտելով կրթական գործունեության տնտեսական կողմը՝ փաստենք, որ բարձրագույն կրթությունը հասարակական վերարտադրության օբյեկտիվ պայման է և կարելի է դիտարկել տնտեսության այլ ոլորտների հետ սերտ միասնականության մեջ՝ հիմնավորելով, որ դրա զարգացումը վերափոխումների ընդհանուր հունով է, շուկայական տնտեսության կայացմանն ու զարգացմանը համընթաց:

Բարձրագույն կրթության շուկան բնութագրվում է որպես բազմասուբյեկտ: Այն ինստիտուտների համակարգ է՝ ամենից առաջ արտադրողներով, սպառողներով և որոշ դեպքերում՝ միջնորդներով: Ինչպես հայտնի է, ցանկացած շուկայի բնորոշ է իրավիճակի փոփոխություն՝ կախված պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունից: Կրթական ծառայությունների շուկայի առանձնահատկություններից է աշխատանքի շուկայի իրավիճակին դանդաղ արձագանքը, ինչը պայմանավորված է օբյեկտիվ պատճառով՝ մասնագետների պատրաստումը պահանջում է որոշակի ժամանակահատված (որպես կանոն՝ չորսից վեց տարի): Տվյալ ժամանակահատվածով որոշվում է տարբերությունը, որից հետո աշխատանքի շուկան կարող է արձագանքել կրթական ծառայությունների շուկայի փոփոխություններին և՝ հակառակը: Նման անհամամասնությունների մեղմացումը հնարավոր է աշխատանքի շուկայի պահանջների կանխատեսմամբ: Գործնականում կրթական ծառայությունների շուկան համապատասխանորեն չի արձագանքում տնտեսության իրական հատվածի պահանջներին, ինչն ունի նաև օբյեկտիվ պատճառներ: Մասնավորապես բացակայում են տնտեսության տարբեր ճյուղերում աշխատատեղերի կառուց-

վածքի փոփոխման հիմնավորված կանխատեսումները, աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի ուսումնասիրությունները:

Բացի դրանից, հաճախ բուհի շրջանավարտն իր մասնագիտական և որակական չափանիշներով չի համապատասխանում գործատուների պահանջներին: Ուստի այս առումով կարևորվում է մասնագիտությունների ստանդարտների մշակումը: Այդպիսի իրավիճակը բացատրվում է նաև նրանով, որ կրթական ծառայությունների պատվիրատուն ներկայում հիմնականում հասարակությունն է, որը չի կարող հստակ գնահատել աշխատանքի շուկայի իրադրությունը և նրա զարգացման միտումները:

Այն կարող է էապես փոփոխվել, եթե փոխվեն տնտեսավարող սուբյեկտների՝ որպես յուրահատուկ ապրանքի վերջնական սպառողների դերն ու նշանակությունը կրթական ծառայությունների շուկայում:

Այս հիմնահարցի լուծման ուղիներից մեկը, կարծում ենք, կարող է լինել պատրաստումը ընդհանուր որակավորմամբ մասնագետի, որը, ելնելով աշխատանքի շուկայի փոփոխվող պահանջներից, անհրաժեշտության դեպքում կարող է արագ և նվազագույն ծախսերով ստանալ պահանջվող ավելի նեղ մասնագիտացում: Բարձրագույն կրթության ոլորտում շուկայական հարաբերությունները դրսևորվում են գլխավորապես վճարովի կրթական ծառայությունների ծավալի և տեսականու մեծացմամբ, տնտեսական կապերի փոփոխմամբ, ոլորտի մրցակցային միջավայրի ձևավորմամբ:

Կրթական ծառայությունների շուկան յուրահատուկ շուկա է, որի գործունեությունը մշտապես պետք է կողմնորոշված լինի դեպի աշխատանքի շուկայի պահանջները: Աշխատանքի շուկան, լինելով տնտեսական համակարգի կարևորագույն օղակ, իր գործունեությամբ պայմանավորվում է հասարակական արտադրության արդյունավետությունը: Դա այն շուկան է, որտեղ ձևավորվում են աշխատուժի առաջարկը և պահանջարկը, որոշվում են նրա բաշխվածության համամասնությունները՝ կախված տնտեսական և հասարակական պահանջների կառուցվածքից: Նշված երկու շուկաներից յուրաքանչյուրին բնորոշ են գործունեության մի շարք յուրահատկություններ և մասնակիցների հարաբերությունների առանձնահատկություններ, միաժամանակ դրանց գործունեությունը փոխկապակցված է և փոխպայմանավորված: Հետևաբար օբյեկտիվ անհրաժեշտություն են այդ շուկաների և հատկապես դրանց փոխգործակցության կարգավորման մեխանիզմների ձևավորումն ու կիրառումը: Դա ենթադրում է պետության ակտիվ մասնակցություն գործընթացին:

Դիտարկվող շուկաների փոխհարաբերությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ սպառողների պահանջները կրթական համակարգի և կրթական ծառայությունների նկատմամբ կարող են լինել տարբեր, և գործնականում հաճախ այդպիսին են: Դա արտահայտվում է նրանով, որ սովորողների և գործատուների կողմից ներկայացվում է ոչ միանման պահանջարկ առանձին մասնագիտությունների, այսինքն՝ ձևավորվում է որոշակի հակասություն կրթական ծառայությունների շուկայի և աշխատանքի շուկայի միջև: Այդ հակասությունը բացահայտելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել աշխատանքի շուկայում առկա իրավիճակը:

Աղյուսակ 1

ՀՀ-ում գործազուրկների թիվը ըստ կրթության, տարիքային խմբերի և բնակության վայրի 2007-2011 թթ.

Կրթություն	Ընդամենը %				Գործազուրկներ, 1000 մարդ				Որից՝ գյուղաբնակներ			
	2010	2011	2007	2008	2009	2010	2011	2007	2008	2009	2010	2011
Ընդամենը	19.0	18.4	75.1	74.7	84.5	78.8	69.4	6.0	6.7	8.1	8.5	8.1
Բարձրագույն, հետբուհական	19.5	19.5	9.8	11,4	12,3	11,7	11,6	0,4	0,5	0,5	0,5	0,5
Միջին մասնագիտական, նախամասնագիտական (արհեստագործական)	20.3 20.3	20.11 7.4	23.4	22,6	25,1	23,3	20,1	1,6	1,7	2,0	2,0	1,8
Միջնակարգ ընդհանուր	19.0	17.8	38.0	3,6	42,5	39,3	33,3	3,3	3,9	4,8	5,2	4,8
Հիմնական ընդհանուր	15.1	17.3	3.9	3,8	4,6	4,5	4,4	0,7	0,6	0,8	0,8	1,0
< 18	-	-	0.3	0.4	0,5	0,5	0,4	0,0	0,1	0,1	0,1	0,1
18 - 22 (19-24)1	-	-	5.0	4,1	5,2	5,2	5,3	0,3	0,4	0,5	0,5	0,6
23 - 30 (25-30)	-	-	10.2	9.0	10.3	9.4	9.2	0.7	0.7	1.0	1.0	0.9
31 - 50 (31-54)	-	-	51.1	52.6	55.2	50.3	43.0	4.4	4.7	5.3	5.6	5.3
51 > (55>)			8.5	8.6	13.3	13.4	11.6	0.6	0.8	1.2	1.3	1.2

Աղյուսակի 1-ի տվյալները վկայում են այն մասին, որ աշխատանքի շուկայում ներկայում դրսևորվում է բարձրագույն կրթության դերի կարևորման միտում, քանի որ այդպիսի կրթությամբ աշխատունակ ակտիվ տարիքի բնակչության շրջանում գործազրկության մակարդակը համեմատաբար ցածր է, քան միջին մասնագիտական, նախամասնագիտական (արհեստագործական) և միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցողների շրջանում:

Աշխատանքի շուկայի և կրթական ծառայությունների շուկայի միջև հակասությունները առավել ակնհայտ են, երբ դիտարկում ենք աշխատուժի պահանարկն ըստ տնտեսության ոլորտների.

Աղյուսակ 2

ՀՀ –ում աշխատուժի պահանջարկն ըստ տնտեսության ոլորտների 2007-2011 թթ.

	Աշխատուժի պահանջարկը, մարդ					Որից՝ բանվորական մասնագիտություններ				
	2007	2008	2009	2010	2011	2007	2008	2009	2010	2011
Ընդամենը	8047	7402	7265	8550	8232	6770	5749	5736	6064	5709
Գյուղատնտեսություն	184	173	165	327	277	166	147	125	242	233
Արդյունաբերություն	2705	2504	1845	2778	2794	2485	2171	1598	2336	2455
Տրանսպորտ և կապ	1065	843	513	576	528	983	744	465	452	422
Շինարարություն	624	618	1770	749	687	574	528	1727	679	589
Ծառայություններ	3469	3264	2972	4120	3946	2562	2159	1821	2355	2010

Պաշտոնական վիճակագրությունը, ինչպես և ստեղծված իրավիճակը ցույց են տալիս, որ աշխատանքի շուկայի պահանջարկը, մեծավ մասամբ, սահմանափակվում է բանվորական մասնագիտությունների համար ներկայացվող հայտերով, ինչը վկայում է, որ կրթական ծառայությունների շուկան ներկայում այնքան էլ ճկուն չէ, և նրա կողմից բարձրագույն կրթության նպատակով մասնագիտությունների առաջարկը հեռու է աշխատանքի և կրթական ծառայությունների շուկաների միջև համագործակցության իրականացումից:

Աղյուսակ 3

ՀՀ-ում աշխատանքով ապահովվածներն ըստ տնտեսության ոլորտների 2007-2011 թթ.

	Աշխատանքով ապահովվածներ, մարդ					*Ընդամենի նկատմամբ, %*				
	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*
Ընդամենը	8322	8657	9394	11341	10786	100	100	100	100	100
Գյուղատնտեսություն	290	255	235	438	396	3.5	2.9	2.5	3.9	3.7
Արդյունաբերություն	2230	1945	1884	2866	2760	26.8	22.5	20.1	25.3	25.6
Տրանսպորտ և կապ	548	585	562	717	602	6.6	6.8	6.0	6.3	5.6
Շինարարություն	1331	1392	1638	1634	1458	16.0	16.1	17.4	14.4	13.5
Ծառայություններ	3923	4480	5075	5686	5570	47.1	51.8	54.0	50.1	51.6

Դինամիկան առանձնապես փոփոխությունների չի ենթարկվել ըստ ոլորտների աշխատանքով ապահովվածների առումով: 2007-2011 թթ. բարձրագույն կրթություն ունեցողների աշխատանքով ապահովվածությունը մնացել է անփոփոխ՝ տոկոսային հարաբերությամբ, ինչը ցույց է տալիս, որ աշխատանքի շուկան շարունակում է անջատ հանդես գալ կրթական ծառայությունների շուկայից, բացակայում են փոխհամաձայնեցված և առաջարկի որակների համար ներկայացվող պահանջների հաշվառմամբ գործընթացները: Ոչ պակաս կարևոր ենք համարում կրթական ծառայությունների շուկայական արդյունք համարվող որակավորված մասնագետի զբաղվածության և դրա դիմաց ստացվող եկամտի հարցերի դիտարկումը:

Աղյուսակ 4

ՀՀ -ում միջին ամսական եկամուտն ըստ կրթական մակարդակի 2010-2011 թթ.

	Հիմնական գործունեություն									
	Ընդամենը, դրամ		*Տղամարդ*		*Կին*		*Քաղաք*		*Գյուղ*	
	2010	*2011*	*2010*	*2011*	*2010*	*2011*	*2010*	*2011*	*2010*	*2011*
Միջին եկամուտ	72425	78408	87569	93936	50752	59061	81852	84337	56542	67362
Բարձրագույն, հետբուհական	97041	95794	119085	116377	73723	75881	101289	97566	79984	87400

Ներկայացնելով ՀՀ-ում բնակչության ամսական միջին եկամուտները և հաշվի առնելով դրանց ձևավորման գործընթացում կրթության, հատկապես բարձրագույն կրթության, դերը՝ կարող ենք վստահեցնել, որ չնայած եկամուտների ոչ բարձր մակարդակին, բարձրագույն և հետբուհական կրթությամբ անձանց ամսական միջին եկամուտը մոտ 34%-ով ավելի է, քան ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողներինը: Դա է պատճառը, որ դպրոցի շրջանավարտների, նրանց ծնողների մեծագույն ցանկությունն է բարձրագույն կրթություն ստանալը, անկախ աշխատանքի շուկայում ստեղծված իրավիճակից, երբ առկա է անհամապատասխանություն թափուր աշխատատեղերի և պատրաստվող մասնագետների թվի միջև, հատկապես առավել բարձր պահանջարկի մասնագետների (իրավաբան, տնտեսագետ, SS ճարտարագետ):

Այս պայմաններում առավել կարևորվում են այդ շուկաների սուբյեկտների փոխհարաբերությունների ուսումնասիրումը և դրանց զարգացման միտումների կանխատեսումը, որ նպատակահարմար է իրականացնել հետևյալ ուղղություններով.

1. տնտեսության ճյուղերում և ոլորտներում առկա աշխատանքային ռեսուրսների և պատրաստվող մասնագետների կազմի ճիշտ գնահատում,
2. աշխատանքի և կրթական ծառայությունների շուկաներում ձևավորվող ապագա պահանջների գնահատում,
3. երկու շուկաների ապագա պահանջների բավարարման հայեցակարգի մշակում:

Կանխատեսումային բնույթի այսպիսի հետազոտությունները այս շուկաների բոլոր սուբյեկտներին թույլ կտան առավել ճիշտ և արդյունավետ իրականացնելու իրենց գործունեությունը, իսկ պետությունը հնարավորություն կստանա ավելի նպատակային դարձնելու բարձրագույն կրթության ֆինանսավորման գործընթացը, ինչպես նաև մշակելու և իրագործելու պետական կադրային քաղաքականություն:

Այստեղ, կարծում ենք, պետք է հաշվի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ կրթական ծառայությունների շուկայի պայմաններում բուհը գործում է որպես այդ շուկայի սուբյեկտ՝ ելնելով շուկայում ձևավորվող առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունից: Այդ առումով տեղին է նշել բարձրագույն կրթության ոլորտում առաջացող որոշակի հակասությունը: Դա այն է, որ պատրաստվող մասնագետների թիվը գերազանցում է աշխատանքի շուկայում ձևավորված պահանջարկը, ինչը զգալիորեն մեծացնում է գործազրկության ռիսկը: Տվյալ դեպքում մասնագիտական կրթությունը, կարելի է ասել՝ որոշակի իմաստով վերածվում է ընդհանուր կրթության: Սակայն այստեղ նշելի է հարցի նաև մյուս և, կարծում ենք, ոչ պակաս կարևոր կողմը՝ բարձրագույն կրթությունը ենթադրում է ոչ միայն նեղ մասնագետի պատրաստում, այլև սուբյեկտի սոցիալական, մտավոր, մշակութային զարգացում, ինչը էական է ամբողջ հասարակության համար: Այս առումով էլ կարևորվում է բնակչության բարձրագույն կրթության պահանջարկի ուսումնասիրումը, որը շուկայական տնտեսության պայմաններում զգալի չափով պայմանավորում է բուհերի գործունեության հիմնական ուղղություններն ու հեռանկարները: Ընդհանրապես, բարձրագույն կրթության զարգացման շարժիչ ուժը ներկայում հիմնականում կրթական ծառայությունների շուկան է, այլ ոչ թե աշխատանքի շուկան:

Աշխատանքի շուկայի հիմնական սուբյեկտները՝ գործատուները, վարձու աշխատողները, զբաղվածության պետական և ոչ պետական ծառայությունները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, միաժամանակ կրթական ծառայությունների շուկայի սուբյեկտներ են: Նրանց խնդիրները, նպատակներն ու գործառույթները տարբեր են և պահանջում են առանձին ուսումնասիրություններ:

Շուկայական հարաբերությունների ձևավորման և կայացման գործընթացում կրթական ծառայությունների շուկայի և աշխատանքի շուկայի միջև առաջանում են որոշակի հակասություններ, որոնք պայմանավորված են կրթական ծառայությունների առաջարկի և պահանջարկի քանակական և կառուցվածքային անհամապատասխանությամբ: Հոդվածում ներկայացվել են դիտարկվող երկու շուկաների փոխհարաբերությունների առանձնահատկությունները ՀՀ-ում: Բացահայտվել են դրանցում առկա հակասությունները, փորձ է արվել վերլուծությունների հիման վրա ներկայացնելու հնարավոր զարգացման ուղղությունները:

МЕРИ БАДАЛЯН

ОСОБЕННОСТИ ВЗАИМОДЕЙСТВИЙ РЫНКА ТРУДА И РЫНКА ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УСЛУГ В РА

В процессе становления рыночных отношений возникаются некоторые противоречия между рынком образовательных услуг и рынком труда, которые обусловлены количественными и структурными несоответствиями спроса и предложения образовательных услуг. В статье представлены особенности взаимодействий рынка образовательных услуг и рынка труда в РА. Выявлены существующие противоречия, на основе анализа сделана попытка представить возможные направления развития.

MERI BADALYAN

PECULIARITIES OF COOPERATION OF LABOR MARKET AND EDUCATIONAL SERVICES MARKET IN RA

In the process of the formation and establishment of market relations are generated some contradictions between the educational services market and the labor market, which are caused by quantitative and structural irregularities of demand and supply of educational services. The article presents the features of the interaction of the education market and the labor market in the Republic of Armenia. Some contradictions are revealed; based on the analysis possible directions of development are provided.

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

*Հիմնաբառեր. տնտեսական աճ, ճգնաժամ, **նոր տնտեսություն**, մարտահրավեր, արդյունավետություն, արտադրողականություն, տեխնոլոգիաներ, նորարարություն, մարդկային կապիտալ, մրցունակություն*

ՀՀ տնտեսության արդի վիճակը կարելի է որակել որպես անցումային: Մի կողմից ակնհայտ է, որ ճգնաժամային հիմնական երևույթները հաղթահարված են, ռեցեսիան ավարտվել է 2010 թ., և ներկա դրությամբ երկրում շարունակվում է մակրոտնտեսական վերելքը: Տնտեսական աճի տեմպերն արդեն շրջանցում են զուտ **վերականգնողական** բնորոշումը: Մյուս կողմից նույնպես ակնհայտ է, որ դեռ առկա չէ անցումը հետճգնաժամային զարգացման նոր որակի: Տնտեսությունը աճ է գրանցում, սակայն հիմնականում՝ այն գործոնների հաշվին, որոնք առկա էին մինչճգնաժամային փուլում[1]: Ընդ որում այդ գործոններից ստացվող օգուտները ներկա պայմաններում շատ ավելի քիչ են: 2010-2012 թթ. արձանագրված աճի տեմպերը մոտ երկու անգամ ավելի ցածր էին քան մինչև ճգնաժամը: Այս աճը համապատասխանում է մինչճգնաժամային աճի տեմպերին, որոնք աբստրահված են հումքի համաշխարհային գների աճի և օտարերկրյա կապիտալի մեծ հոսքերի ազդեցությունից: Հենց այս արտաքին գործոնների ազդեցության վատթարացումն էր, որ պատճառ դարձավ 2009 թ. այնպիսի խորը տնտեսական անկման, ինչպիսին ՀՆԱ նվազումն էր 4.1%-ով[2]: ՀՀ տնտեսության կտրուկ թռիչք, որը թույլ կտար հասնելու մինչճգնաժամային աճի տեմպերին, տեղի չունեցավ: Կարծում ենք՝ վերականգնման գործընթացը կավարտվի 2014 թ., իսկ առայժմ պահպանվում է տնտեսական աճի գործոնների դեֆիցիտը, զարգացումը կրում է ոչ կայուն և հակասական բնույթ:

Տնտեսության հետճգնաժամային աշխուժացման պայմաններում առաջին պլան են մղվում արդյունավետության հիմնահարցերը: Արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասում արտադրողականության մակարդակը, մինչճգնաժամային փուլի համեմատությամբ, 2012 թ. աճել է ավելի քան 12.3%-ով[3]: Նշենք նաև, որ ամբողջ տնտեսության

---

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, ԱՎԾ, Երևան, 2012, էջ 227:
[2] Նույն աղբյուրը:
[3] Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման. 2012 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2013, էջ 4:

մակարդակով աշխատանքի արտադրողականությունը (բյուջետային հատվածը և գյուղատնտեսությունը ներառած) մնացել է անփոփոխ[1]:

Չնայած սպառողական շուկաների ցածր դինամիկային՝ սկսվել է ներմուծման տեմպերի արագ աճ: Ի տարբերություն 1998 թ. ճգնաժամի՝ այժմ կոնյունկտուրայի բարելավմանն ավելի արագ է արձագանքում ներմուծումը, քան արտադրությունը՝ 2012 թ. 30.5%-ով գերազանցելով 2007 թ. մակարդակությամբ: Ընդ որում արտահանման ծավալը մի շարք այլ ցուցանիշների հետ 2012 թ. գերազանցել է մինչճգնաժամային ցուցանիշը 24%-ով[2]:

Հետճգնաժամային իրավիճակում կարևորվում է նաև արժույթի փոխանակային փոխարժեքի դինամիկան, որի տատանողականությունը ստեղծում է էական արժութային ռիսկեր, ձևախեղում եկամուտների կառուցվածքը և բիզնեսի շահադրդումները: Ուստի, եթե հայկական ապրանքների մրցունակության և շուկայի դինամիկայի մեջ նշանակալից փոփոխություններ մոտ ապագայում տեղի չունենան, ապա տնտեսական աճի տեմպերը հեռանկարում կդանդաղեն:

Փորձը ցույց է տալիս, որ տնտեսական կարևոր խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ՀՆԱ աճ: Տնտեսական աճի ցածր տեմպերով հնարավոր չէ ապահովել բնակչության եկամուտների աճի, թողարկել մրցունակ արտադրանք: Ուստի լճացումը, նույնիսկ կարճաժամկետում, նշանակում է անխուսափելի տնտեսական և սոցիալական ճգնաժամ: ՀՀ-ում ՀՆԱ հնարավոր աճի ապահովման համար անհրաժեշտ է զուգակցել ինստիտուցիոնալ վերափոխումները զարգացման ծրագրային մոտեցումների հետ: Այսինքն՝ կարևորը ոչ այնքան աճի տեմպերն են, որքան դրա հետճգնաժամային մեխանիզմի ձևավորումը:

Կարելի է պնդել, որ հետճգնաժամային փուլում տնտեսական աճը կլինի ավելի **առողջ**՝ գոնե շուկայում **փուչիկների** ստեղծման հնարավորությունների բացակայության պատճառով. եթե մինչև ճգնաժամը ապրանքաշրջանառության աճի տեմպը մի քանի անգամ գերազանցում էր բնակչության եկամուտների աճի տեմպը, ապա ստեղծված իրավիճակում նման ընդլայնման հնարավորություն գրեթե չկա: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում գնահատել այն գործոնները, որոնք ներկա դրությամբ զսպում են ՀՀ տնտեսական աճի տեմպերը: Դրանք են.

1. Արտահանման փոքր ծավալը, որն ինքնաբերաբար դանդաղեցնում է ՀՆԱ աճը:
2. Արտաքին առևտրային հաշվեկշռի խոցելիությունը. ներմուծման ծավալների առաջանցիկ աճը արտահանման ծավալների հարաբերությամբ հանգեցնում է արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի ավելացմանը, ինչն էլ, իր հերթին, տանում է դրամի արժեզրկմանը:

---

[1] Ցուցանիշը հաշվարկվում է որպես ՀՆԱ և տնտեսության մեջ զբաղվածների հարաբերակցություն:

[2] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008-ի» (էջ 427) և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին» ամփոփագրի (էջ 117) տվյալների հիման վրա:

3. Ներմուծման ծավալների աճը, որը, բացի տնտեսական դինամիկայի վրա ունեցած բացասական ազդեցությունից, երկրին կանգնեցնում է արտաքին առևտրային հաշվեկշռի էլ ավելի ապակայունացման ռիսկի առջև:
4. Դրամի արժեզրկումը, որ կարող է դառնալ գնաճի կարևորագույն գործոն:
5. Բյուջեի պակասուրդը:

ՀՀ տնտեսության կայուն զարգացման և տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է աճի երկարաժամկետ աղբյուրների առկայություն: Եվ այստեղ է, որ առանցքային է դառնում հայկական ապրանքների մրցունակության երաշխիքների հարցը: Միևնույն ժամանակ ճգնաժամն ի հայտ բերեց մեր հանրապետության տնտեսության մի շարք հին և նոր խնդրահարույց ոլորտներ: Այսպես. ՀՀ-ն աշխարհի երկրներից հետ է մնում տեխնոլոգիական զարգացման մակարդակով, աշխատանքի արտադրողականության և, ընդհանուր առմամբ, տնտեսության մրցունակության ցուցանիշներով: Հատկապես վերամշակող արդյունաբերության ճյուղերի ցածր մրցունակությունը, **հետարդյունաբերական ոլորտների** (ծառայություններ, տեղեկատվական տեխնոլոգիաներ), ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման ոչ բավարար մակարդակը հիմքեր են ստեղծում հեռանկարում տնտեսական ճգնաժամերի կրկնության համար՝ կապված արտաքին հումքային շուկաներում իրավիճակի փոփոխության հետ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի համար ընդհանուր մրցունակության պայմանները կարող են էապես բարդանալ՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության մասշտաբով զարգացող երկրների կողմից (Չինաստան, Հարավ Արևելյան Ասիայի երկրներ) բարձր տեխնոլոգիաների յուրացմամբ:

ՀՀ համար մեկ այլ խնդիր է տնտեսական աճի տարածքային անհավասարաչափությունը: Այն հստակ է դրսևորվում մեծ քաղաքներում, որտեղ բնակչության եկամուտները և կենսամակարդակը, մարդկային կապիտալի որակը, նորարարական ակտիվությունը, բիզնես միջավայրը շատ ավելի բարձր ու բարենպաստ են:

Բիզնես-վարկերի ստացման ընթացակարգերի բարդությունը ևս լուրջ խնդիր է տնտեսության արդիականացման համար: ՀՀ բանկերի մեծ մասը վարկեր է տրամադրում գրավով, այլ ոչ բիզնես-պլանի հիման վրա: Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած գլոբալ մրցունակության 2013-2014 թթ. զեկույցում **վարկերի ստացման հեշտությունը** ցուցանիշով Հայաստանը հետընթաց է գրանցել միանգամից 19 կետով[1]:

Շարունակում է ցածր մնալ նաև նորարարության ակտիվությունը գիտության և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում: Ընդ որում նորարարական տեխնոլոգիաների վրա կատարվող ծախսերի ցածր մակարդակը ամենևին պայմանավորված չէ ճգնաժամով. այն ցածր էր նաև մինչճգնաժամային փուլում: 1990 թ. ՀՀ-ն ԱՊՀ երկրների շարքում համարվում էր երկրորդը (Ռուսաստանից հետո) գիտության վրա կատարվող ծախսերով:

[1] http://news.am/arm/news/169678.html

Իսկ դրան հաջորդող տարիներին արդեն գիտության ֆինանսավորման ծախսերը կտրուկ նվազեցին, և 2012 թ. Հայաստանից տվյալ համաթվով առաջ անցան Բելառուսը, Ուկրաինան և Մոլդովան[1]: Գիտական հետազոտությունների ֆինանսավորման ծավալների կրճատումը հանգեցրել է մեր երկրի գիտատեխնիկական ներուժի նվազմանը:

Գիտության բնագավառում աշխատանքային ռեսուրսների ներուժի նվազմամբ տեղի է ունեցել որակական ցուցանիշների կտրուկ անկում: Իսկ գիտական աշխատանքի վարկանիշի անկումը հանգեցրել է դեպի գիտություն երիտասարդների հոսքի կրճատմանը: Ակնհայտ է, որ մի քանի տարի հետո, գիտության ոլորտի զարգացման ցածր մակարդակի պատճառով, մեր երկիրը ոչ միայն չի կարող բավարարել իր սեփական պահանջմունքները, այլև ի զորու չի լինի ընդունելու օտարերկրյա տեխնոլոգիաներ:

Գիտության ոլորտի հիմնախնդիրների համատեքստում կարևորվում են նաև մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված մարտահրավերները, որոնք երկարաժամկետ հեռանկարում կարող են դառնալ տնտեսական աճի շոշափելի սահմանափակման պատճառ. նախ՝ աշխատանքային ռեսուրսների պակասորդը (բնակչության ծերացում, արտագաղթ), այնուհետև՝ մարդկային կապիտալի որակական փոփոխությունները: Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի՝ եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիք ունեցողները 7%-ից ավելի են, ապա բնակչությունը համարվում է ծերացած: ՀՀ-ում այդ ցուցանիշը 11.1% է[2]:

Մարդկային կապիտալի որակի վրա արտագաղթի բացասական ազդեցությունը կրկնակի է: Բնակչության թվից բացի, արտագաղթը փոփոխում է նաև բնակչության սեռատարիքային կառուցվածքը և աշխատանքային ռեսուրսներով երկրի ապահովվածության աստիճանը: Որպես կանոն՝ արտագաղթում են երիտասարդները՝ բնակչության առավել պտղաբեր մասը, ինչի հետևանքով էլ արտագաղթի օջախներում բնակչությունը ծերանում է:

Դեռ չի հաջողվում կասեցնել մեկ այլ բացասական միտում, այն է՝ աշխատողների ներդրումների կրճատումը սեփական մարդկային կապիտալում, որ հետևանք է հասարակության սոցիալական շերտավորման, աշխատուժի շուկայի ու կրթության միջև համաձայնության խախտման:

Տնտեսական աճի ապահովման կարևոր պայմաններից է ենթակառուցվածքների բարձր որակը: Այդ ցուցանիշով 2013 թ. ՀՀ-ն, ըստ գլոբալ մրցունակության վարկանշավորման՝ 80-րդ տեղում է[3]. հաշվի են առնվել օդային և ճանապարհային հաղորդակցությունները, նավահանգիստների օգտագործման հնարավորությունը, հուսալի էլեկտրամատակարարումը, հեռահաղորդակցությունը և այլն: Դրանք օգնում են մեծացնելու տնտեսական ակտիվության արդյունավետությունը: Մասնավոր հատվածի համար այժմ ենթակառուցվածքների հիմնական թերություն են համարվում ճանապարհային հաղորդակցու-

[1] http://www.cisstat.com/eng/frame_about.htm
[2] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2012, Երևան, ԱՎԾ, 2012:
[3]Global Competitiveness Forum Report 2013-2014, page 108-109.

թյան թույլ հնարավորությունները. այս հանգամանքն էականորեն խոչընդոտում է ելքը դեպի այլ երկրների շուկաներ: ՀՀ-ում բարձր են փոխադրման ծախսերը, որ հիմնականում պայմանավորված է սուբյեկտիվ պատճառներով. փակ են դեպի Թուրքիա և Ադրբեջան ավտոճանապարհներն ու երկաթուղին, իսկ Վրաստանի և Իրանի հետ կնքված չեն տարանցիկ փոխադրումների պայմանագրեր:

Այսպիսով, հետճգնաժամային փուլում ՀՀ տնտեսական մարտահրավերների հաղթահարման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն է ստանում **նոր տնտեսության**, բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերականացման քաղաքականության զուգակցումը: Հենց այս ոլորտներում է արտադրողականության աճի, արտադրության արդյունավետության և համաշխարհային շուկայում երկրի մրցունակության ներուժը:

*Հոդվածում դիտարկվում են տնտեսության հետճգնաժամային զարգացման միտումները և հեռանկարները ՀՀ-ում: Կարևոր նշանակություն է տրվում **նոր տնտեսության**, բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերականացման քաղաքականության զուգակցմանը: Համարվում է, որ հենց այս ոլորտներում է արտադրողականության աճի, արտադրության արդյունավետության և համաշխարհային շուկայում Հայաստանի մրցունակության ապահովման ներուժը:*

ДИАНА ГАЛОЯН

ОСНОВНЫЕ ВЫЗОВЫ ПОСТКРИЗИСНОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

В статье рассматриваются перспективы посткризисного развития экономики РА, его тенденции. Важное значение придается сочетанию развития **новой экономики** и высоких технологий, осуществлению политики индустриализации. Считается, что именно здесь потенциал значительного роста производительности, эффективности производства и повышения конкурентоспособности страны на мировом рынке.

DIANA GALOYAN

MAJOR CHALLENGES OF POST-CRISIS DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

The global economic crisis is actually finished. Now, countries of the world, including Armenia, assess its impact on their economies; analyze the prospects and trends of post-crisis development. Each country is trying to draw lessons from the crisis - both from the mistakes of their own policies before the crisis and during it, and studying the experience of other countries. A particular importance in the post-crisis situation for Armenia takes a combination of the "new economy", high-tech, with the policy of industrialization. These are the sectors that carry potential for significant growth in productivity, production efficiency and for the increase of Armenia's competitiveness in the global market.

ԳԱՅԱՆԵ ԽԱՆՈՒՄՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. *գլոբալացում, գլոբալ տնտեսական հակասություններ, հիպերգլոբալացում*

Համաշխարհային տնտեսական հարաբերություններում ընդլայնվել են այն կապերը, որոնք իրագործվում են նախ՝ տարածաշրջանային, ապա՝ գլոբալ մակարդակով: Ներքին և արտաքին տնտեսական հարաբերությունների տարբերակումը դառնում է առավել պայմանական ու շարժական:

Տնտեսության գլոբալ զարգացումը օրինաչափ, բայց հակասական գործընթաց է, որին մասնակցում են սեփական տնտեսական շահեր ունեցող բազմաթիվ սուբյեկտներ՝ հայտնվելով հակասությունների լայն շրջանակում: Դրանցից են.

1. Երկրների (երկրների խմբերի) միջև հակասություններ: Առաջին հերթին դա նկատի են առնվում շուկայական տնտեսությամբ առաջատար երկրների խմբերի (այսպես կոչված՝ **ոսկե մլրդ-ի** երկրներ, որոնք գլոբալացումից ստանում են առավելագույն տնտեսական արդյունք՝ **գլոբալ շահույթ**) և թույլ զարգացած երկրների միջև հակասությունները: Դրա հետ նշենք, որ **հարուստ հյուսիսի** (շուկայական տնտեսությամբ զարգացած երկրների խումբ) և **աղքատ հարավի** (զարգացող երկրների հիմնական զանգված) սոցիալ-տնտեսական մակարդակների միջև ճեղքվածքի խորացումը սկսվել է մինչև համաշխարհային տնտեսության գլոբալացման փուլին անցնելը: Ըստ գնահատականների՝ 1920 թ.-ից մինչև 2000 թ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ միջին ծավալը ժամանակակից **հարուստ հյուսիսի** երկրներում աճել է ավելի քան 19 անգամ, իսկ աշխարհի մնացած շրջաններում՝ միայն 5.5: 2006-2007 թթ. դիտարկվել է 5.1-5.2%-ի աճ, այնուհետև նվազել՝ հասնելով 0.6%-ի 2009 թ.՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով: ԱՄՀ կանխատեսումներով՝ 2015 թ. կնկատվի 4.6% աճ: Ընդ որում զարգացած տնտեսություն ունեցող երկրներում (2006-2007 թթ.՝ 3.0-2.8, 2009 թ.՝ 3.2%), 2015 թ. կանխատեսվում է 2.3% աճ: Զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում (2006-2007 թթ.՝ 7.8-8.3, 2009 թ.՝ 2.4%), 2015 թ. աճը կկազմի 6.7%: Ամենալայն իմաստով գլոբալացումը (այն ձևով, ինչպես իրականացվում է այժմ) սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման մակարդակներում պահպանում և դրսևորում է դրամատիկ տարբերություններ: 21-րդ դարի սկզբին աշխարհի առաջավոր արդյունաբերական երկրները, որոնք ունեին երկրագնդի բնակչության 15%-ը, վերահսկում էին առևտրի, արտադրության, սպառման համաշխարհային ռեսուրսների 70%-ից ավելին: Այդ ժամանակ նրանցից որոշները բացահայտորեն անտեսում էին մյուս երկրների և մարդկանց շահերն ամբողջությամբ. օրինակ՝ ԱՄՆ-ն, որ սպառում է համաշխարհային վառելիքա-

հումքային և էներգետիկ ռեսուրսների առյուծի բաժինը, դուրս եկավ շրջակա միջավայրի պահպանության, համագործակցության վերաբերյալ Կիոտոյի համաձայնագրից: 2003-2007 թթ. իրաքյան իրադարձությունները ցույց տվեցին, որ համաշխարհային ռեսուրսների համար պայքարում ԱՄՆ-ն հնարավոր է համարում օգտագործել նաև ռազմական ուժը:

Փաստորեն շուկայական տնտեսությամբ զարգացած երկրների կողմից գլոբալ գործընթացներում իրականացվում է, այսպես կոչված, **երկակի ստանդարտների** քաղաքականություն. այդ երկրները, իրենց վրա վերցնելով **գլոբալացման առաջատարի** և ամբողջ համաշխարհային ընկերակցության զարգացման պատասխանատվությունը, ձգտում են գլոբալացումն ուղղորդել սեփական շահերի տեսանկյունից, միաժամանակ վնաս հասցնելով զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրների ազգային շահերին: Նման քաղաքականության ծայրահեղ դրսևորում է **միաբևեռ աշխարհի** քաղաքականությունը: Այսպիսով, գլոբալացման ժամանակակից մոդելը կարող է բերել **նոր համաշխարհային կարգի** ձևավորման՝ հիմնվելով **ասիմետրիկ փոխադարձ կախվածության վրա**, երբ այդ գործընթացի հիմնական սուբյեկտները առաջավոր երկրներն են, իսկ օբյեկտները (զգալի չափով) մնացած երկրները:

Հակասությունների այս խմբին են վերաբերում նաև աշխարհի առաջավոր երկրների խմբերի ներսի հակասությունները, հեռանկարում նոր երկրների հնարավոր զարգացումը (օրինակ՝ Չինաստանի, Հնդկաստանի, որոնց մասնաբաժինը ՀՆԱ-ում, արդյունաբերական արտադրության մեջ, ներդրումներում, ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրում անշեղորեն աճում է):

2. Երկրների (երկրների խմբի) և միջազգային կազմակերպությունների (օրինակ՝ ԱՄՀ, ՀԲ, ԱՀԿ) միջև հակասություններ: Այս կազմակերպությունների գործունեությունը աշխարհի առաջատար երկրների քաղաքականության կոորդինացման ուղղությամբ ունի որոշակի դրական ազդեցություն համաշխարհային տնտեսության զարգացման վրա, և այս տեսանկյունից սկզբունքորեն ապրանքների, ծառայությունների, արտադրության գործոնների, մտավոր սեփականության միջազգային շարժը կարող է գնահատվել դրականորեն: Սակայն ի հայտ են գալիս համաշխարհային տնտեսության ապակայունացման նոր սպառնալիքներ՝ կապված արտաքին տնտեսական կապերի ազատականացման, ապրանքների, ծառայությունների, բանվորական ուժի և կապիտալի միջսահմանային շարժի արգելքների հեռացման հետ, որոնք պահանջում են աշխարհի երկրների (ոչ միայն առաջավոր երկրների նեղ խմբի) համաձայնեցված համապատասխան որոշումների ընդունում: Հատուկ սրություն են ստանում հակասությունները (ինչպես ցույց տվեցին 20-րդ դարի 90-ական թթ. երկրորդ կեսի ճգնաժամային երևույթները), Հարավ-Արևելյան Ասիայում, Բրազիլիայում, Արգենտինայում, որոնք պայմանավորված են լայնածավալ, չկառավարվող սպեկուլյատիվ կապիտալի հոսքերով:

3. Մի կողմից՝ առանձին երկրների, մյուս կողմից՝ վերազգային կորպորացիաների, բանկերի և համաշխարհային ֆինանսական կենտրոնների (ՀՖԿ) միջև հակասություններ: Գլոբալացման ժամանակակից տեսության, այսպես կոչված՝ հիպերգլոբալաց-

ման ուղղությամբ համարվում է պետության և, համապատասխանաբար, ազգային պետական շահի դերի նվազեցումը: **Հիպերգլոբալացման** կողմնակիցներն այն կարծիքին են, որ ժամանակակից աշխարհի քարտեզը, մեծ հաշվով, վերազգային կորպորացիաների քարտեզ է, այլ ոչ թե աշխարհի քաղաքական քարտեզ՝ ներկայացված երկրների կողմից: Իսկապես, այժմ ՎԱԿ-երը և ՎԱԲ-երը դարձել են տնտեսության գլոբալացման գործընթացների գլխավոր շարժիչ ուժը՝ դուրս մղելով մի շարք տարածաշրջաններում ազգային պետություններին և ձևախեղելով նրանց սոցիալ-տնտեսական համակարգերը:

4. **Խոշոր ՎԱԿ-երի, ՎԱԲ-երի և ՀՖԿ-երի միջև հակասություններ:** Այս հակասություններն ի հայտ են գալիս միջազգային տնտեսական հարաբերությունների համարյա բոլոր ձևերում՝ ապրանքների և ծառայությունների առևտրից մինչև տեղեկատվության փոխանակումը: Շատ դեպքերում դրանք դրսևորվուն են որպես հակասություններ՝ կապված մենաշնորհային և օլիգոպոլիական գլոբալ մրցակցության հետ:

Այսպիսով, մրցակցային պայքարը թևակոխում է որակապես նոր գլոբալ մակարդակ: Ձևավորվող այդ գլոբալ տնտեսության մեջ **խաղի կանոնները** որոշվում են երեք հիմնական ուժերի փոխգործունեությամբ.

- գլոբալացվող կապիտալ (ՎԱԿ և ՀՖԿ),
- ժամանակակից աշխարհի առաջատար երկրներ և նրանց միություններ (Եվրամիություն, ԱՊԵԿ, ՆԱՖՏԱ),
- առավել հեղինակավոր միջազգային տնտեսական կազմակերպություններ (ԱՄՀ, ԱՀԿ, ՀԲ և այլն):

Գլոբալացման գործընթացների ոչ միանշանակ և հակասական դրսևորումները արտացոլվում են գիտնականների, քաղաքագետների, տնտեսագետների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների դիտարկումներում: Ժամանակակից տեսական որոշ դրույթների շրջանակներում՝ հիմնված տնտեսագիտական ազատականացման նոր գաղափարների վրա, բավականաչափ հստակ ուրվագծվում է պետությունների դերի նվազումը:

Ազգային պետական շահի նվազմանը համապատասխան՝ արտաքին տնտեսական կապերի ազատականացման չափով և ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի շարժի վարչական, տնտեսական, իրավական և այլ արգելքների հեռացմամբ զարգանում է միասնական, ամբողջական տնտեսական համակարգ:

Հոդվածում ընդգծվում է, որ միջազգային հարաբերություններում տնտեսական կապերն ընդլայնվել են գլոբալ չափերով: Տնտեսության գլոբալ զարգացումը դիտարկվում է որպես հակասական գործընթաց է, որին մասնակցում են սեփական տնտեսական շահեր ունեցող բազմաթիվ սուբյեկտներ:

ГАЯНЕ ХАНУМЯН

ПРОТИВОРЕЧИЯ ГЛОБАЛЬНЫХ ПРОЦЕССОВ МИРОВОЙ ЭКОНОМИКИ

В статье подчеркивается, что в международных отношениях экономические связи расширились до глобальных размеров. Глобальное развитие экономики рассматривается как противоречивый процесс, в котором участвуют многочисленные субъекты, имеющие собственные экономические интересы.

GAYANE KHANUMYAN

CONTRADICTIONS OF GLOBAL PROCESSES OF INTERNATIONAL ECONOMY

In the global economical relations the economic ties have increased up to global dimensions. The global development of the economy is a contradictory process in which many subjects, having private economic interest, take part.

ԱՂԱՎՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հիմնաբառեր. *համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, արդյունաբերական քաղաքականություն, արդյունաբերական արտադրություն, արտահանում, ինդուստրալացում*

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, հետճգնաժամային զարգացումները և միտումներն ակնհայտորեն վկայում են պետության մակրոտնտեսական քաղաքականության գերակայությունների վերանայման անհրաժեշտության մասին: Տնտեսական գործընթացների վրա ակտիվ ներգործության գիտակցումը ենթադրում է պետության գործիքակազմի արդյունավետ գնահատում և տնտեսության պետական կարգավորման տարբեր լծակների նպատակային զուգորդում: Մակրոտնտեսական քաղաքականության առաջնահերթությունների և նպատակների ապահովումը, տնտեսության կայուն զարգացումը պայմանավորված են առավելապես այն տեսլականով, որն ընկած է պետության տնտեսական քաղաքականության հիմքում, քանի որ տնտեսության «նավարկումը» առանց հստակ նպատակակետի և հետագծի հղի է անցանկալի բազմաթիվ հետևանքներով: Մինչդեռ պետությունը տիրապետում է այնպիսի գործիքների և լծակների,

որոնք կոչված են հակազդելու ներքին և արտաքին միջավայրերի վտանգներին, սպառնալիքներին ու մարտահրավերներին, ուստի խնդիրը վերոնշյալ գործիքակազմի ճիշտ օգտագործումը և վերջինիս ներուժի թերագնահատման բացառումն է:

Ուշագրավ է, որ Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ դիտվում էր մակրոտնտեսական քաղաքականության առանձին ուղղությունների, այդ թվում՝ հակամենաշնորհային և արդյունաբերական քաղաքականության դերի ակնհայտ թերագնահատում: Այսպես, օրինակ, Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության իրավական հիմքերը ստեղծվել են 2000 թ., երբ ԽՍՀՄ գրեթե բոլոր նախկին հանրապետությունները տնտեսական բարեփոխումների մեկնարկային փուլում ոչ միայն ընդունել էին հակամենաշնորհային առաջին օրենքները, այլև կատարելագործել էին դրանք: Նույնը կարելի է ասել արդյունաբերական քաղաքականության մասին, քանի որ արտահանմանն ուղղված նրա ռազմավարությունը Կառավարության հավանությանն է արժանացել ընդամենը 2011 թ., ինչը մասամբ պայմանավորում է արդյունաբերության փոքր մասնաբաժինը ՀՆԱ կառուցվածքում՝ մինչճգնաժամային շրջանում տարիներ շարունակ առնվազն երկու անգամ զիջելով շինարարության մասնաբաժնին, որը կազմում էր շուրջ 40%: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով ընդգծվեց տնտեսության բազմազանեցման խորացման անհրաժեշտությունը, քանի որ միաբևեռ կամ երկբևեռ զարգացումը տնտեսությունը դարձնում է խոցելի և սահմանափակում նրա ճյուղերի համաչափ զարգացման հնարավորությունները: Առհասարակ փաստը, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանի Հանրապետությունում արձանագրվեց նման լուրջ անկում (14,4%), մասամբ պայմանավորված էր տարիներ շարունակ արդյունաբերական արտադրանքի ծավալի հավելաճի ցածր տեմպով. այսպես՝ 2004 թ. այն կազմում էր 2,4, 2005 թ.՝ 7,6, 2006 թ.՝ 0,9, 2007 թ.՝ 2,6, 2008՝ թ.՝ 1,8, 2009 թ.՝ 7,8%: Իրավիճակը սկսեց բարելավվել 2010 թ., երբ արձանագրվեց 9,7% հավելաճ[1]: 2011 թ. եղավ բեկումնային, քանի որ արդյունաբերական արտադրության աճի ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունն աշխարհում 5-րդ էր՝ 14%. դա լավագույն արդյունքն էր ԱՊՀ երկրների շարքում, ընդ որում ԽՍՀՄ նախկին հանրապետություններից ավելի լավ արդյունք գրանցվել է միայն Էստոնիայում՝ 18%, մինչդեռ Վրաստանում այն կազմել է 11,8, Բելառուսում՝ 10,5, Ղրղզստանում՝ 10, Լատվիայում՝ 9, Թուրքմենստանում՝ 7,3, Մոլդովայում՝ 7,1, Ռուսաստանի Դաշնությունում՝ 4,7, Ղազախստանում՝ 3,4%[2]: Արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում 2012 թ. կազմել է 17,2%՝ մինչճգնաժամային 2008 թ. 13,3%-ի փոխարեն, ինչը վկայում է դրական դինամիկայի և միտումների մասին:

Երբ 2009 թ. Ռուսաստանի Դաշնության տրամադրած պետական վարկով Հայաստանի Հանրապետության Կառավարությունը սկսեց իրականացնել տնտեսության կայու-

[1] http://report.gov.am/?id=3

[2] http://www.indexmundi.com/g/r.aspx?t=100&v=78

նացման վարկավորման ծրագիրը, 30 մլրդ դրամ ուղղվեց արտահանումը խթանող, մթերող-վերամշակող ընկերությունների ենթակառուցվածքային ծրագրերի և սպառողական վարկավորմանը, 32.5 մլրդ դրամ՝ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսական վիճակի բարելավմանը: Նույն ժամանակահատվածում 37.2 մլրդ դրամ ուղղվեց ՓՄՁ ոլորտի աջակցության ծրագրերին: Չհերքելով ՓՄՁ ոլորտի կարևորությունն ազգային տնտեսության զարգացման, աշխատատեղերի ստեղծման գործում, ակնհայտ է, որ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսական վիճակի բարելավումը հեռանկարում շատ ավելի մեծ հատույց և արդյունավետություն կարող է ապահովել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ձեռնարկությունների հզորացումը, իր հերթին, կնպաստի ՓՄՁ ոլորտի զարգացմանը և աշխուժացմանը:

Արտահանմանը միտված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության մեջ նախանշվել է հեռանկարային 11 ոլորտ, որոնցից գինեգործության, կոնյակագործության, ճշգրիտ ճարտարագիտության, դեղագործության և բիոտեխնոլոգիաների, ոսկեգործության, ադամանդագործության ու ժամագործության ոլորտային ռազմավարություններն արդեն հաստատվել են: Դրանց մեջ ամրագրված են կոնկրետ ոլորտը բնութագրող ցուցանիշները և ոլորտի զարգացման նպատակները: Այսպես, օրինակ, ճշգրիտ ճարտարագիտության ոլորտային ռազմավարությունը ներկայացնում է ոլորտի զարգացման տեսլականը, որի համաձայն, եթե 2010 թ. արտադրությունը կազմում էր 35 մլն ԱՄՆ դոլար, արտահանումը՝ 17 մլն, իսկ աշխատողների թիվը՝ 4000, ապա 2015 թ. ակնկալվում է արտադրություն. մինչև 65-80 մլն ԱՄՆ դոլարի, արտահանում՝ 40-55 մլն, իսկ աշխատողների՝ 4500-5600, 2020 թ. նպատակները շատ ավելի հավակնոտ են, քանի որ նախատեսվում է արտադրությունը հասցնել 150-220 մլն ԱՄՆ դոլարի, արտահանումը՝ 115-185 մլն, իսկ աշխատողների թիվը՝ 6000-7000-ի, այսինքն՝ ավելի քան վեց անգամ ավելացնել արտադրության և ավելի քան տասը անգամ՝ արտահանման ծավալները[1]:

2013 թ. հաստատվել է արտահանման արդյունաբերական քաղաքականության ռազմավարության իրականացման ծրագիրը, որում մատնանշվել են պետական աջակցության հիմնական ուղղությունները: Ծրագրում, մասնավորապես, ամրագրված են. տնտեսության արտահանելի հատվածի մեծացում և բազմազանեցնում, հայկական ապրանքների մրցունակության բարձրացում, հասցեական աջակցության տրամադրում մշակող արդյունաբերության ոլորտի ռազմավարությամբ նախանշված ոլորտների արտահանման ուղղվածություն ունեցող ընկերություններին, գիտատեխնիկական, մտավոր և կադրային ներուժի պահպանման ու զարգացման պայմանների ձևավորում, երիտասարդ կադրերի պատրաստում, գիտական մշակումների առևտրայնացմանն աջակցություն, պետական և մասնավոր հատվածների փոխշահավետ համագործակցություն[2]:

[1] http://www.ada.am/arm/for-exporters/export-oriented-industrial-policy/
[2] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2013/02/13_0166.pdf

Անշուշտ, Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ընդունումը թեև ուշացած, սակայն անհրաժեշտ քայլ էր, որը կարող է հիմքեր ստեղծել ապագայում տնտեսության ինդուստրալացման համար, ինչը կարևոր նշանակություն ունի արտադրական հզորությունների արդիականացման, արդյունաբերության ոլորտ ներդրումների ներգրավման, տնտեսական համակարգի տեխնոլոգիական հենքի վերակառուցման առումով՝ ինստիտուցիոնալ, կազմակերպական, իրավական և ներդրումային միջոցառումների շնորհիվ: Կարևորվում է ոչ միայն արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության աշխուժացումը, այլև ֆինանսաբանկային համակարգի թիրախավորված գործունեությունը, ինչը հնարավոր է պետական և մասնավոր հատվածների կողմից երկրի տեխնոլոգիական ապագայի վերաբերյալ միասնական տեսլականի առկայության դեպքում: Ակնհայտ է, որ հանրապետությունում արդյունաբերական ձեռնարկությունների քանակի աճը, թողարկվող արտադրանքի ծավալների ավելացումը, տեղական արտադրության ապրանքների արտահանման աճի միտումները չեն կարող պայմանավորված լինել բացառապես արտահանմանը միտված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ, քանի որ նշյալ նպատակների ապահովումը կախված է մակրոտնտեսական քաղաքականության մյուս ուղղությունների (հարկաբյուջետային, դրամավարկային, ներդրումային) զուգորդված արդյունավետ իրականացումից:

Մինչ ՀՀ-ում և ԽՍՀՄ նախկին հանրապետություններում ընթանում էին տնտեսության ապաինդուստրալացման գործընթացներ, զարգացած երկրներում դիտվում էին արդյունաբերական արտադրության վերակառուցման միտումներ, մասնավորապես նորարարությունների ակտիվ ներգրավում արտադրական գործունեության մեջ, գիտատար արտադրանքի և արտադրության միջոցների սերնդափոխության ժամանակի կրճատում, գիտատար արտադրության ծավալների զգալի աճ, անթափոն տեխնոլոգիաների ներդրում և այլն: Տնտեսության կառուցվածքային էվոլյուցիայի օրինաչափությունների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ նորաստեղծության զարգացման հիմքում արդյունաբերական քաղաքականությունն է, իսկ նորաստեղծական քաղաքականությունը որոշ վերապահումներով կարելի է համարել արդյունաբերական քաղաքականության իրավահաջորդը:

Արդյունաբերության խթանման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այն նյութական արտադրության հիմքը, տնտեսության լոկոմոտիվ ճյուղը լինելով՝ հրահրված ներդրումների խթանման կարևորագույն աղբյուրներից է, որի զարգացումը կարող է նպաստել ներմուծումից ազգային տնտեսության կախվածության նվազմանը, արտահանման ծավալների ընդլայնմանը, աշխատատեղերի ստեղծմանը, արտադրության միջոցների պահանջարկի ավելացմանը, տնտեսության հարակից ճյուղերում գործարար ակտիվության մակարդակի բարձրացմանը և որպես հետևանք՝ ազգային տնտեսության մրցունակության մեծացմանը:

Արդյունաբերության կառուցվածքային վերափոխումների հիմնական նպատակը պետք է լինի մրցունակ արտադրանքի թողարկումը՝ ռեսուրսախնայողական տեխնոլո-

գիաների կիրառմամբ, ինչը թույլ կտա ապահովելու ծախքերի կրճատում: Արդյունաբերական քաղաքականության աշխուժացման համար կարևոր են օտարերկրյա ներդրումների ներգրավումը, երկրի ներդրումային գրավչության ապահովումը, պետական ֆինանսավորումը այն ոլորտների, որոնք ունակ են արտաքին շուկաներում ընդլայնելու արտահանման ծավալները, իրականացնում են նորաստեղծական ծրագրեր, արտադրական գործընթացում կիրառում են արդի տեխնոլոգիական լուծումներ: Բացի դրանից, խիստ անհրաժեշտ է արդյունաբերական ձեռնարկություններին հարկային արտոնությունների տրամադրումը, ինչը կարող է հիմքեր ստեղծել կայուն տնտեսական աճի և արդյունաբերության հեռանկարային զարգացման համար: Ինդուստրալացման ապահովման նպատակով էական նշանակություն ունի տնտեսությանը պետական միջամտության և աջակցության ընդլայնումը, քանի որ ֆինանսատնտեսական ճգնաժամը հերթական անգամ ապացուցեց շուկայի ինքնակարգավորման առասպելական բնույթը և պետության կարգավորիչ գործառույթի գիտակցման անհրաժեշտությունը: Այս առումով երկրի հեռանկարային զարգացման համատեքստում անհրաժեշտ է համարվում մասնավոր հատվածին զուգահեռ պետական հատվածի համաչափ զարգացումը, որ կարող է հանգեցնել պետության համար գերակա ոլորտների ֆինանսավորման ծավալների ավելացմանը, թիրախային այնպիսի ոլորտների ընտրությանը, որոնց առաջընթացը կխթանի ազգային տնտեսության հետագա աճը՝ նվազագույնի հասցնելով տարերային զարգացման հնարավոր վտանգները:

Հոդվածում քննարկվում են Հայաստանի Հանրապետության արդյունաբերական քաղաքականության գերակայությունները, տնտեսության ինդուստրալացման խնդիրները՝ որպես երկրի կայուն տնտեսական զարգացման նախապայմաններ: Հիմնավորվում է, որ արդյունաբերական քաղաքականության դերի թերագնահատումը բացասաբար է ազդել տնտեսության զարգացման վրա՝ մասամբ պայմանավորելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի լրջագույն հետևանքները: Հատուկ կարևորվում է արդյունաբերական հատվածի՝ իբրև տնտեսության առանցքային ճյուղի զարգացումը:

АГАВНИ АКОПЯН

О ПРОБЛЕМАХ РАЗВИТИЯ ПРОМЫШЛЕННОЙ ПОЛИТИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

В статье рассмотрены приоритеты промышленной политики Республики Армения, пути индустриализации экономики - как необходимые предпосылки обеспечения стабильного экономического развития страны. Показано, что недооценка роли промышленной политики негативно повлияла на функционирование экономики, частично обусловив серьезные последствия глобального финансового кризиса. Особое внимание обращено на развитие промышленного сектора – локомотива развития экономики, способствующего повышению конкурентоспособности национальной экономики.

AGHAVNI HAKOBYAN

ON THE PROBLEMS OF INDUSTRIAL POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA

The article covers the problems and priorities of industrial policy development of the Republic of Armenia, the issues of industrialization of the economy - as a necessary step to ensure sustainable economic development. It is shown that underestimating of industrial policy's role had its negative impact on the functioning of the economy of Armenia, in part caused the severe consequences of the global financial crisis. Particular attention is paid to the development of the industrial sector - the locomotive of economic development, contributing to the improvement of national economy's competitiveness. The priorities of the Strategy of Export-Led Industrial Policy of the Republic of Armenia are discussed.

ԹԱՄԱՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ

ԲՌՀՉԱ[1] ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Հիմնաբառեր. *ԲՌՀՉԱ երկրներ, արդի համաշխարհային տնտեսություն, միջազգային կորպորացիաներ, վերազգայնացում*

Ներկայացնենք ԲՌՀՉԱ երկրների միջազգային խոշոր ընկերությունների համեմատական բնութագրերը՝ նրանց զարգացման ընդհանրությունների և առանձնահատկությունների հիման վրա.

1. Այս տնտեսական սուբյեկտները գործունեություն արտերկրում սկսել և ակտիվացրել են զգալիորեն ավելի ուշ, քան զարգացած երկրների կորպորացիաները, որոնք համաշխարհային շուկաներում նրանց երևան գալու ժամանակ արդեն ունեին իրենց նվաճած տեղը: Հետևաբար ԲՌՀՉԱ երկրների կորպորատիվ կառուցվածքի զարգացման հիմնական ուղղությունը ստեղծելն է մրցունակ ընկերությունների խումբ, որոնք տիրապետում են ներքին, ազգային շուկաների և նրանց համար պայմաններ ապահովելը միջազգային շուկաներ դուրս գալու համար:
2. ԲՌՀՉԱ երկրների միջազգային կորպորացիաները եկել են այն եզրահանգման, որ արտաքին շուկաներ դուրս գալու ամենաարդյունավետ մեթոդը արտերկրում ՕՈՒՆ իրականացումն է:

[1] ԲՌՀՉԱ՝ Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, Հարավաֆրիկյան Հանրապետություն:

3. Արտաքին շուկաներում զարգացած երկրների ընկերությունների հետ մրցակցությունը նշված երկրների խոշոր ընկերություններից պահանջում է կիրառել ձեռնարկատիրական գործունեության արևմտյան մոդելներ, այսինքն՝ վերակազմակերպել գործարարությունը եվրոպական կամ ամերիկյան օրինակով:
4. ԲՌՀՉԱ երկրների ընկերությունների վերազգայնացման համար մեծ դեր են խաղում պետական աջակցությունը և ֆինանսավորումը: Պետական աջակցությունից ամենաշատը օգտվում են չինական ընկերությունները: Չինաստանում պետությունը հսկում է խոշոր միջազգային ընկերությունների 69%-ին, Ռուսաստանում՝ 33, իսկ Հնդկաստանում այդ ընկերությունները 100%-ով մասնավոր են:
5. ԲՌՀՉԱ երկրների խոշոր կորպորացիաների հատվածում զգալի դիրքեր են զբաղեցնում ռեսուրսաէներգետիկ կազմակերպությունները:
6. Այս երկրների խոշոր ընկերությունների համար նախնական արտաքին շուկաներ են եղել մերձավոր այն պետությունները, որոնք մտնում են ինտեգրային խմբավորումների մեջ: Այսպես՝ բրազիլական ՎԱԿ-երն իրենց զարգացման սկզբնական շրջանում ինտենսիվ էքսպանսիա են ծավալել **հարավի** ընդհանուր շուկայի, ռուսականը՝ ԱՊՀ, հնդկականը՝ Հարավային Ասիայի տարածաշրջանային կոոպերացման ասոցիացիայի, չինականը՝ **Հարավ Արևելյան Ասիայի երկրների ասոցիացիա** ինտեգրային խմբավորման շրջանակներում:
7. ԲՌՀՉԱ երկրների ՎԱԿ-երի միջազգայնացումն հիմնականում երկու փուլով է: Առաջին փուլը 1990-ական թվականներն էին, երբ տեղի ունեցավ առևտրային էքսպանսիա, և այդ երկրների խոշոր ազգային ընկերություններն ավելացրին սեփական արտադրանքի իրացման ծավալներն արտերկրում: Երկրորդ փուլը՝ 21-րդ դարի սկզբից մինչև մեր օրերը, առանձնանում է ներդրումային էքսպանսիայով՝ օտարերկրյա ակտիվների գնմամբ:

Բրազիլիայի կորպորատիվ հատված

Այս երկրի միջազգային կորպորացիաների հատվածի զարգացման յուրահատկությունն այն է, որ բրազիլական գործարարության վերազգայնացումն ընթանում է 3 փուլով: Առաջին փուլում՝ 1970-1980 թթ., բրազիլական միջազգային ընկերությունները հիմնականում զբաղված էին նավթահանքերի հետախուզման ու արդյունահանման ոլորտում, ինչպես նաև մասնակցում էին զարգացած երկրներում էներգետիկ անվտանգության ապահովման նպատակով արդյունաբերական ու առևտրային նախագծերի իրագործմանը: Երկրորդ փուլում՝ 1981-1990 թթ., նրանք ընդլայնեցին իրենց գործունեությունը բանկային ծառայությունների, լիցենզավորման, հեռահաղորդակցության և փոխադրումների ոլորտներում: Երրորդ փուլը՝ 1990-21-րդ դարի սկիզբը, բնութագրվում է բրազիլական գործարարության վերազգայնացման ինտենսիֆիկացմամբ. հանվել էին ազգային շուկա օտարերկրյա կորպորացիաների մուտքի արգելքները: Երրորդ փուլին հատուկ միտում էր տեղեկատվական տեխնոլոգիաներով զբաղվող ազգային ընկերությունների մուտքն արտաքին շուկաներ:

Բրազիլական խոշոր ընկերությունները հարաբերականորեն արագ մուտք գործեցին համաշխարհային շուկա, և դրա պատճառն այն էր, որ վառելիքաէներգետիկ համալիրի արտադրանքի անընդհատ աճող պահանջարկին համապատասխան այդ ընկերությունների առաջարկը չհանդիպեց այլ ընկերությունների խիստ մրցակցության՝ ի տարբերություն բարձր տեխնոլոգիական ճյուղերի և ծառայությունների հատվածի: Բացի դրանից, արդյունաբերական արտադրությունը Բրազիլիայում սահմանափակվում է հումքի վերամշակմամբ, որը միջանկյալ արտադրանք է վերամշակող արդյունաբերության այլ ձեռնարկությունների համար: Հետևաբար վերամշակող և սահմանափակ թվով հաճախորդներին մեծ քանակով հումք մատակարարող ընկերություններից չեն պահանջվում խոշոր ծախսեր մարքեթինգի, գովազդի և դիստրիբուցիայի համար: Այլ խոսքով՝ այս ճյուղերում արտադրանքի միավորի վրա ավելացված արժեքի մեծությունը ցածր է, քանի որ դրանցում զբաղված է ավելի ցածր որակավորում ունեցող աշխատուժի մեծ զանգված: Բացի դրանից, վառելիքաէներգետիկ համալիրի ճյուղերը բավականին հին են և չեն պահանջում լուրջ ծախսեր նորարարության և ԳՀՓԿ աշխատանքների համար[1]:

Բրազիլական խոշոր ընկերությունների էական տարբերությունը ռուսական, հնդկական և չինական ընկերություններից այն է, որ վերջիններս ավելի շատ կենտրոնացած են ավտոմոբիլաշինության, նավաշինության, հեռահաղորդակցության ու համակարգչային արտադրության վրա:

Ռուսաստանի կորպորատիվ հատված

Ռուսական տնտեսությունն ամրապնդում է իր դիրքերը գլոբալ շուկայում էներգակիրների առևտրի ծավալների ավելացման, ինչպես նաև իր արդյունաբերական հատվածի խոշոր կորպորացիաների ՕՈՒՆ հոսքերի ակտիվացման ճանապարհով: Այս երկրիում արտադրության յուրահատկությունն այն է, որ դրանում գերակշռում են ծանր արդյունաբերության ճյուղերը: Էներգետիկան, ծանր մեքենաշինությունը և սև մետալուրգիան տալիս են Ռուսաստանի համախառն արդյունաբերական արտադրանքի ավելի քան 40%-ը, իսկ այն ճյուղերը, որոնք սպասարկում են սպառողին, ներառյալ սննդի արդյունաբերությունը և լայն սպառման ապրանքների արտադրությունը՝ 16: Արդյունաբերական արտադրության մնացած մասը Ռուսաստանում ապահովում են քիմիական, անտառային, շինանյութերի արտադրությունը և այլ ճյուղեր[2]:

Արդյունաբերական արտադրության կառուցվածքի նման առանձնահատկությամբ որոշվում է Ռուսաստանի խոշոր ընկերությունների հիմնական բնույթը: Նրանք, որպես կանոն, հսկայական ուղղահայաց ինտեգրված խմբեր են, որոնք ներառում են հումքի և նյութերի նախնական մշակման ստորաբաժանումներ, համալրող և պատրաստի արտադրանքի արտադրություններ: Ռուսական տնտեսությունում գերմենաշնորհայինը համար-

[1] Gouvea R., The Transnationalization of Brazils Software Industry// Transnational Corporations, 2007, Vol. 16, № 1.
[2] Климовец О.В., Транснационализация бизнеса российских коорпораций. М., 2009, с. 18.

վում է գազի շուկան: Այստեղ գործում են միջազգային ուղղվածության ազգային կորպորացիաների հետևյալ չորս տեսակները[1].

1. Միջազգային կորպորացիաներ, որոնք ձևավորվել են ԽՍՀՄ պետական ձեռնարկությունների սեփականաշնորհմամբ և միջազգային գործունեություն ծավալող ստորաբաժանումներ ունեին նախքան Ռուսաստանի անկախության հռչակումը: Ռուսական նման ՎԱԿ-եր էին «Внешторгбанк»-ը, «Зарубежнефть»-ը, «Монголросцветмет»-ը, «Техноинторг»-ը, «Ингосстрах»-ը, «Союзвнештранс»-ը:
2. Միջազգային կորպորացիաներ, որոնք ստեղծվել են ԽՍՀՄ պետական ձեռնարկությունների սեփականաշնորհմամբ, աշխատում էին մի քանի սոցիալիստական երկրների շրջանակներում ու ՎԱԿ-ի կարգավիճակ են ստացել այդ երկրների ինքնուրույնությունից հետո: Այդպիսի ՎԱԿ-եր են «ИНТЕР РАО ЕЭС»-ը, «Газпром»-ը, «Севертрансталь»-ը, «Российские железные дороги»-ն, «Тракторные Заводы» և այլն:
3. Մասնավոր ՎԱԿ-եր, որոնք ստեղծվել են պետական ունեցվածքի սեփականաշնորհման ժամանակ՝ 1990-ականների կեսերին, և ներկայում բնութագրվում են որպես արևմտյան կերպի կորպորացիաներ՝ սակայն էական տարբերություններով: Դրանցից են «ЛУКойл»-ը, «РусАл»-ը, «Евраз»-ը, «Объединенные машиностроительные заводы»-ն, «Конверсбанк»-ը, «Эльдорадо»-ն:
4. Կեղծ ՎԱԿ-եր. մասնավոր և պետական տրանսպորտային կառուցվածքներ են, որոնք դարձել են միջազգային՝ արտոնություններ սահմանող երկրի դրոշի ներքո առևտուր իրականացնելու անհրաժեշտության արդյունքում: Կեղծ ՎԱԿ-երին են վերաբերում նաև այն ընկերությունները, որոնք ՕՈՒՆ են իրականացնում օֆշորային գոտիներում (օրինակ՝ Կիպրոսում և Մալթայում):

Ռուսաստանի կորպորատիվ հատվածի զարգացման առանձնահատուկ գիծը վերջին տարիներին պետական կորպորացիաների ստեղծումն էր, որոնց գործունեության ոլորտներն են՝ բանկերը, ֆինանսական միջնորդությունը, ատոմակայաններում էլեկտրաէներգիայի, ռազմական տեխնիկայի, ավիանավաշինական արտադրանքի արտադրությունները:

Ամբողջությամբ Ռուսաստանի ընկերությունների հատվածը մրցունակ է, քանի որ բերում է շահույթ՝ 73 մլրդ ռուբլու չափով (2010 թ. տվյալներով): Ռուսաստանի ՀՆԱ ստեղծման մեջ միացյալ արդյունաբերական կառուցվածքի ներդրումը կազմում է 1,8%:

Հնդկաստանի կորպորատիվ հատված

Հնդկական միջազգային ընկերությունները ներդրումային գործարքների մեծ մասով կողմնորոշված են դեպի Եվրոպայի զարգացած երկրներ, Ճապոնիա, ԱՄՆ[2]: Գլոբալացման գործընթացին մասնակցող հնդկական կորպորատիվ հատվածի բնորոշ գիծը խառ-

[1] Кузнецов А.В., Интернационализация российской экономики. Инвестиционный аспект. М., 2007, с. 21.
[2] Kumar N., Internationalization of Indian Enterprises; Patterns, Strategies. New Delhi, 2008, p. 12-15.

նակույտ կառուցվածքն է՝ նման ռուսական միացյալ բիզնես-խմբերի կառուցվածքին: Խոշորագույն կոնգլոմերատներ «Tata Group»-ը և «Aditya Birla Group»-ը համարվում են Հնդկաստանում գործարարության վերազգայնացման հիմնական սուբյեկտները:

«Tata Group»-ը ստեղծվել է 1868 թ. ձեռնարկատեր Ջամսեջի Տատայի կողմից, որը Հնդկաստանում բացեց առաջին մետալուրգիական արտադրամասը, առաջին մասնավոր էլեկտրականը, առաջնակարգ հյուրանոցների առաջին ցանցը, ամոնիումի սուլֆատի արտադրության առաջին կոմբինատը և առաջին միջազգային ավիաուղին: Ներկայում «Tata Group»-ն իրենից ներկայացնում է կոնգլոմերատ՝ կազմված 96 աշխատող ձեռնարկություններից, որոնցում 2008-2009 թթ. զբաղված էին 330 հազար աշխատողներ, և որոնք ունեին 28,8 մլրդ ԱՄՆ դոլարի տարեկան համախառն եկամուտ: Այսօր այս կոնգլոմերատն աշխատում է ձեռնարկատիրական գործունեության յոթ հիմնական ոլորտներում՝ տեղեկատվական համակարգեր և հեռահաղորդակցություն, ինժինիրինգ, հումք և նյութեր, ծառայություններ, էներգիա, լայն սպառման ապրանքներ և քիմիական արդյունաբերություն: «Tata Group»-ը ստորաբաժանումներ ունի ավելի քան 54 երկրներում և արտահանում է իր ապրանքներն ու ծառայությունները 120 պետություն: Նրա ներքին կազմությունը շատ բարդ է՝ նման զարգացած երկրների ընկերությունների կառուցվածքին: Միջազգային ընկերությունների հետ ամուր կապերը և գրագետ բրենդինգային քաղաքականությունը թույլ է տալիս «Tata Group»-ին գրավելու տնտեսության նոր հատվածներ: Իր բրենդի պահպանման համար կոնգլոմերատի ղեկավարությունն ընդունել է համաձայնագիր՝ բրենդի և գործարարության առաջխաղացման մասին: Արդյունքում՝ բոլոր ընկերությունները, որոնք ցանկանում են մտնել կոնգլոմերատ և օգտագործել «Tata» բրենդը, պետք է ստորագրեն համաձայնագիրը և գլխադասային ընկերությանը վճարեն ռոյալթի՝ իրենց տարեկան եկամտի 0,1-0,2%-ի չափով:

«Tata Group»-ի գործարարության միջազգայնացումը սկսվել է 1907 թ., երբ Լոնդոնում հիմնվեց վերջինիս եվրոպական ներկայացուցչությունը: Ամերիկյան ներկայացուցչությունը հիմնվել է 1945 թ. Նյու-Յորքում: Հնդկական գործարարության արդի միջազգայնացման սկիզբը 1990-ական թվականներին էր: Այս ժամանակահատվածում լոնդոնյան ներկայացուցչությունը, «Tata Group»-ի ամբողջ ապրանքների և ծառայությունների գլոբալ տարածման ու առաջխաղացման համար, դարձավ գործակալ: Կոնգլոմերատի շվեյցարական ստորաբաժանումը և նրա առևտրային մասնաճյուղերը պատասխանատու են Հնդկաստանի սահմաններում տարբեր ձեռնարկություններում և տարբեր նախագծերում կատարվող ներդրումների համար: Սակայն 1990-ականներին «Tata Group»-ի միջազգային ձեռնարկատիրական գործունեությունը դեռևս սահմանափակ էր: Հնդկաստանի գործարարության վերազգայնացման գործընթացն ակտիվացավ, երբ 2000 թ. «Tata Tea»-ն 432 մլն ԱՄՆ դոլարով ձեռք բերեց բրիտանական «Tetley» թեյի բրենդը: 21-րդ դարի սկզբից հնդկական կապիտալի ներդրումները արտերկրում դարձան ավելի խոշոր: 2007 թ. «Tata Steel»-ը 11 մլրդ ԱՄՆ դոլարով գնեց անգլո-հոլանդական «Corus» ընկերությունը: 2008 թ. «Tata Motors»-ը կլանեց «Ford Motor»-ին պատկանող Jagyar և Land Rover ստորաբաժանումները 2,3 մլրդ ԱՄՆ դոլարով:

Ըստ մեծության՝ երկրորդ խոշոր կոնգլոմերատը «Aditya Birla Group»-ն է, որի համախառն եկամուտը 2009 թ. կազմել է 24 մլրդ ԱՄՆ դոլար, աշխատողների թիվը՝ 100 հազար մարդ, իսկ նրա միջազգային գործունեության ոլորտներն ընգրկում են 20 երկիր: «Aditya Birla Group»-ի ձեռնարկատիրական գործունեությունը 3 հիմնական ուղղություններով է. ցեմենտի արտադրություն և քիմիական արդյունաբերություն, տեքստիլ արդյունաբերություն և մետալուրգիա:

«Aditya Birla Group»-ի հիմնադիրը Սեթ Շիվ Նարայան Բիրլան է, որը 1857 թ. կազմակերպել է բամբակ վաճառող ձեռնարկություն: Այդ ձեռնարկության արտադրական գործունեությունը սկսվել է 1919 թ., երբ Բիրլայի թոռը կառուցեց ջութի ֆաբրիկա: 1950-ականներին, շնորհիվ օտարերկրյա ներդրողների, ստեղծվեց «Hindalco» ալյումինի արտադրության ընկերությունը, որն ի սկզբանե եղել է ժամանակավոր ալյանս «Aditya Birla Group»-ի և ամերիկյան «Kaiser Aluminium and Chemicals» ընկերության միջև. տեխնոլոգիաներ էր տրամադրում ու փորձ հաղորդում հնդկական կողմին: «Aditya Birla Group»-ի միջազգայնացման գործընթացի սկիզբը 1970-ականներին էր, հատկապես՝ տեքստիլ օղակում: Այդ նպատակով հատուկ ստեղծված «Grasim» ընկերությունը դարձավ վիսկոզային արհեստական նյութերի համաշխարհային խոշոր արտադրող: Հետագայում տեքստիլ բիզնեսի միջազգայնացման շնորհիվ դուստր ձեռնարկություններ ստեղծվեցին Թաիլանդում, Եգիպտոսում, Չինաստանում, նաև՝ Լաոսում: 2005 թ. Հնդկաստանի կառավարությունը փոխեց արտերկրում տարեկան ներդրումների 100 մլն ԱՄՆ դոլարի սահմանը, և այս ժամանակահատվածը հնդկական գործարարության համար դարձավ ամենաբարենպաստը: Քիմիական արդյունաբերության ոլորտում «Aditya Birla Group»-ը ներդրումներ իրականացրեց Ինդոնեզիայում, Չինաստանում և Ֆիլիպիններում: Մետալուրգիական գործունեությունը ընդլայնվեց 11 երկրներում: Հնդկական ձեռնարկություններն ավանդաբար կառավարում են ընտանիքները, և այս սովորույթը պահպանվում է նաև այսօր, չնայած շատ ձեռնարկություններ վերափոխվել են խոշոր կորպորացիաների: Սովորաբար հնդկական ձեռնարկություններն ի սկզբանե կազմավորվել են որպես առևտրային տներ, իսկ սեփական գործարարության ընդլայնման համար այստեղ զարգացրել են արդյունաբերական արտադրությունը:

Չինաստանի կորպորատիվ հատվածը

Ժամանակակից կորպորատիվ հատվածն այստեղ սկսեց զարգանալ 1978 թ., երկրում տնտեսական բարեփոխումների իրականացման հետ: Այսօրվա չինական ձեռնարկությունը խոշոր բաժնետիրական ընկերություն է, որն իր կազմում ունի գիտահետազոտական ու արտադրական բազա, թողարկվող արտադրանքի որակի հսկողության և մարքեթինգային բաժիններ, որոնք օգտագործում են արդի տեղեկատվական տեխնոլոգիաներ և որտեղ աշխատում են որակավորված կադրեր[1]: Չինական կորպորատիվ հատվածի զարգացման առանձնահատկություններից է այն, որ պետությունն է շարունակում մնալ

[1] Цыренов Д. Г., Проблемы создания системы современных предприятий в КНР, М. 2008, стр. 18.

կորպորացիաների բաժնետոմսերի միակ խոշոր սեփականատերը՝ գրանցված Շանհայի և Շենժենի բորսաների ցանկում:

Երբ 1990-ականներին զարգացած երկրների 300 խոշոր ՎԱԿ-եր Չինաստանում ստեղծեցին իրենց ձեռնարկատիրական ցանցը, Չինաստանի վերամշակող արդյունաբերությունն աստիճանաբար վերածվեց համաշխարհային ֆաբրիկայի: Ներկայում չինական շուկայում աշխատում են զարգացած երկրների խոշորագույն ՎԱԿ-երի մեծամասնությունը և աշխարհի մի շարք մանր ու միջին միջազգային ընկերություններ:

Վերջին տարիներին չինական տնտեսությունում կատարվում են զգալի փոփոխություններ՝ կապված դեպի արտահանում կողմնորոշված ռազմավարությունից արտադրության մոդելին անցման հետ, որը հիմնվում է արտերկրում ուղղակի օտարերկրյա ներդրումների վրա: Չինաստանը արտերկրում ստեղծել է ազգային կապիտալով ավելի քան 10 հազար ձեռնարկություն: 2007 թ. վերջին 5000 չինական ազգային ձեռնարկություններ ՕՈՒՆ էին իրականացնում աշխարհի 172 երկրներում:

Հարավաֆրիկայան Հանրապետության (ՀԱՀ) կորպորատիվ հատվածը

ՀԱՀ-ի որոշ ընկերություններ, միջազգայնացնելով իրենց գործունեությունը, դարձան գլոբալ տնտեսության խոշոր մասնակիցներ: 2008 թ. ութ ընկերություններ արտերկրի ակտիվների ծավալով մտան զարգացող երկրների 100 խոշոր ոչ ֆինանսական վերազգային կորպորացիաների ցանկի մեջ[1]: Դրանք են.

1. ***MTN Group Limited-ը:*** Ստեղծվել է 1994 թ. և համարվում է վերազգային հեռահաղորդակցության խումբ, որն իր ստորաբաժանումներն ունի Աֆրիկա աշխարհամասի և Մերձավոր Արևելքի 21 երկրներում:
2. ***Sasol Limited-ը:*** ՀԱՀ-ի միակ ազգային նավթաքիմիական ընկերությունն է, որը մասամբ կողմնորոշված է դեպի ցածրորակ քարածխից նավթամթերքների, հեղուկ վառելիքի և արտադրական քիմիկատների՝ պարարտանյութերի, պայթուցիկ նյութերի, ներկերի համար հումքի արտադրություն: Այս ընկերությունն աշխարհում առաջատար է պինդ վառելիքից հեղուկ վառելիքի ստացմամբ և օրական արտադրում է 150 հազար բարել բենզին:
3. ***Sappi Limitied-ը:*** Ներկայացնում է ՀԱՀ-ի թուղթ-ցելյուլոզային արդյունաբերությունը:
4. ***Netcare Limitied-ը:*** Մատուցում է այլ սպառողական ծառայություններ:
5. ***Steinhoff International Holdings-ը:*** Նույնպես մատուցում է այլ սպառողական ծառայություններ:
6. ***Gold Fields Limitied-ը:*** Զբաղվում է մետալուրգիայով:
7. ***Medi Clinic Corporation Limitied-ը:*** Մասնավոր կլինիկաների միջազգային ցանց է, որոնք աշխատում են Նամիբիայում, Շվեյցարիայում և ՄԱԷ-ում: Ստեղծվել է 1983 թ.:
8. ***Naspers Limitied-ը:*** Մատուցում է համացանցային ծառայություններ:

[1] Wooldridge M., Will Brics strengthen South Africas economic foundations, world –Afrika, 2010, p. 5-6.

Բացի նշված խոշոր ընկերություններից, երկրում գործում են մի շարք համաշխարհային ճանաչում ունեցող այլ ընկերություններ.

1. ***De Beers.*** ստեղծվել է 1888 թ., համարվում է աշխարհում առաջատար ընկերություն ալմաստի արդյունահանմամբ: Աշխատում է 6 մայրցամաքների 20 երկրների հետ:
2. ***South African Breweries LTD.*** ստեղծվել է 1895 թ., խոշոր գարեջրային ընկերություն է:
3. ***Petroleum, Oil and Gas Corporation of South Africa.*** ազգային նավթային ընկերություն է, հսկում և կառավարում է ՀԱՀ-ի ակտիվները վառելիքային արդյունաբերությունում: Մոսսելբի քաղաքի վերամշակող գործարանը, որը օրական 45 հազար բարել հեղուկ վառելիք է արտադրում, աշխարհում առաջինն էր մինչև Քատարի Օրիքս քաղաքում համանման գործարանի կառուցումը (2007 թ.):
4. ՀԱՀ-ում գործում են մանրածախ առևտրի ձեռնարկություններ, որոնցից խոշորագույններն են.
   - ***Shopite Holdings LTD-ը.*** ունի 1500 սուպերմարկետ աֆրիկյան մի շարք երկրներում և Հնդկաստանում: Այս ոլորտում տարածաշրջանի լավագույն և խոշոր ընկերությունն է:
   - ***Massmart Holdings-ը***. ըստ մեծության երրորդ խոշոր մանրածախ ձեռնարկությունն է ՀԱՀ-ում:
   - ***Murray & Roberts-ը***. ստեղծվել է 1902 թ., համարվում է առաջատար ինժինիրինգային, գործարքային և շինարարական ընկերությունը երկրում:

ՀԱՀ-ն ***Աֆրիկա*** աշխարհամասի միակ երկիրն է, որի մասնավոր հատվածը ամուր դիրքեր է գրավում չինական շուկայում՝ 1 մլրդ ԱՄՆ դոլարից ավելի կուտակված ՕՈՒՆ ծավալով: ՀԱՀ-ի ընկերությունները խոշոր ներդրող են աշխարհամասի մյուս երկրներում: Աֆրիկյան այս երկիրը միաժամանակ արտասահմանյան ներդրումների օբյեկտ է: 2010 թ. նրա կառավարությունն ընդունեց ներդրումային քաղաքականության մասին նոր օրենսդրություն, որի նպատակը ներդրումային ռեժիմի արդիականացումը և ամրապնդումն է:

Արտաքին շուկաների նվաճման ուղղությամբ ԲՌՀՉԱ երկրների միջազգային ընկերությունների գործունեությունների վերլուծությամբ հավաստվում է նրանց աճող դերը համաշխարհային նոր տնտեսության բացարձակ և հարաբերական մեծություններում:

Հոդվածում ներկայացված են ԲՌՀՉԱ երկրների խոշոր ընկերությունների համեմատական բնութագրերը՝ վերջինների զարգացման առանձնահատկությունների և ընդհանրությունների վերլուծության հիման վրա:

ТАМАР МАРГАРЯН

СПЕЦИФИКА РАЗВИТИЯ И ЭТАПЫ ТРАНСНАЦИОНАЛИЗАЦИИ МЕЖДУНАРОДНЫХ КОРПОРАЦИЙ СТРАН БРИКС

В статье представлена сравнительная характеристика крупнейших компаний стран БРИКС на основе анализа их специфических и общих особенностей развития.

TAMAR MARGARYAN

THE SPECIFIC OF DEVELOPMENT AND STAGES OF TRANS-NATIONALIZATION OF INTERNATIONAL CORPORATIONS OF BRICS

In this paper, our goal is to form a comparative description of the largest companies in the BRICS countries on the basis of their specific and general features of the development.

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ
ԱՆՆԱ ՓԱԽԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ
ԱՐԱՔՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ասպիրանտ, ՀՊՏՀ

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ. ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՄԻՏՈՒՄՆԵՐ[1]

Հիմնաբառեր. արտահանման խթանում, արտահանման ապրանքային կառուցվածք, առևտրային հաշվեկշիռ, Եվրամիություն, Մաքսային միություն

ՀՀ անկախացման տարիներից սկսած՝ մեր տնտեսության կարևորագույն խնդիրները արտահանման խթանումը, բազմազանեցումն ու արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի կրճատումն են: Այս խնդիրները թեև եղել են հանրապետության բոլոր կառավարությունների ուշադրության կենտրոնում, սակայն այդպես էլ արդյունավետ լուծում չեն ստացել: Մասնավորապես, Հայաստանը վերջին տարիներին աննշան մասնակցություն է բերել միջազգային առևտրին. արտահանումը չի աճել տնտեսական աճին զուգընթաց, ներմուծումն արտահանման համեմատությամբ փաստվել է առաջանցիկ աճի տեմպերով, ՀՀ արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդն անընդհատ ավելացել է, որ պայմանավորված է այնպիսի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, ինչպիսիք են՝ գլոբալ շուկայում Հայաստանի Հանրապետության ցածր իմիջը, տրանսպորտային հա-

[1] Հոդվածը պատրաստվել է «Մրցունակություն, միջազգայնացում և արտաքին առևտուր» հետազոտական ուղղության «Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» գիտահետազոտական թեմայի շրջանակներում:

ղորդակցության խնդիրները, տնտեսության փոքր մասշտաբները, արտահանման խթանմանն ուղղված ծրագրերի ոչ բավարար արդյունավետությունը և այլն:

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշները 2003-2012 թթ.

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Արտահանման ֆիզիկական ծավալները (մլն ԱՄՆ դոլար)	679,6	727,2	1027,8	997,7	1157,4	1060,3	768,2	1019,1	1337,0	1361,0
Արտահանման շարժընթացը (%)	-	+5,4%	+41,3%	-3,0%	+16,0%	-8,4%	-27,5%	+32,6%	+31,2%	+1,8%
Ներմուծման ֆիզիկական ծավալները (մլն ԱՄՆ դոլար)	1275,5	1350,7	1848,9	2193,7	3283,8	4471,0	3318,3	3790,5	4155,0	4284,0
Ներմուծման շարժընթացը (%)	-	+5,6%	+30,9	+23,9%	+49,5%	+36,2%	-25, 7%	+14,2%	+9,6%	3,1%
Արտահանման բացասական մնացորդը (մլն ԱՄՆ դոլար)	-599,9	-623,5	-821,1	-1196,0	-2126,4	-3410,7	-2550,1	-2771,4	-2818,0	-2923,0
Արտահանման բացասական մնացորդի աճի շարժընթացը (%)	-	+ 4,7%	+30,2%	+45,2%	+78,9%	+60,5%	-32,7%	+8,7%	+1,7%	+3,7%
ՀՆԱ ծավալների շարժընթացը (մլն ԱՄՆ դոլար)	2807,1	3576,6	4900,4	6386,7	9179,4	11917,	8714,2	9432,0	10135,0	0674,0
Արտահանում/ՀՆԱ շարժընթացը (%)	24,4	20,2	19,4	15,7	12,6	14,7	8,8	10,8	13,2	12,8
Ներմուծում/ՀՆԱ շարժընթացը (%)	45,6	37,8	36,1	34,3	39,2	39,8	38,1	40,2	41,0	40,1
ԱՄՆ դոլարի հաշվ. փոխարժեքը	578,7	533,5	457,7	416,0	342,1	306,0	363,0	367,3	372,0	373,0

Աղյուսակ 1-ի տվյալներից ակնհայտ է, որ վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշները էապես փոփոխվել են, իսկ դրանց շարժընթացը հնարավոր է բաժանել մինչճգնաժամային, ճգնաժամային և հետճգնաժամային ժամանակահատվածների: Մասնավորապես, թեև մինչճգնաժամային 2003-2008 թթ. արտահանումն աճել է (միջինը՝ 10,2%-ով), սակայն ներմուծման աճը (29,2%) գրեթե երեք անգամ (2,84) ավելի է եղել արտահանման աճից, ինչի հետևանքով արտաքին առևտրի բացասական մնացորդի միջին տարեկան աճը տատանվել է 43,9%-ի միջակայքում: Ակնհայտ է, որ արտահանման աճը նշված ժամանակահատվածում թեև պակաս է եղել, սակայն՝ մոտ ՀՀ ՀՆԱ աճին, իսկ ներմուծմանը համարյա կրկնակի գերազանցել ՀՆԱ աճը: Ըստ այդմ՝

մեծացել է նաև հանրապետության տնտեսության բացության գործակիցը, միևնույն ժամանակ Հայաստանի համախառն ներքին արդյունքում ներմուծման մասնաբաժինը (միջին՝ 38,8%) շուրջ երկու անգամ ավելի է եղել արտահանման մասնաբաժնից (միջինը՝ 17,8%): Այստեղից հնարավոր է եզրակացնել, որ 2003-2008 թթ. ՀՀ-ն հանդես է եկել հստակ ընդգծված ներմուծող տնտեսությամբ: Ճգնաժամային ժամանակահատվածում արտահանումն ու ներմուծումը գրեթե հավասարաչափ նվազել են, իսկ հետճգնաժամային ժամանակահատվածի վերականգնողական աճի միտումներում արդեն նկատելի են որակական որոշ փոփոխություններ: Մասնավորապես, 2010-2012 թթ. արտահանման միջին աճը (21,8%) մոտ 2,4 անգամ գերազանցել է ներմուծման աճը (8,9%), ինչի հետևանքով արտաքին առևտրի բացասական մնացորդի միջին աճը կազմել է ընդամենը 4,7% (մոտ 9,3 անգամ ցածր մինչճգնաժամային հատվածի համանման ցուցանիշից): Միևնույն ժամանակ Հայաստանի տնտեսության բացության գործակիցը շարունակել է աճել: Մասնավորապես, արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում կրճատվել է մինչև 12,3%, իսկ ներմուծմանը, ընդհակառակը, աճել է կազմելով արդեն 40,4%:

Հետճգնաժամային ժամանակահատվածում նման պատկերի ձևավորման պատճառները արտահանման մեջ հանքահումքային ռեսուրսների, թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղների ու մետաղական թափոն-ջարդոնների մասնաբաժինների ավելացումը, ինչպես նաև հանքահումքային ռեսուրսների միջազգային գների հետևողական բարձրացումն են:

Աղյուսակ 2

Հանքահումքային ռեսուրսների, թանկարժեք, ոչ թանկարժեք մետաղների ու մետաղական թափոն-ջարդոնների արտահանման շարժընթացը 2003-2012 թթ.

	ԱՏԳԱԱ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Ընդամենը արտահանում (մլն ԱՄՆ դոլար)		679,60	727,21	1027,8	997,70	1154,7	1060,3	768,2	1019,1	1337.0	1361.0
Երկաթամիահալվածք (մլն ԱՄՆ դոլար)	7204	13,88	64,70	238,2	161,07	235,7	208,8	86,5	119,6	121.3	106.8
Հանքաք. և խտ. պղնձի (մլն ԱՄՆ դոլար)	2603	17,0	28,91	22,06	72,78	88,1	99,9	98,8	210,7	260.6	227.6
Պղինձ չզտվ. էլ. անոդ. համար (մլն ԱՄՆ դոլար)	7402	11,73	35,73	46,32	71,34	66,7	63,3	60,5	92,6	114.6	104.7
Ցեմենտ (մլն ՄՆ դոլար)	2523	0,98	6,48	14,46	22,01	32,2	38,4	7,9	2,4	6.31	9.4
Հանք. և խտ. մոլիբդ. (մլն ԱՄՆ դոլար)	2613	19,94	42,74	27,52	16,01	28,6	20,8	11,1	3,7	11.1	8.3
Մոլիբդեն և արտադրանք, նեռայալ՝ թափոն. (մլն ԱՄՆ դոլար)	8102	2,91	7,86	17,73	25,65	24,4	19,7	9,5	15,5	15.4	18.9

Թափ. ջարդ. սև մետ. (մլն ԱՄՆ դոլար)	7204	3,38	4,84	5,14	6,13	7,3	5,6	7,0	10,4	12.1	11.9
Ոսկի, ներ. պլ. գլ. և փոշ. (մլն ԱՄՆ դոլար)	7108	35,40	43,55	36,45	36,67	18,3	5,3	32,8	28,6	67.3	77.5
Թափ. ջարդ. պղնձի (մլն ԱՄՆ դոլար)	7404	2,62	1,91	3,80	5,44	7,4	4,7	4,4	7,0	5.8	5.9
Հանք. և խտ. ցինկի (մլն ԱՄՆ դոլար)	2608	0,88	1,17	1,85	4,51	6,8	4,4	5,9	13,7	13.9	17.7
Թափ. ջարդ. ալյումինի (մլն ԱՄՆ դոլար)	7602	4,96	5,88	4,21	4,83	5,0	3,4	2,2	4,1	4.2	5.6
Հանք. և խտ. թանկ. մետաղ-ների (մլն ԱՄՆ դոլար)	2616									0.163	24.9
Ալյումինի նրբա-թիթ. <0.2 մմ (մլն ԱՄՆ դոլար)	7607									86.9	81.0
Ընդամենը հում-քի արտ. (մլն ԱՄՆ դոլար)		96,710	243,79	417,7	426,4	520,49	474,33	327,34	508,43	719.6	700.2
Համախառն արտահանման մեջ հումքի մաս-նաբաժնի շարժ-ընթ. (%)		14,2%	33,5%	40,6%	42,7%	45,1%	44,7%	42,6%	49,8%	53.8%	51.5%
Արտահանման շարժը նախորդ տարվա համեմա-տությամբ (մլն ԱՄՆ դոլար)		---	+47.6	+300,6	-30,1	+157	-94,4	-292,1	+250,9	+318.0	+24
Հումքի արտահ. շարժը նախորդ տարվա համեմա-տությամբ (մլն ԱՄՆ դոլար)		---	147,1	174,0	8,65	94,0	-46,2	-147,0	181,1	+211,1	-19.4
Հումքի աճի մաս-նաբաժ. արտահ. աճի մեջ (%)		---	---	57,8%	---	59,8%	48,9%	50,2%	72,1%	66.4%	-44.7%

Ըստ աղյուսակ 2-ի տվյալների՝ ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքում հանքահումքային ռեսուրսների ու մետաղական թափոն-ջարդոնների մասնաբաժինը մինչճգնաժամային հատվածում 2003 թ. համեմատությամբ ավելացել է 3,1 անգամ՝ 2008 թ. կազմելով համախառն արտահանման 44,7%-ը: Մյուս կարևոր փաստն այն է, որ սկսած 2005 թ.՝ արտահանման ֆիզիկական աճի մոտ 50%-ը բաժին է ընկել հումքի արտահանման ծավալների աճին (2010 և 2011 թթ. այդ ցուցանիշը համապատասխանաբար

կազմել է 72,1 և 66,4%): Սա ցույց է տալիս, որ վերջին յոթ տարիների ընթացքում Հայաստանը, բացի հստակ ընդգծված ներմուծող երկրից, վերածվել է ընդգծված հումք արտահանող երկրի, իսկ արտահանման ցուցանիշներն արդեն կախված են հանքահումքային ռեսուրսների և մետաղների միջազգային գներից ու արտահանման ֆիզիկական ծավալների փոփոխությունից: Վերոնշյալն առավել ցայտուն երևում է ՀՀ համախառն արտահանման մեջ հումքի աճի մասնաբաժնի գնահատմամբ և հատկապես 2010-2012 թթ. համախառն արտահանման ու հումքի արտահանման աճի կամ նվազման ցուցանիշների համադրմամբ:

Հատկանշական է, որ վերջին 10 տարիներին որակական փոփոխություններ են արձանագրվել պատրաստի արտադրանքի արտահանման ծավալներում:

Աղյուսակ 3

Պատրաստի արտադրանքի, պայմանագրային արտադրության, ադամանդի քարի և պատրաստի այլ արտադրանքի արտահանման շարժընթացը 2003-2010 թթ.

	2003	*2004*	*2005*	*2006*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*
Ընդամենը՝ արտահանում (մլն ԱՄՆ դոլար)	679,60	727,21	1027,8	997,70	1154,7	1060,3	768,2	1019,1	1337,0	1361,0
Պայմանագրային արտադրություն (մլն ԱՄՆ դոլար)[1]	55,38	52,093	56,141	77,036	89,852	60,119	28,316	32,457	35,317	58,203
Համախ. արտահ. մեջ պայմ. արտ. մասն. շարժընթացը (%)	8,2%	7,2%	5,5%	7,7%	7,8%	5,7%	3,7%	3,1%	2,6%	4,3%
Ադամանդի քար	287,94	221,65	263,65	229,03	160,56	144,84	61,43	91,88	113,7	79,1
Համախ. արտահ. մեջ ադամ. մասն. շարժընթացը (%)	42,0%	30,7%	27,7%	22,8%	13,9%	13,6%	8,0%	9,9%	8.5%	5,8%
Համախ. արտահ. մեջ պատր. արտ. մասն. շարժընթացը (%)	35,7%	28,6%	26,2%	26,8%	33,2%	36%	45,7%	37,2%	35,1	38,4

Աղյուսակ 3-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ադամանդի արտահանման ֆիզիկական ծավալները 2003-2012 թթ. մոտ 3,5 անգամ կրճատվել են, ինչի հետևանքով դրա մասնաբաժինն արտահանման մեջ միջինը 30%-ից նվազել է մինչև 10% (ներկայում՝ 5.8%): Պայմանագրային արտադրության ծավալները գրեթե մնացել են անփոփոխ, թեև այս մասով էլ պատկերը միարժեք չէ: Մասնավորապես, 2003-2007 թթ. ընթացքում դրանք 55 մլն ԱՄՆ դոլարից հասել են մոտ 90 մլն ԱՄՆ դոլարի, 2009-

[1] Այս տողում ներառված են հետևյալ ապրանքախմբերը՝ կրծկալ, գոտի՝ սեղմիրան, արհեստական կաուչուկ, ֆակտիս, լատեքս, ապակե շշեր, բանկաներ, հեռուստա- և ռադիոսարքավորումների մասեր, ժամացույցի պատյան և մասեր, կանացի շապիկ, վարտիք-գիշերաշապ., հղկած քար հուշարձանի համար:

2010 թթ.՝ շուրջ երեք անգամ կրճատվել, և միայն 2011-2012 թթ. ժամանակահատվածում է կրկին վերականգնվել արտահանման 2003 թ. ցուցանիշը, ինչի պատճառով պայմանագրային արտադրության մասնաբաժինն արտահանման մեջ միջինը 7,2%-ից նվազել է՝ հասնելով 3,9%-ի (ներկայում 4,3 է): Հատկանշական է, որ թեև պատրաստի արտադրանքի արտահանման ցուցանիշներն առաջին հայացքից դրական միտումներ ունեն (համախառն արտահանման մեջ 21-րդ դարի առաջին ինգամյակում պատրաստի արտադրանքի մասնաբաժինը 30.1% էր, իսկ հաջորդ ինգամյակում՝ միջինը 38.5%), սակայն առավել խորքային վերլուծությունը ցույց է տալիս հակառակը: Մասնավորապես, ՀՀ-ից պատրաստի արտադրանքի արտահանումն ընդգրկում է նաև ավտոմեքենաների, վագոնների, շարժակազմերի ու ԽՍՀՄ արտադրության հաստոցների արտահանումը, ինչը 2003-2012 թթ. կազմել է համախառն արտահանման 3-ից մինչև 5%-ը[1]: Մյուս կողմից՝ պատրաստի արտադրանքի աճի հիմնական պատճառը էլեկտրաէներգիայի և 40% ու բարձր թնդության սպիրտի արտահանման ծավալների ընդլայնումն է, միայն նշված երկու ապրանքախմբին բաժին է ընկում ամբողջ արտահանման մոտ 50%-ը: 2011 թ. արտահանված 469,3 մլն ԱՄՆ դոլարի պատրաստի արտադրանքից 227,8 մլն դոլարինը կամ 48,5%-ը, իսկ 2012 թ. արտահանված 522,63 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ պատրաստի արտադրանքից 2563 մլն դոլարինը կամ 49%-ը կազմել են էլեկտրաէներգիան և սպիրտը:

Պատրաստի արտադրանքի արտահանման վերլուծությունից ակնհայտ է, որ զգալի անկում են գրանցել հատկապես տեքստիլ արտադրության, ժամագործության, էլեկտրատեխնիկական մասերի արտադրության և ադամանդագործության ճյուղերը: Հատկանշական է, որ Հայաստանի Կառավարությունը ադամանդագործության ճյուղի կազմակերպություններին, խթանման նպատակով, 2003 թ. տվել էր լուրջ հարկային արտոնություններ, որոնք, սակայն, որևէ ազդեցություն չեն ունեցել ադամանդի արտահանման գրանցված ցուցանիշների պահպանման և ավելացման վրա (ինչը հիմնականում կապված է ՀՀ՝ Քիմբերլիի գործընթացին անդամակցության հետ):

2003-2012 թթ. արտահանման որակական ցուցանիշների բացասական տեղաշարժերն ազդել են նաև ՀՀ արտահանման կենտրոնացման վրա: Մասնավորապես, նշված ժամանակահատվածում հանրապետության արտաքին առևտուրն ու արտահանումը կենտրոնացել են ինչպես սահմանափակ առևտրային գործընկերների, այնպես էլ սահմանափակ ապրանքախմբերի կտրվածքով:

[1] 2009 թ. պատրաստի արտադրանքի արտահանումը կազմել է համախառն արտահանման միայն 26,6%-ը, իսկ մնացյալը արժեթղթերի և նամականիշերի արտահանումն է:

Աղյուսակ 4

ՀՀ արտահանման կենտրոնացման աստիճանի շարժընթացը 2003-2010 թթ.

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Ընդամենը՝ արտաքին առևտուր (մլն ԱՄՆ դոլար)	1955,1	2077,9	2876,7	3191,4	4441,2	5531,3	4086,5	4809,6	5492,3	5645,2
ՀՀ 10 առևտր. գործընկեր երկրների հետ համախառն առևտուրը (մլն ԱՄՆ դոլար)	1423,6	1463,9	1938,1	2250,5	3129,0	3895,5	2375,7	2683,7	3916,0	3979,9
ՀՀ 10 առևտր. գործընկեր երկրների կտրվածքով արտահանման կենտրոնացման աստիճանի շարժընթացը (%)	72,5	70,6	71,3	62,6	70,5	70,4	71,6	70,8	71,3	70,5
Ընդամենը՝ արտահանում (մլն ԱՄՆ դոլար)	679,60	727,21	1027,8	997,70	1154,7	1060,3	768,2	1019,1	1337,0	1361,0
Առավել բարձր մաքսային արժեք ունեցող տասը ապրանքախմբերի արտահանման ֆիզիկական ծավալները (մլն ԱՄՆ դոլար)	487,7	591,3	789,2	751,7	818,9	789,1	558,7	768,7	1008,2	999,9
Ապրանքային կտրվածքով արտահանման կենտրոնացմ. աստիճանի շարժընթացը (%)	71,8%	81,3%	76,7%	75,3%	70,1%	74,4%	72,7%	75,4%	80,7%	74,7%

Աղյուսակ 4-ի տվյալները վկայում են, որ 2003-2012 թթ. գործընկեր երկրների ու ապրանքային խմբերի կտրվածքով ՀՀ արտահանման կենտրոնացման աստիճանն այդպես էլ չի նվազել: Նշված ժամանակահատվածում առավել բարձր մաքսային արժեք ունեցող տասը ապրանքախմբերի[1] մասնաբաժինը համախառն արտահանման մեջ տատանվել է 71-81%-ի միջակայքում՝ կազմելով միջինը 75,3%, իսկ առաջին տասը առևտրային գործընկերների մասնաբաժինը արտաքին առևտրում տատանվել է միջինը 70%-ի շրջանակներում: Սա խոսում է գործընկեր երկրների և առանձին ապրանքախմբերի կտրվածքով ՀՀ արտահանման գերկենտրոնացման մասին, քանի որ արտաքին առևտրային գործընկերների ընդամենը 4%-ին բաժին է ընկնում համախառն արտաքին առևտրի 70%-ը, իսկ արտահանվող ապրանքախմբերից 1,2%-ին՝ արտահանման 75,3%-ը: Հատկանշական է, որ խնդիրներ են առկա նաև արտահանվող և ներմուծվող ապրանքախմբերի բազմազանեցման գործում: 2003-2012 թթ. ժամանակահատվածում արտահանման և ներմուծման **ապրանք-երկիր** կառուցվածքի վերլուծությամբ փաստվում է, որ գրեթե բոլոր ապրանքախմբերի արտահանումը և ներմուծումը կախված են ընդամենը մեկ կամ երկու առևտրային գործընկերոջ հետ առկա հարաբերություններից: Թերևս, բազմազանեցված

[1] Ըստ ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայության հրապարակած մաքսային վիճակագրության տվյալների՝ ՀՀ-ից արտահանվում է 808 ապրանքախումբ:

կարելի է համարել ոգելից խմիչքների, ծխախոտի, հյութերի, հանքային և աղբյուրի ջրերի արտահանումը, իսկ պայմանագրային արտադրությունը, ադամանդի ու հումքի արտահանումը խիստ կենտրոնացված են:

Բնորոշ է, որ արտահանման ցուցանիշների վատթարացումը բացասաբար է ազդում պարտքային բեռի վրա, ինչի արդյունքում էլ ՀՀ-ն **արտաքին պարտք/արտահանում** հարաբերակցությամբ նվազ պարտքի բեռ ունեցող երկրների խմբից տեղափոխվել է միջին պարտքի բեռ ունեցող երկրների խումբ[1]:

Պետք է նշել, որ արտահանման ցուցանիշների հետագա կանխատեսումները մեծապես կախված են Հայաստանի՝ դեպի արտաքին գործընկերները կողմնորոշումից և հատկապես տնտեսական հակադիր մոտեցումներ ու հնարավորություններ ունեցող դաշինքներին, այն է՝ Մաքսային միությանը կամ Եվրամիության Արևելյան հարևանների հետ համագործակցության ծրագրին նախապատվություն տալուց:

Հարկ է փաստել, որ Եվրամիության և Մաքսային միության երկրների շուկաները թե՛ տարողունակության և թե՛ սպասարկման տեսանկյունից միմյանցից էապես տարբերվում են: Էապես տարբերվում են նաև նրանց տնտեսական հզորություններն ու արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքները:

Աղյուսակ 5-ի տվյալներով՝ Եվրամիության երկրների շուկան մոտ 8 անգամ տարողունակ է Մաքսային միության երկրների շուկայից: Մյուս կողմից՝ երևում է, որ Եվրամիության երկրներն ավելի ծանրակշիռ մասնակցություն ունեն միջազգային առևտրին. ներմուծման ցուցանիշով նրանք մոտ 18, իսկ արտահանման ցուցանիշով՝ 12 անգամ գերազանցում են Մաքսային միության երկրներին: Ներմուծման ու արտահանման կառուցվածքի և ապրանքային կառուցվածքի վերլուծությունից էլ ակնհայտ է, որ թեև Եվրամիության երկրները մոտ 9 անգամ ավելի շատ ծառայություններ են ներմուծում, սակայն համախառն ներմուծման մեջ նրանց մասնաբաժինը կրկնակի պակաս է Մաքսային միության երկրների համանման ցուցանիշից: Ակնհայտ է նաև, որ Եվրամիության երկրների ներմուծման մեջ հումքի և էներգակիրների մասնաբաժինը շուրջ երկու անգամ գերազանցում է Մաքսային միության երկրների համանման ցուցանիշը: Իսկ արտահանման ցուցանիշների վերլուծության արդյունքով՝ եթե Եվրամիության երկրները ընդգծված ծառայություններ (համախառն արտահանման 23,4%-ը) և պատրաստի արտադրանք (ֆիզիկական ապրանքների արտահանման 86%-ը) արտահանող երկրներ են, ապա Մաքսային միության երկրները՝ ընդգծված հումք արտահանող (արտահանվող արտադրանքի 76,6%-ը), ինչից կարելի է ենթադրել, որ միջազգային առևտրում վերջիններս մրցունակ չեն և դիտարկվում են որպես միայն հումքի մատակարարներ:

---

[1] 2010 թ. ցուցանիշը 182,1% է, մինչդեռ 2005-2008 թթ. այն փոքր է եղել 90%-ից: Նույն ժամանակահատվածում պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 35,1, պարտքի սպասարկում/արտահանում ցուցանիշը՝ 5, տոկոսավճար/արտահանում ցուցանիշը՝ 2,4%:

Աղյուսակ 5

Եվրամիության և Մաքսային միության երկրների ՀՆԱ-ն և արտաքին առևտրի ցուցանիշները 2010 թ. դրությամբ

Ցուցանիշը	*Եվրամիություն*	*Մաքսային միություն*
Համախառն ներքին արդյունք (մլրդ ԱՄՆ դոլար)	16632.6	2279.7
Ներմուծում (մլրդ ԱՄՆ դոլար)	6637.5	396.9
որից՝		
Ծառայություններ (մլրդ ԱՄՆ դոլար)	1367.7	183.7
Ծառայությունների մասնաբաժին (%)	20.6	46.3
Պատրաստի արտադրանք (մլրդ ԱՄՆ դոլար)	5269.5	313.2
Պատրաստի արտադրանքի մասնաբաժին (%)	79.4	53.7
Պատրաստի արտադրանքում տարբեր ապրանքախմբերի մասնաբաժին		
Գյուղատնտեսական արտադրանք (%)	11.4	12.5
Էներգակիրներ և հումք (%)	18.5	10.8
Արդյունաբերական արտադրանք (%)	68.1	74.6
Արտահանում (մլրդ ԱՄՆ դոլար)	6739.0	537.0
որից՝		
Ծառայություններ (մլրդ ԱՄՆ դոլար)	1576.3	52.2
Ծառայությունների մասնաբաժին (%)	23.4	9.7
Պատրաստի արտադրանք (մլրդ ԱՄՆ դոլար)	5162.5	484.8
Պատրաստի արտադրանքի մասնաբաժին (%)	76.6	90.3
Պատրաստի արտադրանքում տարբեր ապրանքախմբերի մասնաբաժին		
Գյուղատնտեսական արտադրանք (%)	13.1	4.4
Էներգակիրներ և հումք (%)	12.0	76.6
Արդյունաբերական արտադրանք (%)	72.9	16.2

Եվրամիության երկրների շուկաների սպասարկումն ավելի բարդ և աշխատատար է, քանի որ նրանցում առկա է սուր մրցակցություն, գործարար միջավայրի սուբյեկտներն ավելի փորձառու և ֆինանսապես ապահովված են, քան Մաքսային միության երկրների արտադրողները: Եվրամիությունում ապրանքների որակին և հատկություններին ներկայացվող պահանջներն առավել խիստ են, որը մի կողմից պայմանավորված է շուկայի պետական կարգավորման ու ապրանքների սերտիֆիկացման ավելի կատարյալ մեխանիզմների առկայությամբ, մյուս կողմից՝ եվրոպացի սպառողների համեմատաբար բարձր վճարունակությամբ, որի պարագայում նրանք ավելի շատ պահանջներ են ներկայացնում գնվող ապրանքների մակնիշին, որակին և հատկություններին, քան Մաքսային միության անդամ երկրների սպառողները: Հիմնականում սա է պատճառը, որ թեև Եվրամիության

երկրների արտադրողները ինչպես Հայաստանի, այնպես էլ Մաքսային միության երկրների ապրանքների ներմուծմամբ առաջատար գործընկերներ են, սակայն պատրաստի արտադրանքի ներմուծման բնագավառում լրջորեն զիջում են երրորդ երկրներին՝ կենտրոնանալով Հայաստանից ու Մաքսային միության երկրներից հումքի ներկրման վրա:

Ուշագրավ է, որ նշված երկու տնտեսական միությունների մասնակից երկրներն էլ ՀՀ արտաքին առևտրում ունեն զգալի տեսակարար կշիռներ: Ֆիզիկական ծավալների տեսանկյունից Եվրամիությունը ՀՀ արտահանման և ներմուծման առաջին, իսկ Ռուսաստանը երկրորդ գործընկերն է:

Աղյուսակ 6-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ 2009-2012 թթ. ժամանակահատվածում Եվրամիության երկրների մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ տատանվել է 43-45,5%-ի շրջանակներում, թեև 2012 թ. զգալիորեն կրճատվել է՝ կազմելով արտահանման 37,3%-ը: Դիտարկված ժամանակահատվածում Եվրամիության առաջին ութ երկրներին բաժին է ընկել արտահանման 97%-ը: 2009-2012 թթ. Մաքսային միության երկրների մասնաբաժինը մոտ երեք անգամ պակաս է եղել Եվրամիության երկրների համանման ցուցանիշից՝ կազմելով ՀՀ արտահանման մոտ 16,%-ը, թեև 2012 թ. դրությամբ զգալիորեն աճել է՝ հասնելով 21,3%-ի: Ակներև է, որ Մաքսային միության մյուս մասնակիցների հետ ՀՀ-ն չունի զգալի առևտրային հարաբերություններ. արտահանման մոտ 95%-ը Ռուսաստանի հասցեով է:

Սակայն պետք է նշել, որ արտահանման **ապրանք-երկիր** կառուցվածքի վերլուծության արդյունքները ներկայացնում են հակառակ պատկեր: Մասնավորապես, թեև Եվրամիության երկրներին բաժին է ընկնում ՀՀ արտահանման կեսը, սակայն ապրանքային կառուցվածքի տեսանկյունից այն բազմազանեցված չէ և հիմնականում կենտրոնացված է հումքի վրա: Այսպես. 2012 թ. Եվրամիության երկրներ 508,4 մլն ԱՄՆ դոլարի արտահանման մեջ (337 անուն ապրանքախումբ) 459 մլնը կամ 90,4%-ը կազմել են նրա առաջին ութ գործընկեր երկրներ առաքված պղինձը, ցինկը, մոլիբդենը, հանքաքարը, երկաթամիահալվածքը, չզտված պղինձը, մետաղական ջարդոնը և ադամանդը[1]: 4,6% կազմել են նույն երկրներ արտահանված և պատրաստի արտադրանքում մեծ տեսակարար կշիռ ունեցող սպիրտը, ժամացույցները, ծխախոտը, տրիկոտաժե արտադրանքը և կոստյումները: Այսինքն՝ Եվրամիություն արտահանման 95%-ը կազմել է ընդամենը 11 ապրանքախումբ (արտահանված ապրանքախմբերի 3,3%-ը): Ակնհայտորեն ՀՀ պատրաստի արտադրանքը Եվրամիությունում բավարար պահանջարկ ներկա դրությամբ չունի, միևնույն ժամանակ հատկանշական է, որ մեր հանրապետության տնտեսության որոշ ճյուղերի միակ կամ առաջատար միջազգային սպառողները Եվրամիության երկրներն են (տեքստիլ արդյունաբերություն, ժամագործություն, ծխախոտագործություն):

---

[1] Ուշագրավ է, որ ՀՀ մյուս կարևոր գործընկերների՝ ԱՄՆ-ի, Շվեյցարիայի և Իսրայելի մեր երկրից ներմուծման մասնաբաժնի 90%-ից ավելին ևս կազմում են մետաղները, ադամանդը և ոսկին:

Աղյուսակ 6

ՀՀ արտաքին առևտրի բաշխվածքը Եվրամիության և Մաքսային միության երկրների միջև 2009-2012 թթ.

Ցուցանիշը	2009		2010		2011		2012	
	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.
Համախառն արտաքին առևտ. (մլն ԱՄՆ դոլար)	**710,2**	**3321,1**	**1041,1**	**3749,0**	**1334,3**	**4145,3**	**1361,0**	**4284,0**
Եվրամիության երկրներ (մլն ԱՄՆ դոլար)	**310,2**	**897,8**	**501,1**	**1026,9**	**607,4**	**1167,8**	**508,4**	**-**
այդ թվում՝								-
Ավստրիա	8,5	57,3	4,3	56,6	2,8	47,7	-	-
Բելգիա	46,8	58,5	72,4	71,4	70,5	64,6	127,1	-
Գերմանիա	114,9	176,1	132,6	210,7	157,9	245,1	104,4	-
Իսպանիա	7,6	19,0	15,3	24,6	8,3	40,3	26,6	-
Իտալիա	6,9	113,6	4,8	122,2	4,6	169,6	7,7	-
Նիդերլանդներ	52,2	26,7	98,6	23,4	117,2	37,1	79,2	-
Ֆրանսիա	5,7	73,6	7,5	76,7	9,6	82,4	-	-
Բուլղարիա	60,0	86,3	156,6	112,4	152,2	102,2	129,3	-
Կիպրոս	-	-	-	-	-	-	8,1	
Շվեդիա	-	-	-	-	-	-	9,2	
Ընդամենը՝ Եվրամիության առաջատար գործընկեր երկրներ[1]	302,6	611,1	492,1	698,0	523,1	789,0	491,6	-
Եվրամիության երկրների մասնաբաժինն արտ. առևտրում %	**43,7**	**27,0**	**48,1**	**27,4**	**45,5**	**28,2**	**37,3**	**-**
Եվր. առաջ. գործընկ. երկր. մասնաբ. եվրոմ. հետ ՀՀ արտաքին առևտրում, %	97,4	-	98,2	-	86,1	-	96,7	-
Մաքսային միության երկրներ (մլն ԱՄՆ դոլար)	**114,4**	**819,0**	**168,2**	**879,0**	**232,5**	**945,6**	**290,6**	**-**
այդ թվում՝								-
Բելառուս	4,6	24,6	4,5	31,9	5,9	29,5	6,7	-
Ղազախստան	2,4	3,2	3,1	11,9	4,4	25,3	4,0	-
Ռուսաստան	107,4	792,2	160,6	835,2	222,2	890,8	279,9	-
Մաքսային միության երկրների մասնաբաժինն արտ. առևտրում, %	16,1	24,6	16,2	23,4	17,4	21,5	21,3	-

[1] Եվրամիության առաջատար գործընկեր երկրներ ասելով նկատի ենք առել ՀՀ արտահանման գործընկերներին:

Մաքսային միության և մասնավորապես Ռուսաստանի պարագայում պատկերը որոշակիորեն այլ է: Պետք է նշել, որ թեև դեպի ՌԴ արտահանումը ևս կենտրոնացված է (արտահանվող ապրանքախմբերից 41-ին կամ անվանացանկի 9.5%-ին բաժին է ընկնում արտահանման 93%-ը), սակայն՝ մոտ չորս անգամ ավելի մեծ թվով ապրանքախմբերում: Հումք ՌԴ չի արտահանվում. այս երկիրը ՀՀ-ից արտահանվող գյուղատնտեսական արտադրանքի (կազմում է 78.8-ը մլն ԱՄՆ դոլար կամ Ռուսաստանի Դաշնություն արտահանման 28%-ը) և ոգելից խմիչքների հիմնական սպառողն է (137,6 մլն ԱՄՆ դոլար կամ ՌԴ արտահանման 49,3%-ը): ՌԴ արտահանման 15,7%-ը կամ 635 մլն ԱՄՆ դոլարը կազմում են 17 ապրանքախմբերում ներառված ապրանքատեսակները՝ ադամանդ, պոմպեր, էլեկտրատեխնիկական արտադրանք, դեղորայք, խեցեգործական արտադրանք, սև մետաղներից արտադրանք և այլն:

Վերլուծությունից կարելի է եզրակացնել. թեև Մաքսային միության երկրների ցուցանիշներն ավելի համեստ են, սակայն ներկա դրությամբ ՀՀ իրական արտադրանքի հիմնական սպառողները հենց այդ երկրներն են, մասնավորապես՝ Ռուսաստանը, իսկ Եվրամիության շուկայում հայրենական կազմակերպություններն առայժմ մրցունակ չեն և չեն կարող արդյունավետ իրացնել իրենց ընձեռվող հնարավորությունները:

Հոդվածում արտահանման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքի հետազոտության հիման վրա համեմատական վերլուծության է ենթարկվել ՀՀ արտաքին առևտուրը հիմնական առևտրային գործընկեր երկրների հետ, դիտարկվել են Եվրամիության և Մաքսային միության անդամ երկրների դերն ու տեսակարար կշիռը մեր երկրի արտահանման և ներմուծման կառուցվածքում: Թեև Եվրամիության երկրներին բաժին է ընկնում Հայաստանի արտահանվող ապրանքների մոտ կեսը, սակայն ապրանքային կառուցվածքի տեսանկյունից արտահանումը բազմազանեցված չէ և հիմնականում կետնտրոնացված է հումքային ապրանքների վրա, մինչդեռ Ռուսաստանի Դաշնություն արտահանումը կենտրոնացված է մոտ չորս անգամ ավելի մեծ թվով ապրանքախմբերում: Հետևապես ներկայում ՀՀ իրական արտադրանքի հիմնական սպառողները դիտվում են Մաքսային միության երկրները և մասնավորապես՝ Ռուսաստանը:

ГРИГОР НАЗАРЯН
АРМЕН ГРИГОРЯН
АННА ПАХЛЯН
АРАКС АБРААМЯН

ТОВАРНАЯ И ГЕОГРАФИЧЕСКАЯ СТРУКТУРА ЭКСПОРТА РА: КРАТКОСРОЧНЫЕ ТЕНДЕНЦИИ

На основе исследования товарной и географической структуры экспорта в статье проведен сравнительный анализ внешней торговли РА с основными торговыми партнерами, представлена роль Евросоюза и Таможенного союза, а также их удельный вес в структуре экспорта и импорта Республики Армения.

Хотя на страны ЕС приходится около половины экспорта Армении, но с точки зрения товарной структуры экспорт её не диверсифицирован и в основном сконцентрирован на в четыре раза большего количества товарах. Следовательно, на сегодняшний день основными потребителями реальной продукции РА являются государства-члены Таможенного союза и, в частности, Россия.

GRIGOR NAZARYAN
ARMEN GRIGORYAN
ANNA PAKHLYAN
ARAKS ABRAHAMYAN

COMMODITY AND GEOGRAPHICAL STRUCTURE OF ARMENIAN EXPORTS: SHORT TIME TRENDS

Based on the study of the commodity and geographical structure of Armenian exports, a comparative analysis of Armenia's foreign trade with major trading partners was conducted; moreover, the role and share of the European Union and Customs Union countries in Armenia's exports and imports was discussed.

Even though half of Armenia's exports goes to European Union countries, from the view of commodity structure, Armenia's trade with Europe is not diversified and is mostly focused on raw materials, whereas Armenia’s export to the Russian Federation involves around four times more product groups. Consequently the main consumers of Armenian final products exports are the members of the Customs Union, particularly Russia.

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ
ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, ՀՊՏՀ
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ
ԱՇՈՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՀՀ ԳԼՈԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՎՐԱ[1]

Հիմնաբառեր. *գլոբալ մրցունակություն, միջազգային առևտրում ներգրավվածության համաթիվ, վարկանիշային աղյուսակներ, ծովային ելք չունեցող երկրներ*

Հանրահայտ է, որ յուրաքանչյուր երկիր ձգտում է առավելագույնս խթանել սեփական արտահանումը, ինչը նպաստում է գործարարության միջազգայնացմանը, կայացմանը՝ մրցակից երկրներում, ճանաչելիության աստիճանի և վարկանիշի, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական կշռի բարձրացմանը: Ավելին՝ տնտեսագետների շրջանում տիրապետող է այն կարծիքը, որ ցանկացած երկրի կառավարության գերխնդիրներից մեկն արտաքին առևտրի դրական հաշվեկշռի ապահովումն է, որի համար երկու հիմնարար մոտեցում է կիրառվում: Առաջինը նորմերկանտիլիստական մոտեցումն է կամ, այլ կերպ՝ փոխարինման էֆեկտի քաղաքականության շրջանակներում որոշակի ապրանքների ազգային արտադրության հաշվին ներմուծման կրճատումը: Ընդ որում այս մոտեցումը կիրառող երկրները հիմնականում «մեղադրվում են» հովանավորչության մեջ: Երկրորդ՝ առավել արդյունավետ մոտեցումը արտահանող տնտեսության մոդելի կառուցումն է, որը պահանջում է երկարաժամկետ հատվածում մշակել և կիրառել երկրի ազգային առանձնահատկություններին ու գործարար միջավայրի հնարավորություններին համապատասխանող՝ ձեռնարկատիրության միջազգայնացման ազգային ծրագիր (դոկտրին կամ հայեցակարգ): Ձեռնարկատիրության միջազգայնացման գործընթացն ըստ էության պատկերացնելու համար առավել նպատակահարմար է այն ներկայացնել Մ. Պորտերի ռոմբի մոդելով, ըստ որի՝ միջազգայնացումը երեք միջավայրի ընձեռված հնարավորություններով պայմանավորված գործընթաց է.

- երկրի ազգային միջավայր (պահանջարկի պայմանները, մրցակցությունը, ընկերությունների կազմն ու ռազմավարությունները, կառավարության գործունեությու-

[1] Հոդվածը պատրաստվել է «Մրցունակություն, միջազգայնացում և արտաքին առևտուր» հետազոտական ուղղության «Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» գիտահետազոտական թեմայի շրջանակներում:

նը, տնտեսության ճյուղային կառուցվածքն ու մրցունակությունը, միջազգայնացման շանսի ընձեռման նախադրյալները և կոնյունկտուրային պայմանները),

- կազմակերպության շուկայական ու ճյուղային միջավայրերի ամբողջություն (ճյուղում շուկայական իշխանությունը բնորոշող հինգ հիմնական ուժերը՝ ըստ Պորտերի),
- միջազգային շուկայում մրցակցային եռանկյուն (այդ շուկայի սպառողները, տվյալ արտահանող կազմակերպության և շուկայում նրա մրցակիցների արժեքային շղթաները)[1]:

Ասվածից ակնհայտ է, որ նախ՝ ընկերություններն իրենք պետք է արտահանման և գործարարության միջազգայնացման գործունեություն ծավալելու բավարար շարժառիթներ ու մրցունակություն ունենան, ինչպես նաև տիրապետեն բավարար փորձի և հմտությունների՝ միջազգային տնտեսական գործունեության իրականացման համար: Այնուհետև՝ կարևոր են շուկայում մրցակցությունը բնորոշող և երկրի գլոբալ մրցունակությունը պայմանավորող գործոնների պատկերը, կառավարության ջանքերի արդյունավետությունը, իսկ արդեն ներթափանցման տարբեր երկրների շուկաներում նշյալ խումբ՝ գործոնները մեծ ազդեցություն կունենան կոնկրետ կազմակերպության արժեքային շղթայի մրցունակության վրա:

Պետք է նշել, որ երկրի արտահանման և գործարարության միջազգայնացման հնարավորությունները սերտ փոխկապակցված են նրա գլոբալ հեղինակության և մրցունակության հետ: Ներկայում ցանկացած երկրի մրցունակության ու հեղինակության գնահատման կարևորագույն բաղադրիչներ են Համաշխարհային տնտեսական համաժողովի (G 20-ի) փորձագետների կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող «Երկրների գլոբալ մրցունակության համաթիվը» և «Համաշխարհային առևտրում երկրների ներգրավվածության ինդեքսը»:

Աղյուսակ 1-ում ՀՀ գլոբալ մրցունակությունը գնահատված է բավականին ցածր: Եթե վարկանիշային աղյուսակը պայմանականորեն բաժանենք չորս խմբի՝ «մրցունակ» երկրներ (1-30 տեղեր), «միջին մրցունակության» երկրներ (31-62 տեղեր), «բավարար մրցունակության» երկրներ (63-96 տեղեր) և «ոչ մրցունակ» երկրներ (97-144 տեղեր), ապա Հայաստանի տնտեսությունը հնարավոր է բնորոշել իբրև «բավարար մրցունակության» (եզրափակում է նմանատիպ երկրների հնգյակը), իսկ որոշ տարիների՝ նույնիսկ «ոչ մրցունակ»: Հարկ է նշել, որ ՀՀ գլոբալ մրցունակությունը ցածր է հիմնական տարածաշրջանային մրցակիցների համեմատությամբ: Իսկ «Ծովային ելք չունեցող երկրների» շարքում Հայաստանն ունի միջին դիրքեր և հիմնականում առաջ է միայն աֆրիկյան երկրներից:

[1] Տես Porter M. Competitive Advantage of Nations, Macmilan, New York 1990 pp. 229:

Աղյուսակ 1

ՀՀ դիրքերը Համաշխարհային տնտեսական համաժողովի «Գլոբալ մրցունակության համաթիվ» 2010-2013 թթ. հրապարակումներում*

Վարկանիշային կազմակերպությունը	Ձեկույցը	Հաշվետու տարին	Դիտարկված երկրների թիվը	ՀՀ դիրքը
Համաշխարհային տնտեսական համաժողով	Գլոբալ մրցունակության համաթիվ	2009-2010	133	97
		2010-2011	139	98
		2011-2012	142	92
		2012-2013	144	82
		2013-2014	148	79

** Աղյուսակը կազմված է ՀՏՀ կողմից 2009-2013 թթ. հրապարակված գլոբալ մրցունակության հաշվետվությունների հիման վրա:*

Հատկանշական է, որ ՀՀ մրցունակությունը ցածր է ինչպես համաթիվ, այնպես էլ դրա առանձին բաղադրիչների մասով: Մասնավորապես, 2012-2013 թթ. վարկանիշային աղյուսակում Հայաստանի դիրքը բազային համարվող **ինստիտուտներ** գործոնով 71-րդն է, **ենթակառուցվածքային** գործոնով՝ 80-րդը, **մակրոտնտեսական միջավայր** ցուցանիշով՝ 83-րդը, իսկ **առողջապահություն և առաջնային կրթություն** ցուցանիշով՝ 80-րդը: Տնտեսության արդյունավետությունը բնորոշող **բարձրագույն կրթություն և վերապատրաստումներ** ցուցանիշով մեր հանրապետությունը զբաղեցնում է 70-րդ տեղը, **ապրանքային շուկաների արդյունավետություն** ցուցանիշով՝ 72-րդ, **աշխատաշուկայի արդյունավետություն** ցուցանիշով՝ 30-րդ, **ֆինանսական շուկաների զարգացում** ցուցանիշով՝ 78-րդ, **տեխնոլոգիական պատրաստվածություն** ցուցանիշով՝ 92-րդ, իսկ **շուկայի չափեր** ցուցանիշով՝ 115-րդ: Նորամուծությունների կիրառման և գործարարության փորձառության աստիճանը բնութագրող **գործարարության փորձառություն** ցուցանիշով՝ 92-րդ տեղում է, իսկ **նորամուծություն** ցուցանիշով՝ 105-րդ[1]: Ակներև է, որ գործարարության միջազգայնացման համար առանցքային նշանակություն ունեցող այնպիսի գործոններով, ինչպիսիք են շուկայի չափերը, գործարարության փորձառությունն ու նորամուծությունների կիրառման մակարդակ, ՀՀ-ն ունի անգամ ոչ մրցունակ երկրներին բնորոշ դիրքեր:

Գործարարության միջազգայնացման մյուս կարևոր ցուցիչներից մեկն էլ Համաշխարհային տնտեսական համաժողովի փորձագետների կողմից հրապարակվող **միջազգային առևտրում երկրների ներգրավվածության** համաթիվն է, որն ըստ էության ցույց է տալիս տվյալ երկրի կշիռը պայմանավորող գործոններով նրա մրցունակության աստիճանը:

[1] Տե'u Global Competitiveness Report 2012-2013, by World Econimic Forum Geneva, 2012:

Աղյուսակ 2

Գլոբալ մրցունակության 2011-2012, 2012-2013 թթ. համաթվերով ՀՀ համեմատական դիրքը պարածաշրջանային հարևանների և ծովային ելք չունեցող երկրների շարքում*

№	Երկիրը	2012-2013 թթ. վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքը	2011-2012 թթ. վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքը
1.	Շվեյցարիա	1	1
2.	Ավստրիա	16	19
3.	Լյուքսեմբուրգ	22	23
4.	Չեխիա	39	38
5.	Թուրքիա	43	59
6.	Ադրբեջան	46	55
7.	Ղազախստան	51	72
8.	Հունգարիա	60	48
9.	Իրան	66	62
10.	Սլովակիա	71	69
11.	Վրաստան	77	88
12.	Բոտսվանա	79	78
13.	Մակեդոնիա	80	79
14.	Հայաստան	82	92
15.	Մոլդովա	87	93
16.	Մոնղոլիա	93	96
17.	Սերբիա	95	95
18.	Տաջիկստան	100	105
19.	Զամբիա	102	113
20.	Բոլիվիա	104	103
21.	Պարագվայ	116	122
22.	Եթովպիա	121	106
23.	Ուգանդա	123	121
24.	Նեպալ	125	125
25.	Ղրղզստան	127	126
26.	Մալի	128	128
27.	Մալավի	129	117
28.	Զիմբաբվե	132	132
29.	Բուրկինա Ֆասո	133	136
30.	Լեսոտո	137	135
31.	Չադ	139	142
32.	Բուրունդի	144	140

**Աղյուսակը կազմված է ՀՏՀ կողմից 2012-2013 թթ. հրապարակված գլոբալ մրցունակության հաշվետվությունների հիման վրա:*

Աղյուսակ 3

ՀՀ դիրքը՝ ըստ ՀՏՀ միջազգային առևտրում երկրների ներգրավվածության համաթվի*

Վարկանիշային կազմակերպությունը	Ձեկույցը	Հաշվետու տարին	Դիտարկված երկրների թիվը	ՀՀ դիրքը
Համաշխարհային տնտեսական համաժողով	Միջազգային առևտրում ներգրավվածության համաթիվ	2009	121	64
		2010	125	52
		2012	132	59

** Աղյուսակը կազմված է ՀՏՀ Համաշխարհային առևտրում ներգրավվածության 2008-2013 թթ. հաշվետվությունների հիման վրա:*

Եթե այս վարկանիշային աղյուսակը ևս պայմանականորեն բաժանենք չորս խմբի՝ «միջազգային առևտրում մրցունակ» երկրներ (1-38 տեղեր), «միջազգային առևտրում միջին մրցունակության» երկրներ (39-67 տեղեր), «միջազգային առևտրում բավարար մրցունակության» երկրներ (68-98 տեղեր) և «միջազգային առևտրում ոչ մրցունակ» երկրներ (99-132 տեղեր), ապա ՀՀ տնտեսությունը հնարավոր է բնորոշել՝ «միջազգային առևտրում միջին մրցունակության»:

Պետք է նշել, որ այս վարկանիշով Հայաստանի համեմատական դիրքերը տարածաշրջանային մրցակիցների և ծովային ելք չունեցող երկրների շարքում առավել բարենպաստ են:

Աղյուսակում տարբեր գործոններով ՀՀ մրցունակությունը բնորոշվող դիրքերը ցրված են և հիմնականում չեն համապատասխանում ընդհանրացված վարկանիշին: Մասնավորապես, ըստ համաթվի՝ 2012 թ. ՀՀ դիրքը շուկայի հասանելիությունը բնորոշող (13-րդ տեղ) **ներքին շուկայի հասանելիություն** գործոնով 15-րդն է, իսկ **միջազգային շուկաների հասանելիություն** գործոնով՝ 38-րդը: Ընդհանրապես, շուկայի հասանելիության ցուցանիշով Հայաստանը հնարավոր է համարել միջազգային առևտրում մրցունակ երկիր: Սահմանի վրա վարչարարության աստիճանը բնորոշող (85-րդ տեղ) **մաքսային վարչարարության արդյունավետություն** ցուցանիշով մեր երկիրը զբաղեցնում է 74-րդ, **ներմուծման-արտահանման գործընթացների արդյունավետություն** ցուցանիշով՝ 96-րդ, իսկ **սահմանի վրա վարչարարության պարզություն** ցուցանիշով՝ 100-րդ տեղը: Ակընհայտ է, որ սահմանի վրա վարչարարության ցուցանիշը ձևավորող գործոններով ՀՀ-ն միջազգային առևտրում հնարավոր է դիտարկել կամ բավարար մրցունակության կամ ոչ մրցունակ երկիր: Տրանսպորտային և հաղորդակցական ենթակառուցվածքները բնորոշող (63-րդ տեղ) **տրանսպորտային ենթակառուցվածքների որակ և արդյունավետություն** ցուցանիշով Հայաստանը 59-րդ տեղում է, **տրանսպորտային ծառայությունների որակ և արդյունավետություն** ցուցանիշով՝ 62-րդ, իսկ **ICTs ծառայությունների որակ և օգտագործման մակարդակ** ցուցանիշով՝ 67-րդ: Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ տրանսպորտային բաղադրիչի մասով ՀՀ դիրքերն առավել մոտ են հիմնական վարկանիշային դիրքին, որով մեր երկիրը հնարավոր է բնորոշել իբրև միջազգային առևտրում միջին մրցունակության երկիր: Գործարար միջավայրը բնորոշող (61-րդ տեղ) **կարգավո-**

րող միջավայր ցուցանիշով՝ Հայաստանը 85-րդ տեղում է, իսկ **ֆիսկալ ծառայություններ** ցուցանիշով՝ 49-րդ[1]: Ակնհայտորեն՝ կարգավորող միջավայրի մասով ՀՀ-ն միջազգային առևտրում ոչ մրցունակ երկրների շարքում է, իսկ ֆիսկալ ծառայությունների որակի մասով՝ միջին մրցունակության երկրների:

Աղյուսակ 4

ՀՀ համեմատական դիրքը տարածաշրջանային հարևանների և ծովային ելք չունեցող երկրների շարքում՝ ըստ միջազգային առևտրում երկրների ներգրավվածության համաթվի*

Երկիրը	*2012 թ. վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքը*	*2010 թ. վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքը*
Շվեյցարիա	8	5
Լյուքսեմբուրգ	10	9
Ավստրիա	15	14
Չեխիա	41	42
Հունգարիա	47	49
Ռուանդա	51	վարկանիշում չի ներառվել
Բոտսվանա	54	53
Սլովակիա	55	47
Հայաստան	59	52
Մակեդոնիա	61	56
Թուրքիա	62	62
Սերբիա	71	67
Մոլդովա	76	վարկանիշում չի ներառվել
Ադրբեջան	81	77
Մալավի	85	83
Զամբիա	88	85
Ուգանդա	98	94
Պարագվայ	101	103
Ղազախստան	105	88
Եթովպիա	106	107
Տաջիկստան	110	108
Ղրղզստան	111	100
Լեսոտո	113	101
Մոնղոլիա	114	116
Իրան	117	վարկանիշում չի ներառվել
Մալի	121	111
Բուրկինա Ֆասո	122	110
Նեպալ	124	118
Զիմբաբվե	129	122
Բուրունդի	131	125
Չադ	132	124

** Աղյուսակը կազմված է ՀՏՀ Համաշխարհային առևտրում ներգրավվածության 2008-2013 թթ. հաշվետվությունների հիման վրա:*

[1] Տե'ս GlobalEnablingTrade Report, by the World Economic Forum 2012:

Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված երկու զեկույցների առանձին գործոնների վերլուծությամբ հնարավոր է փաստել, որ գլոբալ շուկայում և միջազգային առևտրում ՀՀ նվազ մրցունակության հիմնական պատճառներն են.

- ✓ կոռուպցիայի մակարդակը,
- ✓ կառավարչական բյուրոկրատիան,
- ✓ վարկունակության տարբեր համաթվերում ՀՀ ցածր դիրքերը,
- ✓ գործարարության ֆինանսավորման աղբյուրների սակավությունը,
- ✓ սակագնային կարգավորման առկա մեխանիզմները,
- ✓ հարկերի կիրառվող դրույքաչափերը,
- ✓ հարկային և մաքսային քաղաքականության ոչ պարզ լինելը և մաքսային վարչարարության որակը,
- ✓ արտարժութային վերահսկողության կիրառվող մոտեցումները,
- ✓ տնտեսության ենթակառուցվածքների ցածր որակը,
- ✓ մակրոտնտեսական ցուցանիշների ոչ բավարար կայունությունը,
- ✓ բարձրագույն կրթության և կառավարչական դպրոցների ցածր որակը,
- ✓ ՀՀ տեխնոլոգիական պատրաստվածության ցածր աստիճանը,
- ✓ շուկայի փոքր չափերը,
- ✓ գործարար միջավայրի սահմանափակ փորձառությունն ու նորամուծությունների կիրառման ցածր մակարդակը,
- ✓ ներքին մրցակցության ինտենսիվության առկա աստիճանը,
- ✓ տարբեր ապրանքային շուկաներում հաստատված գերիշխանության իրավիճակները,
- ✓ հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը,
- ✓ գործարարությունը կարգավորող միջավայրի որակը,
- ✓ դատական իշխանության անկատարությունը,
- ✓ հովանավորչության առկայությունը,
- ✓ տրանսպորտային ենթակառուցվածքների և ճանապարհների որակը,
- ✓ ծովային ենթակառուցվածքների բացակայությունն ու դրանցից մոտակա երկրներում օգտվելու սահմանափակումները,
- ✓ գնաճի բարձր տեմպերը,
- ✓ հետազոտությունների և զարգացման վրա կատարվող ծախսերի փոքր ծավալները,
- ✓ հետազոտությունների և զարգացման բնագավառում **կառավարություն-արդյունաբերություն-գիտական հաստատություններ** կապի բացակայությունը
- ✓ աշխատակիցների վերապատրաստումների ցածր աստիճանը,
- ✓ միջազգային դիստրիբյուցիայի կապուղիների վերահսկողության բացակայությունը,
- ✓ գործարարության մեջ մարքեթինգի կիրառման սահմանափակությունը,
- ✓ գործարարության՝ սպառողների վրա կենտրոնացման ցածր աստիճանը:

Միջազգային առևտրում և գլոբալ շուկայում մրցունակությունը հնարավոր է բնորոշել նաև այլ գործոններով, որոնցից առավել հատկանշականներն են՝ երկրի դիրքը «Հարիթեյջ» հիմնադրամի **տնտեսական ազատություն** վարկանիշով, Համաշխարհային բանկի **գործարարության դյուրինություն** վարկանիշով, «Ֆիտչ» և «Մուդիս» գործակալությունների **վարկունակություն** վարկանիշերով, «Ինտերբրենդ», «Բրենդ ֆինանս» և

«Ֆյուչրբրենդ» վերազգային խորհրդատվական գործակալությունների **ազգային բրենդերի ճանաչելիություն** վարկանիշերով, «Հեղինակության ինստիտուտ» միջազգային խորհրդատվական ընկերության **երկրների գլոբալ հեղինակություն** վարկանիշային աղյուսակով, ինչպես նաև «Խաղաղության հիմնադրամի» **երկրների գլոբալ անգործունակություն** վարկանիշով»:

Աղյուսակ 5-ում ներկայացված են ՀՀ դիրքերը այն գլոբալ կազմակերպությունների վարկանիշերով, որոնցում երկիրը գնահատվում է: Ակնհայտ է, որ, մասնավորապես, ազգային բրենդի ճանաչելիության և երկրի հեղինակության վարկանիշերով Հայաստանը գնահատված չէ (հիմնականում աննշան գլոբալ ճանաչելիության պատճառով): Բարենպաստ դիրքեր ունի «Հարիթեյջ» հիմնադրամի **տնտեսական ազատություն** և Համաշխարհային բանկի **գործարարության դյուրինություն** վարկանիշերով, որոնց մանրամասն վերլուծությունից, սակայն, պարզվում է, որ բացի վերևում մատնանշված հիմնախնդիրներից ունի նաև միջազգային առևտրի կարգավորման, պայմանագրերի կատարման, ընկերությունների լուծարման, առևտրի, ներդրումների ու ֆինանսական ազատության, ինչպես սեփականության իրավունքի պաշտպանության բաղադրիչներով լուրջ խնդիրներ:

Աղյուսակ 5

ՀՀ դիրքերը տարբեր կազմակերպությունների վարկանիշային աղյուսակներում

Հրապարակող կազմակերպությունը	*Վարկանիշը*	*Հրապարակման տարեթիվը*	*Ներառված երկրների թիվը*	*Երկրի դիրքը*
«Ուոլ Սթրիթ» ամսագիր և «Հարիթեյջ» հիմնադրամ	Տնտեսական ազատության համաթիվ	2012	179	38
Համաշխարհային բանկ	Doing Business 2013	2013	185	32
ՏՀՀԿ	Երկրների ռիսկի դասակարգում	2010	186	83
«Ֆիտչ» վարկանիշային կազմակերպություն	Երկրների ինքնիրավության վարկանիշ	2013	196	BB-
«Մուդիս» վարկանիշային կազմակերպություն	Երկրների ինքնիրավության վարկանիշ	2013	196	Ba2
Խաղաղության հիմնադրամ	Երկրների գլոբալ անգործության համաթիվ	2012	184	105 Միջինից ցածր կայունությամբ երկիր

Համաշխարհային կազմակերպությունների հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի գլոբալ մրցունակության և գործարարության միջազգայնացման խոչընդոտները բավականին շատ են, ինչը պահանջում է վերանայել ՀՀ Կառավարության՝ երկրի մրցունակությունը և արտահանումը խթանող ծրագրերը: Մասնավորապես, գործարարության միջազգայնացման խթանման նոր ռազմավարությունը պետք է հենվի վերոնշյալ խումբ - գործոնների համալիր հետազոտության, դրանց պատ-

ճառահետևանքային կապերի վերլուծության ու առաջադրած խնդիրների գնահատման արդյունքների վրա: Հայաստանի Հանրապետությունում գործարարության միջազգայնացման նոր ռազմավարության մշակումը, ենթադրաբար, կարող է ներառել հետևյալ հաջորդական քայլերը.

1. ՀՀ տնտեսության գլոբալ մրցունակությունը պայմանավորող գործոնների սահմանում ու վերլուծություն: Երկրի գլոբալ մրցունակության և «Պատրաստված է Հայաստանում» բրենդի միջազգային ճանաչելիության մակարդակի բարձրացման միջոցառումների մշակում:
2. Արտահանման համատեքստում տնտեսության ճյուղերի համեմատական առավելությունների գնահատում ու արտահանման «ներուժային» ճյուղերի սահմանում:
3. ՀՀ ապրանքային շուկաների վերլուծություն, հայրենական կազմակերպությունների առանցքային փորձի ու հմտությունների գնահատում, դրանք շուկայում ներդրմանը խոչընդոտող գործոնների բացահայտում և առկա խնդիրների լուծմանը միտված միջոցառումների մշակում:
4. Արտահանման ու ներմուծման որակական ցուցանիշների վերլուծություն, մասնավորապես արտահանման կազմի, կառուցվածքի և աշխարհագրական կենտրոնացման աստիճանի գնահատում ու բազմազանեցման միջոցառումների մշակում:
5. Գործարար միջավայրում արտահանման խթանների և խոչընդոտների վերլուծություն:
6. Արտահանումն ուղեկցող ծառայությունների (կամ այլ կերպ՝ արտահանող – միջազգային սպառող շղթայի ենթակառուցվածքների) վերլուծություն:
7. Արտահանման խթանման միջազգային մոդելների վերլուծություն, համադրում և ՀՀ գործարար միջավայրում դրանց ներդրման (հարմարեցման) հնարավորությունների գնահատում:
8. Ձեռնարկատիրության ֆինանսական աջակցությամբ խթանման միջոցառումների մշակում:
9. Արտահանման խթանման ծրագրի տնտեսական արդյունավետության գնահատում (բյուջետային մուտքերի շարժընթացի, տնտեսական աճի և տնտեսական զարգացման վրա նշված ծրագրի կարճաժամկետ ու երկարաժամկետ ազդեցության գնահատում և կանխատեսում):

Առանց վերոնշյալ քայլերն իրականացնելու և առաջադրված խնդիրների արդյունավետ հաղթահարման ծրագրեր մշակելու ՀՀ գլոբալ մրցունակությունն ու միջազգային առևտրում հեղինակությունը մշտապես կմնան նման ցածր մակարդակի վրա:

Հայաստանի Հանրապետության տնտեսության և գործարար միջավայրի մրցունակության բնորոշման համար հոդվածում դիտարկվել են միջազգային հեղինակավոր կառույցների կողմից հրապարակվող մրցունակության ցուցանիշներն ու վարկանիշային աղյուսակները: Ընդհանուր առմամբ, ըստ գնահատականների, Հայաստանը դասվում է միջազգային մրցունակության միջին կամ ցածր մակարդակ ունեցող երկրների շարքին: Մեր երկրի ցածր մրցունակության բազմաթիվ պատճառներից կարելի է առանձնացնել տրանսպորտային ենթակառուցվածքների և ճանապարհների

որակը, ծովային ենթակառուցվածքների բացակայությունն ու դրանցից տարածաշրջանի երկրներում օգտվելու սահմանափակումները:

Համաշխարհային շուկայում ՀՀ մրցունակության բարելավման նպատակով առաջարկվում են հստակ միջոցառումներ, որոնք ընդգրկում են «Պատրաստված է Հայաստանում» բրենդի միջազգային ճանաչելիության ընդլայնման ուղիների մշակումից ընդհուպ մինչև արտահանման խթանման ծրագրի տնտեսական արդյունավետության գնահատումն ու բարելավումը:

ГРИГОР НАЗАРЯН
ДАВИД АХВЕРДЯН
АРМЕН ГРИГОРЯН
АШОТ ЕГИАЗАРЯН

ВОЗДЕЙСТВИЕ ГЛОБАЛЬНОЙ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ РА НА ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИЮ ДЕЛОВОЙ КОНЪЮНКТУРЫ

Для характеристики конкурентоспособности экономики и деловой конъюнктуры Республики Армения исследованы показатели конкурентоспособности и рейтинговые таблицы, опубликованные международными организациями. В целом, по оценкам Армения классифицируется как страна со средним или низким уровнем международной конкурентоспособности. Среди различных причин низкой конкурентоспособности страны можно выделить качество дорог и транспортной инфраструктуры, отсутствие морских инфраструктур и ограниченный доступ к использованию морских инфраструктур региона.

В статье, с целью повышения конкурентоспособности РА на мировом рынке, предложены конкретные меры, которые включают в себя операции начиная от разработки мер по повышению международной узнаваемости бренда "Сделано в Армении" и кончая оценкой экономической эффективности программы стимулирования экспорта и улучшением её.

GRIGOR NAZARYAN
DAVID HAKHVERDYAN
ARMEN GRIGORYAN
ASHOT EGHIAZARYAN

THE IMPACT OF ARMENIA'S GLOBAL COMPETITIVENESS ON BUSINESS ENVIRONMENT INTERNATIONALIZATION

For the determination of Armenia's economy and business environment competitiveness, indicators and rating tables published by international authoritative institutions have been reviewed. Generally, in terms of global competitiveness and according to given estimates, Armenia is among medium or low ranked countries. Among the many reasons for low competitiveness, we can mention the bad quality of roads and transportation infrastructure, the absence of maritime infrastructure, and the limitations of its use in neighboring countries.

Nonetheless, to raise Armenia’s competitiveness in the global market, we have proposed specific measures which include: «made in Armenia» brand’s international recognition events elaboration up to export promotion program’s economic efficiency's assessment and improvement.

ԳԱԳԻԿ ՉԱՏԻՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ
ԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆ
Լաբորանտ, ՀՊՏՀ

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՖԻՐՄԱՆԵՐԻ ԲՐԵՆԴԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հիմնաբառեր. բրենդ, մրցակցություն, առևտրական ֆիրմա, առևտրական մակնիշ, բրենդի արժեք, շուկայական մեթոդ, փորձագիտական մեթոդ, ֆիրմայի կապիտալացում

Համաշխարհային շուկայում իրական մրցակցությունը ֆիրմաների միջև ընթանում է հանուն հեղինակության: Գնորդների մշտական կազմը ձևավորող և նրանց վարվեցողությունն ապահովող միջոց է առևտրական ֆիրմաների բրենդը, որը սպառողներին կողմնորոշում է իր ճանաչմանը: Բրենդը բավականին ընդգրկուն և լայն հասկացություն է. իրենից ներկայացնում է յուրօրինակ կառուցվածք, որը ձևավորվում է սպառողների գիտակցության մեջ կարծիքներով, զգացմունքներով, էմոցիաներով և պատկերացումներով: Բրենդի ուժն այն է, թե ինչպես է ընդունվում սպառողի կողմից, և վերջինս ինչ է մտածում ու զգում դրա առնչությամբ: Գրագետ կառավարվող բրենդը շուկայում ֆիրմաներին ապահովում է անվիճելի մրցակցային առավելություններով.

- նույնանականացնում է ֆիրման և ապրանքները,
- ամբողջականացնում է հաղորդակցությունները և ստեղծում ապրանքի միասնական, ավարտուն կերպար,
- հնարավորություն է ընձեռում ձևավորելու գնային պարգև, որի շնորհիվ ֆիրմային ապահովում է լրացուցիչ շահույթով,
- խթանում է ապրանքի լրացուցիչ իրացումը,
- ձևավորում է սպառողական վարվեցողություն,
- ճգնաժամից հետո ֆիրմաներին հնարավորություն է տալիս արագ վերականգնելու իրենց ֆինանսական դրությունը,
- պաշտպանում է սեփականատիրոջը գործընկերների հետ աշխատելու ընթացքում,
- ապահովում է բարձր շահութաբերություն և մեծացնում ֆիրմայի մասնաբաժինը շուկայում,
- հեշտացնում է մուտքն ապրանքային և աշխարհագրական նոր շուկաներ,
- ընդլայնում է ապրանքների անվանացանկը և տեսականին:

Ժամանակակից պայմաններում սպառողների շրջանում բրենդի հանդեպ բարյացակամ վերաբերմունք կարելի է ձևավորել միայն այն դեպքում, երբ հայտնի է, թե ինչ է դրա հետևում կանգնած, դա և առաջին հերթին ինչպիսի առավելություններ է ընձեռում սպառողներին: Բրենդը բնութագրվում է տնտեսական, գործառական և հոգեբանական առավելություններով:

Բրենդի հաջողությունը կարևորվում է այլ ֆիրմաներից տարբերակված, կայուն առավելությամբ: **Բրենդ** հասկացությանը, բացի ապրանքից, անհրաժեշտ է վերագրել՝ տեսականու լայնությունը և խորությունը, առևտրական մակնիշը, գնորդների պահանջմունքների բավարարման աստիճանը, նրանց գոհացնող սպասարկման որակը և մատուցվող ծառայությունները, գները, փաթեթավորումը, գնորդի գիտակցության մեջ ապրանքի արժեքի պատկերացումը և միջոցառումներ, որոնք ուղղված են այդ արժեքի ավելացմանը:

Որպեսզի ֆիրման կարողանա արդյունավետ տնօրինել իր մտավոր սեփականության ակտիվները՝ դրանք վաճառել, տալ վարձով, օգտագործել ռազմավարական ներդրումների կամ վարկավորման նպատակներով, անհրաժեշտ է գնահատել բրենդի արժեքը: Մեր կարծիքով՝ դրա արժեքի գնահատումը չափազանց դժվար է:

Բրենդը, ըստ էության, սպառողի կողմից ապրանքի նկատմամբ ունեցած պատկերացումը, ակնկալիքը և սպասելիքն են: Այդ պատճառով դրա գնահատման ժամանակ որոշակի դեր են խաղում ոչ շոշափելի ակտիվները:

Համաշխարհային պրակտիկայում գոյություն ունեն բրենդի արժեքի գնահատման տարբեր հայեցակարգեր և մեթոդներ: Սակայն չկա դրա արժեքի չափման միասնական համակարգ: Մեր կարծիքով՝ դա պայմանավորված է բազմաթիվ պատճառներով, այդ թվում՝ ոչ նյութական ակտիվների բարդ էությամբ և բրենդի էության ոչ միանշանակ մեկնաբանություններով: Տարբեր երկրներում կիրառվում են ֆիրմայի ակտիվների հաշվարկման տարբեր մոտեցումներ: Բրենդի գնահատման մեթոդի ընտրությունը հիմնականում կախված է նրանից, թե ում շահերի տեսանկյունից է տրվում գնահատականը (վաճառողի՞, թե՞ գնորդի), ընդգրկվո՞ւմ է, արդյոք, տվյալ մեծությունը ֆիրմայի հաշվեկշռում, և համարվո՞ւմ է բրենդի հաշվարկված արժեքը ռազմավարական որոշումներ կայացնելու գործոն:

Գոյություն ունեն նաև տնտեսական և ոչ տնտեսական առանձնահատուկ գործոններ, որոնք ազդեցություն են ունենում բրենդի հաշվարկման մեթոդաբանության ընտրության վրա:

Անդրադառնանք բրենդի արժեքի գնահատման հիմնական մեթոդների պարզաբանմանը: Այդ մեթոդներն են.

- Դրամական հոսքերի զեղչման (դիսքոնտավորման) մեթոդ: Բրենդի արժեքը դիտարկվում է որպես գալիք եկամուտների մեծությունից կախված գործոն: Որքան տվյալ ակտիվն ի վիճակի է բարձր եկամուտ բերել ընկերությանը, այնքան բարձր է դրա արժեքը և՝ հակառակը: Կապիտալի մասով ծախսերի զեղչման գործընթացը հնարավորություն է տալիս ապագա տարբեր տարիների եկամուտները բերելու ներկայիս մակարդակին:
- Խորհրդատվական կազմակերպությունների մեթոդ: Այս մեթոդը հնարավորություն է ընձեռում ոչ միայն որոշելու բրենդի արժեքը, այլ նաև գնահատելու **բրենդմենեջմենթ** արդյունավետությունը:

Մեր կարծիքով՝ տարածված մեթոդներից էական տարբերությունն այն է, որ բաժանումն իրականացվում է ոչ թե ճյուղի կապիտալատարության, այլ **բրենդային գործոն-**

ների առանձնացմամբ սպառողների կարծիքների ուսումնասիրության հիման վրա, որոնք ստեղծվում են ի լրացում ոչ բրենդայինների, այսինքն՝ գնի, որակի, ձեռքբերման հարմարության և այլն:

- Ծախսային մեթոդ կամ զարգացման ծախսերի հանրագումարային մեթոդ: Սրանով առաջարկվում է բրենդի ստեղծման և առաջմղման հետ կապված (ամբողջ կենսապարբերաշրջանի ընթացքում) բոլոր ծախսերը բերել հանրագումարի: Այսպիսով, ծախսային մեթոդը ցույց է տալիս բրենդի արժեքն անցյալ և ներկա ծախսերի տեսանկյունից: Իսկ ծախսերի մեծ մասը կազմում են գովազդի և բրենդի այլ հաղորդակցության ծախսերը: Այստեղ կարող են ընդգրկվել գրանցման ու վճարվող այլ տուրքերը, դատական վեճերի, ինչպես նաև անբարեխիղճ մրցակիցների հետ կապված ծախսերը և այլն:
- Գնային պարգևի մեթոդ (համեմատական մեթոդ կամ լրացուցիչ եկամուտների մեթոդ): Մակնիշի արժեքը որոշվում է գնային պարգևը բազմապատկելով բրենդի կենսապարբերաշրջանի ընթացքում վաճառքի ենթադրվող ծավալով: Եթե մակնիշի արժեքն արտահայտվում է ոչ այնքան գնային պարգևով, որքան դրա շուկայի զգալի մասնաբաժնով, ապա օգտագործվում է բրենդ ունեցող ապրանքների և բրենդ չունեցող նման ապրանքների վաճառքի ծավալների միջև տարբերությունը:
- Շուկայական մեթոդ: Տվյալ դեպքում բրենդի արժեքը գնահատվում է առք ու վաճառքի գործարքի պայմաններով, որտեղ հարաբերությունների գլխավոր կարգավորիչը պահանջարկը և առաջարկն են: Դա բրենդի արժեքի գնահատման ամենապարզ միջոցն է: Սակայն մեթոդը ոչ միշտ է հաշվի առնում ակտիվների և բրենդի ռեալ արժեքի իրական հարաբերակցությունը:
- Փորձագիտական գնահատման մեթոդ: Հիմնված է, որպես կանոն, նույն կարգի որոշակի պարամետրերով մի քանի բրենդների համեմատական վերլուծության վրա: Անկախ փորձագետները բրենդին շնորհում են միավորներ, որոնք ճշգրտվում են ըստ կշռի: Այս մեթոդի օգնությամբ իրականացվում է հիմնական, ավելի կարևոր ցուցանիշներով բրենդի գնահատականի կշռում որոշումը: Մասնավորապես հաշվի են առնվում՝ շուկայի մասնաբաժինը, ապրանքային տեսակի կայունությունը, բրենդի ուժը (ապրանքային տեսակում գերիշխելու կարողությունը), միջազգայնացումը, գովազդային աջակցությունը, պաշտպանվածության աստիճանը և այլն: Մեր կարծիքով՝ նշված մեթոդի թերությունները փորձագիտական գնահատականի սուբյեկտիվությունը և բրենդի արժեքի դրամական ձևով արտահայտման անհնարինությունն են:
- Ռոյալթիից ազատման մեթոդ: Կիրառվում է գործարքի կնքման դեպքում, երբ մակնիշի օգտագործման իրավունքը վարձավճարով փոխանցվում է այլ ֆիրմայի: Ռոյալթիի չափը որոշելուց հետո, որ արտահայտվում է վաճառքի հարաբերությամբ տոկոսներով, գնահատվում է բրենդի՝ շուկայում գոյություն ունենալու ակտիվության տևողությունը, և կանխատեսվում է վաճառքի տարեկան ծավալը:

Ռոյալթիի մակարդակով իրականացվող տարեկան վաճառքի գումարը կկազմի բրենդի արժեքը:

- Ապրանքանիշի օգտագործման համար մասհանման հիման վրա գնահատում: Այս դեպքում ենթադրվում է, որ ապրանքանիշը սեփականատիրոջ կողմից չի վաճառվում, այլ առաջարկվում է դրա օգտագործումը վարձակալական հիմունքներով: Արտոնագրային վճարումների միջոցով ստացված գումարն էլ կազմում է բրենդի արժեքը:
- Ֆիրմայի շուկայական կապիտալացման մեջ նյութական և ոչ նյութական բաղադրիչների միջև տարբերությունների հաշվարկի հիման վրա բրենդի արժեքի գնահատման մեթոդ: Մեր կարծիքով՝ որպեսզի բրենդի արժեքի գնահատումը լինի ռեալ, նպատակահարմար է, ելնելով շուկայի իրավիճակից, իրականացնել դրա համալիր գնահատում: Այլ կերպ ասած՝ գնահատման ժամանակ համատեղ կիրառել երկու և ավելի մեթոդներ, օրինակ՝ շուկայական և փորձագիտական գնահատման մեթոդները: Մրցակցության աճող ֆոնին բրենդի միջոցով ակտիվորեն որոշում են ֆիրմաների շուկայական կապիտալացման չափերը: Ընդ որում նյութական ակտիվների դերը շուկայում վերջին տասնամյակում, ընդհակառակը, կայուն կերպով նվազում է:

Համաշխարհային շուկայում իրական մրցակցությունը առևտրական ֆիրմաների միջև ընթանում է հանուն հեղինակության: Գնորդների մշտական կազմը ձևավորող և նրանց վարվեցողությունը ապահովող միջոց է առևտրական ֆիրմաների բրենդը: Այն ֆիրմաներին շուկայում ապահովում է անվիճելի մրցակցային, տնտեսական, գործառական, հոգեբանական առավելություններով: Որպեսզի ֆիրման կարողանա արդյունավետ տնօրինել իր մտավոր սեփականության ակտիվները՝ դրանք վաճառել, տալ վարձով, օգտագործել ռազմավարական ներդրումների կամ վարկավորման համար, անհրաժեշտ է գնահատել բրենդի արժեքը: Հոդվածն անդրադառնում է պրակտիկայում գոյություն ունեցող բրենդի արժեքի գնահատման տարբեր հայեցակարգերի և մեթոդների:

ГАГИК ЧАТИНЯН
АНИ АСАТРЯН

ОЦЕНКА СТОИМОСТИ БРЕНДА ТОРГОВЫХ ФИРМ

Реальная конкуренция между торговыми фирмами на мировом рынке - за имидж. Средством формирования постоянного состава покупателей и регулирования их поведения на рынке является бренд: он дает фирмам бесспорные конкурентные, экономические, операционные и психологические преимущества. Чтобы фирма имела возможность эффективно контролировать свои активы умственной собственности, т.е. их продать, сдать в аренду, в кредит, или использовать в стратегических целях, необходимо оценить стоимость бренда. На практике для оценки стоимости бренда существуют разные концепции и методы, которые рассматриваются в данной статье.

GAGIK CHATINYAN
ANI ASATRYAN

ESTIMATION OF VALUE OF BRANDS OF TRADE COMPANIES

In the world market the real competition between trade companies is for reputation. The brand of a trade company is a means which forms costumer's permanent structure and ensures their behavior. Brand provides firms in the market with indisputable economic, operational and psychological advantages. For a firm to effectively direct it's intellectual assets: to sell them, to give for rent, to use for strategic investments or crediting, it's necessary to estimate the financial value of the brand. In practice there are different concepts and methods of brand value estimation, but there is no united measuring system for it.

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Հիմնաբառեր. բնապահպանական վճարներ, բնօգտագործման վճարներ, տնտեսական գործիքներ

Վերջին տարիների տնտեսական բարեփոխումներին նվիրված գիտական ուսումնասիրությունները վկայում են, որ շուկայական տնտեսության պայմաններում նորովի են իմաստավորվում բնապահպանական և բնօգտագործման կառավարման էկոլոգատնտեսական նշանակությունը և կիրառվող տնտեսական մեխանիզմների արդիականացումը: Այս գաղափարախոսությունը ձևավորվել է միջազգային նախաձեռնությունների **«Rio-92»** → **«Rio+5»** → **«Rio+10»** → **«Rio+20»** ճանապարհին և նշանակալի դարձել **կանաչ տնտեսության** անցման հրամայականով[1, 2]:

Բնապահպանությունը և բնօգտագործումը, լինելով շրջակա միջավայրի պահպանության ամբողջական համակարգի կարևոր բաղադրիչներ, փոխկապակցված են էկոլոգիա-

[1] Доклад Всемирной встречи на высшем уровне по устойчивому развитию, Иоханнесбург, Южная Африка, 26 августа – 4 сентября 2002, ООН. 2002 //http:www.un.org/esa/sustdev/

[2] «Озеленение» экономики: выдвижение на первый план вопросов окружающей среды в процессе экономического развития (ESE/ASTANA.CONF/2011/4)
http:www.unece.org/fileadmin/DAM/env/eve/Astana/Tabs/first/

կան հիմունքներով, ինչն ավելի ընկալելի է դարձնում դրանց դիտարկումը և սահմանումը տնտեսական մեխանիզմի միասնական համատեքստում :

Տնտեսական մեխանիզմն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, նրա բնական ռեսուրսների պահպանության, վերարտադրության և ռացիոնալ օգտագործման կառավարման (կազմակերպման ու կարգավորման) ձևերի ու մեթոդների համակարգ՝ հասարակական արտադրության տնտեսական և էկոլոգիական շահերի համատեղելիության համար: Բնօգտագործողի տեսանկյունից այդ մեխանիզմը կողմնորոշված է նյութական շահագրգռվածության միջոցով շրջակա բնական միջավայրի վրա ներգործության օպտիմալացմանը: Ավելի ընդհանուր՝ **շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմը** կարելի է սահմանել որպես խրախուսական և հարկադրական բնույթի **տնտեսական գործիքների համակարգ**, որի կիրառումը բնության պահպանության կառավարման ոլորտում երաշխավորում է էկոլոգիական քաղաքականության նպատակների հաղթահարումը: Նրա գործունակությունն ու արդյունավետությունը ապահովում են համապատասխան տնտեսական գործիքները, դրանց գրագետ ընտրությունը և գիտական հիմնավորումը[1,2]:

Բնապահպանական և բնօգտագործման և ընդհանրապես շրջակա միջավայրի պահպանության վճարների համակարգում տնտեսական գործիքների կիրառման միջազգային փորձը և միտումները ցույց են տալիս, որ ներկայում գործում են երկու մեխանիզմներ.

- **բնապահպանական վճարների տնտեսական մեխանիզմ** → կիրառվում է **աղտոտողը վճարում է** սկզբունքը
- **բնօգտագործման վճարների տնտեսական մեխանիզմ** → կիրառվում է **օգտագործողը վճարում է** սկզբունքը

Ուշագրավ է, որ գիտական գրականության մեջ, ինչպես նաև պաշտոնական պետական փաստաթղթերում գրեթե եզակի են շեշտադրումները **օգտագործողը վճարում է** սկզբունքի վրա: Ավելի հաճախ փորձ է արվում դա դիտել զուտ բնապահպանական տեսանկյունից, այսինքն՝ **աղտոտողը վճարում է** սկզբունքի կիրառմամբ, ինչը, մեր կարծիքով, մեթոդական բացթողում և աղավաղում է: Այնուամենայնիվ, կատարված ուսումնասիրություններն անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում բնապահպանության քաղաքականության տնտեսական գործիքների դասակարգման և ներքին կառուցվածքի վերլուծության ու գնահատման համար: Դրանցում հիմնական շեշտադրումը կատարված է **Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի**, ինչպես նաև **ԱԵԿԿԱ** երկրների փորձի վերլուծության ու գնահատման վրա, քանի որ հենց այդ երկրներից են ավելի հաճախ բնապահպանական քաղաքականության կատարելագործման և ռազմավարությունների մշակման

---

[1] Бобылев С.Н., Ходжаев А.Ш., Экономика природопользования, М., ИНФРА-М, 2004, 501 с.
[2] Шимова О.С., Соколовский Н.К., Экономика природопользования, Минск, 2005, 377 с.

միջազգային նախաձեռնությունները[1,2]: Անտեսված չէ **ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Կանադայի** և զարգացած այլ երկրների փորձը:

Գիտական մշակումները հաստատել են այն դրույթը, որ **տնտեսության շուկայական մոդելին անցման փուլում բնապահպանական և բնօգտագործման տնտեսական մեխանիզմի գլխավոր տարրը գնային կամ հարկային(կամ համատեղ) կարգավորումն է**: Գնային կարգավորման գործիքները պայմանականորեն բաժանված են երեք տեսակի.

- **խրախուսման** (արտոնյալ հարկադրում, արտոնյալ վարկավորում, բնապահպանական նախագծերի սուբսիդավորում, էկոլոգիական սարքավորումների ձեռքբերման դոտացիաներ և այլն),
- **հարկադրական** (ռեսուրսային վճարներ, աղտոտման վճարներ, լիմիտների գերազանցման տուգանքներ),
- **հատուցման** (վնասների հատուցում, բնապահպանական ֆոնդերի, էկոլոգիական ապահովագրության համակարգի ստեղծում և այլն):

Այս համատեքստում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում բնապահպանության և բնօգտագործման քաղաքականության՝ ներկայում օգտագործվող տնտեսական գործիքների վերլուծությունը և գնահատումը:

Պարզվել է, որ, այդ գործիքները մի շարք երկրներում ունեն որոշակի ընդհանրություններ, հատկապես արտանետումների, արտահոսքերի և թափոնների տեղադրման, օգտահանման, ինչպես նաև այդ գործողությունների նորմերի չպահպանման վճարների մասով: Այստեղ պետք է նշել, որ **ՏՀԶԿ** գրեթե բոլոր երկրներում օգտագործվում են էկոլոգիական վճարները (բացառությամբ **Կանադայի և Մեծ Բրիտանիայի**): Բացի դրանից, այդ երկրների մեծամասնությունը նախապատվությունը տալիս է **գրավ-վերադարձային** համակարգին, իսկ **էկոլոգիական փոխառությունները** ներդրված են միայն **Ավստրալիայում, ԱՄՆ–ում** և **Կանադայի** երեք գավառներում: Միաժամանակ խրախուսելի է այն փաստը, որ **Կանադայում (Քվեբեկ), Դանիայում, Ֆինլանդիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, Շվեդիայում, Թուրքիայում և ԱՄՆ–ում ներդրված է վնասների հատուցման տնտեսական մեխանիզմ**: Դրա կարևորությունն առավել նշանակալի է զարգացող երկրների, այդ թվում՝ **Հայաստանի համար, որտեղ դեռևս պահպանվում են խոր հակասություններ բնապահպանական վճարների սահմանման**, **նպատակային օգտահանման, հարկային բեռի և վնասների հատուցման միջև:** Ենթադրվում է, որ այստեղ հիմնական պատճառը գործող օրենսդրության, շրջակա միջավայրի կառավարման մեխանիզմի և տնտեսական մեխանիզմի անկատարությունն է:

---

[1] Справочник по экономическим инструментам для осуществления политики в области окружающей среды в Центральной и Восточной Европе // под ред. Кларера И., Мак Николаса Дж., Клаус Е., М. - Сентедре, Венгрия, 1999, 116 с.

[2] Экономические инструменты для контроля за загрязнением окружающей среды и для рационального использования природных ресурсов в странах членах ОЭСР. OECD, 199, 135 с.

Վճարների խրախուսման էֆեկտն առավել հեռանկարային (բացի ավանդականներից) կարող է դառնալ թափոնների օգտահանման մասով, ինչի համար պետք է գործեն հատուկ մշակված կարգեր և օրենսդրական ակտեր: Տնտեսական այս գործիքի կիրառման անհրաժեշտությունը բավականին արդիական է հատկապես Հայաստանում: Խոսքը երկրորդային ռեսուրսօգտագործման մասին է, որի կարևորությունն ամրագրված է «Թափոնների մասին» (2004 թ.) ՀՀ օրենքի 5-րդ գլխի 21-23 հոդվածներով: Սակայն գործնական կիրառման արդյունավետության տեսանկյունից դա չի ապահովում ցանկալի տնտեսական և բնապահպանական արդյունք, հատկապես՝ ընդերքօգտագործման, արդյունաբերական վերամշակման և ԿԿԹ օգտագործման մասով: Միաժամանակ էկոլոգիապես արդարացված է այն քայլը, համաձայն որի՝ ՀՀ-ում սահմանված են վճարներ ոչ էկոլոգիական արտադրանքի թողարկման և թափոնագոյացման համար: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում նման մեխանիզմը գործում է սակավաթիվ երկրներում (**Էստոնիա, Հունգարիա, Լատվիա, Չեխիա, Սլովակիա**):

Ուշագրավ է նաև այն փաստը, որ ոչ էկոլոգիական արտադրանքի համար վճարներն առավել տարածված են **Հունգարիայում**, որտեղ, ի դեպ, չեն գործում արտանետման վճարները: Այդ շարքի վճարները կարող են կապված լինել կոնկրետ էկոլոգիական հիմնախնդիրների, օրինակ՝ ԿԿԹ ծավալի աճի հետ, ինչն առավելագույնը բնորոշ է Հայաստանին: Դրանք, ըստ եվրոպական պրակտիկայի, հիմնականում ուղղված են նպատակային էկոլոգիական ֆոնդերին, որոնք լայն տարածում են ստացել **Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում**: Առանձնահատկությունն այն է, որ բնապահպանական վճարների ձևավորման **մեկնարկային** փուլում (1998-2000 թթ.) հիմնական շեշտադրումը մեծ թվով աղտոտող նյութերի (100-150 անվանում) վճարների սահմանման վրա էր, այն դեպքում, երբ **Սլովենիայում**, օրինակ, հարկերը սահմանված են միայն մեկ աղտոտիչ նյութի՝ CO_2 համար:

ՏՀԶԿ համեմատությամբ՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ավելի քիչ են օգտագործվում ոչ էկոլոգիական արտադրանքի համար որոշված վճարները: Եթե Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները լայնորեն են կիրառում արտանետումների վճարները, ապա ՏՀԶԿ երկրներում վճարները կենտրոնացված են մեկ կամ երկու աղտոտիչի վրա. օրինակ՝ **Շվեդիայում** SO_2-ի և NO_2-ի: Այսպիսով, կարելի է փաստել, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում արտանետումների վճարներն ունեն երկմակարդակային կառուցվածք.

- **բազային գնահատական** → Թույլատրելի մակարդակից ցածր արտանետման դեպքում (նորմատիվային արտանետում)
- **տուգանքային գործակցի սահմանում / ներդրում** → Թույլատրելի մակարդակից բարձր արտանետման դեպքում (գերնորմատիվային արտանետում)

Նման **թույլտվություն – արտանետումների վճարներ – նորմատիվների չպահպանման վճարներ համակարգը** գործում է **Չեխիայում, Էստոնիայում, Լատվիայում, Լիտվայում, Լեհաստանում և Սլովակիայում** և կողմնորոշված է մթնոլորտային օդի, ջրի, թափոնների հավաքման և օգտահանման հսկողության ուժեղացմանը: Նորմատիվների չպահպանման վճարները լայն տարածում են ստացել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, իսկ նպատակը աղտոտիչների համար սահմանված ստանդարտների և նորմատիվների խախտումները կանխելն է:

Վճարների և տուգանքների կիրառման նախնական պրակտիկան ցույց է տալիս, որ դրանց մեծությունները զգալիորեն զիջում են ծախսերին, հատկապես՝ պատճառված վնասների չափով, ինչը գրեթե դուրս է մնացել հսկողությունից: Այստեղից էր դրսևորվում **վճարների դրույքաչափերի վերանայման ֆենոմենը՝** արդիականացնելով հարկերից ազատման գաղափարը: Ցավոք, վճարների դրույքաչափերի պարբերաբար վերանայմամբ դեռևս չի ապահովվում սպասվելիք բնապահպանական արդյունք: Տարբերակված հարկերը, իրենց հերթին, խրախուսում էին չէթիլացված բենզինի օգտագործումը:

Հոդվածում ներկայացվում է բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգի ձևավորման միջազգային փորձը: Վերլուծվել և գնահատվել է այդ համակարգի ներքին կառուցվածքը: Առանձնացվել են առավել հեռանկարային տնտեսական գործիքները:

РАЗМИК ПЕТРОСЯН

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ФОРМИРОВАНИЯ СИСТЕМЫ ПРИРОДООХРАННЫХ И ПРИРОДОПОЛЬЗОВАТЕЛЬСКИХ ПЛАТЕЖЕЙ

В статье представлен международный опыт формирования системы природоохранных и природопользовательских платежей. Проанализирована и оценена внутренняя структура этой системы. Выделены наиболее перспективные экономические инструменты.

RAZMIK PETROSYAN

INTERNATIONAL EXPERIENCE OF FORMING A SYSTEM OF PAYMENTS FOR ENVIRONMENTAL AND NATURAL RESOURCES

International experience of forming a system of payments for environmental and natural resource management is analyzed.The internal structure of the payment system is analyzed and assessed. The most perspective economic instruments are subjected.

ԱՆՆԱ ՓԱԽԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՈՐԱԿՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *առևտրային հաշվեկշիռ, բացասական հաշվեմնացորդ, զուտ արտահանում, զուտ ներմուծում, արտահանման պակասուրդի գործակից, ներմուծման ավելցուկի գործակից*

Պատմականորեն արտաքին առևտուրը հանդես է եկել որպես միջազգային տնտեսական հարաբերությունների առաջնային ձև, որն ազգային տնտեսությունները կապում է համաշխարհային տնտեսությանը: Առանձին երկրի առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական հաշվեմնացորդը կախված է համաշխարհային տնտեսության մեջ նրա դիրքից, առևտրային գործընկեր երկրների հետ հարաբերությունների բնույթից և իր տնտեսական քաղաքականությունից: Տնտեսության զարգացման մակարդակով առաջատար-ներին զիջող երկրների համար ակտիվ առևտրային հաշվեկշիռն անհրաժեշտ է որպես արժութային միջոցների աղբյուր՝ լիցենզիաների ներմուծման, օտարերկրյա ներդրումներից եկամուտների և այլ միջազգային պարտավորությունների վճարման համար: Պասիվ առևտրային հաշվեկշիռը համարվում է անցանկալի երևույթ և սովորաբար որակվում է իբրև երկրի աշխարհատնտեսական դիրքերի թուլության նշան:

Արտաքին առևտրի բացասական հաշվեմնացորդ ունեցող երկրների համար, որպես արտաքին առևտուրը որակապես բնութագրող նոր ցուցանիշներ, մեր կողմից առաջարկվել են *արտահանման պակասուրդի գործակիցը* և *ներմուծման ավելցուկի գործակիցը*[1]: Սրանք փոխկապակցված և փոխլրացնող ցուցանիշներ են, յուրաքանչյուրը թույլ է տալիս գնահատելու արտահանման և ներմուծման կատարողականը երկրի արտաքին առևտրի հաշվեկշռի ձևավորման գործում: Ընդ որում, եթե արտահանման պակասուրդի գործակիցը բնորոշում է արտաքին առևտրի պակասուրդի կրճատման վրա արտահանման ազդեցությունը, ապա ներմուծման ավելցուկի գործակիցը, ընդհակառակը, մատնանշում է ներմուծման «ներդրումը» այդ պակասուրդի մեծացման մեջ: Այլ կերպ ասած՝ արտահանման պակասուրդի գործակիցը ցույց է տալիս արտահանման այն չափը, որը պակասում է արտաքին առևտրի բացասական հաշվեմնացորդի ծածկման համար, իսկ ներմուծման ավելցուկի գործակիցը՝ համապատասխանաբար ներմուծման այն չափն է, որը գերազանցում է արտաքին առևտրի հաշվեկշռված մակարդակը՝ ձևավորելով արտաքին առևտրի պակասուրդ:

---

[1] Տե՛ս **Ա.Փախլյան,** *Արտաքին առևտրի ազատականացման տնտեսական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում.* տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, ՀՊՏՀ, Երևան 2012, էջ 94-96:

Արտահանման պակասուրդի գործակիցը ($Ա_{պգ}$) հաշվարկվում է երկրի ընթացիկ տարվա արտահանման ցուցանիշը զուտ արտահանմանը հարաբերելով.

$$Ա_{պգ} = \frac{\text{արտահանում}}{\text{արտահանում - ներմուծում}} = \frac{\text{արտահանում}}{\text{զուտ արտահանում}} \qquad (1)$$

Գործակցի արժեքները փոփոխվում են (-∞; 0] միջակայքում, քանի որ ներմուծման գերազանցմամբ արտահանումը դադարում է «պակասուրդային» լինել: Որքան փոքր է գործակցի բացասական ցուցանիշը (կամ որքան մեծ է՝ բացարձակ արժեքով), այնքան փոքր է արտահանման և ներմուծման միջև տարբերությունը, մեծ՝ արտահանման նշանակությունը առևտրի պակասուրդի կրճատման համար, և ընդհակառակը՝ գործակցի բացասական արժեքը որքան մոտ է 0-ին, այնքան մեծ է տարբերությունը արտահանման ու ներմուծման ցուցանիշների միջև, և փոքր՝ արտահանման դերը առևտրի պակասուրդի կրճատման գործում, այսինքն՝ մեծ է արտահանման «պակասուրդը»:

Գործակիցը թույլ է տալիս որակապես գնահատելու արտահանման փոփոխությունը, այսինքն՝ պարզելու, թե տարեցտարի փոփոխվող արտահանումը որքանով է նպաստում առևտրի հաշվեկշռի պակասուրդի ծածկմանը: Արդյունքները կարող են մտահոգիչ լինել նույնիսկ արտահանման բացարձակ արժեքի աճի պայմաններում, ինչը կնշանակի, որ ներմուծման տեմպերն ավելի արագ են՝ տարեցտարի մեծացնելով առևտրի պակասուրդը:

Ներմուծման ավելցուկի գործակիցը ($Ն_{սգ}$) որոշվում է ընթացիկ տարվա ներմուծման և զուտ ներմուծման ցուցանիշների հարաբերությամբ.

$$Ն_{սգ} = \frac{\text{ներմուծում}}{\text{ներմուծում - արտահանում}} = \frac{\text{ներմուծում}}{\text{զուտ ներմուծում}} \qquad (2)$$

Այս գործակցի արժեքները տատանվում են [1; +∞) միջակայքում, որովհետև արտահանման ծավալին զիջելու դեպքում ներմուծումն այլևս «ավելցուկային» չի համարվի: Որքան ներմուծման ավելցուկի գործակցի արժեքը մեծ է 1-ից, այնքան լայն են երկրի արտահանման հնարավորությունները, այսինքն՝ մեծ է արտահանման դերը առևտրի պակասուրդի կրճատման համար և համեմատաբար փոքր՝ ներմուծմանը այդ պակասուրդի մեծացման գործում: Եվ ընդհակառակը՝ գործակցի արժեքը որքան մոտ է 1-ին, այնքան սուղ են երկրի արտահանման հնարավորությունները, հետևաբար մեծ է ներմուծման ազդեցությունը առևտրի պակասուրդի ձևավորման վրա, այսինքն՝ ներմուծման «ավելցուկը»:

Արտահանման և ներմուծման հարաբերակցությունը բնութագրող գործակիցների արժեքների ծայրահեղ դրսևորումները (այն է՝ $Ա_{պգ} = 0$ և $Ն_{սգ} = 1$) հնարավոր է այն դեպքում, երբ դիտարկվող երկիրը արտաքին առևտրին մասնակցում է միայն ներմուծմամբ: Մինչդեռ երկրի համար դրական տեղաշարժ պետք է համարել գործակիցների արժեքների միջև խզման աճը, այսինքն՝ երբ $Ա_{պգ} \to -∞$, իսկ $Ն_{սգ} \to +∞$: Այնուհանդերձ, ինչ արժեքներ էլ ընդունեն գործակիցները, դրանց գումարը միշտ հավասար է 1-ի:



Գծապատկեր 1. ***ՀՀ արտահանման պակասուրդի և ներմուծման ավելցուկի գործակիցների դինամիկան 2000-2012 թթ.***

ՀՀ արտահանման և ներմուծման ցուցանիշներով 2000-2012 թթ. համար հաշվարկված արտահանման պակասուրդի և ներմուծման ավելցուկի գործակիցների դինամիկան[1] (տե'ս գծապատկեր 1) ցույց է տալիս, որ արտաքին առևտրի հաշվեկշռի վրա ունեցած ներգործության տեսանկյունից ամենանպաստավոր տարին, թերևս, 2005 թ.-ն էր, երբ նշված երկու գործակիցների արժեքների միջև խզումն ամենամեծն էր դիտարկվող ժամանակահատվածում:

Հաջորդող տարիներին արտահանման «պակասուրդը» (հետևաբար՝ նաև ներմուծման «ավելցուկը») մեծացել է՝ խորացնելով արտաքին առևտրի պակասուրդը կամ առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդը: Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ արտահանման և ներմուծման հարաբերակցության ծայրահեղ դրսևորումը համընկել է 2009 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամին (երբ արտահանման պակասուրդի և ներմուծման ավելցուկի գործակիցների միջև նկատվել է ամենափոքր խզումը)՝ փաստելով հանրապետության տնտեսության սաստիկ խոցելիությունն արտաքին տնտեսական ցնցումներից:

[1] Հաշվարկները կատարվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների հիման վրա՝ www.armstat.am.



Գծապատկեր 2. ***Բուլղարիայի արտահանման պակասուրդի և ներմուծման ավելցուկի գործակիցների դինամիկան 2000-2012 թթ.***

Համեմատության համար արտահանման և ներմուծման հարաբերակցության ցուցանիշների որակական փոփոխությունը դիտարկվել է արտաքին առևտրի խրոնիկական բացասական հաշվեմնացորդով բնութագրվող մեկ այլ երկրի՝ Բուլղարիայի օրինակով: Այս երկրի 2000-2012 թթ. արտաքին առևտրի ցուցանիշների հիման վրա հաշվարկված արտահանման պակասուրդի և ներմուծման ավելցուկի գործակիցների դինամիկան[1] ներկայացված է գծապատկեր 2-ում: Ինչպես տեսնում ենք՝ դիտարկվող ժամանակահատվածում Բուլղարիայի արտաքին առևտրի հաշվեկշռի վրա ներգործության տեսանկյունից արտահանման և ներմուծման հարաբերակցության առավել անբարենպաստ տարին 2008 թ.-ն է, երբ արտահանման պակասուրդի և ներմուծման ավելցուկի գործակիցների միջև խզումն ամենափոքրն էր (2008 թ. Բուլղարիայի զուտ արտահանման ցուցանիշը եղել է -14,6 մլրդ ԱՄՆ դոլար):

Հատկանշական է, որ 2009 թ.-ից Բուլղարիայում դիտվել է առևտրային հաշվեկշռի կրճատման գործում երկրի արտահանման և ներմուծման կատարողականի բարելավում, այսինքն՝ 2009-2012 թթ. Բուլղարիայի արտահանման և ներմուծման դինամիկան նպաստել է առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդի կրճատմանը: Մասնա-

[1] Հաշվարկներն իրականացվել են ՄԱԿ-ի վիճակագրական տվյալների էլեկտրոնային բազայից (http://data.un.org/Data.aspx?q=trade&d=ComTrade&f=_l1Code%3a1) վերցված՝ Բուլղարիայի արտահանման և ներմուծման ցուցանիշների հիման վրա:

վորապես, երկրի արտահանման և ներմուծման դինամիկայում որակն առավել շուշափելի էր 2011 թ. (այդ տարի Բուլղարիայի զուտ արտահանումը կազմել է -4,3 մլրդ ԱՄՆ դոլար), երբ դրսևորվեց ամենամեծ խզումն արտահանման պակասուրդի և ներմուծման ավելցուկի գործակիցների միջև: Փաստորեն Բուլղարիան պատկանում է աշխարհի այն սակավաթիվ երկրների թվին, որոնց համար 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամը լրացուցիչ նախադրյալներ է ստեղծել տնտեսության աշխուժացման և առավել շոշափելի տնտեսական աճի համար:



Գծապատկեր 3. ***Թաիլանդի արտահանման պակասուրդի և ներմուծման ավելցուկի գործակիցների դինամիկան 2000-2012 թթ.***

Եվս մեկ համեմատություն. այս անգամ՝ Թաիլանդի հետ, որի արտաքին առևտուրը պարբերաբար հատում է «հաշվեկշռվածության եզրագիծը»՝ արտաքին առևտրի բացասական հաշվեմնացորդ ունեցող երկրից անցում կատարելով արտաքին առևտրի դրական հաշվեմնացորդ ունեցող երկրի կարգավիճակին և՝ ընդհակառակը:

Նրա 2000-2012 թթ. արտաքին առևտրի ցուցանիշների հիման վրա հաշվարկված արտահանման պակասուրդի և ներմուծման ավելցուկի գործակիցներից[1] գծապատկեր 3-ում արտացոլված են միայն 2005, 2008 և 2012 թթ. գործակիցները, որովհետև մնացած տարիներին Թաիլանդում արձանագրվել է արտաքին առևտրի դրական հաշվեկշիռ,

[1] Հաշվարկներն իրականացվել են ՄԱԿ-ի վիճակագրական տվյալների էլեկտրոնային բազայից (http://data.un.org/Data.aspx?q=trade&d=ComTrade&f=_l1Code%3a1) վերցված՝ Թաիլանդի արտահանման և ներմուծման ցուցանիշների հիման վրա:

այսինքն՝ երկրի արտահանումը գերազանցել է ներմուծումը՝ դադարելով «պակասուրդային» լինել, իսկ ներմուծումն այս դեպքում չի կարող համարվել «ավելցուկային»՝ ծավալը չի հանգեցնում արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի:

Քանի որ դրական է համարվում գործակիցների բացարձակ արժեքների հնարավորինս բարձր մակարդակը, ապա Թաիլանդի արտաքին առևտրի բացասական հավշվեկշռի կրճատման տեսանկյունից համեմատաբար անբարենպաստ պետք է դիտել 2012 թ. արտահանման և ներմուծման ցուցանիշները. դրանց բացասական տարբերությունն ավելի մեծ է 2005 և 2008 թթ. համեմատությամբ, հետևաբար արտահանման և ներմուծման փոփոխությունն ավելի քիչ է նպաստում առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդի կրճատմանը:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ արտահանման և ներմուծման դինամիկայի որակ ասելով տվյալ դեպքում պետք է հասկանալ արտահանման և ներմուծման ցուցանիշների հարաբերակցության այնպիսի փոփոխություն, որը նպաստում է երկրի արտաքին առևտրի հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդի կրճատմանը: Բնականաբար, արտահանման և ներմուծման դինամիկայում որակը ցածր կհամարենք այն պարագայում, երբ արտահանման և ներմուծման ցուցանիշների հարաբերակցության փոփոխությունը հանգեցնի արտաքին առևտրի պակասուրդի մեծացմանը: Արտահանման և ներմուծման դինամիկայում ցածր որակի թվային արտացոլումը արտահանման պակասուրդի գործակցի 0-ին մոտ և ներմուծման ավելցուկի գործակցի 1-ին մոտ արժեքների ընդունմամբ է: Եվ ընդհակառակը՝ որքան արտահանման պակասուրդի գործակցի բացասական արժեքը փոքր է 0-ից և ներմուծման ավելցուկի գործակցի դրական արժեքը մեծ՝ 1-ից, այնքան բարձր է արտահանման և ներմուծման դինամիկայում որակը:

Արտաքին առևտրի բացասական հաշվեմնացորդ ունեցող երկրներում արտահանման և ներմուծման դինամիկան որակապես բնութագրելու համար հոդվածում առաջարկվում է կիրառել փոխկապակցված և փոխլրացնող ցուցանիշներ. արտահանման պակասուրդի և ներմուծման ավելցուկի գործակիցները: Սրանցից յուրաքանչյուրը թույլ է տալիս գնահատելու արտահանման և ներմուծման կատարողականը արտաքին առևտրի հաշվեկշռի ձևավորման գործում. եթե արտահանման պակասուրդի գործակիցը ցույց է տալիս արտահանման այն չափը, որը պակասում է երկրի արտաքին առևտրի բացասական հաշվեմնացորդի ծածկման համար, ապա ներմուծման ավելցուկի գործակիցը ներմուծման այն չափն է, որը գերազանցում է արտաքին առևտրի հաշվեկշռված մակարդակը՝ ձևավորելով արտաքին առևտրի պակասուրդ:

Այս գործակիցների դինամիկան ներկայացված է Հայաստանի, Բուլղարիայի և Թաիլանդի 2000-2012 թթ. արտաքին առևտրի ցուցանիշների համեմատությամբ:

АННА ПАХЛЯН

КАЧЕСТВО ДИНАМИКИ ЭКСПОРТА И ИМПОРТА В СТРАНАХ С ДЕФИЦИТОМ ТОРГОВОГО БАЛАНСА

Для качественной оценки динамики импорта и экспорта в странах с отрицательным сальдо внешнеторгового баланса в статье предлагается использовать взаимодополняющие и взаимосвязанные показатели, такие как коэффициент дефицита экспорта и коэффициент избыточного импорта. Каждый из этих показателей позволяет оценивать роль экспорта и импорта в формировании внешнеторгового баланса страны: если коэффициент дефицита экспорта показывает объем экспорта, которого не хватает для покрытия отрицательного сальдо торгового баланса, то коэффициент избыточного импорта представляет тот размер импорта, который превышает уровень сбалансированной внешней торговли, формируя отрицательное сальдо внешней торговли.

Динамика этих коэффициентов представлена сравнительным анализом внешнеторговых показателей Армении, Болгарии и Таиланда в период 2000-2012 гг..

ANNA PAKHLYAN

QUALITY OF EXPORT AND IMPORT DYNAMICS IN THE COUNTRIES WITH TRADE BALANCE DEFICIT

For qualitative assessment of the dynamics of imports and exports in the countries with a negative balance of trade was proposed the use of complementary and interrelated variables such as the ratio of exports deficit and the ratio of imports excess. Each of these parameters allows to evaluate the role of exports and imports in the formation of the country's trade balance: if the ratio of export deficit shows the volume of exports, which is not enough to cover the negative balance of trade, the ratio of imports excess represents the size of imports, which exceeds the level of the balanced foreign trade forming a negative balance of foreign trade.

In this paper the dynamics of ratios of exports deficit and imports excess presented through comparative analysis of foreign trade indices Armenia, Bulgaria and Thailand during 2000-2012.

ԼԻԼԻԹ ՔՈԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ
ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Ասիստենտ, ՀՊՏՀ

ՔԼԱՍԹԵՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

*Հիմնաբառեր. քլասթեր, քլասթերավորման քաղաքականություն, տնտեսության զարգացման քաղաքականություն, մրցունակություն, **մասնավոր հատված-գիտական հաստատություն** համագործակցություն*

Տնտեսության զարգացման քլասթերային մոտեցումը նպաստում է ոչ միայն առանձին տնտեսական ցուցանիշների բարելավմանը, այլև հասարակական փոխօգնության և հետինդուստրիալ հասարակության ձևավորման գործընթացների կայացմանը: Քլասթերների ներդրման համաշխարհային հարուստ փորձը կարող է օգնել ՀՀ-ում դրանց ձևավորման և զարգացման առավել արդյունավետ մոդելների տեղայնացման հնարավորությունների բացահայտմանը:

Տարբեր երկրների օրինակով քլասթերների գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց բարձր մրցունակությունը պայմանավորված է առանձին քլասթերների ուժեղ դիրքավորվածությամբ:

Քլասթերային մոտեցման առաջին իրագործողներից են Միացյալ Նահանգներում «Սիլիկոնային հովիտ» նախագծի ստեղծողները: Այս նախագիծը ներառում է մոտ 87 հազ. ընկերություն, մի քանի տասնյակ գիտական կենտրոններ և խոշոր համալսարաններ: «Սիլիկոնային հովիտը» դասական ակադեմիական միջավայրի արդյունավետ կոոպերացիայի, հետազոտական կենտրոնների ու գործարար հատվածի միջև կադրային համագործակցության օրինակ է: «Սիլիկոնային հովտի» տարածքում ծառայություններ են մատուցում շուրջ 180 վենչուրային ընկերություն և 700 բանկ, որոնք ֆինանսավորում են առանձին ընկերությունների գործունեությունը:

Համաշխարհային շուկայում գործող քլասթերները երաշխիք են նորամուծական ակտիվության՝ միջճյուղային կապերի բազմազանեցման հաշվին:

ԵՄ-ում հաշվարկված է ավելի քան երկու հազար քլասթեր, որոնցում զբաղված է աշխատուժի 38%-ը: Ամբողջովին քլասթերացված են Դանիայի, Ֆինլանդիայի, Նորվեգիայի և Շվեդիայի արդյունաբերությունները:

ԴԱՆԻԱ: 1989-1990 թթ. այս երկրի տնտեսությունում նախաձեռնվում է միջֆիրմային համագործակցություն: **Առաջարկ-պահանջարկի** հիման վրա հետազոտվում են արդյունաբերական համալիրները գյուղատնտեսության, տեքստիլ արդյունաբերության, գրասենյակային ապրանքների թողարկման, շրջակա միջավայրի պաշտպանության միջոցների արտադրության ոլորտներում: Այսօր Դանիայում գործում է 29 քլասթեր: Դանիայի

քլասթերավորման փորձը նույնականացվում է Մեծ Բրիտանիայի փորձի հետ, որտեղ կան 13 տարածաշրջանային և 16 ազգային քլասթերներ:

ԳԵՐՄԱՆԻԱ: Գերմանիայում տարածաշրջանային զարգացմանը նպաստում է երկրի դաշնային կառուցվածքը, համաձայն որի՝ դաշնային **հողերն** ունեն մեծ ինքնավարություն և իրականացնում են զարգացման ծրագրեր՝ իրենց սեփական միջոցների հաշվին: Երկրում գործում է բարձր տեխնոլոգիաների «21-րդ դարի Սիլիկոնային հովիտ» անվամբ 3 համաշխարհային քլասթեր (Մյունհենում, Համբուրգում, Դրեզդենում): Յուրաքանչյուր **հող** ունի ավտոմոբիլային քլասթեր, որոնց գործունեությունն ի սկզբանե միտված է տվյալ տարածաշրջանի և ողջ երկրի մրցունակության մեծացմանը:

ԱՎՍՏՐԻԱ: Այստեղ քլասթերները հիմնականում միջսահմանային են: Սահմանային երկրների թվին են պատկանում Գերմանիան, Իտալիան, Շվեյցարիան, Հունգարիան: Ավստրիական քլասթերների հաջողությունը գլխավորապես պայմանավորված է հետազոտական ինստիտուտների և արտադրական ոլորտների կապերի զարգացմամբ: Երկրում իրագործվում է նորամուծական հետազոտական ծրագիր (TIP)՝ տնտեսության հետևյալ երեք մակարդակների համար.

- մակրոմակարդակ. պետական և մասնավոր ինստիտուտները կապ են պահպանում ընկերությունների հետ,
- մեզոմակարդակ. հետազոտվում են կառուցվածքային տեղաշարժերը տարածաշրջաններում,
- միկրոմակարդակ. ուսումնասիրվում է առանձին կազմակերպությունների (քլասթերի տարրերի) վարքագիծը:

ՖԻՆԼԱՆԴԻԱ: Երկրի պետական տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված է քլասթերավորմանը: Ֆինլանդիան դրա շնորհիվ վերջին տարիներին առաջատար դիրք է զբաղեցնում մրցունակության համաշխարհային վարկանիշային ցուցակում: Այստեղ, Մայքլ Փորթերի տեսության հիմնավորումներով, իրականացվել է մեծածավալ հետազոտություն: Վերլուծվել է երկրի քլասթերների կառուցվածքը, նկարագրվել են զարգացման միտումները և ճյուղային կտրվածքով գնահատվել են մրցունակության հեռանկարները: Բացի դրանից, տվյալ նախագծի սահմաններում, Արդյունաբերության և առևտրի նախարարությունը պատրաստել է ուղեցույցներ, որոնց հիմքով մշակվել և հաստատվել է ազգային արդյունաբերական ռազմավարությունը: Սրանով հնարավոր է եղել մակրոտնտեսական կարգավորումից անցում կատարել արդյունաբերական և տեխնոլոգիապես մրցունակ քաղաքականության, որն ապահովվում է քլասթերների զարգացմամբ:

ԻՏԱԼԻԱ: Փոքր բիզնեսի այս դասական երկրում մեծ ժողովրդականություն են վայելում, այսպես կոչված **արդյունաբերական շրջանները** (քլասթերների նախատիպը), որոնք այժմ մոտ 200-ն են: Այստեղ գործում են ավելի քան 1 մլն փոքր և միջին ձեռնարկություններ, որոնք աշխատանքով ապահովում են գրեթե 6 մլն մարդու: **Արդյունաբերական շրջանների** մեծ մասը մասնագիտացված է նեղ ապրանքատեսակների արտադրությամբ և իրացմամբ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Տարբեր երկրներում տարածաշրջանային քլասթերների գործունեության համեմատական վերլուծություն[1]

Երկիր	*Քլասթերների ձևավորման մոդելներ*	*Քլասթերների աջակցման և իրացվելիության կենտրոններ, ծրագրեր*	*Առաջնային ուղղություններ*
ԱՄՆ	լիբերալ	մրցունակության ազգային խորհուրդ, համագործակցության ինստիտուտներ, տնտեսական զարգացմանն ուղղված ռազմավարական գործընկերության ծրագրեր	աէրոտիեզերական արդյունաբերություն, էլեկտրոնային ճարտարապետություն, մեքենաշինություն
Գերմանիա	կառավարվող	**Հողերի** (երկրների) դաշնային ծրագրեր	մեքենաշինություն, բիոտեխնոլոգիաներ
Իտալիա	լիբերալ	արդյունաբերական շրջաններ	տեքստիլ արդյունաբերություն, կոշիկի արդյունաբերություն, մեքենաշինություն, հեռահաղորդակցություն
Ֆրանսիա	կառավարվող	տարածքների զարգացման կառավարման մարմին, պլանավորման ազգային գործակալություն	տեքստիլ արդյունաբերություն, մեքենաշինություն, փայտամշակման արդյունաբերություն, կոսմետիկ պարագաների և սննդի արդյունաբերություն
Ֆինլանդիա	կառավարվող	ազգային արտադրական ռազմավարություն	անտառտնտեսություն, ծաղկի արտադրություն, էներգաշինություն, առողջապահություն, հեռահաղորդակցություն, շինարարություն
Մեծ Բրիտանիա	լիբերալ	կանխատեսելի տեխնոլոգիական ծրագրեր	ավտոմեքենաների արտադրություն, գործարար ծառայություններ, քիմիկատներ, տեքստիլ արտադրանք
Չինաստան	կառավարվող	զգային զարգացման և բարեփոխումների կոմիտե	SS, միկրոէլեկտրոնիկա, նորագույն նյութեր և բիոլոգիական գիտելիքներ
Կանադա	լիբերալ	ազգային հետազոտական խորհուրդ, տարածքների զարգացման գործակալություն (քլասթերների ռազմավարություն)	բիոտեխնոլոգիաներ, հեռահաղորդակցություն, գինեգործություն, սննդի արդյունաբերություն
Ճապոնիա	կառավարվող	արտադրական քլասթերների կայուն զարգացման և խթանման կենտրոնական կազմակերպություն	ավտոմեքենաշինություն
Ավստրիա	կառավարվող	նորամուծական հետազոտական ծրագիր (TIP)	ավտոմեքենաշինություն, ծառայությունների ոլորտ, կրթություն
Հնդկաստան	կառավարվող	«Ավստրիական գործարարություն» գործակալություն, գիտատեխնիկական զարգացման ազգային ծրագիր	ծրագրավորում, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ, դեղագործություն, էլեկտրոնային արդյունաբերություն

Տարածաշրջանային նորամուծական համակարգերի (Regional Innovation Scoreboard) 2006 թ. հետազոտությունների արդյունքով եվրոպական տարածաշրջաններում

[1] **Мантаева Э.И., Куркудинова Е.В.,** Мировой опыт кластерной модели развития. // Региональная экономика (38) УэкС, 2/2012.

բացահայտվել է հաջողակ քլասթերների առկայության և նորամուծական զարգացածության միջև կապը:

Մասնավորապես, Արևմտյան Եվրոպայում 1995 թ.-ից իրագործվում է տեխնոլոգիական քլասթերների **BioRegio**-ի աջակցման նախագիծ: Մեծ Բրիտանիայում կառավարությունը Էդինբուրգի, Օքսֆորդի և Հարավ-Արևմտյան Անգլիայի շրջաններում սահմանել է տարածքներ՝ նախատեսված բիոտեխնոլոգիական ֆիրմաների տեղադրման համար: Նորվեգիայում իշխանությունը խթանում է ֆիրմաների համագործակցությունը «Ծովային տնտեսություն» քլասթերում:

Մակրոմակարդակի քլասթերային քաղաքականության խնդիրներից է առավել համընդհանուր նորմատիվաիրավական, սոցիալ-մշակութային, ենթակառուցվածքային և այլ պայմանների ապահովումը: Տարածաշրջանային մակարդակում քլասթերային քաղաքականության խնդիրներն առավել առարկայական են, և, քլասթերավորման գործընթացների ուղղակի կարգավորմանն ու կառավարմանը զուգահեռ, նպատակահարմար է ներառել զարգացման **խաչաձև խթանման** մեխանիզմների ամբողջությունը: Արդյունքը տարբեր երկրներում և տարածաշրջաններում քլասթերային քաղաքականության ռազմավարության բազմազանությունն է:

Առանձին երկրների իրավիճակային վերլուծությունները ցույց են տալիս, որ որոշ իշխանություններ կիրառում են ռազմավարական ճյուղերի ընտրության ուղղակի մեթոդներ: Եվ **աճի կետերը** ծառայում են իբրև անցումային փուլ՝ **ճշմարիտ քլասթերային քաղաքականության**: Դա քաղաքականություն է, որն ապահովում է կայուն կառուցվածքային և նորարարական միջավայր: Առավել ևս, քլասթերային քաղաքականությունը ենթադրում է խաչաձև կարգավորման չափորոշիչներ և բացառում քլասթերների արհեստական ստեղծումը: Պատմական փորձը վկայում է, որ հաջողակ քլասթերներ ստեղծվում են հիմնականում այն դեպքում, երբ ընկերության սեփականատերերը որոշում են կայացնում արտադրության տեղաբաշխման վերաբերյալ՝ ելնելով սեփական դրդապատճառներից[1]:

Խաչաձև կարգավորման հարաչափերից առավել հայտնին կարելի է համարել **քլասթերների ստեղծման պայմանների ձևավորումը** և դրանց հաջող գործունեությունը:

Տարածաշրջաններում քլասթերների ձևավորման հնարավորությունների վերլուծություններն ամբողջությամբ հիմնված են գործարար միջավայրի ուսումնասիրության, մրցունակ արտադրության առկայության, արտադրության կառուցվածքի տարբերակման, կազմակերպությունների նորաստեղծական ակտիվության, գործարարության ենթակառուցվածքների ապահովվածության վրա:

---

[1] **W.Polt.** The role of governments in networking.// Innovative Networks: Co-operation in National Innovation Systems. OECD Publications, 2001.

Աղյուսակ 2

Խաչաձև կարգավորման հիմնական մեխանիզմները և դրանց իրագործման միջոցառումները

Պայմանների ձևավորում	*քլասթերի զարգացման խթանում*	*ակտիվ գործողություններ*	*գործարարության մշակույթին աջակցում*
Կրթական հաստատությունների աշխատանքի որակի բարելավում	փոխգործունեության և գիտելիքների փոխանակման հարթակի ստեղծում	նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում	նախագործարարական կառուցվածքի ստեղծում /գործարարության ինկուբատորներ, տեխնոպարկեր/
Ենթակառուցվածքային օբյեկտների անխափան աշխատանքի ապահովում	բոլոր մասնակիցների ջանքերի կոորդինացում	շահագրգիռ անձանց ներգրավում	քլասթերային նախաձեռնություններին աջակցում
Օրենսդրության մեջ միջակայքերի վերացում	մասնակիցների միջև վստահության ամրապնդում	քլասթերի մասնակիցների ընդհանուր խնդիրների բացահայտում և դրանց հնարավոր վերացում	

Հայաստանում քլասթերների զարգացման մակարդակը, ըստ մրցունակության համաշխարհային զեկույցի, գնահատվում է բավականին ցածր՝ 2.93՝ 7 հնարավորից, ինչի պատճառով ՀՀ-ն 151 երկրների շարքում 108-րդն է:

Հայաստանի Կառավարության նպատակը որոշակի քլասթերների ձևավորմանն աջակցելն է: Նման մոտեցման դեպքում իրականացվում է քլասթերային քարտեզագրում, որով բացահայտվում են հնարավոր քլասթերները, դրանց բնութագրերը և տնտեսական նկարագիրը: Նպատակային քլասթերային ռազմավարության հիմնական բնութագրիչը պահանջարկի և մատակարարումների ոլորտներում հստակ մշակված միջոցառումների իրականացմանը բազմակողմանի աջակցությունն է: Այդպիսի ռազմավարության կենսագործումը նպաստում է պետական և տնտեսական կառույցների սերտ համագործակցությանը[1]:

ՀՀ տարածաշրջաններում քլասթերավորման քաղաքականության իրականացմանը խոչընդոտող մասնակի խնդիրներն են.

1. ՓՄՁ ոչ բավարար կայացածությունը,
2. ենթակառուցվածքների թույլ զարգացածությունը,
3. տեղական ընկերությունների հանդեպ վստահության ցածր մակարդակը,
4. «Աութսորս» ծառայություններից օգտվելու մշակույթի բացակայությունը,
5. պլանավորման կարճ ժամկետները (քլասթերների դեպքում անհրաժեշտ է առնվազն 5-7 տարվա կտրվածքով պլանավորում),

[1] http://www.cf.am/files/news/226/7ca0682dcce8c76b.pdf

6. ակտիվ միգրացիան,
7. իրացման շուկաների անբավարարությունը:

Թեև ՀՀ-ում տնտեսական զարգացումն ուղղորդվում է պետական քաղաքականությամբ, այնուամենայնիվ մրցունակ տնտեսության ստեղծման համար առավել կարևորում ենք մասնավոր հատվածի նախաձեռնությունները: Առաջնային ենք համարում այդ հատվածի և գիտական հաստատությունների համագործակցությունը՝ հանրապետության սոցիալ-տնտեսական պայմաններին համապատասխան արդյունավետ քլասթերավորման քաղաքականության մշակման, ինչպես նաև նորաստեղծական գործունեության ծավալման նպատակով:

Համաշխարհային շուկայում առավել մրցունակ երկրների փնտրեսական զարգացման փորձի ուսումնասիրությամբ հոդվածում ներկայացվում է քլասթերների գործունեության արդյունավետությունը: Դրանց հաջողության հանգուցային գործոնների բացահայտումը կարող է նպաստել ՀՀ-ում արդյունավետ քլասթերավորման քաղաքականության մշակմանը:

ЛИЛИТ КОЛЯН
АСМИК АМБАРЦУМЯН

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ РАЗВИТИЯ КЛАСТЕРОВ И ВОЗМОЖНОСТИ ИХ СОЗДАНИЯ В РА

В статье представлены результаты исследования опыта экономического развития конкурентоспособных на мировом рынке стран. Выявлена эффективность функционирования кластеров. Раскрыты ключевые факторы их успеха, что будет способствовать разработке кластерной политики в Армении.

LILIT QOLYAN
HASMIK HAMBARZUMYAN

THE INTERNATIONAL EXPERIENCE OF CLUSTER DEVELOPMENT AND THE OPPORTUNITIES OF CLUSTER-CREATION IN RA

Consideration of the development experience of the most competitive countries in the international market is giving the opportunities to identify the effectiveness of the cluster functionality. The international experience and the key success factors will help to design a cluster policy in Armenia.

ՍԱՐԳԻՍ ԳՅՈՒՐՋՅԱՆ
Հայցորդ, Երևանի «Գլաձոր» համալսարան

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *կորպորատիվ հաճախորդ, ներդրումային պորտֆել, վարկային պորտֆել, նյութական և ոչ նյութական ակտիվներ, վարկային քաղաքականություն*

Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի վերլուծությունն իրականացնենք երեք ուղղությամբ՝ իրական ներդրումներ, վարկային ներդրումներ և ներդրումային արժեթղթեր: Որպես օրինակ՝ դիտարկենք «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ ներդրումային պորտֆելը:

Ինչպես յուրաքանչյուր առևտրային բանկի, այնպես էլ Արդշինինվեստբանկի ներդրումային պորտֆելը ձևավորվում է ներդրումային քաղաքականության հիման վրա և կոչված է ապահովելու դրա հիմնական նպատակները:

Արդշինինվեստբանկի ներդրումային քաղաքականության հիմնական նպատակներն են.

- ռազմավարական խնդիրների իրագործումը և հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված կարևոր ցուցանիշների ապահովումը,
- ընթացիկ ժամանակաշրջանում ներդրումային մեծ եկամտի ապահովումը,
- ֆինանսական ներդրումների հետ կապված ռիսկի նվազեցումը,
- ներդրումային պորտֆելի իրացվելիության անհրաժեշտ մակարդակի ապահովումը,
- ներդրվող կապիտալի աճի բարձր տեմպերի ապահովումը,
- ներդրումային գործիքներով գործառությունների շնորհիվ հանրապետության ներդրումային միջավայրի զարգացման գործընթացին աջակցությունը,
- ներդրումային գործառությունների ծավալով ՀՀ բանկային համակարգում առաջնային դիրքերի ապահովումը և այլն:

Այս բանկի ներդրումային պորտֆելի դիտարկումն սկսենք իրական ներդրումների պորտֆելի վերլուծությունից՝ կարևորելով վերջինիս դերը նրա մյուս ուղղություններով արդյունավետ գործառությունների ապահովման տեսանկյունից: Իրական ներդրումների պորտֆելը պայմանավորում է բանկի զարգացումը, գործունեության արդյունավետությունը: Այդ պորտֆելի վերլուծության նպատակով առանձնացվել են բանկի հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների պորտֆելները:

Իրական ներդրումների պորտֆելի կառուցվածքն ըստ հիմնական միջոցների ներկայացվում է ստորև.

Աղյուսակ 1

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ իրական ներդրումների պորտֆելի կառուցվածքն ըստ հիմնական միջոցների[1]

հազ. դրամ

	Հող	Շենքեր	Համակ. և կոսի միջոցներ	Փոխադր. միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն. միջոցների գծով կոսի ներդրումներ	Ավարտվելիք հիմն. միջոցների գծով կոսի ներդրումներ	Ընդամենը
Մնացորդը *31.12.2008*	*146,611*	*4,684.273*	*986,848*	*199,903*	*473,630*	*1,533.826*	*80,723*	***8,105.814***
Ավելացում	5,357	2,143.673	984,267	120,949	1,388.539	1,276.885	325,319	**6,244.989**
Օտարում (այլ ելքեր)	-	(51,976)	(636,357)	(71,474)	(751,703)	(2,569.471)	(15,450)	**(4,096.431)**
Վերագնահատում	-	2,350.933	-	-	-	-	-	**2,350.933**
Մնացորդը *31.12.2010*	*151,968*	*9,126.903*	*1,334.758*	*249,378*	*1,110.466*	*241,240*	*390,592*	***12,605.305***
Ավելացում	4,900	299,349	265,849	6,725	187,540	87,293	4,137	**855,793**
Օտարում (այլ ելքեր)	-	-	(256,450)	(6,770)	(131,905)	(274,616)	-	**(669,741)**
Մնացորդը *31.12.2011*	*156,868*	*9,426.252*	*1,344.157*	*249,333*	*1,166.101*	*53,917*	*394,729*	***12,791.357***
Զուտ հաշվեկշռային արժեք								
Առ 31.12.2012	151,968	7,514.268	542,703	125,206	744,352	241,240	352,013	**9,671.750**
Առ 31.12.2013	156.868	7,326.349	394,342	83,796	610,585	53,917	324,621	**8,950.478**

Բանկի հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և գոյացած մաշվածության, շենքը՝ իրական արժեքի և գոյացած մաշվածության տարբերությամբ: Կարևոր է նաև բանկի ամորտիզացիոն քաղաքականության դիտարկումը: Այսպես՝ նրա ներքին իրավական ակտերով սահմանված է ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ մաշվածությունը հաշվարկել գծային մեթոդով կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը.

[1] Աղբյուրը՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2007, 2008 թ. հաշվետվություններ և 2009 թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

Աղյուսակ 2

Արդշինինվեստբանկում իրական ակտիվների մաշվածության հաշվարկի տարեկան դրույքաչափերը

Ակտիվներ	*Օգտակար ծառայության ժամկետը (տարի)*	*Օգտակար ծառայության ժամկետը (տարի)*
Շենքեր	20	5
Համակարգիչներ և կապի միջոցներ	1	100
Տրանսպորտային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20
Ոչ նյութական ակտիվներ	10	10

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանմանն առնչվող ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում համարվում են ծախս՝ դրանց կատարման պահին:

Ինչպես երևում է աղյուսակից՝ բանկի իրական ներդրումների պորտֆելն ըստ հիմնական միջոցների 2012 թ., նախորդ տարվա համեմատությամբ, նվազել է մոտ 721.272 հազ. դրամով: Նշենք, որ 2010 թ. նրա հիմնական միջոցներում իրական ներդրումների մեծ ծավալը պայմանավորված է նոր գլխամասային մասնաշենքի կառուցման և վերազինման համար կապիտալ ծախսումներով: Ինչ վերաբերում է բանկի ոչ նյութական իրական ներդրումների պորտֆելին, ապա նրա կառուցվածքը ներկայացվում է աղյուսակ 3-ում:

Բանկի իրական ներդրումային գործիքներով ներդրումների արդյունավետության գնահատման համար օգտագործվում են տարբեր ցուցանիշներ: Այդ առումով առավել նպատակահարմար է դիտարկել զուտ շահույթի և հիմնական միջոցներում կապիտալ ներդրումների հարաբերակցությունը, որը ցույց կտա այդ միջոցներում միավոր ներդրմամբ ապահովված զուտ շահույթի չափը: Եթե մեծ է այս ցուցանիշը՝ նշանակում է ներդրումների արդյունավետությունը մեծ է: Հիմք ընդունելով Արդշինինվեստբանկի 2011 թ. տարեկան հաշվետվության և 2012 թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների տվյալները՝ հաշվարկենք հիմնական միջոցների շահութաբերության ցուցանիշը: Բանկի զուտ շահույթը 2012 թ. կազմել է 5,188.190 հազ. դրամ, իսկ 2013 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ՝ 1, 935.200 հազ.:

Այսպիսով, բանկի հիմնական միջոցների շահութաբերության ցուցանիշը 2012 թ. կազմել է 0.536 հազ. դրամ (հաշվարկման ժամանակ տվյալ տարվա զուտ շահույթը բաժանվել է հիմնական միջոցներում ներդրման գումարին), իսկ 2013 թ.՝ 0.216 հազ.:

Ինչ վերաբերում է ոչ նյութական ակտիվների շահութաբերությանը, ապա նշված մեթոդիկայով հաշվարկման արդյունքները հետևյալն են. 2012 թ.՝ 58,781 հազ. դրամ, 2013 թ.՝ 18,618 հազ. դրամ:

Իրական ներդրումների շահութաբերության ցուցանիշի նվազումը 2013 թ. պայմանավորված է ոչ միայն նախորդ տարվա համեմատությամբ հիմնական միջոցներում ներդրումների ծավալի, այլև զուտ շահույթի նվազմամբ: Բանկի զուտ շահույթը 2012 թ. պակասել է մոտ 3,252.990 հազ. դրամով:

Աղյուսակ 3

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ իրական ներդրումների պորտֆելի կառուցվածքն ըստ ոչ նյութական ակտիվների

հազ. դրամ

	Համակարգչային ծրագրեր	*Լիցենզիաներ և վերարտադրման վկայագրեր*	*Հեղինակային իրավունքներ*	*Այլ ոչ նյութական ակտիվներ*	*Ոչ նյութական ակտիվների վերակազմակերպման հետ կապված ծախսեր*	*Ընդամենը*
Մնացորդը *31.12.2008*	*36,474*	*35,361*	-	*76,406*	-	***148,241***
Ավելացում	1,800	1,297	-	-	-	**3,097**
Օտարում	-	-	-	-	-	**0**
Վերագնահատում	-	-	-	-	-	**-**
Մնացորդը *31.12.2010*	*38,274*	*36,658*	-	*76,406*	-	***151,338***
Ավելացում	6,639	27,462	-	-	-	**34,101**
Օտարում				(97)		**(97)**
Մնացորդը *31.12.2011*	*44,913*	*64,120*	-	*76,309*	-	***185,342***
Զուտ հաշվեկշռային արժեք						
Առ 31.12. 2012	27,962	22,805		37,496		**88,263**
Առ 01.11.2013	30,564	43,556		29,823		**103,943**

Իսկ ոչ նյութական ակտիվների շահութաբերության ցուցանիշի մեծությունը հիմնական միջոցների շահութաբերության ցուցանիշից պատճառաբանվում է ոչ նյութական միջոցների փոքր ծավալով՝ հիմնական միջոցների ծավալի համեմատությամբ, ինչի արդյունքում զուտ շահույթի հարաբերությունը ոչ նյութական ակտիվներին մեծ թիվ է կազմում:

Այնուամենայնիվ, Արդշինինվեստբանկի հիմնական միջոցներում իրական ներդրումների արդյունավետության ցուցանիշների ցածր արժեքները լուրջ հիմնախնդիր են նրա իրական ներդրումների պորտֆելի կառավարման տեսանկյունից և պահանջում են համապատասխան միջոցառումների իրականացում՝ դրանք բարձրացնելու ուղղությամբ:

Բանկի ներդրումային պորտֆելը վերլուծելիս անհրաժեշտ է դիտարկել նաև նրա կողմից այլ անձանց բաժնետիրական կապիտալում ներդրումները: Պատկերը՝ աղյուսակ 4-ում.

Աղյուսակ 4

Բանկի կողմից այլ անձանց բաժնեփրիական կապիտալում ներդրումները

Անձի անվանումը	*Հիմնական գործունեությունը*	*Գրանցման երկիրը*	*Ներդրման ամսաթիվը*	*Ներդրումը (հազ. դրամ)*	*Բաժնեմասը %*
«Արմենիան քարդ» ՓԲԸ	վճարահաշվարկային ծառայություն	ՀՀ	30. 04. 2003 թ.	10,469	2
«ՍՎԻՖՏ»	վճարահաշվարկային ծառայություն	Բելգիա	02. 04. 2003 թ.	1,403	0.001
«Արցախհէկ» ՓԲԸ	էլ. էներգիայի արտադրություն և վաճառք	ԼՂՀ	07. 07. 2009 թ.	10,500	0.1677
Ընդամենը				**22,372**	

Արդշինինվեստբանկի՝ այլ անձանց կանոնադրական հիմնադրամին մասնակցության դեպքում հաշվի է առնվել ոչ միայն տվյալ անձի կանոնադրական հիմնադրամի, այլև ընդհանուր կապիտալի մեծությունը, ինչպես նաև՝ ներդրված միջոցների եկամտաբերության ցուցանիշները:

Ընդ որում, նշենք, որ այլ անձանց կապիտալում իրական ներդրումների կառուցվածքի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են բանկի ֆինանսատնտեսական փաստաթղթերում: Այդ պատճառով նրա իրական ներդրումների պորտֆելի վերլուծությունը սահմանափակվում է այլ անձանց կանոնադրական հիմնադրամում ներդրումների ծավալի վերլուծությամբ: 2012 թ. հուլիսին այն կազմել է 22,372 հազ. դրամ. բանկի առավելագույն բաժնեմասն այլ անձանց կանոնադրական հիմնադրամում 2% է:

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ ներդրումային պորտֆելի հաջորդ կարևոր ուղղությունը վարկային ներդրումներն են: Այն միտված է բանկի վարկային քաղաքականության նպատակների իրագործմանը:

Արդշինինվեստբանի վարկային քաղաքականության հիմնական նպատակները.

- իրացվելիության բավարար մակարդակի ապահովմամբ և ռիսկերի արդյունավետ կառավարմամբ բարձրորակ ու եկամտաբեր վարկային ակտիվների ձևավորում,
- հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված կարևոր ցուցանիշների ապահովում,
- առաջարկվող վարկատեսակների հետագա ընդլայնում և մրցունակության ապահովում,
- տնտեսության հեռանկարային և շահութաբեր ոլորտներում ակտիվ գործունեություն ծավալող հաճախորդների ներգրավում,
- վարկավորման գործընթացի արդյունավետ կառավարման ապահովում,

- վարկերի տրամադրման հետ կապված իրավունքների և պարտավորությունների որոշում և տարանջատում,
- Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին համապատասխանության ապահովում և այլն:

Վարկային քաղաքականության իրագործման ժամանակ բանկն առաջնորդվում է որոշակի սկզբունքներով: Դրանք են.

1. վարկավորման գործընթացի իրականացում՝ գործող օրենսդրությանը համապատասխան,
2. վարկավորման գործընթացի հստակ կանոնակարգում և ստանդարտացում,
3. վարկային պորտֆելի բազմազանեցման բավարար մակարդակի ապահովում,
4. կառավարելիություն,
5. վարկավորման գործընթացում կենտրոնացված և ապակենտրոնացված սկզբունքներով որոշումների ընդունման կանոնակարգում,
6. բանկի վարկային ակտիվների և պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարման ապահովում,
7. վարկային ռիսկերի հաշվեկշռված մակարդակի պահպանում,
8. վարկավորման և վարկային ռիսկերի կառավարման գործընթացում բանկի ստորաբաժանումների կողմից անկախության և անաչառության սկզբունքների պահպանում:

Արդշինինվեստբանկի զարգացման ռազմավարությանը համապատասխան՝ վարկային քաղաքականությունն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը.

ա) կորպորատիվ վարկավորման շուկայում գրաված դիրքերի պահպանում և ամրապնդում,
բ) ՓՄՁ վարկավորմանը բանկի մասնակցության աստիճանի մեծացում,
գ) մանրածախ վարկավորման ոլորտում առաջնային դիրքերի պահպանում,
դ) վարկերի տրամադրում առավելապես տնտեսության առաջատար կամ շահութաբեր ճյուղերին,
ե) ռիսկերի կառավարում՝ որակյալ վարկային պորտֆել ապահովելու համար,
զ) վարկային գործառությունների եկամտաբերության կայուն աճի ապահովում՝ սահմանված ռիսկերի շրջանակներում և գործող իրավական ակտերին համապատասխան,
է) վարկային ռիսկերի բազմազանեցում,
ը) ակտիվների և կապիտալի աճի, կառուցվածքի բարելավման ապահովում,
թ) վարկավորման կանոնակարգում և սպասարկման որակի անընդհատ բարելավում:

Այսպիսով, Արդշինինվեստբանի վարկային քաղաքականության իրագործմամբ հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների դինամիկան 2010-2012 թթ. ունեցել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 5

Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

հազ. դրամ

Վարկային գործառություններ	*առ 31.12.2010*	*առ 31.12.2011*	*առ 31.10. 2012*
Վարկեր	54,872.808	73,039.151	55,201.282
Օվերդրաֆտ	397.072	162.576	4.338
Վարկային քարտեր	-	839.930	434.766
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ	421.738	576.455	653.137
Վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	773.262	1,696.770	1,383.152
Ընդամենը	54,496.618	72,921.342	54,910.371

Վարկավորման ծավալների նվազումը 2012 թ. հիմնականում պայմանավորված է եղել ֆինանսական ճգնաժամի ընթացքում բանկի զգուշավոր վարկային քաղաքականությամբ, վարկառուների հանդեպ կիրառվող վերահսկողության խիստ միջոցառումներով: Այդուհանդերձ, բանկը 2012 թ. ապահովել է նախորդ տարիների համեմատությամբ առավելագույն տոկոսային եկամուտ վարկային գործառությունների գծով՝ 653.137 հազ. դրամ:

Արդշինինվեստբանի վարկային ներդրումների պորտֆելի վերլուծության մեջ ներկայացվում են վարկային քաղաքականությամբ սահմանված վարկավորման օբյեկտները՝ առանձնացնելով նպատակային խմբերը և առաջնայնությունները: Այդսիսով, բանկի վարկային ներդրումների պորտֆելը վերլուծվում է ըստ.

- հաճախորդների հիմնական խմբերի,
- տնտեսության ճյուղերի,
- աշխարհագրական տեղաբաշխման,
- ոչ ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային հատկանիշի:

Արդշինինվեստբանկը տարբերակում է հաճախորդների նպատակային խմբեր՝ իր ռազմավարական ծրագրերին և տնտեսության ընթացիկ իրավիճակին համապատասխան: Դրանք խոշոր ընկերությունների, միջին և փոքր բիզնեսի տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց նպատակային խմբերն են:

ՀՀ առևտրային բանկերի ներդրումային պորտֆելների վերլուծությունն իրականացնվել է երեք ուղղությամբ՝ իրական ներդրումներ, վարկային ներդրումներ և ներդրումային արժեթղթեր: Դիտարկվել է «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային պորտֆելը:

САРГИС ГЮРДЖЯН

ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ ИНВЕСТИЦИОННЫМ КРЕДИТНЫМ ПОРТФЕЛЕМ КОРПОРАТИВНЫХ КЛИЕНТОВ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ РА

Анализ инвестиционных портфелей коммерческих банков РА в статье осуществлен по трем направлениям: реальные инвестиции, кредитные инвестиции и инвестиционные ценные бумаги. Рассмотрен инвестиционный портфель ЗАО "Ардшининвестбанк".

SARGIS GYURJYAN

FEATURES OF MANAGEMENT OF AN INVESTMENT CREDIT PORTFOLIO OF CORPORATE CLIENTS IN COMMERCIAL BANKS RA

The analysis of investment portfolios of trading banks RA are carried out in three directions, analyzing the present investments of trading banks, credit investments and portfolios of investment securities. During the analysis as the example has been considered an investment portfolio of Joint-Stock Company " Arshininvestbank ".

ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հայցորդ, ՀՊՏՀ

ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, զբոսաշրջային շուկա, մրցունակության ցուցանիշ, միջազգային զբոսաշրջային շուկա*

Դիտարկվող ոլորտի փորձագետները և մասնագետները պնդում են, որ Հայաստանում կան զբոսաշրջության տեսակների մեծ մասի զարգացման հնարավորություններ: Դրանք են՝ էթնիկ զբոսաշրջությունը, մշակութային, ճանաչողական զբոսաշրջությունը, էկոզբոսաշրջությունը, գյուղական կանաչ զբոսաշրջությունը կամ ագրոզբոսաշրջությունը, ռեկրեացիոն զբոսաշրջությունը, առողջարանային զբոսաշրջությունը, ժամանցային կամ ակտիվ հանգիստի զբոսաշրջությունը և գործնական զբոսաշրջությունը: Հայաստանը, որպես զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային հարուստ ժառանգությամբ և տեսարժան վայրերով երկիր, ունի միջազգային շուկային բազմաբնույթ, մրցունակ զբոսաշրջային արդյունք և բարձրորակ ծառայություններ առաջարկելու մեծ ներուժ, որի դրսևորման անհրաժեշտ նախադրյալներն են.

- բարձր որակավորման աշխատուժը,
- մեծ ծավալի ներդրումները,
- առաջնակարգ ենթակառուցվածքները և բազմատեսակ ծառայությունները,
- հետազոտությունների ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաները,
- նպաստավոր գործարար միջավայրը:

ՀՀ զբոսաշրջության ընդհանուր մրցունակության ցուցանիշների ուսումնասիրությունն ու վերլուծությունը հիմնավորում են թվարկված նախադրյալների կարևորությունը, քանի որ.

- ենթակառուցվածքները մրցունակ չեն, ինչը մասնավորապես պայմանավորված է երկրի տարածքում դրանց անհավասարաչափ բաշխվածությամբ, բարձրորակ մասնագետների պակասով, զբոսաշրջության ծառայությունների որակի և գնի անհամապատասխանությամբ,
- շրջակա միջավայրը խաթարված է, բնությունը և օդային ավազանը (հատկապես Երևանում)՝ աղտոտված, ինչպես նաև անկատար է բնապահպանական օրենսդրությունը,
- զբոսաշրջության խթանումը արդյունավետ չէ ֆինանսական միջոցների սղության, որակյալ հետազոտությունների անտեսման, և կայուն զարգացման ռազմավարության բացակայության պատճառով:

Նշված հիմնախնդիրների լուծումն առաջին հերթին պահանջում է ֆինանսական միջոցների ներդրում և իրավական դաշտի կատարելագործում. որով կհեշտանա դրան հատկապես մասնավոր հատվածի մասնակցությունը:

Ներկայում Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային զբոսաշրջային շուկային կարելի է գնահատել ոչ ակտիվ, այն առումով, որ գնալով զբոսաշրջության (ճանապարհորդությունների) ծառայությունների արտահանման և ներմուծման հաշվեկշիռը դրսևորում է բացասական միտում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ զբոսաշրջության ծառայությունների արտահանման և ներմուծման հաշվեկշիռը 2005-2011 թթ.

մլն ԱՄՆ դոլար[1]

	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Կրեդիտ	219,97	270,73	304,90	330,51	334,11	408,20	445,59
Դեբետ	-236,34	-286,04	-294,32	-324,00	-325,86	-403,95	-477,28
Սալդո	-16,37	-15,31	10,58	6,51	8,25	4,25	-31,69

[1] Աղյուսակը կազմվել է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008 և Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012»,ժողովածուների տվյալների հիման վրա:

Աղյուսակի վիճակագրական տվյալներով՝ զբոսաշրջության համար առավել բարենպաստ է եղել 2007 թ., զբոսաշրջային ծառայությունների արտահանման և ներմուծման սալդոն կազմել է 10,6 մլն դոլար: Հետագա տարիներին, մինչև 2011 թ., զբոսաշրջությունից ստացված եկամուտների դրական սալդոն պահպանվել է, սակայն 2010 թ., 2007 թ. համեմատությամբ, այդ եկամուտները կրճատվել են 6,33 մլն դոլարով կամ 59,5%-ով: 2011 թ. զբոսաշրջությունից եկամուտները 31,69 մլն դոլարով պակաս էին դրանց արտահանումից ստացված եկամուտներից: Այդ ցուցանիշը գերազանցում է նույնիսկ նախորդ 4 տարվա գումարային դրական սալդոն: Մեր հայրենակիցները մեկնում են տարբեր երկրներ՝ հիմնականում առաջին անհրաժեշտության բազմաբնույթ ապրանքներ ներկրելու նպատակով, որի հետևանքով տարեկան կորցնում ենք միլիոնավոր դոլարների հասնող արժութային միջոցներ: Իսկ երկրից արտարժույթի արտահանումը, ինչպես տեսնում ենք, հանգեցնում է վճարային հաշվեկշռի պակասուրդի ավելացմանը:

Մյուս կողմից՝ հանրապետությունում զբոսաշրջիկների թվի տարեցտարի աճը վկայում է այն մասին, որ, չնայած դժվարին սոցիալ-տնտեսական կացությանը, մեզանում կան զբոսաշրջության ձևերի զարգացման բոլոր անհրաժեշտ նախապայմանները: ՀՀ հարուստ բնաշխարհն ու բացառիկ պատմական հուշարձանները, հանգստի անցկացման համար եզակի ռեսուրսները, հոգևոր արժեքները գրավում են տարբեր երկրների մեծ թվով քաղաքացիների: Հայաստանն այսօր զբոսաշրջության միջազգային շուկայում քիչ թե շատ ներկայանում է այնպիսի երկիր, որն ապահովում է զբոսաշրջության 3 սեզոն, թեև կարելի է մեզանում զարգացնել 4 սեզոնի գաղափարը՝ ամրապնդելով ավանդական, այսպես կոչված՝ «branding»-ի չափանիշներով: Այս տեսանկյունից կարևորվում է պետական մակարդակով հետևողական և նպատակամետ միջոցառումների իրականացումը, որը կնպաստի, եթե կարելի է այսպես ասել, մեր երկրի զբոսաշրջային իմիջի հաստատմանը: Իհարկե, այդ ուղղությամբ որոշակի քայլեր արվել են, մասնավորապես վերջին տարիներին իրականացվել են ոլորտի զարգացման ծրագրային մի շարք միջոցառումներ. հայրենական զբոսաշրջային արդյունքները ներկայացվել են հեղինակավոր միջազգային ամենամյա ցուցահանդեսներում և տոնավաճառներում, Հայաստանի զբոսաշրջային գրավչության վերաբերյալ տպագրվել և տարածվել են բազմաբնույթ ու բազմալեզու գովազդա-տեղեկատվական նյութեր, հոդվածներ, նկարահանվել են վավերագրական ֆիլմեր, կազմակերպվել են տարբեր երկրների զբոսաշրջային օպերատորների և լրագրողների այցելություններ մեր երկիր, սեմինարներ: Երևանում կազմակերպվել է CTS միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը[1]:

Զբոսաշրջության զարգացումն ընդհանուր առմամբ էական նշանակություն ունի համաշխարհային շուկայում երկրի ոչ միայն զբոսաշրջային գրավչության բարելավման, այլև ազգային կարևորագույն հիմնախնդիրների լուծման համար: Խոսքը համայնքների և ենթակառուցվածքների զարգացման, մշակույթի և ավանդույթների վերագնահատման,

[1] http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html

քաղաքացիական գիտակցության և ազգային արժանապատվության վերականգնման, բնապահպանական պատասխանատվության մեծացման, երկրի լիարժեք նկարագրի ձևավորման և, ի վերջո, խաղաղության պահպանության մասին է:

Պնդել, թե զբոսաշրջությունը երկրի սոցիալ-տնտեսական, բնապահպանական ոչ բարվոք իրավիճակի համադարման է՝ ճիշտ չէ, քանի որ դրա բացասական հետևանքները նույնպես անհերքելի են: Ներքին այրման շարժիչներով տրանսպորտի օգտագործմամբ գետերի, լճերի ջրի, օդի որակի վատացումը, աղմուկի շատացումը, վայրի ֆաունայի ոչնչացումը, պատմամշակութային հուշարձանների վնասումը զբոսաշրջության զարգացման ակնհայտ բացասական հետևանքներն են: Այստեղ կարևոր է զարգացած զբոսաշրջության կենտրոններ համարվող երկրների փորձի կիրառումը՝ նրանք մշակել և իրականացնում են շրջակա միջավայրի պահպանման երկարաժամկետ քաղաքականություն:

Վերջին 10 տարիներին Հայաստան զբոսաշրջային այցելությունների քանակը կայունորեն աճում է: 2001-2010 թթ. միջին տարեկան աճը 24.3% էր: Ըստ փորձագիտական գնահատումների՝ 2010 թ. հունվար-դեկտեմբերին հանրապետություն են ժամանել 683979 զբոսաշրջիկներ՝ 2009 թ. նույն ժամանակամիջոցի 575281 զբոսաշրջիկների դիմաց, կամ աճի տեմպը կազմել է 118.9%: Այդ ընթացքում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 640032 մարդ, կամ 2009 թ. հունվար-դեկտեբերի համեմատությամբ աճի տեմպը եղել է 121.6%[1]: Բերված ցուցանիշները վկայում են, որ Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի, հանդեպ հետաքրքրությունը տարեցտարի ավելանում է:

Վիճակագրական տվյալների վերլուծությամբ պարզվում է նաև, որ Հայաստանը զբոսաշրջիկների այցելությունների տեսանկյունից կախված է Հայկական սփյուռքից ու ԱՊՀ երկրներից: Այդ այցելությունների թիվը ավելի շատ աճում է ի հաշիվ Սփյուռքից ժամանած մեր հայրենակիցների: Ճիշտ է, զբոսաշրջության երթուղիները և կենտրոնները անհրաժեշտ ենթակառուցվածքներով կահավորված չեն և չեն բավարարում ժամանակակից սանիտարահիգիենիկ պահանջները, ինչը և ամենազսպող գործոնն է ոչ հայազգի զբոսաշրջիկի համար՝ Հայաստան այցելելու, այնուամենայնիվ, սփյուռքահայ զբոսաշրջիկները պահանջկոտ չեն, Հայաստանը նաև նրանց հայրենիքն է, և նրանք որոշ չափով կիսում ու ընկալում են մեր դժվարությունները:

Քանի որ զբոսաշրջությունը ողջ երկիրն ընդգրկող ծառայությունների ցանց է, ուրեմն ՀՀ-ում դրա կայուն զարգացման հիմքեր հաստատելու համար անհրաժեշտ է ռազմավարական պլանավորման մոտեցում, որը հնարավորություն կտա հաղթահարելու խոչընդոտները: Դրանք են.

1. Հայաստանի զբոսաշրջության արդյունքի ցածր որակը,

---

[1] ՀՀ զբոսաշրջության բնագավառի վերլուծություն: ՀՀ էկոնոմիկայի նախարարություն 2010, էջ 6:

2. միջազգային զբոսաշրջային շուկայում ՀՀ ոչ մրցունակ գները, մասնավորապես՝ տարածաշրջանի երկրների համեմատությամբ,
3. ՀՀ-ն, որպես միջազգային շուկային նոր ինտեգրված երկիր, լավագույնս չի ներկայացված համաշխարհային հանրությանը, չի ձևավորված **Հայաստանը՝ զբոսաշրջության համար բարենպաստ, գրավիչ և ապահով երկիր** նկարագիրը, չնայած այն բանին, որ այսպիսի պահանջարկ արդեն կա,
4. տարածաշրջանի քաղաքական և տնտեսական անկայուն իրավիճակը,
5. հանրապետության տնտեսական և տրանսպորտային մասնակի շրջափակումը:

ՀՀ զբոսաշրջության արդյունքի ցածր որակը և ոչ մրցունակ գներն էլ իրենց հերթին պայմանավորված են զբոսաշրջին ծառայությունների անկատարությամբ և բարձր գներով: Այսպես.

- Հայաստան մուտքի՝ զբոսաշրջության արտոնագրի ստացումը մի շարք երկրներում բարդացված է հյուպատոսական ծառայությունների բացակայության պատճառով: Բարձր են դրա ստացման համար տուրքի չափերը:
- Գյուղական և ներմարզային ճանապարհները հիմնականում քայքայված են, մինչդեռ դրանք են, որ տանում են դեպի զբոսաշրջության տեսանկյունից գրավիչ վայրեր:
- Զբոսաշրջության երթուղիներում և կենտրոններում պակասում են անհրաժեշտ ենթակառուցվածքները, եղածները չեն բավարարում սանիտարահիգիենիկ մերօրյա պահանջները, ինչը, ինչպես արդեն նշել ենք, զսպող գործոն է միջազգային զբոսաշրջիկի համար՝ Հայաստան այցելելու:
- Օդային տրանսպորտի ոլորտը զարգացած չէ:
- Ապահովագրական ինստիտուտները կայացած չեն:
- Բարդացված է հուշանվերների, մշակութային արժեք ներկայացնող իրերի արտահանման կարգը:
- Հասարակության և, որ ամենակարևորն է, պետական ծառայողների կողմից բացակայում է հավուր պատշաճի ուշադիր, բարեհամբյուր վերաբերմունքը զբոսաշրջիկների հանդեպ:
- Անմխիթար է վիճակը սահմանային մաքսակետերում. բացակայում է ծառայությունների համալիրը:

Հոդվածում Հայաստանը դիտարկվում է որպես զբոսաշրջության տեսակների մեծ մասի զարգացման հնարավորություններ ունեցող երկիր: Դա պայմանավորվում է միջազգային զբոսաշրջային շուկային բազմաբնույթ մրցունակ արդյունք և բարձրորակ ծառայություններ առաջարկելու մեծ ներուժի առկայությամբ: Սակայն այդ ներուժը գործադրելու համար անհրաժեշտ նախադրյալները՝ բարձր որակավորման աշխատուժ, խոշոր ներդրումներ, առաջնակարգ ենթակառուցվածքներ և բազմատեսակ ծառայություններ, հեռազոտությունների ժամանակակից մեթոդներ ու տեխնոլոգիաներ, նպաստավոր գործարար միջավայր, բացակայում են: Նշված հիմնախնդիրների լուծումը առաջնահերթորեն պահանջում է ֆինանսական մեծ միջոցների ներդրում և իրավական դաշտի կատարելագործում:

АСМИК ГРИГОРЯН

ПРИОРИТЕТЫ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РА

В статье Армения рассматривается как страна, имеющая возможность развивать почти все виды туризма. Это обосновывается с наличием потенциала страны, позволяющего предложить международному туристическому рынку конкурентный туристский продукт и высококачественные услуги. Но для реализации этого потенциала нужны необходимые условия: высококвалифицированная рабочая сила, инвестиции, развитая инфраструктура, современные технологии, благоприятная бизнес-среда. Решение данных проблем требует вложения больших финансовых средств, а также улучшения нормативно-правовой базы.

HASMIK GRIGORYAN

PRIORITIES OF TOURISM DEVELOPMENT IN REPUBLIC OF ARMENIA

Experts and professionals of tourism industry claim that Armenia has the possibility of organizing and developing most of the different types of tourism. This is due to the large capacity of the country to offer the international tourist market competitive tourist product and high quality services. But for the development of that potential, the necessary conditions lack: highly skilled labor force, large investments, developed infrastructure and a wide range of services, modern methods of research and technologies, afavorable business environment. The solution of these problems in the first place requires a lot of financial resources and the improvement of the regulatory framework, which particularly makes harder the participation of private sector in this regard. It is therefore important to take consistent and concerted action at the state level, which will contribute to the approval of the country's tourism image.

ԱՐՍԵՆ ԶԱԽԱՐՅԱՆ
Հայցորդ, ՀՊՏՀ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *մարքեթինգային հետազոտություն, միջազգային շուկաների մարքեթինգային հետազոտում, որոնողական հետազոտություններ, նկարագրական հետազոտություններ, պատճառական հետազոտություններ*

Միջազգային շուկաների հետազոտման առանձնահատկությունն այն է, որ հետազոտողը մեծ մասամբ կտրված է օբյեկտիվ իրականությունից և գործ ունի այն ձևական առումով ինչ-որ կերպ բնութագրող թվերի ու փաստերի հետ: Սակայն դրանց վերլու-

ծությունը, արդյունավետության ապահովման տեսանկյունից, պետք է ունենա ոչ միայն ընդհանրական, այլև համակարգային բնույթ, որպեսզի հատկանշի առանձին բաղադրիչների վիճակն ու փոխազդեցությունների աստիճանը: Ըստ այդմ վերլուծության ժամանակ հարկ է պահպանել տեղեկատվության ամբողջականության և փոփոխականների համաձայնեցման սկզբունքները: Մասնագիտական գրականության մեջ տիրապետող է այն կարծիքը, որ միջազգային շուկաների հետազոտման արդյունավետությունը կախված է մի քանի սկզբունքների հստակ պահպանումից.

- **Այսբերգի սկզբունք:** Միջազգային շուկայական հետազոտություններում ելակետ է ընդունվում այն, որ շուկային, սպառողներին և գնորդներին առնչվող տեղեկատվության մեծ մասը մակերեսային և հեշտ հասանելի չէ, այլ ունի խորքային բնույթ: Այդ իսկ պատճառով գրավիչ թվացող և արագ կազմակերպվող կաբինետային հետազոտությունն անպայմանորեն պետք է զուգակցվի դաշտային հետազոտության հետ:
- **Դինամիկայի սկզբունք:** Նկատի է առնվում, որ միջազգային շուկայի և միջազգային միջավայրի գործոնները չվերահսկվող և անկայուն են: Հետևաբար անհրաժեշտ է օգտագործել այնպիսի գործիքներ, որոնք ոչ միայն արտացոլեն հետազոտության ժամանակահատվածում ձևավորված իրողություններն ու օրինաչափությունները, այլև հնարավորություն տան մոդելավորման եղանակով կանխատեսելու ապագայում ձևավորվելիք միտումները:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ սկզբունքների պահպանումը էական ազդեցություն ունի միջազգային շուկայի ու միջավայրի հետազոտման գործընթացի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև հետազոտական գործիքներին տրվող նախապատվությունների վրա: Դրանց պահպանմամբ է հնարավոր նաև, անաչառ ու օբյեկտիվ կերպով դիտարկելով շուկան, բացահայտել նրա թաքնված կողմերը, ինչը հնարավորություն կընձեռի մենեջերներին մշակելու միջազգայնացման արդյունավետ ռազմավարություն և մարքեթինգի համալիրի ստանդարտացման կամ հարմարեցման խելամիտ ծրագրեր:

Միջազգային շուկայի և միջազգային միջավայրի հետազոտման միասնական մեթոդաբանություն և գործիքակազմ գոյություն չունեն: Մասնագիտական գրականությամբ տարաբնույթ մոտեցումներով տարբերակվում են որոնողական և նկարագրական (երկրորդային տեղեկատվության, ֆոկուս-խմբերի, խորքային հարցազրույցների, պրոյեկցիական, հարցումների և դիտարկումների) ու պատճառական հետազոտությունների (փորձադրումները հիմնականում իրականացնում են խոշոր կազմակերպությունները, որոնք ուսումնասիրվող շուկայում ունեն իրենց վաճառքի ցանցերը, հաճախ՝ արտադրական ստորաբաժանումները):

Որոնողական հետազոտությունները սովորաբար կատարվում են ներթափանցման ենթակա երկրների մակրոտնտեսական ցուցանիշների, շուկայական ու տնտեսական իրավիճակների, շուկայի տարողունակության, ներուժի, կառուցվածքի, սպասարկողների բնույթի վերլուծության ու գնահատման, տվյալ երկրում սպառողների վարքագծի, ապրանքներին ներկայացվող պահանջների ուսումնասիրման, ինչպես նաև շուկայական

առաջարկի վրա մարքեթինգային գործոնների և դրանց փոխադարձ կապերի փոխազդեցության աստիճանի որոշման համար:

Որոնողական հետազոտությունների հիմնական գործիքներն են՝ երկրորդային տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը (կաբինետային հետազոտություն), որակական հետազոտությունը: Ներկայումս երկրորդային տեղեկատվության հավաքագրումը միջազգային հետազոտական կարևոր ուղղություններից է, քանի որ, արդեն տեղի ունեցած երևույթներին առնչվող վավերական փաստը, հնարավորություն են ընձեռում խուսափելու որակական հետազոտություններով թույլ տրվող սխալներից. սա առավել դյուրին ռեժիմով իրականացվող և ոչ թանկարժեք հետազոտություն է: Նշված առանձնահատկությամբ երկրորդային տեղեկատվության հավաքագրումը հաճախ դառնում է միջազգային շուկաների հետազոտման թերևս միակ ուղղություն՝ հատկապես արտահանում ձեռնարկող փոքր և միջին ընկերությունների առումով, որոնք չունեն այդ շուկաներում դաշտային աշխատանքների կազմակերպման մարդկային, ֆինանսական ռեսուրսներ, համապատասխան փորձ ու հմտություններ: Հատկանշական է, որ հետազոտական այս ուղղությամբ ներկայումս հնարավոր է ստանալ մի առավել համակարգված տեղեկատվություն, որը բնույթով բաժանվում է երեք հիմնական խմբերի.

1. Ներթափանցման երկրին վերաբերող կոշտ տեղեկատվություն,
2. Ներթափանցման ենթակա երկրի ապրանքային շուկային վերաբերող սինդիկատիվ տեղեկատվություն,
3. Ներթափանցման ենթակա երկրի կազմակերպություններին վերաբերող կոշտ և սինդիկատիվ տեղեկատվություն:

Առաջին խմբին պատկանում են երկրների վիճակագրական ցուցանիշները, համաշխարհային կազմակերպությունների զեկույցներն ու վարկանիշային տարբեր աղյուսակները, որոնց շարքում առավել հատկանշական են.

- Ներթափանցման ենթակա երկրների վիճակագրական ծառայությունների հրապարակումներն ու տարեգրքերը, ապրանքների անվանումներին, մակնիշմանը, որակին և այլ հատկությունների, ստանդարտացմանն ու սերտիֆիկացմանը, գներին և պետության հակագնագցման քաղաքականությանը, գործարքներին, գովազդին, տեղեկատվական հոսքերին, կոմերցիոն գաղտնիքին, ազգային շուկային և սպառողների պաշտպանությանը վերաբերող օրենսդրական նորմերը:
- Համաշխարհային տնտեսական ֆորումի՝ **երկրների մրցունակության համաթիվը,** որը հնարավորություն է տալիս գնահատելու ներթափանցման երկրի ինստիտուտների որակը, ենթակառուցվածքները, մակրոտնտեսական կայունությունը, բնակչության առողջության, նախնական կրթության մակարդակները, ապրանքների և ծառայությունների շուկայի արդյունավետությունը, ֆինանսական շուկայի զարգացման աստիճանը, տեխնոլոգիական զարգացման մակարդակը, ներքին շուկայի մեծությունը, ընկերությունների մրցունակությունը և նորամուծական ներուժը,
- **Հարիթեյջ** հիմնադրամի և **Ուոլլ սթրիթ** ամսագրի՝ **երկրների տնտեսական ազա-**

տության համաթիվը, որը գնահատվում են ներթափանցման ենթակա երկրում գործարարության ազատությունը, առևտրի ազատությունը, հարկային ազատությունը, կառավարման ազատությունը (գործարարության պաշտպանվածությունը վարչարարությունից և անհարկի միջամտություններից), դրամական ազատությունը, ներդրումների ազատությունը, ֆինանսական ազատությունը, աշխատանքային հարաբերությունների ազատությունը, սեփականության իրավունքների պաշտպանվածությունը, կոռուպցիայից պաշտպանվածությունը:

- Համաշխարհային տնտեսական ֆորումի՝ **միջազգային առևտրում երկրների ներգրավվածության համաթիվը**, ըստ որի գնահատվում են ներթափանցման ենթակա երկրի ներքին շուկայի հասանելիությունը, սահմաններին վարչարարության համապատկերը, գործարար մթնոլորտը և տրանսպորտային-կոմունիկացիոն ենթակառուցվածքները:
- Համաշխարհային բանկի **Գործարարության վարման դյուրինության համաթիվը.** հնարավորություն է ընձեռում գնահատելու երկրում ընկերությունների գրանցման, շինարարության թույլտվությունների ստացման, էլեկտրամատակարարման համակարգին միացման, հարկահավաքության և սեփականության վավերակայացման պատկերը, վարկավորման, ներդրումների պաշտպանության, պայմանագրերի պահանջների կատարման ապահովման պայմանները:
- Առևտրի համաշխարհային կազմակերպության **Աշխարհի զարգացման ինդիկատորները** տարեկան զեկույցները. դրանցով գնահատվում են երկրի տնտեսության ճյուղային կառուցվածքը, տնտեսական զարգացման մակարդակը, մրցակցության պայմանները:
- **Թրանսփերենսի ինթերնեյշնլ** կազմակերպության **կոռուպցիայի ընկալման մակարդակը,** որով գնահատվում է ներթափանցման ենթակա երկրում կոռուպցիոն ռիսկերի աստիճանը:

Երկրորդային տեղեկատվության երկրորդ խմբում վճարովի կամ անվճար հիմունքներով ներառված են դիտարկվող երկրի՝ հետազոտողին հետաքրքրող ապրանքային շուկաներում կատարված նախկին հետազոտությունների արդյունքները, իսկ երրորդ խմբում՝ կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև արժեթղթերի բորսաների հաշվետվություններն ու համաթվերը:

Պետք է նշել, սակայն, որ չնայած տվյալների բազայի համապարփակությանն ու առատությանը, միջազգային շուկաների կաբինետային հետազոտման պրակտիկան կապված է որոշակի ռիսկերի հետ: Նախ՝ ըստ մասնագիտական շրջանակների երկրորդային տեղեկատվությունը կարող է ամբողջությամբ չլուսաբանել հիմնախնդիրը: Ունի միայն փաստերն արձանագրելու, այլ ոչ թե դրանց առաջացման պատճառները բացահայտելու գործառույթ. նաև որոշակիորեն հնացած է[1]: Մյուս կողմից՝ հատկապես միջազ-

[1] Տե՛ս **Малхотра Н.,** Маркетинговые исследования: Практическое руководство, 4-е издание, изд. «Вильямс», 2007, էջ 233:

գային կազմակերպությունների զեկույցները քաղաքական բնույթի են, լրիվ չեն արտացոլում օբյեկտիվ իրականությունը, և որոշների մեթոդաբանությունների տարբերությունները միևնույն երկրի շուկայի, տնտեսական իրավիճակի և միջավայրային գործոնների առումով հետազոտողի համար կարող են ստեղծել միանգամայն հակասական պատկեր: Առկա են նաև որոշակի տարբերություններ պետությունների վիճակագրության մեթոդաբանությունների միջև, ինչը բարդացնում է ներթափանցման ենթակա երկրի մակրոտնտեսական ցուցանիշների, հատկապես սպառողական ծախսերի ու դրանց ուղղվածության վերլուծությունը: Ֆոնդային բորսաների և վարկունակության վարկանիշային աղյուսակները նույնպես լիարժեք չեն, հաճախ ուռճացված տվյալներ են պարունակում: Նշված հիմնախնդիրները հետազոտողից ոչ միայն պահանջում են աչալրջություն, այլև նման տեղեկատվության վերլուծության փորձառություն:

Երկրորդային տեղեկատվությունը չի լուծում կամ մակերեսայնորեն է լուծում միջազգային շուկայում սպառողական վարքագծի, սպառողների նախասիրությունների, ապրանքներին ներկայացվող պահանջների վերլուծության խնդիրը. այդ նպատակով պահանջվում է որակական որոնողական, ինչպես նաև նկարագրական ու պատճառական հետազոտությունների իրականացում:

Նշված մեթոդների չկիրառման հիմնական պատճառը հետազոտողի՝ միջազգային սպառողներից կտրված և սպառողական մշակույթին անտեղյակ լինելն է, իսկ սա ենթադրում է դիտարկվող երկրի հետազոտական կազմակերպությունների ներգրավում, որն էլ կապված է ֆինանսական մեծ ծախսերի հետ: Սակայն համապատասխան փորձի առկայության պայմաններում դրանցից որոշները հնարավոր է իրականացնել սեփական ջանքերով:

Որոնողական հետազոտությունների որակական մեթոդներն իրենց բնույթով կառուցվածքավոր չեն և կիրառվում են ոչ թե վիճակագրական, այլ նախնական տվյալների հավաքման համար: Դրանց տարատեսակներ են՝ ուղղակի կամ գաղտնազերծված և անուղղակի կամ գաղտնի նպատակներով իրականացվող հետազոտությունները: Ուղղակի հետազոտությունների գործիքներն են՝ ֆոկուս-խմբերի հարցումները և խորքային հարցազրույցները, իսկ անուղղակի հետազոտություններինը՝ հետահայաց ուսումնասիրությունները:

Միջազգային շուկայի սպառողների վարքագծի հետազոտման գործընթացում ֆոկուս-խմբերի օգտագործումը պայմանավորված է նրանով, որ նրանք հնարավորություն են տալիս ստանալու հետազոտվողների հանպատրաստից, հուզական, խոսակցական ռեակցիաների անմիջական պատկերը և զոնդելու մասնակիցների կարծիքները: Բացի սրանից, ֆոկուս-խմբերի առավելություններից են սիներգիան, «ձնագնդի էֆեկտը», ինտուիտիվ ազատությունը, հարցումը վերադիտելու հնարավորությունը և արագությունը: Միևնույն ժամանակ ֆոկուս-խմբերն ունեն թերություններ, որոնցից առավել հատկանշական են՝ մոդերատորի կողմից խմբի վրա ներգործության բարձր աստիճանը, կարծիքների սխալ մեկնաբանման և աղավաղված ընդհանրացման ռիսկը, նրանց անդամների զգայունությունը պատվիրատուի նախնական կարծիքի հանդեպ և հակվածությունը տալու

նրան գոհացնող պատասխաններ, չկանոնակարգվածությունը, ինչպես նաև արդյունքների՝ բնակչության մեջ տարածման անհնարինությունը[1]: Որակական ուղղակի հետազոտության մյուս եղանակը խորքային հարցումներն են, որոնք իրականացվում են պարզելու որոշակի թեմայի առնչությամբ հարցվողի համոզմունքը, զգացողությունը և վերաբերմունքը[2]: Անուղղակի որոնողական միակ մեթոդը պրոեկցիական հետազոտությունն է, որը չկառուցվածքավոր հարցման եղանակ է. այդ մեթոդով կարելի է ստանալ այն հարցերի պատասխանները, որ սովորաբար անհնարին է ուղղակի գաղտնազերծված հարցումներով, երբ հարցվողին հայտնի են հարցման նպատակները, և նա կարող է գիտակցված զրուցավարից թաքցնել իրական պատասխանները:

Չնայած հավաստի տեղեկատվության ապահովման մեծ հնարավորություններին՝ որակական հետազոտությունների բոլոր գործիքներն էլ ունեն մեկ էական թերություն. դա նրանց միջոցով համացանցային հարցման կազմակերպման անհնարինությունն է: Նշանակում է, որ դիտարկվող երկրի շուկայում անհրաժեշտ է որակավորված մասնագիտական խմբեր ներգրավել, որ, բնականաբար, թանկ կարժենա:

Միջազգային շուկայի սուբյեկտների գործունեության և սպառողների վարքագծի հետազոտման համեմատաբար հեշտ կիրառվող մեթոդը նկարագրականն է, որի գործիքներն են հարցումները և դիտարկումները:

Հարցման առավելություններից են անցկացման և ստացված տեղեկատվության կոդավորման ու վերլուծության դյուրինությունը, ինչը թույլ է տալիս հավաքելու մեծաքանակ վիճակագրական նյութ: Բացի դրանից, հարցումները հիմնականում ունեն ընդհանրական բնույթ, որի պատճառով սենսորային խթանումը (հարցվողի վրա ազդեցությունը) նվազագույն է: Հարցումների թերություններից են՝ հարցվողի հետ շփման հաստատման դժվարությունները, նրա կողմից հետաքրքրվածության՝ ցածր աստիճանը և որոշակի հարցերի պատասխանները կանխելու հանգամանքը[3]: Միջազգային սպառողների և փորձագիտական խմբերի հարցումների կազմակերպման կարևոր պայման են՝ տարբեր երկրներում դրան մշակույթի տարբեր աստիճանը, սպառողների ընկալունակության, և սխալ տեղեկատվությանը հակվածության տարբերությունները:

Սովորաբար սպառողներից հարցումներն իրականացվում են անհատապես (երես առ երես) և կապի միջոցներով (հեռախոսային, փոստային և համացանցային հարցումներ): Անհատական հարցումները կատարվում են հարցվողի տանը, առևտրային կենտրոններում և համակարգչի միջոցով: Հեռախոսային հարցումները ներառում են հեռախոսային ավանդական և համակարգչի միջոցով հարցումները:

---

[1] Տե'ս **Hill D.** Body of Truth: Leveraging What Consumers Can't or Won't Say, New York, John Wiley & Sons, 2003, 115-116:

[2] Տե'ս **Harris L. M.,** Expanding Horizons, Marketing Research: A Magazine of Management & Applications, Sum. 1996, էջ 12., **Meaning D.,** Marketing, Market Research Top 75 Supplement, Jul 17, 1997, էջ 16-17:

[3] **Hill D.** Body of Truth: Leveraging What Consumers Can't or Won't Say, New York, John Wiley & Sons, 2003, 115-116.

Հատկանշական է, որ բացի ընդհանրական առավելություններից և թերություններից, հարցումների գործիքներից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ առավելություններն ու թերությունները: Անհատական հարցման առավելություններից է բարդ հարցեր տալու, ապրանքը ցուցադրելու, գովազդատեղեկատվական նյութեր ներկայացնելու և սպառողների վերաբերմունքն ուսումնասիրելու հնարավորությունները: Սակայն այս մեթոդը թանկարժեք է, և առկա է արդյունքների աղավաղման ռիսկ, քանի որ հարցվողը, բարեհաճ երևալու ցանկությամբ, կարող է տալ սխալ պատասխաններ: Մյուս կողմից՝ միջազգային շուկայի սպառողների ուսումնասիրման պարագայում սա պահանջում է հարցումն իրականացնողի ներկայությունը ներթափանցման ենթակա երկրում կամ կրկին մասնագիտացված կազմակերպությունների ներգրավում, ինչը ենթադրում է ֆինանսական ռեսուրսների առկայություն: Հեռախոսային հարցումներին բնորոշ են անհատական հարցման առավելությունները, ինչպես նաև անհասկանալի հարցերի մեկնաբանման ոչ սահմանափակ տևողությունը, սակայն անձնական շփման բացակայությունը պահանջում է, որ մշակվող հարցաթերթիկների թեմատիկան և բուն հարցերը լինեն պարզունակ, որպեսզի չհոգնեցնեն սպառողներին: Սրանք նույնպես միջազգային հարցումների կազմակերպման համար անօգուտ են՝ հեռախոսազանգերի բարձր գների և հետազոտողի լեզվական սահմանափակ կարողությունների պատճառով: Միջազգային սպառողների միջավայրի վերլուծության այլընտրանքային եղանակ է փոստային հարցումը, որը հնարավորություն է տալիս հավաքելու մեծածավալ տեղեկատվություն, սակայն ժամանակատար է՝ կապված առաքումների ժամկետների հետ: Այս բացը լրացվում է էլեկտրոնային փոստով հարցումներով, որոնք իրականացվում են ակնթարթորեն, թեև այս եղանակն ունի որոշակի տեխնիկական սահմանափակումներ, մասնավորապես հիմնական տեխնիկական ծրագրերը թույլ չեն տալիս հարցաթերթիկներում ստուգում իրականացնելու տրամաբանական ծրագրերով, իսկ ASC II ձևաչափով անկարելի է կանխել միևնույն հարցին միաժամանակ երկու պատասխանի մուտքագրումը: Մյուս կողմից՝ փոստային հարցումների մեծ մասը համացանցային օգտատերերի կողմից կամ ջնջվում է, կամ որոշակի ծրագրերի կիրառմամբ տեղ չի հասնում: Լայն տարածում գտնող մեթոդներից է համացանցային հարցումը, որը էլեկտրոնային փոստով հարցման հետ երկրորդ հիմնական ուղղությունն է երկրորդային տեղեկատվության ստացումից հետո: Համացանցային հարցումները հնարավոր է կազմակերպել ինչպես ընկերության վեբ կայքի, այնպես էլ ձայնային փոստի (Skype) և սոցիալական կայքերի միջոցով: Համացանցի առավելություններից է օգտատերերի մեծ թիվը, արագ հարցումների իրականացման հնարավորությունը, գրաֆիկական և ձայնային մեթոդների մեկտեղումը, բարդ հարցերի զետեղումը հարցաթերթիկներում, տվյալների մուտքագրման արագությունը, տեղեկատվության պահպանման սերվերների առկայությունը: Սակայն համանցային հարցումների իրականացումը կապված է բազմաթիվ բարդությունների հետ, որոնց շարքում առավել հատկանշական է ընտրանքի վերահսկման անհնարինությունը, ինչի պատճառով միևնույն օգտատերը կարող է մի քանի անգամ պատասխանել միևնույն հարցմանը:

Միջազգային շուկայի և միջավայրի նկարագրական հետազոտությունների մյուս

գործիքը դիտարկումն է, որն իրենից ներկայացնում է երևույթների համակարգային և շարունակական արձանագրման և գրանցման գործընթաց[1]: Դիտարկման կարևոր առավելություններից մեկն այն է, որ հնարավորություն է տալիս իրական ժամանակահատվածում գնահատելու սպառողների իրական վարքագիծը, մրցակիցների կիրառած ռազմավարությունները և միջնորդների գործունեության առանձնահատկությունները, այլ ոչ թե տեղեկություն ստանալու ենթադրվող կամ նախապատվող վարքագծի, կիրառվելիք ռազմավարությունների վերաբերյալ: Հիմնական օբյեկտներ են՝ շուկան սպասարկողների էլեկտրոնային կայքերը, մեդիառազմավարությունները, տարաբնույթ համացանցային առևտրային հարթակներում ներգրավված միջնորդ ընկերությունների գործընկերային առաջարկները, ներթափանցման երկրում ներկայացվածության պայմաններում սպառողական վարքագծի մոդելները: Նմանատիպ հետազոտությունը հնարավորություն է ընձեռում հստակորեն որոշելու ներթափանցման ենթակա երկրի շուկան սպասարկող ընկերությունների շուկայական առաջարկի կառուցվածքն ու բաղադրիչների մրցունակությունը, վաճառքի մեխանիզմները, կիրառվող գները և վաճառքի խթանման ռազմավարությունը, ընտրելու առևտրային գործընկերներ, որոշակիացնելու սեփական մեդիաակտիվության բյուջեն, գնահատելու միջազգային սպառողների նախապատվությունները և գնումների իրականացման մոդելները: Դիտարկման գործիքի հիմնական թերությունն այն է, որ երևույթները չեն կարող մեկնաբանվել, քանի որ ոչինչ հայտնի չէ դիտարկվող օբյեկտի շարժառիթների, համոզմունքների, վերաբերմունքի և նախապատվությունների մասին: Սա ենթադրում է դիտարկման արդյունքների համեմատություն միջազգային շուկայի հետազոտման այլ գործիքներով արձանագրված արդյունքների հետ:

Վերջին, առավել քիչ կիրառվողը պատճառական հետազոտության եղանակն է, որով հնարավոր է պարզել միջազգային շուկայի սպառողների՝ ապրանքներին ներկայացվող պահանջների և վարքագծի դրսևորման դրդապատճառները, գնահատել շուկան սպասարկող կազմակերպությունների պատասխան ռեակցիայի ուղղություններն ու ուժգնությունը: Այս հետազոտության հիմնական գործիքը փորձնական արտահանումն է (փորձնական մարքեթինգը): Սա ունի 2 առաջնային նպատակ՝ ապրանքի շուկա դուրս բերելու հաջողության աստիճանի գնահատում և սպառողական վարքագծի վրա որոշ անկախ գործոնների (մարքեթինգի համալիրի 6 P) հնարավոր համադրումների փորձարկում: Պետք է նշել, որ փորձնական արտահանումը նույնպես պարունակում է որոշակի ռիսկեր ու բարդություններ: Հիմնական խնդիրն այն է, որ փորձնական վաճառքն իրականացնում և գործընթացը վերահսկում է միջնորդ ընկերությունը, և արտահանողը զրկված է դրան վրա ազդելու իրական հնարավորությունից:

Քանի որ միջազգային շուկաների հետազոտման գործիքների առանձին-առանձին օգտագործումը ցածր արդյունավետ է, հարկ է մշակել համադրման ծրագրեր, որոնք

---

[1] **Малхотра Н.,** Маркетинговые исследования: практическое руководство, 4-е издание, изд. «Вильямс, 2007 г. с. 244.

հատկապես ֆինանսական սուղ կարողություններով ընկերություններին թույլ կտան սահմանափակ ծախսերով իրականացնելու ինքնուրույն վերլուծություններ և գնահատելու տարաբնույթ ազդակների ներգործությունը շուկայի սպասարկման հնարավորությունների վրա: Ըստ էության, այդպիսի փորձի տեղայնացման ուղիները երկուսն են՝ հիմնարար գիտական հետազոտությունների առկայություն և արտահանման պրակտիկա ունեցող ընկերությունների քանակի ավելացում ու նրանց միջև փոխգործակցության խորացում: Պետք է նշել, որ ներկայում ՀՀ գործարար միջավայրում և գիտական շրջանակներում նշված խնդիրների լուծումը հնարավոր չէ: Դա պատճառաբանվում է պատրաստի արտադրանքի արտահանման քիչ ծավալներով, ոլորտի նկատմամբ ցածր հետաքրքրվածությամբ և որակավորված մասնագետների պակասով. վերջին գործոնն ուղղակիորեն կապված է ներքին շուկայում հետազոտական աշխատանքների պատվերների սահմանափակության և, բնականաբար, փորձառության սահմանափակ հնարավորություներ հետ:

Հոդվածում դիտարկվում են միջազգային շուկաների մարքեթինգային հետազոտությունները տարբեր գործիքների կիրառմամբ: Ներկայացվում են հետազոտման եղանակներն ու հետազոտությունների տեսակները, վերլուծությունների արդյունավետության ապահովման ձևերը, միասնական մեթոդաբանությունն ու գործիքակազմը: Հիմնավորվում է, որ, պայմանավորված հետազոտական գործիքների դրական և բացասական կողմերով, դրանց առանձին-առանձին օգտագործումը ցածր արդյունավետ է, ուստի ժամանակի և ռեսուրսների ներդրման տեսանկյունից անհրաժեշտ է համադրել՝ համալիր ծրագրերի մշակման միջոցով:

АРСЕН ЗАХАРЯН

ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ВНЕДРЕНИЯ МАРКЕТИНГОВЫХ ИНСТРУМЕНТОВ В ПРОЦЕСС ИЗУЧЕНИЯ МЕЖДУНОРОДНЫХ РЫНКОВ

В статье рассмотрены маркетинговые исследования международных рынков с применением различных инструментов. Представлены методы и виды наблюдения, формы обеспечения эффективности анализа, целостность методологического инструментария. Обосновывается, что применение данных иструментов по отдельности низко эффективно, следовательно, с точки зрения эффективности использования времени и ресурсов, необходимо их сочетать, разработав комплексные программы.

ARSEN ZAKHARYAN

ISSUES OF INCREASING THE EFFICIENCY OF MARKETING TOOLS IN INTERNATIONAL MARKET RESEARCH

The article covers the importance of marketing research of international markets conducting through various instruments; including the types and methods of marketing research, ways of assuring the effectiveness of analysis and finally the unified methodology and research tools. Article proves the fidelity of statement that due to the positive and negative aspects of each of the market research tools their separate usage is highly inefficient, so in terms of time and resources effectiveness the successful combination of different research tools can be achieved through developing complex projects.

ԼԻԼԻԹ ՂԱՆԹԱՐՉՅԱՆ
Ասպիրանտ, ՀՊՏՀ

ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. բարեկեցություն, բարօրություն, կենսամակարդակ, կենսակերպ, կյանքի որակ

Մտքի որակից կախված է կյանքի որակը

Ամերիկացի հոգեբան և բժշկության ոլորտի փորձագետ Ռ.Ալփերթը (Ռամ Դաս) ներկայացնում է կյանքի որակի վերաբերյալ տեսակետ՝ «Հիմալայներում, իմ գուրույի տաճարում, կյանքս եղել է շատ պարզ: Քնել եմ գոմաղբի մեջ, լվացվել դույլից, սնվել օրվա ընթացքում մեկ անգամ, նստել, ժամերով պատուհանին նայել կամ ուսումնասիրել Գիտա («Բհագավադ Գիտա»՝ հինդուականության սուրբ գիրքը): Մի օր այդպես նստած ես հիշեցի երբևիցե «Լայֆ» ամսագրից իմ կարդացած հոդվածը ամերիկացի ռազմագերի օդաչուների մասին: Կային նաև նրանց կյանքը ներկայացնող մի քանի լուսանկարներ: Հիշեցի մի ռազմագերու կյանքի նկարագրությունը. «Ամբողջ օրը նստում եմ սենյակում, քնում գոմաղբի մեջ, լվացվում դույլից, սնվում օրվա ընթացքում մեկ անգամ»: Հոդվածի նպատակն էր ցույց տալ կյանքի սարսափելի պայմանները: Անդրադարձա իմ կյանքին՝ ես կամովին ընտրել եմ այդպիսի պայմաններ նաև՝ հաճույք ստացել»[1]:

Մարդիկ, իրոք, տարբեր կերպ են ընկալում գոյատևման նույն պայմանները: Պատճառը, ի վերջո, կյանքի իմաստի և նպատակի տարբեր ըմբռնումներն են:

Տնտեսագետների կարծիքով՝ 21-րդ դարը որակի դար է: Կյանքի որակը, իբրև բարեկեցության կարևոր ցուցանիշ, բնորոշում է երկրների և ժողովուրդների զարգացումը: Տնտեսության զարգացման նոր ուղիների որոնումը հանգեցնում է նրան, որ միայն կյանքի որակը կարող է լավագույնս արտահայտել համաշխարհային հանրության նպատակները, քանի որ մարդկությունը կանգնած է նոր քաղաքակրթության, այն է՝ **որակի քաղաքակրթության** անցման շեմին:

Ընդհանուր առմամբ, կյանքի որակը չունի միանշանակ սահմանում: Ըստ որոշ մտածողների՝ այն սոցիալական կարևոր կատեգորիա է, որը բնորոշվում է մարդու պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների կառուցվածքով: Հետազոտողների մի մասն էլ **կյանքի որակ** հասկացությունը դիտարկում է տնտեսագիտական տեսանկյունից՝ հիմնվելով բնակչության նյութական ապահովվածության վրա:

Կյանքի որակը մարդկանց հոգևոր, նյութական և սոցիալական պահանջմունքների բավարարման աստիճանն է: Ցույց է տալիս մարդու կենսակերպը: Մարդն ինքն է ձգտում բարելավելու կյանքի որակը՝ կրթություն է ստանում, ջանասիրաբար աշխատում է, հետամուտ է աշխատանքային առաջընթացին, հասարակության մեջ դիրքին:

---

[1] Генкин Б.М., Экономика и социология труда, изд. НОРМА, Москва, 2007, с. 46-47.

Կյանքի որակի տարբեր կողմերը դիտարկվում են համաշխարհային փիլիսոփայական, սոցիոլոգիական և տնտեսագիտական գրականության մեջ: **Կյանքի որակ** հասկացությունն առաջացել է 1950-ական թթ. կեսերին, երբ ակնհայտ դարձավ, որ **կյանքի մակարդակ** հասկացությունը չի արտացոլում բնակչության լիարժեք բարօրությունը:

Համարվում է, որ առաջին անգամ այդ հասկացությունն օգտագործվել է Ջ.Գելբրեյդի «Հասարակության բազմությունը» գրքում 1960 թ: Իսկ քաղաքականության մեջ՝ ԱՄՆ-ի նախագահ Ջ.Քենեդիի կողմից՝ «Ազգի վիճակի մասին» 1963 թ. զեկույցում, որտեղ նշվում է, որ «ամերիկյան կյանքի որակը համահունչ պետք է լինի ամերիկյան ապրանքների քանակին»:

Ըստ ամերիկացի սոցիոլոգ Ս.Մակկոլիի՝ **կյանքի որակ** արտահայտությունը առաջինն օգտագործել է ԱՄՆ-ի նախագահ Լ.Ջոնսոնը 1964 թ.՝ հայտարարելով, որ ամերիկյան հասարակության նպատակները «չեն կարող չափվել մեր բանկային ավանդների չափերով, դրանք կարող են չափվել մարդկանց կյանքի որակով»:

Հետազոտողները **կյանքի որակի** զարգացման երկրորդ փուլը թվագրում են 1966-ով: Հենց այդ ժամանակ է հրատարակվել «**Սոցիալական ցուցանիշներ**» հավաքական մենագրությունը Ռ. Բաուերի խմբագրությամբ, որը ողջ ամերիկյան և արևմտաեվրոպական հասարակագիտությունը կողմնորոշեց դեպի սոցիալական ցուցանիշների շարժը[1]:

Կյանքի որակի մեկ այլ հայեցակարգային մոտեցում ձևավորվել է 70-ական թթ. սկզբին: 1971 թ. լույս տեսան Ջ.Ֆորեստերի «Համաշխարհային դինամիկա», այնուհետև վերջինիս հիման վրա՝ Դ.Մեդոուզայի և այլոց «Աճի սահմանաչափերը» գրքերը: Իսկ կյանքի որակի ուսումնասիրության ամերիկյան առանձնահատկությունը անհատական բարեկեցության դիտարկումն է[2]:

Արդեն 90-ական թթ. սկզբին փորձեր էին կատարվում **կյանքի որակը** դիտարկելու որպես ինքնուրույն գիտական հասկացություն: Սկզբում այն կրում էր բավականին տարածական բնույթ՝ հիմնվելով գլխավորապես տնտեսական անվտանգության, շրջակա միջավայրի բացասական ազդեցության, նյութական բարեկեցության գնահատման անհրաժեշտության վրա: Հետագայում **կյանքի որակի** մեջ ներառվեցին գրեթե բոլոր բաղադրիչները՝ սկսած ժամանակակից մարդու կյանքի արժեքային համակարգից մինչև բնակչության նյութական բարեկեցության մակարդակը:

Բնակչության կյանքի որակը պետք է դիտարկել որպես հավաքական սուբյեկտի կյանքի որակ, որը բաղադրված է յուրաքանչյուրի կյանքի որակից: Հետևաբար կյանքի որակի առաջին գործոնը անձի (կամ հասարակության) ներքին կարողությունն է՝ իրականացնելու կենսական գործընթացները: Երկրորդ գործոնը կենսագործունեության արդյունքային բնութագրերն են՝ կապված մարդկանց պահանջմունքների, հետաքրքրությունների, արժեքների և նպատակների հետ: Երրորդը արտաքին հնարավորություններն են, այսինքն՝ շրջակա միջավայրի հատկությունները, օբյեկտները և սուբյեկտները:

---

[1] Бачкарева В.К., Интегральный показатель качества жизни, “Народонаселение”, 2001, N 3.

[2] Горкина А.П., Карелова Н., Социальная энциклопедия, М., Большая Российская энциклопедия, 2000.

Այսպիսով, **կյանքի որակը որոշվում է հասարակության, սոցիալական խմբերի, անհատ քաղաքացիների կենսական ներուժով, նրանց կենսագործունեության, պահանջմունքներին, արժեքներին և նպատակներին համապատասխան միջոցների, պայմանների և արդյունքների բնութագրերով՝ ելնելով որոշակի չափանիշներից՝ նորմերից, ստանդարտներից, կանոններից, սովորույթներից ու ավանդույթներից:** Այն հարաբերական գնահատում ունի. օրինակ՝ մեկի համար կյանքի պայմանները կատարյալ են, մյուսի համար՝ բացարձակ անկատար:

Կյանքի որակը գնահատելիս առանձնացվում է ցուցանիշների երկու տեսակ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ ցուցանիշներն ունեն բնական և սոցիալական բնույթ. դրանք վերաբերում են սննդամթերքի սպառմանը, կենցաղային պայմաններին, զբաղվածության և ծառայությունների ոլորտներին, կրթությանը, առողջապահությանը, սոցիալական ապահովվածությանը: Սուբյեկտիվը ճանաչողական ցուցանիշներն են (կյանքից ընդհանուր բավարարվածության գնահատականը և տարբեր ոլորտների բավարարության ցուցիչը) և զգացմունքային որակումները, որոնք ի ցույց են դնում կյանքի և աշխատանքի պայմաններով բավարարվածությունը, անհատի սոցիալական կարգավիճակը, ընտանիքի ֆինանսական դրությունը և ընտանեկան հարաբերությունները[1]:

Ի մի բերելով՝ նշենք, որ բնակչության **կյանքի որակ** տնտեսական կատեգորիան կարող է սահմանվել որպես «Զանգվածային գիտակցության մեջ ձևավորված կենսապայմանների ամփոփ բնութագրերի ընդհանրացված գնահատական»: Այդ բնութագրերը կարող են դիտվել կյանքի որակի յոթ խմբային հատկությունների օգնությամբ: Դրանք են.

1. Բնակչության որակը, ներառյալ այնպիսի հատկություններ, ինչպիսիք են վերարտադրման կարողությունը (ծնելիությունը, մահացությունը, հիվանդությունը, հաշմանդամությունը, կյանքի սպասվող տևողություն և այլն), ընտանիք կազմելու և պահպանելու ունակությունը (ամուսնություն, ամուսնալուծություն), կրթության հակումը (տարիքային խմբերի համապատասխան ուսում, կրթական մակարդակի ձեռքբերում):
2. Բարեկեցությունը, որի նյութական կողմը բնութագրում են եկամտի ցուցանիշները, բնակչության ընթացիկ սպառման և խնայողության մակարդակը (իրական եկամուտը, դրա բաշխումը տարբեր սոցիալ-տնտեսական խմբերի միջև, սպառողական ծախսերի կառուցվածքը և այլն), ինչպես նաև այնպիսի մակրոտնտեսական ցուցանիշներ, ինչպիսիք են մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, սպառողական գների համաթիվը, գործազրկության և աղքատության աստիճանը:
3. Բնակչության կենսապայմանները, որոնց մեջ ներառվում են բնակարանային ապահովվածության, առողջապահական հաստատություններից օգտվելու, կրթու-

[1] http://rae.ru/forum2011/14/609

թյան, մշակույթի, հանգստի, սոցիալական և աշխարհագրական շարժունակության վերաբերյալ բնութագրերը:

4. Բնակչության իրազեկվածությունը, որով բնութագրվում է հեռահաղորդակցության և տեղեկատվական ենթակառուցվածքների միջոցների մատչելիությունը (բջջային կապի առկայություն, տեղեկատվական ռեսուրսներ, համացանցային տեխնոլոգիաներ):
5. Սոցիալական ապահովությունը (կամ սոցիալական ոլորտի որակը)՝ մեկտեղելով աշխատանքային պայմանները, սոցիալական պաշտպանությունը, ֆիզիկական և նյութական անվտանգությունը:
6. Շրջակա միջավայրի որակը՝ հանրագումարելով օդային տարածքում աղտոտման վիճակը, ջրի և հողի որակը, տարածքի կենսաբազմազանության մակարդակը:
7. Բնակլիմայական պայմանները՝ դրանց և ֆորս-մաժորային իրավիճակների (ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, բնական այլ աղետներ) բնութագրերով:

*Հոդվածում ներկայացվում են **կյանքի որակ** հասկացության սոցիալ-փնտրեսական բովանդակությունը, նրա կապը բարեկեցության, բնակչության կենսակերպի և կենսամակարդակի հետ: Առանձին փնտրեսագետների բնորոշումները վերլուծելով և խմբավորելով՝ տրվել է փվյալ հասկացության սեփական մեկնաբանությունը:*

ЛИЛИТ КАНТАРЧЯН

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ КАЧЕСТВА ЖИЗНИ

В статье представлены социально-экономическое содержание концепции **качества жизни** и её связь с благосостоянием, образом и уровнем жизни населения. Рассмотрены и сгруппированы определения различных экономистов, предложен собственный вариант данной концепции.

LILIT GHANTARCHYAN

SOCIAL-ECONOMIC CONTENT OF QUALITY OF LIFE

In the article is represented the concept of social-economic content of quality of life, the connection between welfare and living standards of population.Analyzing and grouping definitions of different economists has been given the concept of quality of life in own interpretation.

ԱՎԵՏԻՔ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայցորդ, Երևանի «Գլաձոր» համալսարան

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *փոքր և միջին բիզնես, արտահանման խրախուսման ծրագիր, արտահանման պահանջարկ, առևտրային և ոչ առևտրային ռիսկեր*

Հայաստանի ներքին փոքր շուկայի պայմաններում տնտեսության դինամիկ զարգացման հիմքը արտադրանքի արտահանման ծավալների ընդլայնումն է՝ պետական խթանման ու աջակցման ճանապարհով: Եվ քանի որ տնտեսական ու սոցիալական տեսանկյունից շատ կարևոր է տնտեսությունում փոքր և միջին բիզնեսի տեսակարար կշռի ավելացումը, ապա պետք է շարունակական քայլեր ձեռնարկել հենց այդ ոլորտի արտադրանքի արտահանման ընդլայնման խրախուսման նպատակով:

Իրականացվող քաղաքականության հիմնական ուղղությունները պետք է լինեն.

- ազատական առևտրի ռեժիմի ձևավորումը և պահպանումը,
- արտահանումը սահմանափակող բոլոր տեսակի նորմատիվ, վարչական, տեխնիկական և այլ արգելքների վերացումը,
- արտահանման խթանման ենթակառուցվածքների կազմավորումը,
- արտերկրում ՀՀ առևտրական ներկայացուցչությունների հիմնարկումը և նրանց արդյունավետ գործունեության ապահովումը,
- արտաքին շուկաների ուսումնասիրությունը (մարքեթինգ),
- տեղեկատվական համակարգերի ներդրումը և տեղեկատվական ծառայությունների մատուցումը,
- արտահանման ապահովագրական համակարգի ստեղծումը,
- տեխնիկական օգնության ցուցաբերումը (բիզնես-ծրագրերի կազմում, պայմանագրերի, նախագծերի մշակում, օրենսդրական և հարկային համակարգերի տեղեկատվության տրամադրում, էլեկտրոնային առևտրի հայտերի կազմում և այլն),
- միջազգային ցուցահանդեսներին և տոնավաճառներին մասնակցության ապահովումը և աջակցումը,
- միջազգային գործարար համաժողովների (բիզնես ֆորումների) կազմակերպումը,
- տնտեսական և իրավական բնույթի ամենատարբեր խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

Շուկայական տնտեսական հարաբերություններին անցման տարիներին Հայաստանի տնտեսության շատ ճյուղերի ու կազմակերպությունների արտադրանքի արտահանումը կրել է տարերային բնույթ, և թեև փոքր և միջին բիզնեսի հատվածը օգտվում է ԱԱՀ-ից և

արտահանման մաքսատուրքից ազատման արտոնությունից, այնուամենայնիվ արտահանումը խթանող նպատակային քաղաքականություն մեզանում չի իրականացվել: Անհրաժեշտ է մշակել հատուկ ռազմավարություն և դրա վրա հիմնված արտահանման խրախուսման ծրագիր (ԱԽԾ): Ռազմավարության գլխավոր խնդիրը պետք է լինի Հայաստանի արտահանման ներուժի պահպանումն ու զարգացումը, կառուցվածքի օպտիմալացումը, արտահանվող ապրանքների ծավալների ընդլայնումը:

Հարկ է, որ ԱԽԾ-ն նախատեսի միջոցառումներ, որոնք կնպաստեն ՀՀ-ում արտահանման նպատակային ոլորտների զարգացմանը: Միջոցառումները պետք է կյանքի կոչվեն հասցեական մոտեցմամբ: Այս առումով նախ անհրաժեշտ է, որ կառավարական և ոչ կառավարական ինստիտուտները պարբերաբար իրականացնեն.

- Հայաստանի ճյուղային ու ռեսուրսային կառուցվածքի հետազոտություններ և ուսումնասիրություններ,
- համաշխարհային շուկայի ճյուղային զարգացման միտումների ուսումնասիրություններ,
- հեռանկարային ճյուղերի գնահատումներ և դրանց զարգացման հիմնախնդիրների վերլուծություններ,
- առանձին ճյուղերի ռազմավարական զարգացման ծրագրերի մշակումներ,
- տնտեսության ցանկալի ճյուղերի զարգացման և խթանման համար ինստիտուցիոնալ հիմքերի մշակումներ,
- առանձին ճյուղերի արտադրանքը սպառող երկրների տնտեսական հեռանկարների, հումքային շուկաների իրավիճակային փոփոխությունների, մատակարարող երկրների հնարավորությունների, մրցակից երկրների ուժեղ և թույլ կողմերի, միջազգային իրավական դաշտի զարգացումների ուսումնասիրություններ,
- համաշխարհային քաղաքական և տնտեսական զարգացումների վերլուծություններ,
- գիտատեխնոլոգիական առաջընթացի և երկրների սոցիալ-մշակութային զարգացումների վերաբերյալ իրազեկումներ:

ԱԽԾ-ն պետք է ինտեգրվի երկրի տնտեսական զարգացման ծրագրերին, պարբերաբար փոփոխվի: Իսկ դա նշանակում է, որ երկրի արտահանման ներուժը պետք է մշտապես ենթակա լինի մոնիթորինգի:

Արտահանման ռազմավարությունն անհրաժեշտ է մշակել և իրականացնել՝ նկատի ունենալով պահանջարկը և առաջարկը:

Արտահանման պահանջարկի վրա ներգործելու համար պետությունը պետք է ձեռնարկի առավելապես առևտրային բնույթի միջոցառումներ, ինչպիսիք են, օրինակ՝ արտաքին շուկաների ուսումնասիրությունը և տվյալների տրամադրումը հայրենական արտադրողներին, առևտրային տարբեր խոչընդոտների վերացումը արտաքին շուկաներում և տեղական արտադրության ապրանքների պահանջարկի խթանումը: Իսկ արտահանման առաջարկի վրա ազդելու նպատակով նա պետք է լուծի արտադրության կազմակերպման հետ կապված խնդիրներ:

Արտահանման ռազմավարություն և դրա հիման վրա հեռանկարային ծրագրեր մշակելիս արտահանողների շահերը դրանցում արտացոլու համար անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական հանձնաժողով՝ արտահանմանն առնչվող պետական մարմինների և գիտահետազոտական հաստատությունների ներկայացուցիչներից:

ԱԽՕ-ում ընդգրկելիք ապրանքների ընտրությունը պետք է հիմնված լինի համեմատական առավելությունների ուսումնասիրության վրա: Այդ նպատակով մեր երկրի ձեռնարկությունների տեխնիկատնտեսական ցուցանիշները հարկ է համեմատել այլ երկրների նույնատիպ ցուցանիշների հետ: Արդյունաբերության ճյուղերի գործունեության վերլուծությամբ պարզվում է, որ բացի հումքային ռեսուրսներից և էժան աշխատուժից՝ այլ համեմատական առավելություններ դեռևս չեն օգտագործվում, մինչդեռ կան արտադրություններ, որոնց մասնագիտացումը կարող է բարելավել ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքը: Նշենք, որ այսօր տնտեսական մրցունակության չափանիշներ և զարգացման երաշխիքներ չեն համարվում բնական ռեսուրսներով երկրի հարստության աստիճանը կամ կառավարության կողմից ներքին տնտեսության պաշտպանությունը և սուբսիդավորումը[1]:

Միջազգային արդի փորձը ցույց է տալիս, որ գիտության, տեղեկատվության արդյունավետության մրցակցային առավելություններն են երկրի զարգացման իրական երաշխիքները: Սա Հայաստանի պարագայում իրատեսական է և պետք է լինի հիմնաքարային մշակվող քաղաքականությունների համար:

Ծրագրով խթանման ենթակա ապրանքների ընտրությունը նպատակահարմար է կատարել ձեռնարկությունների հետ սերտ համագործակցված: Այդ ապրանքներն իրենց չափորոշիչներով և առանձնահատկություններով պետք է համապատասխանեն նպատակային շուկաների պահանջներին: Դրա համար հարկավոր է ընտրել այդ շուկաների ներմուծողներին, հստակեցնել վերոնշյալ բոլոր պահանջները և պարզել, թե նրանք ինչ հնարավորություններ ունեն մեր ձեռնարկությունների արտադրանքն ընդունելու համար:

Հայաստանի փոքր և միջին բիզնեսի արտադրանքի արտահանման ռազմավարությունը գլխավոր արտաքին շուկաների նկատառումով հետևյալ ուղղություններն ունի. ԱՊՀ, Արևելյան Եվրոպայի, հարևան (Իրան և Թուրքիա), Մերձավոր Արևելքի, Արևմտյան Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի երկրների շուկաներ՝ թեթև և սննդի արդյունաբերության արտադրանք:

Սակայն Թուրքիա և Իրան հայրենական ապրանքների արտահանման համար այդ երկրների կառավարությունները դեռևս հնարավորություններ չեն ստեղծել: Իսկ Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրների շուկաներ ներթափանցելու համար Հայկական սփյուռքի ներուժը կարելի է օգտագործել և որպես սպառող, և որպես համագործակցության իրական երաշխիք:

---

[1] Տե՛ս Michael Porter, ,,The Competitive Adventage of Nation", 2008:

Չնայած հանրապետությունում արտաքին առևտրատնտեսական ոլորտին աջակցող որոշ ենթակառուցվածքների ստեղծմանը՝ դեռևս շատ անելիքներ կան փոքր և միջին բիզնեսի արտադրանքի արտահանմանն օժանդակող մասնագիտացված կառույցների ձևավորման և դրանց արդյունավետ աշխատանքների կազմակերպման առումով:

Մեր հանրապետության արտահանման խրախուսմամբ զբաղվում են մի քանի կազմակերպություններ, որոնց գործառույթներում նկատվում են որոշակի կրկնություններ: Ուստի անհրաժեշտ է հստակեցնել ինչպես նրանց գործառույթները և գործունեության դաշտը, այնպես էլ համագործակցության մեխանիզմները:

Արտահանման բարելավումը Զարգացման հայկական գործակալության (ԶՀԳ) հիմնական նպատակն է: Դրա խթանման բնագավառում ԶՀԳ-ն ունի մի շարք գործառույթներ, որոնք միտված են ինչպես խոշոր, այնպես էլ փոքր և միջին բիզնեսին: Դրանք են.

- նպատակային ոլորտների և շուկաների որոնում,
- մարքեթինգային ուսումնասիրություններ,
- ցուցահանդեսներին և տոնավաճառներին արտահանողների մասնակցության աջակցություն,
- արտահանողներին օրենսդրության, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի վերաբերյալ տեղեկույթի տրամադրում,
- նրանց ֆինանսական աջակցություն ցուցաբերելու հնարավորությունների որոնում:

Այնուամենայնիվ, ԶՀԳ-ն նույնպես իր առջև դրված խնդիրները լուծելու համար բարձրակարգ փորձագետների, ինչպես նաև ֆինանսական միջոցների կարիք ունի, ինչն էլ թույլ չի տալիս լայնածավալ աշխատանքներ կատարելու այս բնագավառում: Բացի դրանից, նա իր գործառույթներն իրականացնելու նպատակով պետք է հեռանկարային արտաքին շուկաներում ունենա ներկայացուցչությունների և գործակալությունների ցանց:

Փոքր և միջին բիզնեսի արտադրանքը արտահանողներին տեխնիկական և տեղեկատվական բնույթի օգնություն ցուցաբերելու համար ԶՀԳ-ն պետք է նաև նպաստի ՀՀ մարզերում արտահանման աջակցման կենտրոնների հիմնմանը և կոորդինացնի նրանց աշխատանքները:

Արտահանման խթանման օպերատիվությունը բարելավելու նկատառումով հարկ է համագործակցել Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի ընկերությունների հետ և ստեղծել էլեկտրոնային ցանց՝ դրանում ընդգրկելով ինչպես արտահանող ընկերություններին, այնպես էլ դրա խթանմամբ զբաղվող կազմակերպություններին:

Արտահանման ժամանակ փոքր և միջին բիզնեսը հանդիպում է առևտրային և ոչ առևտրային ռիսկերի: Այդ առումով խոչընդոտ է արտահանման ապահովագրման համակարգի բացակայությունը: Դա նաև հետ է պահում օտարերկրյա ներդրողներին հայաստանյան շուկայում լուրջ և ծավալուն գործարքներ իրականացնելուց: Ուստի նպատակահարմար է ստեղծել ապահովագրական հիմնադրամ: Հիմնադրամի ֆինանսավորման աղբյուր կարող են լինել պետության, միջազգային կազմակերպությունների, դոնոր երկրների, ինչպես նաև արտահանողների տրամադրած միջոցները: Նման հիմնադրամներ կան

ինչպես զարգացած, այնպես էլ անցումային տնտեսությամբ երկրներում: Ճապոնիայում ընդհանուր արտահանման գործարքներում պետական ապահովագրության բաժինը շուրջ 45% է. այն ընդգրկում է արժութային ռիսկերի, ներմուծվող հումքի դիմաց կատարված կանխավճարային մուծումների, օտարերկրյա ներդրումների ապահովագրությունը:

Փոքր և միջին բիզնեսի արտադրանքի արտահանողները որոշ դժվարություններ ունեն կապված այլ երկրների օրենսդրության հետ: Կարելի է ստեղծել մի կենտրոն, որը պետական մակարդակով զբաղվի արտահանողների մրցակցային և իրավական բնույթի խնդիրների լուծմամբ: Միաժամանակ պետք է ապահովել արտահանող գործարարների միջև կապ, կազմակերպել բաց ֆորումներ:

Արտահանման պահանջարկի վրա ներգործելու համար պետությունը պետք է իրականացնի առավելապես առևտրային բնույթի միջոցառումներ: Հոդվածում որպես այդպիսիք ներկայացվում են արտաքին շուկաների ուսումնասիրությունը և տվյալների տրամադրումը հայրենական արտադրողներին, առևտրային տարբեր խոչընդոտների վերացումը արտաքին շուկաներում և հայրենական արտադրության ապրանքների պահանջարկի խթանումը:

АВЕТИК ОГАНЕСЯН

ПУТИ УЛУЧШЕНИЯ ПОЛИТИКИ СТИМУЛИРОВАНИЯ ЭКСПОРТА МАЛОГО И СРЕДНЕГО БИЗНЕСА В РА

Для повышения спроса на экспортируемые товары государству необходимо осуществить мероприятия, которые носят преимущественно торговый характер. В статье представлен условный список этих мероприятий: исследование внешних рынков и предоставление информации отечественным производителям, ликвидация различных торговых препятствий на пути к внешним рынкам и поощрение спроса на товары отечественных производителей.

AVETIK HOVHANNISYAN

WAYS OF IMPROVEMENT OF POLICY SUPPORTING EXPORT OF SMALL AND AVERAGE BUSINESS IN RA

For influence on demand of export it is necessary for state to carry out actions which have more trading character, for example - research of foreign markets and giving some information to domestic manufacturers, liquidation of various trading obstacles in foreign markets and encouragement of demand for the goods of domestic manufacturers. For influence on offers of export it is necessary for state to carry out the actions connected with the organization of manufacture.

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ *Ասպիրանտ,*
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հիմնաբառեր. *Մաքսային միություն, հանքարդյունաբերություն, արտահանում, մրցունակություն*

Վերջին տասնամյակում ՀՀ արտահանման մեջ հանքարդյունաբերությունը շարունակում է գերակշիռ մասնաբաժին ունենալ: Ավելին՝ տնտեսությունը մեծապես կախված է այդ ոլորտից, քանի որ ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին հանքարդյունաբերության անկումը կտրուկ ազդել էր նրա այլ ցուցանիշների վրա: Մյուս կողմից՝ հանքարդյունաբերությունը բավականաչափ հետաքրքրական ոլորտ է. բոլոր խոշոր ներդրողները և արտահանման շուկաները գտնվում են Մաքսային միության սահմաններից դուրս:

Մաքսային միությունը, լինելով միասնական տնտեսական համակարգ, սահմանում է միասնական ներմուծման մաքսատուրք 22,5% դրույքաչափով, որ փոխարինում է ՀՀ երկաստիճան 0 և 10% դրույքաչափերին: Այս տեսանկյունից կարծես թե արտահանմանը որևէ խոչընդոտ չի ստեղծվում, սակայն, այնուամենայնիվ, պղնձի և մոլիբդենի հանքանյութերը վերամշակելուց և արտահանելուց զատ, տվյալ ոլորտը մասնագիտացած է ներմուծվող հանքանյութերի վերամշակմամբ և հետագա արտահանմամբ: Այս պարագայում Մաքսային միության սահմանած լրացուցիչ մաքսատուրքերը կարող են խոչընդոտ լինել և մեծապես թանկացնել հանքանյութի վերամշակումը մեզանում: Նման դեպք էր ադամանդի վերամշակման բելգիական հայտնի De Beers ընկերության հետ կատարվածը, որը Հայաստան է առաքում ադամանդի հումք՝ հետագա վերամշակման նպատակով: Սակայն լրացուցիչ մաքսատուրքերը խնդիրներ առաջացրին այդ ընկերության համար և, նա դադարեցրեց իր գործունեությունը հայաստանյան շուկայում:

Ազգային վիճակագրության ծառայության տվյալներով՝ հանքարդյունաբերության արտադրանքի արտահանման հիմնական գործընկերներն են Գերմանիան և Կանադան, որոնց բաժին է ընկնում դրա շուրջ 70%-ը: Անշուշտ, ազատ առևտրի պայմանագիրը բավականաչափ կդյուրացներ ոլորտի մրցունակությունը արտահանման շուկայում, քանի որ մեր հիմնական գործընկերները ԵՄ երկրներն են: Զուտ տարածաշրջանային տեսանկյունից նախորդ երեք տարում ԵՄ արտահանման ծավալները գերազանցել են ԱՊՀ արտահանման մակարդակը:

Միևնույն ժամանակ, արտահանման մեջ ունենալով վճռորոշ դեր, հանքարդյունաբերությունը մեծապես պայմանավորում է ՀՀ տնտեսության մրցունակությունը արտաքին շուկայում: Այսպես՝ վերջին հինգ տարում արտահանվող ապրանքատեսակներից գերակշռում են թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղները, հանքաքարը: Ուստի Մաքսային միությանն անդամակցելը, թերևս, հանքարդյունաբերության վրա ունենա բացասական,

բայց ոչ մեծ, ազդեցություն, ինչը հիմնականում պայմանավորված կլինի այդ միությունից դուրս գտնվող երկրներից հանքանյութի ներմուծման գների թանկացումով:

Մաքսային միությանը ինտեգրվելու յուրահատուկ մոդել է ընտրել Բելառուսը, որը մաքսատուրքերը փոփոխության չի ենթարկել Մաքսային միությունից դուրս առևտրի համար, իսկ միության ներսում գործում է առանց մաքսատուրքերի ռեժիմը: Նման տնտեսական քաղաքականությունը և ինտեգրումը Բելառուսին հնարավորություն տվեց զսպելու գնաճը և նպաստավոր առևտրային հարաբերություններ պահպանելու այլ երկրների հետ:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում արտահանման զգալի աճ կգրանցվի տեքստիլ արտադրանքի ոլորտում: Երկարաժամկետ հեռանկարում 5.8%-ով կավելանա նաև մետաղների արտահանումը: Ակնկալվում է արտահանվող ծառայությունների ընդլայնում: Ինչ վերաբերում է ԵՄ-ից Հայաստան արտահանմանը, ապա առաջին հերթին կավելանան սննդամթերքի ծավալները, որոնց համար ներկայում բարձր սակագներ են գործում:

Մաքսային միությունը և Եվրասիական տնտեսական միությունը նոր հնարավորություններ են բացում արտահանման մրցունակության տեսանկյունից: Բայց դրանք չեն վերաբերում ծանր արդյունաբերության արտադրանքին, այլ հիմնականում՝ գյուղատնտեսական մթերքներին և սննդի արդյունաբերության արտադրանքի տեսականուն (մասնավորապես՝ ալկոհոլային խմիչքների): Կավելանան խմիչքի, ծխախոտի, քիմիական արտադրանքի արտահանման ծավալները:

Մյուս կողմից՝ ԵՄ հետ ազատ առևտրի պայմանագրի ստորագրումը դրական ազդեցություն կարող է ունենալ թե՛ ԵՄ և թե՛ Հայաստանի համար: Երկարաժամկետ հեռանկարում ԵՄ եկամուտը կավելանա 74 միլիոն եվրոյով, իսկ Հայաստանինը կրկնակի շատ՝ 146: Հաշվի առնելով տնտեսությունների չափերի տարբերությունը՝ տոկոսային առումով դրական էֆեկտը ԵՄ համար չափազանց փոքր ցուցանիշ է, իսկ Հայաստանի համար նշանակում է ազգային եկամտի 2.3%-ի աճ: Ավելին՝ ՀՀ ՀՆԱ-ն կարճաժամկետ հեռանկարում կաճի լրացուցիչ 1.1%-ով, իսկ երկարաժամկետում՝ 2.3-ով:

Ստորև, աղյուսակում, ներկայացված են Հայաստանից արտահանվող այն ապրանքատեսակներն ըստ առանձին երկրների, որոնք, կարելի է ասել, նրա արտահանման ողնաշարն են և կազմում են ընդհանուր ծավալի 90%-ը:

Ըստ աղյուսակի՝ հայկական գինու 76.1%-ը սպառվում է Մաքսային միությունում, շուրջ 17%-ը՝ Եվրոպայում, մնացածը՝ այլ երկրներում, իսկ հայկական ծխախոտի հիմնական շուկան ո՛չ Մաքսային միության երկրներն են, ո՛չ էլ Եվրամիությունը: Հայաստանից ծխախոտ Եվրոպա ընդհանրապես չի արտահանվում: Մաքսային միության երկրներ արտահանվում է դրա 7%-ը, իսկ մնացածը սպառվում է ուրիշ երկրներում, գլխավորապես՝ Իրաքում:

ՀՀ-ից արտահանված առավել բարձր մաքսային արժեք ունեցող ապրանքները (2012 թ.)

Ապրանքի անվանումը	Ընդ.	Մաքսային միություն		Եվրամիություն		Մնացած երկրներ	
		Հազ.դոլ	%	Հազ.	%	Հազ.	%
Ոչխարներ, այծեր	8550.4	0.0	0.0	0.0	0.0	8550.4	100
Ձուկ թարմ	13047.5	13019.0	99.8	0.0	0.0	28.5	0.2
Խեցգետ. ալյուր	6818.4	3912	57.4	2735	40.1	171.4	2.5
Խաղող	9550,1	9086,1	95,1	140.0	1.5	330.1	3.5
Ծիրան	13785.9	12811.0	91.5	598	4.3	576.9	4.2
Հանքաքար և խտահանք պղնձի	227579.9	0.0	0.0	211884.0	91.8	15095.7	7.9
Հանքաքար և խտահանք ցինկի	17715.8	0.0	0.0	17715.8	100	0.0	0.0
Սիգար, սիգարեթ	41840.7	2941.0	7.0	0.0	0.0	38899.7	93
Սպիրտային թուրմ	165950.7	143775.8	86.6	11770.0	7.1	10405.5	6.3
Էլեկտրաէներգիա	90411.9	0.0	0.0	0.0	0.0	90411.9	100
Երկաթահամահալվածք	106792.9	0.0	0.0	106402.0	99.6	360.2	0.4
Պղինձ չզտած	104753.1	0.0	0.0	104753.1	100	0.0	0.0
Նրբաթիթեղ ալյումինի	81080.7	0.0	0.0	1711.0	2.1	79812	97.
Մոլիբդեն	18871.1	0.0	0.0	18871.1	100	0.0	0.0

Աղյուսակից պարզորոշ երևում է, որ սննդամթերքի և խմիչքների ապրանքատեսակների խմբի առումով Եվրամիությունն ընդհանրապես շուկա չէ Հայաստանի համար: 2012 թ. Հայաստանից արտահանվել է 286.6 մլն դոլարի միրգ, ծխախոտ և խմիչք, որից Եվրամիության երկրներին բաժին է ընկնում ընդամենը 16.6 մլն-ինը, իսկ ուրիշ 205 մլն-ը՝ Մաքսային միության երեք երկրների սպառման ցուցանիշն է: Այսինքն՝ հայկական արտադրության պարենային ապրանքների շուկան Մաքսային միությունն է: Հայաստանում գերակա հռչակված դեղագործության արտահանման հիմնական ուղղությունը ո՛չ դեպի Եվրամիություն է, ո՛չ էլ դեպի Մաքսային միություն: Մեր դեղերը առաքվում են այլ երկրներ: Այսպես՝ 2012 թ. արտահանված 5.9 մլն դոլարի դեղորայքից Մաքսային միությանը բաժին է ընկել 1.1 մլն-ինը, Եվրամիությանը՝ 240 հազարինը, իսկ մնացած 4.4 մլն-ինը առաքվել է ուրիշ երկրներ, առաջին հերթին՝ Վրաստան (2.5 մլն): Այլ երկրներ (առաջին հերթին՝ Իրան) են արտահանվում կենդանիները: Փոխարենը Եվրամիությունը Հայաստանի հանքարդյունաբերության արտադրանքի հիմնական գնորդն է: Այսպես՝ արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող պղնձի 93.1%-ը առաքվել է Եվրամիության երկրներ: 227 մլն դոլարի պղնձից 127.7 մլն-ինը գնել է Բուլղարիան, 45.7 մլն-ինը՝ Շվեյցարիան, և այլն: Ցինկը և մոլիբդենը 100%-ով արտահանվել են Եվրամիություն: Հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի արտահանումը մոտենում է 400 մլն դոլարին, որի 90%-ը բաժին է ընկնում Եվրամիության երկրներին: Ավելացնենք, որ Եվրամիությունն է հայկական ադամանդի կեսի սպառողը: Ընդհանուր առմամբ ՀՀ

ապրանքաշրջանառության 30%-ը բաժին է ընկնում ԵՄ-ին, որ գերազանցում է ԱՊՀ երկրների հետ իրականացվող առևտրի ծավալները: Սակայն, ինչպես վերևում նշվեց, դրանում մեծ տեսակարար կշիռ ունեն արտահանվող ծանր մետաղները, իսկ պատրաստի արտադրանքի հիմնական շուկան Ռուսաստանն է: Բնականաբար, Հայաստանի տնտեսության վեկտորը չպետք է ունենա որևէ երկրի հումքային կցորդի բաղադրիչ:

Այսպիսով, հանքարդյունաբերության հիմնական գործընկերները գտնվում են Մաքսային միությունից դուրս, և անդամակցումը Մաքսային միությանը այդ ոլորտի վրա հիմնականում կարող է ունենալ անուղղակի ազդեցություն: Իսկ տնտեսության մրցունակությունը գերազանցապես պայմանավորված կլինի գյուղատնտեսական ապրանքների արտահանմամբ և Մաքսային միության անդամ երկրների հետ առևտրաշրջանառության ընդլայնմամբ, ինչը, սակայն, տնտեսությունը կդարձնի ավելի կախյալ և պակաս բազմազանեցված:

Հոդվածում դիտարկվում է Մաքսային միությանը ՀՀ անդամակցությունը՝ արտահանման շեշտադրումով: Փորձ է արվում կանխատեսելու տնտեսության հենասյուն համարվող հանքարդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների հնարավոր փոփոխությունները, դրա մասնաբաժինները գործընկեր երկրներում և առկա գործընթացների ազդեցությունը տնտեսության մրցունակության վրա:

АНДРАНИК МНАЦАКАНЯН

ВЫЗОВЫ АРМЯНСКОМУ ЭКСПОРТУ В КОНТЕКСТЕ ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ

В статье рассматривается членство РА в Таможенный союз с упором на экспорт. Сделана попытка предсказать возможные изменения в объемах экспортной продукции горнодобывающей промышленности, которая считается основой экономики, степень этих изменений в странах партнеров и влияние происходящих процессов на конкурентоспособность.

ANDRANIK MNATSAKANYAN

THE CHALLENGES FOR EXPORT OF RA IN THE CONTEXT OF INTEGRATION PROCESSES

The impact of joining Custom Union on the export of RA is discussed. The changes of the export of mining industry, which has been considered as the decisive branch for the economy,has been forecasted, their portion with the partner countries is discussed and overall impact of the processes on the competitiveness of the economy of RA has been evaluated.

ՎԱՐՍԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ
Հայցորդ, ՀՊՏՀ

ՀՀ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *սպառման սահմանային հակվածություն, արագացուցիչ, պայթյունային տատանումներ, կայունացման քաղաքականություն, արդյունավետության համաթիվ*

ՀՀ հակաճգնաժամային քաղաքականության արդի հիմնախնդիրները պայմանավորված են տնտեսական պարբերաշրջանի տիպով և վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի բնույթով:

Մինչճգնաժամային փուլում Հայաստանը համեմատաբար կայուն ֆինանսական շուկաներ ուներ, ուստի ճգնաժամի տարածման տեսանկյունից այլ երկրներից առանձնանում էր հարաբերական առավելությամբ: Թեպետ այս հանգամանքն ամբողջական պահանջարկի կարգավորման քաղաքականության արդյունավետության և տնտեսությունում առաջացող ռիսկերը հասարակության տարբեր խմբերի միջև բաշխելու լրացուցիչ հնարավորություններ ստեղծեց, այնուամենայնիվ ճգնաժամի հաղթահարումը ենթադրում էր տեղեկատվության անհամաչափականության և համապատասխան սպասումների ձևավորում:

Առհասարակ, ճգնաժամերի հաղթահարման քաղաքականության մշակման գործընթացում օգտագործվում են և՛ դասական, և՛ քեյնսյան տնտեսագիտական մոտեցումները: Մեր կողմից դիտարկվել է քեյնսյան տեսության և նորդասական մոդելների համադրմամբ տնտեսագետներ Փոլ Սամուելսոնի և Ջոն Հիքսի մշակած արագացուցիչ-բազմարկչի մոդելը, որի օգնությամբ բացատրվում է պարբերաշրջանային տատանումների հանդեպ տնտեսական համակարգի ինքնապաշտպան մեխանիզմը[1]: Այս մոդելով դիտարկվում են սպառման սահմանային հակվածության և արագացուցիչի մեծություններով նկարագրվող պարբերաշրջանային տատանումների տարբերակներ, որոնց միջոցով բացահայտումներն էապես նպաստում են հակաճգնաժամային քաղաքականության միջոցառումների արդյունավետությանը: Այսպես՝ սպառման սահմանային հակվածության 0,5-ից 1 միջակայքում, եթե արագացուցիչը մեկից փոքր է, ազգային արդյունքի շարժընթացը բնութագրվում է մարող տատանումներով, եթե մեկից մեծ է՝ պայթյունային տատանումներով,

[1] Samuelson P. Interactions between the multiplier analysis and the principle of acceleration // Rev. Econ. Stat. 1939. Vol. 21.P. 75-78; Hicks J. A contribution to the theory of the trade cycle. Oxford, 1950.Ch. VI.,
Тарасевич Л.С., Гребенников П.И., Леусский А.И., Макроэкономика: учебник для бакалавров / 9-е изд., испр. и доп. - М., Издательство “Юрайт”, 2012, с.281-291,Серия: Бакалавр, углубленный курс.

իսկ եթե հավասար է մեկի, ապա սպառման սահմանային հակվածության ցանկացած նշանակության պարագայում կառաջանան ազգային արդյունքի հավասարակշռված՝ չմարող տատանումներ: Մեր կարծիքով՝ իրականությանն ավելի մոտ է երկրորդ տարբերակը. և՛ սպառման սահմանային հակվածության, և՛ արագացուցիչի նման հարաբերակցության պայմաններում պետք է գրանցվեն ազգային արդյունքի կտրուկ և մեծ տատանումներ: Սակայն չպետք է անտեսել այն հանգամանքը, որ եկամտի մեծությունը ամբողջական առաջարկի կողմից սահմանափակվում է «առաստաղով», իսկ նվազումը ամբողջական պահանջարկի կողմից՝ «հատակով»: Սա է պատճառը, որ ազգային արդյունքի ալիքը, բախվելով «առաստաղին» կամ «հատակին», դրսևորում է հակառակ շարժընթաց:

Այսպիսի մոտեցումը հիմնավորելու նպատակով մեր կողմից գնահատվել են ՀՀ տնտեսության սպառման սահմանային հակվածությունն ու արագացուցիչը՝ օգտագործելով 1996-2012 թթ. համախառն ներքին արդյունքի, սպառման, համախառն ազգային տնօրինվող եկամտի և կապիտալ ներդրումների եռամսյակային տվյալները:

Հայաստանի տնտեսության համար սպառման սահմանային հակվածությունը գնահատվել է հետևյալ ռեգրեսիոն հավասարմամբ.

$$CONS_SA = MPC * GNDI_SA(-1), \quad (1)$$

որտեղ՝ CONS_SA-ն սպառման աճի համաթիվն է՝ լոգարիթմած և հարթեցված, GNDI_SA-ն համախառն ազգային տնօրինվող եկամտի աճի համաթիվը՝ լոգարիթմած և հարթեցված, MPC-ն սպառման սահմանային հակումը:

Փոքրագույն քառակուսիների եղանակով գնահատելուց հետո հավասարումը ձևակերպվել է այսպես.

$$CONS_SA = 0.86*GNDI_SA(-1) + 0.7$$

Ներկայացնենք ՀՀ տնտեսության համար արագացուցչի գնահատման ռեգրեսիոն հավասարումը.

$$INVEST_SA = A * GDP_SA(-1), \quad (2)$$

որտեղ՝ INVEST_SA-ն կապիտալ ներդրումների աճի համաթիվն է՝ լոգարիթմած և հարթեցված, GDP_SA-ն՝ համախառն ներքին արդյունքի աճի համաթիվը՝ լոգարիթմած և հարթեցված, A-ն արագացուցիչը (աքսելերատոր): Փոքրագույն քառակուսիների եղանակով հավասարումը գնահատելուց հետո ստացել է այս կերպը.

$$INVEST_SA = 1.29* GDP_SA(-1) - 1.45$$

Ըստ մեր գնահատումների՝ Հայաստանում սպառման սահմանային հակվածությունը 0.86 է (ընկած 0.5-1 միջակայքում), իսկ արագացուցիչը՝ 1.29 (մեծ է մեկից):

Փաստորեն ՀՀ տնտեսությանը բնորոշ են պայթյունային տատանումները, և այս հանգամանքը, մեր կարծիքով, պետք է հաշվի առնել մակրոտնտեսական կայունացման քաղաքականությունը կատարելագործելիս՝ ընդհանրապես, և հակաճգնաժամային միջոցառումներ մշակելիս ու իրականացնելիս՝ հատկապես:

Կարևոր է նկատի առնել նաև այն, որ Հայաստանի տնտեսության մի շարք հատվածներում առկա են գների խիստ ընդգծված կոշտություններ և ոչ լիարժեք մրցակցություն: Սա մի կողմից էապես նվազեցնում է ցնցակաթվածներին դիմակայելու՝ տնտեսության

ճկունությունը, մյուս կողմից՝ մակրոտնտեսական քաղաքականությունների բազմարկչային ազդեցությունը: Արդյունքում վերելքների ժամանակ տնտեսությունը ավելի շուտ է ենթարկվում գերտաքացման, իսկ անկումների պահերին խորն է ՀՆԱ նվազման մակարդակը: Սա ևս ՀՀ-ում պայթյունային պարբերաշրջանների դրսևորման հանգամանք է:

Քանի որ ֆինանսատնտեսական ճգնաժամի տարածման ուղղությունը, խորությունը էապես կախված են տնտեսավարող սուբյեկտների համաշխարհային զարգացումներով պայմանավորված վարքագծից,երկրի աշխարհագրական, քաղաքական, տնտեսական, սոցիալական բնութագրերից, ուստի տնտեսության հետագա վերականգնումն ապահովելու համար կարևորվում է մակրոտնտեսական կարգավորումը, ոչ միայն ճգնաժամային և հետճգնաժամային, այլև վերելքի և նախաճգնաժամային փուլերում: Մակրոմակարդակում տնտեսության պետական ճիշտ կարգավորումը հնարավորինս կմեղմի, գուցե կկասեցնի ֆինանսատնտեսական ճգնաժամերը՝ առանց խանգարելու տնտեսության իրական հատվածի ազատ զարգացմանը:

Հայաստանում ֆինանսատնտեսական ճգնաժամի հարվածից հետո մակրոտնտեսական հավասարակշռության պահպանման համար անհրաժեշտ է իրականացնել տվյալ պահին հարմար տնտեսության կայունացման քաղաքականություն, որի կարևոր բաղադրատարրերը՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները պետք է զուգորդել ամենայն զգուշությամբ՝ պետության հիմնական նպատակ համարելով զբաղվածության ապահովումը, արտադրության զարգացումը ամբողջական պահանջարկի խթանումով:

Քանի որ պետական ծախսերի ավելացումը, որպես ամբողջական պահանջարկի բաղադրիչ, կարող է հանգեցնել ոչ միայն իրական ՀՆԱ աճին, այլև գների ընդհանուր մակարդակի բարձրացմանը, ուստի ցածր սղաճով տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ է պետական ծախսերն էապես ավելացնել այն դեպքում, երբ կան պաշարներ, մասնավորապես՝ թերբեռնված կարողություններ և արագ ներմուծում: Իհարկե, պետք է ավելացնել պետական այն ծախսերը, որոնք ապահովում են տնտեսության մեջ բազմարկչային արդյունք:

ՀՀ սոցիալ-տնտեսական բնույթի մակրոտնտեսական ցուցանիշների շարժընթացի ուսումնասիրությունը և տնտեսաչափական մոդելի արդյունքները ցույց են տալիս, որ ճգնաժամն իր ազդեցությունն է թողնում բոլոր ոլորտների վրա, ուստի հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետությունը կարելի է գնահատել հետճգնաժամային փուլում այդպիսի մի շարք ցուցանիշների փոփոխություններով և դրանք հաշվի առնել մակրոտնտեսական կայունացման քաղաքականությունը կատարելագործելիս[1]:

Հակաճգնաժամային քաղաքականության հիմնախնդիրներից է դրա իրականացման արդյունավետության գնահատումը: Նշենք, որ միջազգային պրակտիկայում 2008 թ.

---

[1] Տե՛ս Аналитический доклад “Индекс антикризисной эффективности”, Д.Э.Н. И.А. Николаев, Т.Е.Марченко, М.В.Титова, Департамент стратегического анализа, Москва, апрель, 2009, с.9-12:

հուլիսի մեկից մակրոտնտեսական 14 ցուցանիշների փոփոխությունների հիման վրա հաշվարկվում է հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության համաթիվը[1]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում այս համաթվի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշներից մի քանիսի (հիմնական կապիտալում ներդրումներ, գործազրկության մակարդակ, իրական աշխատավարձ) փոփոխությունները հետճգնաժամային փուլում դրական ուղղվածություն չունեն:

Հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության նպատակով առաջարկվում է կոնկրետացնել դրանց նպատակային ուղղվածությունը՝ մակրոտնտեսական և ֆինանսական հատվածների կայունության ապահովման, տնտեսական աճի լրացուցիչ խթանների բացահայտման տեսանկյունից, և վերանայել պետական կարգավորման մինչճգնաժամային մեթոդները՝ հաշվի առնելով այդ ժամանակահատվածից քաղած դասերը, և դրանք համապատասխանեցնել հետճգնաժամային ժամանակահատվածի պահանջներին:

Հարկ է նշել, որ մարդկային կապիտալի որակական բարելավումը ՀՀ տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններից է: Քանի որ տնտեսական անկումն իր բացասական ազդեցությունն է թողել աղքատության մակարդակի և մարդկային կապիտալի որակական աստիճանի բարելավման վրա, ուստի առաջարկվում է երկարատև կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով տնտեսական քաղաքականության միջոցառումներն ուղղել հատկապես այդ խնդիրների լուծմանը:

Հոդվածում արծարծվել են վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի պարբերաշրջանային տատանումների բնույթին վերաբերող հարցեր. բացահայտվել է, որ ՀՀ տնտեսությանը բնորոշ են պայթյունային տատանումները, ինչը պետք է հաշվի առնել հակաճգնաժամային քաղաքականություն մշակելիս և տնտեսության կարգավորման խնդիրները լուծելիս:

ВАРСИК ТИГРАНЯН

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ АНТИКРИЗИСНОЙ ПОЛИТИКИ РА

В статье затронуты вопросы, касающиеся характера циклических колебаний последнего экономического кризиса. Выявлено, что экономике Армении свойственны взрывные колебания, что нужно учитывать при разработке антикризисной политики и в решении проблем регулирования экономики.

[1] Այդ ցուցանիշներն են. ՀՆԱ, ներդրումներ հիմնական կապիտալում, միջազգային պահուստներ, արդյունաբերական արտադրության ծավալ, գյուղատնտեսական արտադրության ծավալ, մանրածախ առևտրաշրջանառության ծավալ, արտաքին առևտրաշրջանառության ծավալ, արտահանում, ներմուծում, ՍԳԻ, ՀՆԱ դեֆլյատոր, գործազրկության մակարդակ, իրական աշխատավարձ, ֆոնդային համաթիվ:

WARSIK TIGRANYAN

MODERN PROBLEMS OF ANTI-CRISIS POLICY OF PA

The article raised questions about the nature of the cyclical fluctuations of the recent economic crisis, and it turned out that the Armenian economy attach blasting vibrations that must be considered when drawing up anti-crisis policy and solving problems in the regulation of the economy.

ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ
ԹԱԴԵՎՈՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնաբառեր. գիտության կառավարում, ինովացիոն զարգացում, պետական քաղաքականություն, հիմնարար հետազոտություններ

Համաշխարհային փորձը վկայում է, որ շուկայական տնտեսավարման պայմաններում, անկախ տնտեսության կայացածության աստիճանից և ինովացիոն ակտիվությունից, երկրի գիտական համակարգը պետք է մշտապես ենթարկվի պետական գործուն միջամտության: Անհրաժեշտ է, որ այդ միջամտությունն արտահայտվի պետական այնպիսի քաղաքականությամբ, որը նախ և առաջ ապահովի արդյունավետ, կայուն և տնտեսության ցնւցումներից հնարավորինս անկախ կառուցակարգեր:

Գիտական համակարգի պետության միջամտությունը մեծ չափով պայմանավորված է հիմնարար հետազոտություններին կայուն աջակցության անհրաժեշտությամբ: Անվիճելի է, որ երկրում գիտական նոր արդյունքների վերարտադրման հենասյունը հիմնարար հետազոտություններն են, որոնք, որպես կանոն, պարունակում են կայուն ռիսկ, ունեն շարունակական և ծավալուն ներդրումների անհրաժեշտություն և շատ հաճախ մասնավոր ներդրողների «հետաքրքրության» շրջանակներում չեն: Այս տեսակետը հիմնավորվում է նաև Սթանֆորդի և Հարվարդի համալսարանների գիտնականների աշխատանքներում, ովքեր մասնավորապես նշել են, որ հիմնարար հետազոտությունների գործնական արժեքն ավելի ենթադրական բնույթ ունի, քան կիրառական հետազոտություններինը և, հետևապես դրանք անորոշության պատճառով, մասնավոր ներդրողների շրջանում հիմնականում չեն առաջացնում տնտեսական գրավչություն: Հետազոտողները արդարա-

ցիորեն նշել են նաև, որ հիմնարար հետազոտությունները, որպես կանոն, ունեն հասունացման ավելի երկար ժամանակային լագ[1], ինչը նույնպես «ձեռնպահ» է դարձնում մասնավոր ներդրողին:

Մյուս կողմից՝ անվիճելի է, որ հիմնարար հետազոտությունները կենսական նշանակություն ունեն, և դրանք օբյեկտիվորեն պետք է դիտել երկրի ինովացիոն զարգացման գործընթացների հենքում: Նշվածի լավագույն տեսական հիմնավորումը ինովացիայի դիֆուզիայի գործոնն է. ըստ[2] աղբյուրի՝ ինովացիայի դիֆուզիան ժամանակի մեջ տարբեր միջոցներով ինովացիայի փոխանցումն է սոցիալական համակարգի անդամներին, այսինքն՝ անցյալից արդեն իսկ հայտնի ինովացիոն արդյունքները կատարելագործվում են այլ նախաձեռնողների կողմից, այլ պայմաններում կամ ոլորտներում: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ ինովացիաների դիֆուզիան կուտակման գործընթաց է, որի զարգացումն առաջին հերթին պայմանավորված է հիմնարար հետազոտությունների ակտիվությամբ՝ սկսած տեսագործնական գիտական հետազոտություններից, փորձանախագծային աշխատանքներից և, վերջապես, շուկայում ինովացիայի ներդրման արդյունքների վերարտադրությունից: Ներկայացնենք նշված օրինաչափությունները հիմնական տարրերի փոխառնչություններում (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ***Ինովացիայի դիֆուզիան հիմնարար հետազոտությունների դիտակետից***

[1] David Paul, Aghion Philippe, Science, Technology and Innovation for Economic Growth: Linking Policy Research and Practice in "STIG Systems", Munich Personal RePEc Archive, Stanford University, Harvard University, MPRA Paper No. 12096, October 2008, 39 p.

[2] Волинец-Руссет Э.Я., Коммерческая реализация изобретений и ноу-хау (на внешних и внутренних рынках), М., "Юрист", 1999, 326 с.

Արդեն հիմնավորման կարիք չունի այն թեզը, որ ինովացիան եթե ոչ միշտ, ապա հաճախ, հարկ է դիտել գիտական հետազոտությունների և տնտեսավարող սուբյեկտների փոխառնչության մեջ, երբ առկա է որոշակի. «շոշափելի» գիտատար արդյունք, որն ունի շուկայացման ներուժ: Այս իմաստով ինովացիան ձևավորվում է գլխավոր հակակշիռ գործոնների՝ ռիսկի և գերշահույթի համակարգի հիմքում, որը ենթարկվում է շուկայի որոշակի կանոններին և հաճախ պարունակում է բարձր ռիսկի ընդգծված տարրեր: Վերջին հանգամանքով է նաև հիմնավորվում այն, որ ցանկացած տնտեսական համակարգում, հաշվի առնելով հիմնարար հետազոտությունների պարագայում մասնավոր ներդրողների ձեռնպահությունը, գիտության պետական քաղաքականության գլխավոր խնդիրը այդ հետազոտությունների իրականացման ակտիվացմանը և ինստիտուցիոնալ զարգացմանը ուղղակի միջամտությունն է:

Գիտության ոլորտում նյութականացվող արդյունքների անորոշության, միևնույն ժամանակ դրանց հիմնարար կարևորության պայմաններում պետական քաղաքականության հենքում անհրաժեշտ է գործուն կապերի առկայություն հետևյալ փուլային գործընթացների միջև՝ 1) ռազմավարական հենասյուների ձևավորում, 2) ինովացիոն ծրագրերի նպատակադրում և թիրախավորում, 3) պատշաճ արդյունքների ստացում: Մեր համոզմամբ՝ այս երեք գործընթացները պետք է դիտել գիտության ոլորտի արդյունավետ քաղաքականության միասնական համակարգում, քանի որ յուրաքանչյուր փուլում թերացումը կարող է հանգեցնել ընդհանուր արդյունավետության անկման: Այս համակարգի տարրերը պետք է ունենան հստակ առնչություններ, և Հայաստանի Հանրապետությունում գիտության պետական քաղաքականության որոշումների կայացման գլխավոր դիտակետը պետք է լինեն ստացված արդյունքները (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ***Գիտության պետական քաղաքականության անհրաժեշտ առնչությունները***

Կարծում ենք նաև, որ զարգացող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, գիտական համակարգում առկա խնդիրները պայմանավորված են ոչ այնքան գիտության ոլորտի քանակական ցուցանիշների ավելացման ուղղությամբ պետության ձեռնարկումների անբավարարությամբ, որքան շուկայական տնտեսության օրինաչափություններին չհամապատասխանող պետական քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի և գործիքների առկայությամբ: Նման կարծիք են արտահայտել նաև ամերիկացի գիտնականները՝ մասնավորապես նշելով. «Գլխավոր խնդիրն այն չէ, թե որքան են պետության ֆինանսական հատկացումները գիտությանը, այլ այն, թե ինչպես են այդ հատկացումներն օգտագործվում»[1]: Հեղինակները կարևորել են սկզբունք, որ գիտության այն բնագավառներում, որոնց պետությունը որոշակիորեն աջակցում է, անհրաժեշտ է մանրակրկիտ հաշվի առնել ստացված արդյունքները, որ կարող են լինել՝ արտոնագրեր, արդյունաբերական փոխգործակցություն, ներգրավված վենչուրային կապիտալ, ստեղծված նոր (սթարթ-ափ) ձեռնարկություններ և այլն[2]: Նշվածը փաստում զարգացած երկրներում այն առանցքային հանգամանքը, որ արդյունքների չափման ներկայացվող ցուցանիշները գիտության հիմնարար ոլորտը կապում են ինովացիոն դաշտի հետ՝ կարևորելով գիտատար արդյունքների «նյութականացմանն» ուղղված ձեռքբերումները: Կարծում ենք՝ սա է այն հիմնական թեզը, որով պայմանավորված են Հայաստանի Հանրապետությունում գիտության պետական քաղաքականության փոխկապված հիմնախնդիրների լուծումները և ինովացիոն զարգացման հիմքերի խթանումը: Մյուս կողմից՝ պետության հովանու ներքո գտնվող հիմնարար հետազոտությունների ոլորտում էապես կարևոր է մասնավոր, ինչպես նաև վենչուրային ներդրումների խթանումը, որը հնարավոր է միայն այն դեպքում, երբ խրախուսվեն այդ ոլորտի ու մասնավոր ներդրողների միջև գործընկերային հարաբերությունները, արմատավորվեն համապատասխան խթաններ ու գործարարական հետաքրքրություններ:

Զարգացման արդի փուլում Հայաստանի գիտության ոլորտի պետական կառավարման համակարգը դեռ մեծապես հենված է նախկին՝ ԽՍՀՄ շրջանից ժառանգած սկզբունքների վրա, և խնդիրն այն չէ, որ դրանք էապես տարբերվում են ներկայում ձևավորված միջազգային լավագույն փորձից, այլ այն, որ գիտության բարձր արժեքներ ներառող համակարգը պետք է դուրս գա «փակ շրջափուլից» և փոխառնչվի Հայաստանում արդեն իսկ կայացած շուկայական տնտեսության այլ ինստիտուտների ու սուբյեկտների հետ: Ակնհայտ է, որ պետությունը պետք է ապահովի գիտության կառավարման արդյունավետ գործող համակարգ, կիրառի վերահսկման իրատեսական եղանակներ, գործադրի մրցակցային ֆինանսավորման սկզբունքներ՝ առաջին հերթին հաշվի առնելով գիտատար արդյունքի հնարավոր առևտրայնացման աստիճանը:

---

[1] Steve Olson, Jay B. Labov, State Science and Technology Policy Advice: Issues, Opportunities, and Challenges: Summary of a National Convocation, National Academy of Sciences, US National Academy of Engineering, and Institute of Medicine, ISBN: 0-309-11712-7, 2008, 100 p.

[2] Նույն տեղում:

Կարծում ենք՝ Հայաստանի գիտական համակարգի և դրան վերաբերող պետական քաղաքականության հիմքում առկա են ներքոհիշյալ երեք խնդրահարույց ուղղությունները՝

- գիտության պետական կառավարման ռազմավարություն և ինստիտուցիոնալ կառուցվածք,
- գիտական համակարգին վերաբերող օրենսդրական դաշտ,
- գիտության ոլորտում մասնավոր ներդրումների գծով պետական ֆինանսական երաշխիքների կառուցակարգեր:

Նախ, մեր համոզմամբ, ներկայում Հայաստանի Հանրապետությունում չկան այն նախապայմանները և պետական աջակցության կառուցակարգերը, որոնց հիման վրա կարելի է կառավարման մակարդակով սահմանել գիտության ոլորտային գերակայություններ: Համաձայն ՀՀ Կառավարության 2010 թ. թիվ 640-Ն որոշման[1]՝ գերակա ուղղություններ են սահմանվել հետևյալ ոլորտները.

1. հայագիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսական գիտություններ,
2. գիտություններ կյանքի մասին,
3. վերականգնողական էներգետիկա, էներգիայի նոր աղբյուրներ,
4. առաջատար տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ,
5. տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում,
6. կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ:

Կարծում ենք՝ ներկա փուլում գիտության գերակա ոլորտների սահմանումը ինքնանպատակ է. չկա դրա անհրաժեշտությունը: Նկատենք նաև, որ բերված ցանկը, մի կողմից՝ ներառում է սահմանափակ ընտրություն, որը, վերջին հաշվով, կարող է անհասկանալի արգելքներ ստեղծել մասնավոր ներդրողների համար և ընդհանրապես գիտության ազատական զարգացման ուղղություններում: Մյուս կողմից՝ ցանկի որոշ դրույթներ հստակ չեն, օրինակ՝ առաջատար տեխնոլոգիաները կարող են ներառել բոլոր նշված դրույթները, և ավելին՝ ցանկում չկա միօրինակություն, մի դեպքում սահմանվում են հստակ ուղղություններ, մյուս դեպքում՝ ընդհանրական: Սա նշանակում է՝ քաղաքականության մեջ չկա հստակ կողմնորոշում:

Անհասկանալի է նաև ՀՀ Կառավարության 2002 թ. որոշումը, որի համաձայն՝ գիտահետազոտական և փորձանախագծային աշխատանքներ չեն համարվում, մասնավորապես, արտադրության գործընթացում նորամուծությունների ներդրումը, ինովացիոն

[1] «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2010-2014 թթ. գերակայությունները սահմանելու և ՀՀ Կառավարության 2002 թ. թիվ 1302-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 640-Ն որոշում, Երևան, 2010 թ.:

գործունեությունը[1]: Ժամանակակից պայմաններում գիտահետազոտական և փորձանախագծային աշխատանքների հիմքում դրված է ինովացիայի նպատակ, և դրանք հաճախ համարվում են նույն գործունեությունը: Արտադրության գործընթացներում նորամուծությունների ներդրումը նույնպես ենթադրում է գիտահետազոտական և փորձանախագծային աշխատանքներ: Այս առումով վկայակոչված որոշումը հակասում է գիտահետազոտական և փորձանախագծային աշխատանքների իրական նպատակին և բովանդակությանը:

2011 թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը[2]: ՀՀ ԳԱԱ-ն երկրի գիտական համակարգի գլխավոր օղակն է և այն հիմնական ինստիտուտը, որի միջոցով միայն հնարավոր կլինի ակտիվացնել գիտության որակական և քանակական զարգացումը: Նշված օրենքի կարգավորման առարկայում (հոդված 1) ներկայացվում է. «.... պետական մարմինների, գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության սուբյեկտների և մասնակիցների հետ ՀՀ ԳԱԱ փոխհարաբերության հիմնական սկզբունքները....», սակայն օրենքում չկա առարկայական կամ տեսական դրույթ այդ փոխհարաբերությունների սկզբունքների վերաբերյալ:

Որոշ սկզբունքներ և պետական խթանման իրավական հիմքեր են առկա «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ու «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքներում[3]:

Կարծում ենք՝ նպատակային է հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշումը[4]: Դրանում, մասնավորապես, կարևոր է «ժամանակակից մենեջերների» կամ, ավելի ճիշտ կլինի ասել՝ արհեստավարժ կառավարիչների ինստիտուտի զարգացման նպատակադրումը: Այնուամենայնիվ, արհեստավարժ կառավարիչների ինստիտուտը գիտական չէ, և այստեղ օտարերկրյա հայ գիտնականները շատ անելիք չեն կարող ունենալ: Այս ինստիտուտի ներդրումը կարևոր է այն իմաստով, որ Հայաստանում դա կդառնա գիտության և ներդրողների միջև կապող օղակ, և այստեղ պետք են լուրջ գործադրումներ (պետական ֆինանսավորում, Բուհերի ներուժ) առաջամետ շարունակական կրթական համակարգերի ներդրման և դրանց հետագա ինստիտուցիոնալացման ուղղություններով:

Հայաստանում պետության կողմից կիրառվող գիտության կառավարման լծակները սկզբունքորեն տարբերվում են զարգացած և մի շարք զարգացող երկրների փորձից:

---

[1] «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների դասակարգման մասին», ՀՀ Կառավարության թիվ 677 որոշում, Երևան, 2002 թ.:

[2] «Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, Երևան, 2011 թ.:

[3] «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, Երևան, 2006 թ., «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, Երևան, 2000 թ.:

[4] «Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 459-Ն որոշում, Երևան, 2009 թ.:

Նախ՝ միանշանակ է շատ երկրներում գործող այն սկզբունքների Հայաստան ներմուծման հրատապությունը, ըստ որոնց գիտահետազոտական ինստիտուտները կունենան անկախություն և կկարողանան պայմանագրային հիմունքներով կատարել մասնավոր հատվածից և պետական մարմիններից ստացվող պատվերները, հանդես կգան որպես իրենց ստեղծած արդյունաբերական օբյեկտների և «նոու-հաու»-ների սեփականատեր և ինքնուրույն կկարողանան այդ իրավունքը վաճառել այլ սուբյեկտների՝ ապահովելով ֆինանսական անհրաժեշտ մուտքեր: Այստեղ, կարծում ենք, անհրաժեշտ է նվազագույնի հասցնել ՀՀ ԳԱԱ կողմից գիտահետազոտական ինստիտուտների վերահսկողությունը:

Առանձնահատուկ խնդիր է համալսարանական կառույցների ընդգրկումը գիտահետազոտական աշխատանքներում և, միևնույն ժամանակ, մասնավոր պատվերների իրականացման հնարավորության ընձեռումը, ինչը էապես կարևորվում է շատ երկրներում: Հայաստանում, այս իմաստով, անհրաժեշտ են համալսարանների՝ շուկայական համակարգին համահունչ բարեփոխումներ՝ նպատակաուղղված մասնավոր հատվածի պատվերների իրականացմանը:

Գիտական համակարգին վերաբերող օրենսդրությունը Հայաստանում, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում է, պետք է նպատակամետ լինի մի շարք խթանիչ գործիքների կիրառման, որոնք հնարավորություն կտան ստեղծելու համապատասխան պայմաններ մասնավոր հատվածի և ԳՀՓՆԱ-ով զբաղվող ինստիտուտների ու համալսարանների փոխգործակցության ակտիվացման համար: Անհրաժեշտ է մեղմացնել մասնավոր հատվածի կողմից գիտատար ռեսուրսների օգտագործմամբ առաջացող հարկային պարտավորությունները, մյուս կողմից՝ սահմանել ԳՀՓՆԱ-ով զբաղվող պետական և մասնավոր ինստիտուտների, ինկուբատորների, համալսարանների պետական աջակցության հստակ քաղաքականություն: Ինովացիոն գործընթացն անիմաստ է առանց գիտական գործունեության հետ փոխառնչության, և դա խթանելու նպատակով անհրաժեշտ է արտոնությունները պայմանավորել մասնավոր հատվածի կողմից Հայաստանի գիտահետազոտական ինստիտուտների և համալսարանների համագործակցության ինդիկատորներով:

Գիտության ֆինանսավորման ծավալների մեծացման համար ներկայում երկրների միջև առկա է մրցակցություն. դա համարվում է երկրի զարգացման աստիճանի էական չափորոշիչ: Հայաստանը ՀՆԱ-ում գիտության ֆինանսավորման տոկոսով էապես զիջում է աշխարհի զարգացած և զարգացող շատ երկրների: Իհարկե, ցանկալի է ու պարտադիր, և հայաստանյան շատ հետազոտական աղբյուրներ նշում են այդ խնդրի մասին, որ Հայաստանը նույնպես գործադրի բոլոր հնարավոր տարբերակները գիտության պետական ֆինանսավորման շարունակական աճի համար, քանի որ դրանով է պայմանավորված երկրում գիտական և հատկապես հիմնարար հետազոտությունների այնպիսի զարգացումը, որը մրցունակություն ապահովի նաև միջազգային մակարդակով: Մյուս կողմից՝ պետք է նկատել, որ նույնիսկ երկարաժամկետում մեզանում գիտության պետական ֆինանսավորումը թռիչքաձև ավելացնել հնարավոր չէ, ու այս առումով առավել հրատապ է այդ ֆինանսավորման արդյունավետության մեծացումը:

Համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14.12.2001 թ. փոփոխության՝ պետությունը յուրաքանչյուր տարի երկրի պետական բյուջեի ծախսային մասում նախատեսում է նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս հատկացումներ: Նկատենք, որ վերջինս էական կախվածության մեջ է դնում գիտության ֆինանսավորումը բյուջեի եկամուտներից, ինչը չի կարող հաստատապես ապահովել գիտության ֆինանսավորման անհրաժեշտ աճը: Բազմաթիվ երկրների փորձը վկայում է, որ Հայաստանում պարտադիր կարգով պետք է ստեղծել գիտության ոլորտին առնչվող հիմնադրամներ՝ վենչուրային և այլն, ապահովել համապատասխան կառավարիչներով, ովքեր արդյունավետ կկառավարեն ոչ միայն մասնավոր հատվածի, այլ նաև պետական ֆինանսական միջոցները, կֆինանսավորեն ոչ միայն պետական ԳՀՓՆԱ կառույցները, այլ նաև մասնավոր հատվածը, ինչպես Գերմանիայում է, ԱՄՆ-ում և այլն: Իհարկե, որոշակի ինստիտուցիոնալ լուծումներ արդեն առկա են՝ «Գիտության պետական կոմիտե», «Գիտության զարգացման հիմնադրամ» և այլն, այնուամենայնիվ այս կառույցները ֆինանսավորման ծավալների ավելացման առումով դեռ ունեն օբյեկտիվ խնդիրներ:

Այլ կարևոր խնդիր է գիտության ֆինանսավորման եղանակների փոփոխումը, մասնավորապես մրցակցային ֆինանսավորման սկզբունքների կիրառման ակտիվացումը, որ գործում են համատարած՝ բոլոր երկրներում: Այստեղ կիրառվող ընդհանուր սկզբունքնը գիտահետազոտական ինստիտուտների նախկինում կատարած աշխատանքների որակական և քանակական գնահատումների հիման վրա ֆինանսավորումն է:

Նկատենք նաև, որ գիտության և տեխնոլոգիաների ֆինանսավորման էական մասնաբաժինը աշխարհում վենչուրային կապիտալի գործադրմամբ է: Հայաստանում պետության կողմից պետք է պատշաճ կարգով կարևորվի վենչուրային կապիտալի ներհոսքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը[1]: Այս առնչությամբ Կառավարությունն ունի որոշակի ծրագրեր, իսկ 2010 թ. դեկտեմբերին ընդունված՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքը իրավական հիմքեր է սահմանում վենչուրային հիմնադրամների ստեղծման համար:

Այսպիսով՝ ինովացիոն համակարգի կայացումն անվիճելիորեն ռազմավարական խնդիր է Հայաստանի համար, ինչը պետք է լուծվի պետության կողմից՝ հստակ քաղաքականությամբ: ՀՀ գիտության ոլորտի պետական աջակցությունը և ինովացիոն գործընթացների հետ դրա փոխառնչությունը ներկայացված են մեր կողմից առաջարկվող մոդելում.

---

[1] Վենչուրային համակարգը Հայաստանում. ներդրման հայեցակարգ», Կորպորատիվ կառավարման կենտրոն, Երևան, 2005 թ., 55 էջ:



Գծապատկեր 3. ***Հայաստանի գիտության պետական քաղաքականության մոդել***

Հոդվածը նվիրված է գիտության ոլորտին պետական միջամտության համակարգային վերլուծությանն ու տնտեսության ինովացիոն զարգացման ներուժ հրահրող լուծումների առաջադրմանը: Առանցքային դիտակետը գիտության կառավարումը և տնտեսության ինովացիոն գործընթացները միասնական մոդելում ներառելն է: Կատարվել է Հայաստանում առկա սխալների ուսումնասիրություն, առաջարկվել են ինովացիաները խթանող՝ գիտության պետական քաղաքականության տարբերակներ:

АРМАН САРКИСЯН
ТАДЕВОС АВЕТИСЯН

НЕКОТОРЫЕ ВЗАИМОСВЯЗИ ГОСУДАРСТВЕННОЙ НАУЧНОЙ ПОЛИТИКИ И СТАНОВЛЕНИЯ ИННОВАЦИОННОЙ ЭКОНОМИКИ

Статья посвящена системному анализу государственного вмешательства в научную сферу и решениям, вызывающим появление потенциала инновационного развития экономики. Рассмотрена единая модель управления научной сферой и инновационными процессами в экономике. Изучены текущие ошибки, предложены выборочные решения по осуществлению политики в области науки, стимулирующей инновационную деятельность.

ARMAN SARGSYAN
TADEVOS AVETISYAN

SEVERAL RELATIONSHIPS OF STATE SCIENCE POLICY AND INNOVATION ECONOMY FORMATION

The paper is about system analysis of state interposal in the field of science and offering solutions inciting the innovation economy development potential. Basic outlook is the inclusion of science management and process of innovation in a unified model. The paper also includes research of available mistakes and selected solutions of state science policy stimulating innovation.